# ԷՋՄԻԱԾԻՆ



Դ
2006

ԿԲ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

**Ապրիլ**

**2006**

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 2006 թ. ապրիլի 16)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

*«Զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս եւ մեք ի նորոգումն կենաց շրջեսցուք»:*

(Հռոմ. Զ. 4)

Սիրելի բարեպաշտ հայորդիներ.

Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնի առիթով բերկրաշատ հոգով վերստին ողջունում ենք ձեզ՝ աշխարհասփիւռ Մեր բոլոր զաւակներին՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» աւետիսով, եւ կրկնում առաքեալի յորդորական խօսքերը. «Ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր կեանքով» (Հռոմ. Զ. 4):

Աստուծոյ շնորհի, փրկութեան յոյսի ուրախութիւնն է համակել այսօր մեր հոգիները: Այսօր հրեշտակաց դասերը մեզ խնդակից՝ տօնախմբում են մահուան պարտութիւնն ու կեանքի յաղթանակը:

Աստուածամայրը, որ Խաչի մօտ ողբում էր Որդու կորուստը, Տէրունական Յարութեամբ մխիթարեալ բերկրում էր շնորհառատ այս օրը:

Աշակերտները, որ վախեցած փախչում էին՝ միայնակ թողնելով իրենց սիրելի Վարդապետին, այս օրը Յարութեան հաւատով զօրացած՝ Յարութեան աւետաբերները դարձան՝ Քրիստոսի Աւետարանի լոյսով աշխարհը լուսաւորելու:

Մարդկութեան պատմութեան այս շրջադարձից երկու հազարամեակներ յետոյ նոյն մխիթարութիւնն ու ուրախութիւնն է պարգեւում Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը ապրողներիս, որով շնորհին ունենք անցնելու մահուանից դէպի կեանք, խաւարից դէպի լոյս: Այսօր էլ ազգերի եւ ժողովուրդների համար յոյժ այժմէական են առաքեալի խօսքերը. «Ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր կեանքով»: Աշխարհը դեռ չի կարողանում կատարելապէս իրագործել այս պատգամը՝ քայլելու նոր կեանքով՝ խաղաղութեան, համերաշխութեան, սիրոյ ու եղբայրութեան ճանապարհներով: Այսօր էլ բազմաթիւ մարդիկ եւ ժողովուրդներ Յարութեան տօնը դիմաւորում են խռովքների ու անհանգստութիւնների, դժուարութիւնների ու հոգսերի, պատերազմական վտանգների մէջ: Աշխարհը փոթորկուած է աւետարանական դրուագի նմանութեամբ, բայց մարդիկ չեն շտապում դիմել առ Տէրը, ինչպէս առաքեալները, ովքեր խնդրեցին իրենց Վարդապետին՝

խաղաղեցնելու փորձրկը: Այսօր վերստին հնչում է «Խաղաղութիւն ձեզ» (Յովh. Ի. 19) ողջոյնը Յարուցեալ Փրկչի, որ ցոյց տուեց Իր վէրքերն ու խոցուած կողը՝ աշխարհը հաւատքի բերելու համար, մինչ աշխարհը իր վէրքերը ցոյց է տալիս Աստուծոյ դէմ բողոքելու եւ Աստծուց հեռանալու համար:

Մարդկութեան առջեւ ծառացած հիմնախնդիրներին յանդիման Յարութեան տօնը նոր ներշնչումի, հաւատքի զօրացման, ըստ առաքեալի խօսքի՝ նոր կեանքով քայլելու շնորհառատ աղբիւր է, որը զօրացնում է դժուարին կացութիւնները դիմագրաւելու, խաղաղութիւնը, յոյսն ու սէրը մարդկային կեանքում հաստատելու: Բոլոր ժամանակներում, նաեւ մեր օրերում մարտահրաւէրներին ընդառաջ ելնելու, ընկերային-քաղաքական դիմակայութիւնները կանխելու, պատերազմական արհաւիրքները յաղթահարելու համար բաւական չեն սոսկ նիւթական միջոցներն ու հնարաւորութիւնները, զուտ աշխարհային ըմբռնումներն ու գործելակերպերը: Այսօր խաղաղ, արդար ու մարդասէր աշխարհի համար պիտի զինուել հոգեւոր սպառազինութեամբ, քան մահաբեր զէնքերով: Պիտի վերցնել խաչը եւ գնալ Տիրոջ ետեւից, իրագործել բարին նոյնիսկ արգելքների մէջ, երկրպագել Խաչուածին անգամ խաչուած լինելով, հոգու եւ հոգեւորի քարանձաւից տեղաշարժուած տեսնել քարն անհաւատութեան:

Մարդկային հոգու յարակայ արդար ձգտումն է խաղաղութիւնը, որը ճշմարտապէս իրական ու անխափան պիտի լինի այն գիտակցութեամբ, որ երկնային Հօր հայեացքի ներքոյ մարդիկ եղբայրներ են՝ կոչուած յարուցեալ կեանքի շնորհներն ու պարգեւները յաւելելու աշխարհում: Աշխարհի մէջ Աստուծոյ ներկայութեան հաւատով մարդկային հոգին պիտի գտնի իր մշտանորոգ զօրութիւնը՝ մերժելու համար չարը, բռնութիւնն ու ատելութիւնը: Աստուածսիրութեամբ ու մարդասիրութեամբ տեղ չպիտի գտնեն միմեանց հոգեւոր արժէքներն ու սրբութիւնները վիրաւորելու դրսեւորումները, որ ամիսներ արդէն շարունակում են յուզել աշխարհը, եւ լսելի պիտի դառնայ աղաղակող արդար բողոքը Նախիջեւանում հիմնովին ոչնչացուած հազարաւոր հայկական խաչքարերի, որոնք մշակութային հնագոյն արժէք էին եւ մշտամորմոք աղօթք, սիրոյ վկայութիւններ առ Աստուած ու մարդիկ: Զատկական այս նուիրական օրը Մենք աղօթում ենք, որ Աստուած Ճշմարտութեան Իր Հոգով զօրացնի մարդկանց ու ժողովուրդների կամքը՝ դատապարտելու միմեանց հոգեւոր արժէքները անարգելու եւ միմեանց իրաւունքը ոտնահարելու արարքները, քայլերն ու ձգտումները եւ միշտ ընթանալու դէպի Աստուծոյ տեսութեան լոյսը, դէպի աստուածաստեղծ խաղաղ, արդար, բարեգործ աշխարհի:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Մենք էլ կոչուեցինք տեսնելու Քրիստոսի Յարութեան արշալոյսը: Առ Փրկիչը հաւատի զօրութիւնը, յոյսն ու խնդութիւնը կեանք տուեցին մեր ժողովրդի ձգտումներին, մեր մշակոյթին ու առաջնորդեցին մեր պատմութեան ընթացքը: Եղերական ճամփաներով անցնելով, մեր ժողովուրդը միշտ հաւատաց Քրիստոսի հետ իր յարուցեալ նոր կեանքին, իր վերածնընդին: Իրականութիւն են այսօր մեր պետականութեան վերահաստատումը եւ մեր ժողովրդի ազատ կեանքը Հայաստանում եւ Լեռնա-

յին Ղարաբաղում: Հայրենի եզերքներում եւ Սփիւռքում համայն մեր ժողովուրդը ապրում է նոր յոյսերով ու իղձերով, հաւատով, որը դարերով, անստուեր ու անմայրամուտ սփռուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, մեր եկեղեցիների լուսոյ խորաններից: Թող առ Քրիստոս հաւատն ու յոյսը շարունակի բաբախել մեր սրտի զարկերակներում՝ դառնալով զօրութիւն կառուցելու մեր հայրերի երազած շէն ու բարգաւաճ երկիրը, պայծառ պահելու ազգային-եկեղեցական մեր կեանքը, վառելու լոյսերը գալիքի, ինչպէս նաեւ նեցուկ եւ օգնական լինելու ամենքին՝ խաղաղութեան, ազատութեան ու արդարութեան իղձերի իրականացման ճանապարհներին:

Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարդուղիմէոս առաքեալների Աթոռից, Լուսաւորչի Գահից եղբայրական սիրով Զատկական ողջոյն ենք յղում Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին եւ Հայրապետական Մեր օրհնութիւնը՝ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին ու սիրեցեալ համայն ժողովրդին:

Ի Քրիստոս սիրով ողջունում ենք քոյր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ հայցելով Փրկչի առատ շնորհները իրենց հոգեւոր խնամքին յանձնուած Քրիստոսասէր հօտին:

Մեր ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկադի Ղուկասեանին, հայոց պետական ողջ աւագանուն, արուեստի, գիտութեան ու կրթութեան նուիրեալ մշակներին, հասարակական ու քաղաքական հայրենաշէն գործիչներին, մեր Հայրենեաց պաշտպան քաջարի զօրականներին ու զինուորներին: Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներին, որոնց գործունէութեամբ զօրանում եւ ամրապնդուում են մեր երկրների բարի յարաբերութիւնները:

Քրիստոսի Սուրբ Յարութեան շողերով նորոգուած է մեր հաւատը եւ նոր կեանքով քայլելու մեր յոյսը: Աղօթենք միասնաբար, որ Աստուած առաջնորդի մարդկանց ու ժողովուրդներին ամրապնդելու խաղաղութեան, արդարութեան, սիրոյ ու եղբայրութեան ճանապարհները, միշտ նորոգուող, վերածնուող ու յարուցեալ կեանքի ճանապարհները: Թող Տէրը միասնական ու հաւատով զօրացեալ պահպանի ազգս հայոց ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս՝ յանուն մշտնջենաւոր փառքի Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու: Ամէն:

**Քրիստոս յարեաւ ի մեռելոց**
**Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի**

# ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱԳՐԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
**ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ** (Հռոմ)

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք,
Նորին Ամենասրբություն
**ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ Ա** (Ստամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք, Նորին Սրբություն
**ԱԼԵՔՍԻ Բ** (Մոսկվա)

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
**ԻԼԻԱ Բ** (Թբիլիսի)

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
**ՇԵՆՈՒԴԱ Գ** (Կահիրե)

Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն
**ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍ** (Դամասկոս)

Եթովպիայի Թևահեդո Ողղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
**ԱԲԲԱ ՊԱՈՒԼՈՍ** (Ադիս Աբեբա)

Հնդկաստանի Ասորի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու պետ, Նորին Սրբություն

**ԴԻԴԻՄՈՍ Ա** (Դելի)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Պապ և Պատրիարք,

Նորին Գերաշնորհություն

**ԹԵՈԴՈՐՈՍ Բ** (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Ուղղափառ Պատրիարք,

Նորին Գերաշնորհություն

**ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Դ** (Դամասկոս)

Քենթըրբերիի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

**ՌՈՈՒԱՆ ՎԻԼՅԱՄՍ** (Լոնդոն)

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Գերաշնորհություն

**ԻՐԵՆԻՈՍ** (Երուսաղեմ)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

**ԹԵՈԿՏԻՍՏ** (Բուխարեստ)

Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

**ՊԱՎԼԵ** (Բելգրադ)

Բուլղար Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն

**ՄԱՔՍԻՄ** (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն

**ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ** (Կիպրոս)

Աթենքի և Համայն Հունաց Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն

**ԽՐԻՍՏՈԴՈՒԼՈՍ** (Աթենք)

Վարշավայի և Համայն Լեհաստանի Միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

**ՍԱՎՎԱ** (Վարշավա)

Մինսկի և Սլուցկի Միտրոպոլիտ, Համայն Բելառուսի Պատրիարքական փոխանորդ,

Նորին Գերաշնորհություն

**ՖԻԼԱՐԵՏ** (Մինսկ)

Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
**ՅՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱ** (Հելսինկի)

Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսների Խորհրդի Նախագահ
**ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԱԴԵՅ ԳՐԱԲ** (Պրահա)

Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Կաթողիկոս-Պատրիարք
**ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ** (Բեյրութ)

*

* *

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻՑ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն
**ԱՐԱՄ Ա** (Անթիլիաս)

Երուսաղեմի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն
**ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ** (Երուսաղեմ)

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն
**ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ** (Ստամբուլ)

**Հայոց Եկեղեցու Թեմակալ առաջնորդներից և Թեմական Խորհուրդներից ու համայնքներից:**

Եկեղեցական պետերից բացի, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել նաև քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կարդինալներից, միտրոպոլիտներից և մյուս առաջնորդներից ու հոգևոր սպասավորներից, էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

# ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահ վսեմաշուք
ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ մեծահարգ
ԱՐԹՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ մեծահարգ
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սահմանադրական Դատարանի նախագահ մեծահարգ
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ վսեմաշուք
ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ մեծահարգ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետերից, ակադեմիական և համալսարանական հաստատություններից, գիտության, մշակույթի ու տարբեր բնագավառների բազմաթիվ գործիչներից և առանձին անհատներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և ստեղծագործական միություններից, Միջազգային Կարմիր Խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, □ՀԱՅԱՍՏԱՆ□ Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ□ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ□ից, Կյուլպենկյան հաստատությունից, Կարագյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:

# ԱՎԱԳ ՇԱԲԱԹԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ավագ Շաբաթվա սկիզբն ազդարարում է Ծաղկազարդի կիրակին՝ խորհրդանշելով Հիսուս Քրիստոսի մուտքը Երուսաղեմ:

Ապրիլի 9-ին Ծաղկազարդի տոնն առանձնահատուկ կերպով նշվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Առավոտյան կատարվեց հանդիսավոր ժամերգություն, որի ավարտին Մայր Տաճարի առջև, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ներկայությամբ հարյուրավոր հայորդիների, կատարվեց անդաստանի՝ աշխարհի չորս կողմերի օրհնության արարողություն: Անդաստանի ընթացքում օրհնվեցին նաև ուռենու ճյուղերը, ապա բաժանվեցին հավատացյալ ժողովրդին:

Միաժամանակ Սուրբ Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Նանյանը:

Ծաղկազարդի օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ հռչակված է որպես մանուկների օրհնության օր: Այս առիթով հավարտ Ս. Պատարագի Իջման Ս. Սեղանի առջև Նորին Սրբության առաջնորդությամբ կատարվեց մանուկների օրհնության կարգ:

Նույն օրը, Պատարագի սրբազան արարողությունից հետո, Վեհարանի հարկի ներքո, Վեհափառ Հայրապետն ընդունեց Վաղարշապատ քաղաքի շուրջ 150 մանուկների՝ քաղաքապետ Գագիկ Ավագյանի և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչների ուղեկցությամբ: Նորին Սրբությունը շնորհավորեց ներկաներին իրենց համար հիշարժան այդ օրվա առիթով՝ Հայրապետական իր օրհնությունը, հայրական պատգամն ու բարեմաղթանքները հղելով խանդավառ մանուկներին: Հանդիպման ավարտին մանուկներին հանձնվեցին նվերներ:

Նույն օրը Վեհարանում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաև Հայաստանում գտնվող Լոս Անջելեսի Շամլյան վարժարանի սաներին և մանկավարժներին:

**Ավագ Երկուշաբթին** խորհրդանշում է Արարչագործությունը, հիշատակվում է նաև Անպտուղ թզենու առակն ու Երուսաղեմի Տաճարի մաքրագործումը: Մայր Տաճարում առավոտյան և երեկոյան ժամերգությունների ընթացքում Ս. Գրային ընթերցումները հիշատակում էին Հիսուս Քրիստոսի այս ուսուցումները՝ անպտուղ կյանքով չապրելու պատգամով:

**Ավագ Երեքշաբթի** հիշատակվում է Տասը կույսերի առակը՝ համաձայն Ավետարանական պատգամի, թե՝ *«Արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք ո՛չ օրը և ո՛չ էլ ժամը»* (Մատթ. ԻԵ 13):

Ընդունված կարգով Ավագ Երեքշաբթի, երեկոյան ժամերգության ընթացքում, Մայր Տաճարի ատյան դուրս եկան տասը մանուկներ՝ խորհրդանշելով տասը

կույսերին: Ձեռքերին ունենալով մոմեր՝ հինգը վառվող, հինգը՝ հանգած, մանուկները խորհրդանշում են հինգ իմաստուն և հինգ հիմար կույսերին:

**Ավագ Չորեքշաբթի** հիշատակվում է Բեթանիայում մեղավոր կնոջ կողմից թանկագին յուղով Հիսուսի օծման պատմությունը՝ որպես խորհրդանիշ Քրիստոսի խաչելության ու մոտալուտ մահվան: Այս օրը խորհրդանշում է նաև Հիսուսի մատնությունը:

**Ավագ Հինգշաբթին** խորհրդանշում է վերջին ընթրիքը՝ որպես Ս. Հաղորդության խորհրդի հաստատում, և Ոտնլվան՝ որպես սիրո և խոնարհաբար ծառայելու Տերունավանդ օրինակ:

Ավագ Հինգշաբթիին սկսվեցին Ավագ Շաբաթվա հիմնական արարողությունները, որոնք խորհրդանշում են մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի վերջին ընթրիքը, Քրիստոսի կողմից իր աշակերտների ոտքերի լվացումը և Ս. Հաղորդության խորհրդի հաստատումը:

Առավոտյան Մայր Տաճարում, ի հիշատակ Հիսուս Քրիստոսի վերջին ընթրիքի և Հաղորդության խորհրդի հաստատման, մատուցվեց Ս. Պատարագ: Սրբազան արարողության ընթացքում հաղորդություն ստացան բազմաթիվ հավատացյալներ: Պատարագիչն էր Տ. Մխիթար աբեղա Գրիգորյանը:

Հետմիջօրեին ձեռամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց Ոտնլվայի արարողությունը: Սուրբգրային ընթերցումներից հետո Վեհափառ Հայրապետը խաչով ու Ավետարանով օրհնեց յուղը:

Ապա, Տիրոջ օրինակով, լվաց և յուղով օծեց 12 հոգու ոտքերը: Արարողությունից հետո հավատացյալներին բաժանվեց օրհնված յուղ: Ընդունված ավանդույթով, հավատացյալներն այն գործածում են հիվանդությունների ժամանակ կամ խառնում են տանն ունեցած յուղին:

Ավագ Հինգշաբթի, Խավարման գիշերը, ժամը 19:00-ից մինչև ուշ գիշեր կատարվեց Հիսուս Քրիստոսի չարչարանաց և խաչելության կարգը: Հընթացս արարողության քարոզ խոսեց Տ. Առողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը (տե՛ս էջ 31):

**Ավագ Ուրբաթը** Տիրոջ խաչելության և թաղման խորհուրդն ունի: Կեսօրին Մայր Տաճարում կատարվեց խաչելության կարգ, իսկ երեկոյան, Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Թաղման կարգ: Այս արարողության ընթացքում Հիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը, զարդարված ծաղիկներով, դուրս բերվեց Մայր Տաճարից և հանդիսավոր թափորով պտտեցվեց Մայր Տաճարի շուրջը:

**Ավագ Շաբաթը** խորհրդանշում է Դժոխքի ավերումը:

Երեկոյան Մայր Տաճարում մատուցվեց Ճրագալույցի Ս. Պատարագ, որի ընթացքում տրվեց Քրիստոսի Հարության ավետիսը և ավարտվեց Մեծ պահքը: Պատարագիչն էր Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը:

Հավարտ Ս. Պատարագի եկեղեցական թափորը շարժվեց Վեհարան, ուր Նորին Սրբության հանդիսապետությամբ կատարվեց Տնօրհնեքի արարողություն:

**Կիրակի, ապրիլի 16-ին, Հիսուս Քրիստոսի Հարության տոնն էր:**

Աշխարհասփյուռ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր տոնախմբեց մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը:

Առանձնահատուկ շուքով և ցնծությամբ Սուրբ Հարության տոնը նշվեց համայն հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Տոնի առիթով օրհնությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կազմակերպվել էր թափոր-երթ: Վաղ առավոտյան, Սուրբ Հռիփսիմե վանքի մոտից, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ-ի հայորդյաց տների սաների առաջնորդությամբ հարյուրավոր երիտասարդներ շարականների երգեցողության և թմբուկների ձայների ներքո շարժվեցին դեպի Միածնաէջ Սուրբ տաճար, ուր դիմավորեցին Հայրապետական թափորը:

Առավոտյան ժամը 10.30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնությունները բաշխելով խուռներամ հավատացյալ ժողովրդին, հոգևորականների մեծահանդես թափորով ուղղվեց դեպի Մայր Տաճար, ուր մատուցեց Սուրբ և Անմահ Պատարագ և Տիրոջ Սուրբ Հարության տոնի առիթով Հայրապետական իր պատգամը հղեց համայն հայ ժողովրդին (տե՛ս էջ 3):

Հայրապետական Սուրբ Պատարագին ներկա էին ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, նախարարներ, ԱԺ պատգամավորներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, գիտության, կրթության, արվեստի և մշակույթի գործիչներ:

Սուրբ Պատարագի ավարտին Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ամենքին վերստին ուղղեց Հայրապետական իր շնորհավորանքն ու բարեմաղթանքները Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի առիթով:

Սուրբ Պատարագի ավարտին, Ս. Տրդատի բաց խորանի առջև, Հայորդյաց տների շնորհալի սաները հանդես եկան համերգային ծրագրով:

**Քրիստոս յարեաւ ի մեռելոց**
**Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի**

# ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՅՑԵԼԵՑ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ

Ապրիլի 9-ին՝ Ծաղկազարդի տոնին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Նոր Խարբերդի հատուկ մանկատուն: Ծաղկազարդի տոնը Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ հռչակված է նաև մանուկների օրհնության օր: Այս առիթով Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց մանկատան 240 սաներին, ովքեր զրկված են եկեղեցական արարողություններին մասնակցելու հնարավորությունից:

Մանկատանը Վեհափառ Հայրապետին դիմավորեցին ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարար Աղվան Վարդանյանը, մանկատան տնօրեն Հաբություն Բալասանյանը, մանկատան աշխատակազմը: Նրանց ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը նախ այցելեց այն մանկասենյակները, որոնց փոքրիկ բնակիչները տեղաշարժվելու հնարավորություն չունեն: Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց բոլոր երեխաներին՝ ընծայելով նրանց փոքրիկ խաչեր:

Տոնի առիթով կազմակերպվել էր նաև փոքրիկ հանդիսություն, որի ընթացքում Հայոց Հայրապետին ողջունեց մանկատան տնօրենը՝ նշելով, որ Հայրապետական օրհնությունն օգնելու է երեխաներին՝ իրենց ֆիզիկական դժվարությունները ավելի հեշտությամբ տանելու:

Հանդիսության ընթացքում մանկատան երեխաներին համերգային ծրագրով ողջունեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀԲԸՄ-ի Նոր Նորքի Հայորդյաց տան սաները: Հյուրերին իրենց երաժշտական ունակությունները ցուցադրեցին նաև մանկատան սաները:

*«Մենք ցանկություն ունեցանք այցելելու Խարբերդի մանկատուն, որովհետև գիտեինք, որ այստեղ ունենք հարազատ զավակներ, ովքեր հնարավորություն չունեն Եկեղեցու արարողություններին մասնակից դառնալու և Եկեղեցու ու հայ հոգևորականի օրհնությանն արժանանալու: Եկանք, որպեսզի ավելիով բերենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայ Եկեղեցու օրհնությունը այս հարկի ներքո բնակվող Մեր զավակներին»*- ասաց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց մանկատան ողջ պաշտոնեությանը: *«Մենք գիտենք, սիրելիներ, որ Քրիստոսի քարոզության առանցքային գաղափարը սիրո գաղափարն է, գիտենք, որ Աստված սիրով արարեց աշխարհը և այդ սիրուց առաջնորդված մարդու փրկության համար Իր Որդուն ուղարկեց աշխարհ: Սերը գերագույնն է Աստուծո տնօրինության մեջ, սերը գերագույնն է մարդկային կյանքում»*,- նշեց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով, որ Տերը զորացնի մանկատան սպասավորներին, պարգևի անհուն սեր ու համբերություն, որպեսզի կարողանան իրենց հոգու ջերմությունը փոխանցել երեխաներին և թեթևացնել կյանքից նրանց հասած հարվածները:

Հանդիսության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց մանուկների օրհնության կարգ:

Հայորդյաց տան սաներն իրենց հասակակիցներին բաժանեցին նախապես պատրաստված նվերները:

# ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Ապրիլի 24-ին, 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի ոգեկոչման օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ այցելեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Ծիծեռնակաբերդում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ծաղկեպսակներ զետեղեցին, ապա հուշահամալիրի անմար կրակի մոտ, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 1915 թ. Մեծ եղեռնի անմեղ նահատակների:

Արարողությանը ներկա էին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Մայր Աթոռի միաբաններ, պետական այրեր:

# ԱՊՐԻԼԻ ՔՍԱՆՉՈՐՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Հավարտ Ս. Պատարագի Մայր Աթոռի միաբանների թափորն ուղղվեց դեպի Մայր Տաճարի հարևանությամբ ի հիշատակ Եղեռնի նահատակների կանգնեցված Աղոթքի և ուխտի խաչքարը, որի մոտ, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ Գ

Բ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԱԶԳԵՆ ԳԱԼԹԱՔՃՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԱԶԳԷՆ ԳԱԼԹԱՔՃԵԱՆ, ՈՐ Ի ԼՈՒԻԶԻԱՆԱ, ԱՄՆ

ԱՄՆ Արեւելեան թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից գոհունակութեամբ տեղեկացանք, որ մայիսի 13-14-ին պիտի կատարուի օրհնութիւնն ու օծումը Լուիզիանա նահանգի Պաթոն Ռուժ քաղաքի Սուրբ Կարապետ եկեղեցու, որի բարգաւաճմանն ի խնդիր Դուք գովելի ներդրում էք բերել աստուածասէր եւ եկեղեցանուէր ազնիւ ոգով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ նուիրեալ եւ արժանաւոր զաւակիդ, Հայրապետական Մեր օրհնութիւնը, գնահատանքն ու բարեմաղթանքները:

Գոհունակութիւն է Մեզ համար, որ 1700-ամեայ մեր Եկեղեցու տերունապատուէր առաքելութիւնը նոր հազարամեակին նշանաւորուում է հաւատաշէն իրագործումներով, այլեւ Մեր բարերար զաւակաց սրտաբուխ նուիրատուութիւններով կեանքի կոչուած եկեղեցաշինական ծաւալուն աշխատանքներով Մայր Հայրենիքում եւ Սփիւռքի մեր գաղթօջախներում: Դարեր շարունակ մեր ժողովրդի զաւակները եկեղեցիներ են կառուցել, որոնց օրհնեալ յարկերի ներքոյ աղօթական հոգով միաւորուում է մեր ժողովուրդը, ապրում Քրիստոսի կենդանի ներկայութիւնը, հաղորդ դառնում աստուածային կենարար շնորհներին: Եւ այսօր Դուք սատար էք կանգնել եկեղեցա-

շինութեան եւ հայոց մեր հաւատքի լոյսը մշտավառ պահելու նուիրական գործին՝ զգալի ներդրում բերելով ամերիկահայ կեանքի բարգաւաճմանը:

Ուրախութեամբ ենք անդրադառնում, որ Ձեր սերն առ Աստուած եւ Եկեղեցին եւ ծառայասիրութեան ու զոհողութեան ոգին, որով զօրացեալ բարի գործերով էք զարդարում ընթացքը Ձեր կեանքի, զօրեղ են նաեւ Ձեր հարազատների հոգիներում: Ձեր բարի օրինակով նաեւ Ձեր եղբայրների եւ քրոջ բարեպաշտ ընտանիքները առատաձեռն նուիրատուութիւններով աջակցում եւ օժանդակում են ծուխի զարգացմանն ու բարօրութեանը:

Սիրելի Տիար Գալթաքճեան, Ձեր ծառայութեանց ու վաստակի ամենաբարձր գնահատանքով՝ գոհունակ հոգով ընդառաջում ենք բարեջան Ձեր Առաջնորդի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մենք հաւատում ենք, որ նոյն զովարժան փութաջանութեամբ Դուք պիտի շարունակէք Ձեր ազգաւէր գործունէութիւնն ու եկեղեցանուէր ծառայութիւնները՝ նպաստելով հայորդեաց մէջ հաւատը եւ մեր սրբազան արժէքների նկատմամբ նախանձախնդրութիւնը հաստատուն պահելու նուիրական գործին:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը շնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին կեանքի քաջառողջ ու արեւշող բազում օրեր եւ պսակի Ձեր բոլոր բարի եւ առաքինի ձեռնարկումները մշտակայ յաջողութիւններով:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22-ն Ապրիլի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 344

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու տաղանդաշատ ու արժանաւոր զաւակիդ:

Մեծարգոյ Պրն Գրիգորեան, այսօր մեծ գոհունակութեամբ ենք անդրադառնում մշակութային Ձեր գործունէութեանը եւ տարիների բեղմնաւոր վաստակին: Մայր Հայրենիքում ու նրա սահմաններից հեռու լայնօրէն ծանօթ է Ձեր անունը՝ որպէս բազմաթիւ մրցոյթների դափնեկիր: Օպերային արուեստի անդաստանում ներդրած աւանդի համար Դուք արդարօրէն արժանացել էք Հայաստանի Հանրապետութեան եւ Լիտուայի ժողովրդական արտիստի բարձր կոչմանը:

Երաժշտական կրթութիւն ստանալով Առնո Բաբաջանեանի անուան երաժշտական ուսումնարանում, այնուհետեւ Երեւանի պետական կոնսերուատորիայում՝ Դուք երգարուեստի կատարողական Ձեր հմտութիւնն ու վարպետութիւնը առաւել կատարելագործել էք Իտալիայի համբաւաշատ «Լա Սկալա» թատրոնում: Աշխարհի տարբեր երկրների հանրահայտ բեմահարթակներում Դուք բազմիցս հանդէս էք եկել բարձրարուեստ կատարումներով: Ձեր ելոյթները «Եւգենի Օնեգին», «Պատերազմ եւ խաղաղութիւն « «Լուկրեցիա Բորջիա « «Բոհեմ» եւ այլ օպերաներում բարձր գնահատանքի են արժանացել երաժշտասէր հասարակայնութեան կողմից: Մեծ յաջողութեամբ Դուք դրսեւորել էք Ձեր տաղանդը նաեւ օպերաների բեմադրութիւններում՝ վարպետութեամբ բեմականացնելով ականաւոր ու մեծանուն հեղինակների հռչակաւոր ստեղծագործութիւնները, արժանանալով հայ եւ այլազգի հանդիսատեսների գովասանքին:

Մեզ համար առանձնակի ուրախութիւն է հաստատել, որ այսօր Դուք նոյն արդիւնաւէտութեամբ շարունակում էք Ձեր նշանակալի մշակութային գործունէութիւնը՝ որպէս գեղարուեստական ղեկավար Երեւանի Ալեքսանդր Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի՝ Ձեր կորովն ու եռանդը

ներդնելով օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի առաւել բարգաւաճման, ինչպէս նաեւ երաժշտական մշակոյթի զարգացման շնորհակալ գործում:

Մեծարգոյ Տիար Գրիգորեան, մշակոյթի անդաստանում Ձեր վաստակի եւ ծառայութիւնների բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով առ Աստուած՝ մաղթում ենք Ձեզ քաջառողջ կեանքի արեւառատ երկար օրեր: Թող Բարձրեալ Տէրը պարգեւի Ձեզ նոր յաջողութիւններ, որպէսզի շարունակէք բոլորանուէր Ձեր ծառայութիւնը մատուցել մշակոյթին, Հայրենիքին ու ժողովրդին:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Ապրիլի
Յամի Տեառն 2006 եւ ի թուին Հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 343

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2006 թ. ապրիլին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել է
Վարդգես Գաբրիելյանը (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

**Օրհնության գիր** է տրվել
Հարություն սարկավագ Սվաճյան (Կանադայի հայոց թեմ)
Շաքե Շաքլյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Հակոբ Փափազյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Պողոս Մութաֆյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
ԱՄՆ հայոց Արևելյան թեմի հոգևորականաց համագումարին
ԱՄՆ հայոց Արևելյան թեմի թեմական պատգամավորական ժողովին
ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի հոգևորականաց համագումարին
ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի թեմական պատգամավորական ժողովին
Ավստրալիայի հայոց թեմի թեմական պատգամավորական ժողովին
ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Տիկնանց միության տարեկան համագումարին
ԱՄՆ հայոց Արևելյան թեմի երիտասարդաց միությանը

**Լանջախաչ** կրելու իրավունք է տրվել
Տ. Սերեոս քահանա Ղալաչյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Տ. Հակոբ քահանա Հակոբյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Տ. Թադեոս քահանա Տերտերյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Տ. Շահան քահանա Մովսիսյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Տ. Արիստակես քահանա Հովհաննիսյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Տ. Գրիգոր քահանա Գրիգորյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Տ. Մաշտոց քահանա Հակոբյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում մեր ժողովրդին Ավետման տոնի առիթով և շնորհավորում կանանց՝ Մայրության օրվա կապակցությամբ:

Ամենօրհնյալ Աստվածամոր կերպարը օրինակ է կատարյալ հավատի, սիրող մոր, հոգևոր առաքինազարդ գեղեցկության, ում կյանքը ընծայաբերում եղավ Քրիստոսի փրկչական առաքելությանը: Արդար է, որ Ավետման տոնը հիշատակում ենք նաև իբրև տոն մայրության՝ վերստին կարևորելով մոր և կնոջ դերը ընտանիքում, սերն ու նվիրումը զավակներին, ազնիվ ջանքերը հայրենի մեր երկրի ու հասարակական կյանքի առաջընթացին և մեր ազգային-եկեղեցական կյանքի պայծառությանը: Թող Տիրոջից օրհնվեն բոլոր մայրերը՝ ապրելու բարօր ու երջանիկ կյանքով, կրթելու հավատավոր ու նվիրյալ զավակներ, և թող Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ Բարձրյալն Աստված խաղաղության մեջ պահպանի աշխարհը համայն, մեր Հայրենիքն ու ժողովրդին:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 ապրիլի 2006 թ.

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Ծաղկազարդի Տերունական սքանչելի տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրական Մեր օրհնությունն ու սերն ենք բերում Մեր բոլոր մանուկներին:

Այսօր հիշատակությունն է մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Երուսաղեմ փառավոր մուտքի, երբ ժողովրդի բազմության հետ Քրիստոսին ընդառաջ գնացին մանուկները՝ օրհնաբանություններով և արմավենու ճյուղերով: Քրիստոս միշտ գրկաբաց ընդունեց և օրհնեց մանուկներին, նրանց հոգու անկեղծ զգացումն ու անմեղությունը օրինակ բերելով մարդկանց՝ իբրև առ Աստված հավատի ու ընթացքի ճանապարհ:

Եվ այսօր սուրբ եկեղեցիներում Տիրոջ հանապազ օրհնությունն է վերստին բաշխվում մեր սիրասուն երեխաներին, որպեսզի նրանք հասակ առնեն՝ լի հավատքով, շնորհներով և իմաստությամբ, իրենց կյանքով ու գործերով դառնան մեր Սուրբ Եկեղեցուն ու ժողովրդին արժանի զավակներ:

Ի խորոց սրտի աղոթում ենք առ Բարեգութն Աստված, որ Ամենախնամ Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահի-պահպանի աշխարհի բոլոր երեխաներին, օրհնի նրանց կյանքի ճանապարհը երջանկությամբ, բարիով ու բարիքով:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
9 ապրիլի 2006 թ.

# «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ՋԻՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Ապրիլի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան հանձնեց մեծանուն ճարտարապետ Ջիմ Թորոսյանին և Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար Գեղամ Գրիգորյանին՝ հայ մշակույթին մատուցած իրենց ծառայությունների և մեծ վաստակի համար:

Շքանշանների հանձնման հանդիսությունը բացվեց Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի խոսքով: Սրբազան Հայրը անդրադարձավ մեծարյալների կյանքին, անցած ստեղծագործական ուղուն և ունեցած վաստակին, ապա շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը հայ արվեստագետների նկատմամբ մշտապես ցուցաբերվող ուշադրության և մշակույթի գործիչների գնահատման համար:

Ջիմ Թորոսյանի և Գեղամ Գրիգորյանի կյանքի և գործունեության մասին խոսք ասացին պրոֆ. Վարազդատ Հարությունյանը և բանաստեղծ Սեյրան Զաքարյանը:

Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեցին Հայրապետական Սրբատառ Կոնդակները և ընթերցվեցին Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի և Գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի կողմից:

*«...Առանձնակի գոհունակությամբ ենք անդրադառնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մատուցած Ձեր ծառայություններին, որոնք արտահայտությունն են հոգևոր մեր սրբօրրանի նկատմամբ Ձեր անկեղծ սիրո ու նվիրումի: Լինելով Մայր Աթոռիս Ճարտարապետական խորհրդի անդամ, Դուք համենայնի աջակցություն եք բերում Մայր Աթոռի կողմից իրականացվող շինարարական ծրագրերին՝ Ձեր մասնագիտական կարողություններն ի սպաս դնելով պատմական մեր վանքերի վերանորոգմանն ու նոր եկեղեցիների և եկեղեցական շենքերի կառուցմանը...»*,- ասվում է Ջիմ Թորոսյանին ուղղված Հայրապետական կոնդակում (Տե՛ս «Էջմիածին», 2005 թ., Ժ-ԺԱ, էջ 16):

*«...Այսօր մեծ գոհունակությամբ ենք անդրադառնում մշակութային Ձեր գործունեությանը և տարիների բեղմնավոր վաստակին: Մայր Հայրենիքում և նրա սահմաններից հեռու լայնորեն ծանոթ է Ձեր անունը՝ որպես բազմաթիվ մրցույթների դափնեկիր: ...Այսօր դուք նույն արդյունավետությամբ շարունակում եք Ձեր նշանակալի մշակութային գործունեությունը՝ որպես գեղարվեստական ղեկավար Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի՝ Ձեր կորովն ու եռանդը ներդնելով օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի առավել բարգավաճման, ինչպես նաև երաժշտական մշակույթի զարգաց-*

*ման շնորհակալ գործում...»*,- ասվում է Գեղամ Գրիգորյանին ուղղված կոնդակում (տե՛ս էջ 17):

Կոնդակների ընթերցումից հետո Նորին Սրբությունը մեծարյալների կուրծքը զարդարեց «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով: Շքանշանի հանձնումից հետո ներկաներին իրենց սրտի խոսքն ուղղեցին տիարք Թորոսյանն ու Գրիգորյանը: «Անկեղծորեն շատ եմ ոգևորված, մի քիչ էլ հուզված, բայց չեմ կարող իմ խորին շնորհակալությունը չարտահայտել այստեղ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Շատ և շատ պարտավորեցնող պարգև է: Հայտնի է, որ պարգևը ստանում են անցածի համար, բայց ստացողը պետք է գիտակցի, որ մեծ պարտավորություն ունի նաև ապագայի համար»,- ասաց տիար Թորոսյանը՝ վստահեցնելով, որ պիտի շարունակի իր ծառայությունը բերել Մայր Եկեղեցուն:

«Դժվար է այսօր խոսել, որովհետև իմ կյանքի ամենաերջանիկ օրերից մեկն է: Ինձ համար իրոք շատ մեծ անակնկալ էր այս շքանշանը: Իրապես, դա ինձ պարտավորեցնում է և ավելի մտածել է տալիս, թե ինչպես աշխատես, որպեսզի արդարացնես այդ շքանշանի պատիվը»,- իր խոսքում նշեց պրն Գրիգորյանը:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի գնահատանքի խոսքով: Նորին Սրբությունը վերստին բարձրորեն գնահատեց մեծարյալների՝ հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հանդեպ արդյունաշատ գործունեության միջոցով ցուցաբերվող նվիրումը, սերն ու հավատարմությունը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիտվայի Հանրապետության նախագահ Վալդաս Ադամկուսին և տիկին Ալմա Ադամկիենին՝ ուղեկցությամբ ՀՀ Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի:

Ողջունելով Լիտվայի Հանրապետության նախագահի այցը համայն հայության հոգևոր կենտրոն՝ Նորին Սրբությունը ներկայացրեց նրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմությունը, կարևոր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում և հետխորհրդային շրջանում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գործունեությունը: *«Փառք ենք վերառաքում առ Աստված, որ երկու մեր ժողովուրդների պարագային էլ խորհրդային տարիները չկարողացան խեղել մարդկանց հոգևոր կյանքը, նրանց հոգին և Քրիստոսի հանդեպ սերը: Քրիստոսի հավատով և հույսով մեր ժողովուրդների զավակները կարողացան առավել ամրապնդել իրենց հավատը, դիմագրավել փորձություններին և կերտել անկախությունն իրենց երկրների»,-* ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մաղթելով, որ Տերն ամուր պահպանի փոխհարաբերությունները երկու ժողովուրդների և պետությունների և այդ կապերի նորանոր զարգացումներով առավել շենացնի երկու հանրապետությունները՝ ի բարօրություն ժողովուրդների խաղաղ, ստեղծագործ կյանքի: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց Լիտվայի նախագահին Հայոց ցեղասպանության ճանաչման առնչությամբ և գոհունակությամբ անդրադարձավ նաև այն հոգատար վերաբերմունքին, որ Լիտվայի իշխանությունները ցուցաբերում են հայ համայնքի նկատմամբ, ովքեր քրիստոնյա եղբայրների հետ միասին ապրում են համերաշխ, եղբայրական սիրով՝ ունենալով բոլոր ազատություններն ու հնարավորությունները կազմակերպելու իրենց հոգևոր, ազգային ու մշակութային կյանքը:

Իր հերթին, Լիտվայի Հանրապետության նախագահ Վալդաս Ադամկուսը, իր հարգանքը հավաստելով Հայոց Եկեղեցու և Հայոց Հովվապետի նկատմամբ, անդրադարձավ Եկեղեցու կարևոր դերին հասարակության և հատկապես երիտասարդ սերնդի մեջ հոգևոր, բարոյական արժեքների պահպանության և ամրապնդման գործում: «...Երբ նայում ես ձեր պատմությանը, մեծ հարգանքով տեսնում ես, թե Ձեր Եկեղեցին ինչ քրիստոնեական հիմնարար արժեքներ է տվել իր ժողովրդին»,- նշեց իր խոսքում պրն Ադամկուսը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև միջեկեղեցական և միջկրոնական հարաբերություններին, ինչպես նաև խոսվեց աշխարհում խաղաղության, ժողովուրդների միջև եղբայրության և սիրո հաստատման գործում քրիստոնեական Եկեղեցիների ջանքերի մասին:

Հանդիպմանը ներկա էին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի պատասխանատու Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Լիտվայի Հանրապետության նախագահն այցելեց նաև Վեհարանի թանգարան, եղավ Մայր Տաճարում:

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԲԻԹԱԹԻ» ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ապրիլի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը և «Միջազգային Հաբիթաթի» ներկայացուցիչ դոկտ. Քեննեթ Բեննը ստորագրեցին համաձայնագիր, որով սկսվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և «Միջազգային Հաբիթաթի» համագործակցությունը տնազուրկ, անապահով ընտանիքների համար կացարաններ կառուցելու գործում:

Համաձայնագրի ստորագրման արարողությանը ներկա էին նաև ԱՄՆ Արևելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը, «Հայկական Հաբիթաթի» ազգային գրասենյակի գործադիր տնօրեն Աշոտ Եղիազարյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մարկոս վրդ. Հովհաննիսյանը և Գավառի քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանը:

Ըստ համաձայնագրի, Հաբիթաթը իրականացնելու է ամենամյա միջոցառում՝ «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ» շինարարական ծրագիր անունով: Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և առաջնորդությամբ առաջիկա երեք տարիների ընթացքում նախատեսվում է կառուցել շուրջ 100 բնակարան: Այս տարի Հայաստանի Հանրապետության մարզերում տնազուրկների համար կկառուցվի 37 տուն՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմերի թվի համեմատ: «Կառուցե՛նք հավատով» հիմնական միջոցառումը տեղի կունենա սույն թվականի սեպտեմբերի 5-9-ը Գեղարքունյաց մարզում:

Հարկ է նշել, որ Հայ Եկեղեցու եւ «Հայկական Հաբիթաթի» համագործակցությունը սկսվել է դեռևս 2005 թվականին, երբ Արագածոտնի մարզի Ոսկեհատ գյուղում իրականացվեց «Կառուցում է հայ հոգևորականությունը» ձեռնարկը:

Արարողության ավարտին Հաբիթաթի ներկայացուցիչներին, ուղեկցությամբ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանի, ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: *«Մենք ողջունում ենք այս համատեղ ծրագիրը, որ իրականացվում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետ, և լիահույս ենք, որ մեր հավատավոր զավակները սիրով պիտի արձագանքեն Մեր հրավերին և իրենց մասնակցությունը բերեն այս ծրագրի իրագործմանը: Աստվածահաճո, աստվածօրհնյալ գործ է և աշխատանք, որը նաև աղոթք է: Թող Աստված օրհնի այս համատեղ ձեռնարկը, որ պիտի իրականացնենք միասնաբար Հայաստանում՝ ի սեր և ի բարօրություն մեր ժողովրդի»*,- ասաց Նորին Սրբությունը՝ իր գնահատանքն ու օրհնությունը բերելով «Միջազգային Հաբիթաթին»: Վեհափառ Հայրապետը, կարևորելով նման ձեռնարկների իրագործումը, նշեց, որ այն ոչ միայն տանիք է տալիս կարիքավոր ընտանիքներին, այլև սերմանում է նմանին սիրելու և բարեգործություն կատարելու ոգի:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## *ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ*

# Տ. ԼԵՎՈՆ ԱԲԵՂԱ ԳՈՒԼՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 ապրիլի 2006 թ.)

Գոհություն և փառք եմ վերառաքում առ Բարձրյալն Աստված, որ հնարավորություն ընձեռեց ինձ՝ մեղավորիս, առաջին անգամ լուսավորչահիմն այս տաճարի քրիստոսադրոշմ կամարների ներքո, սրբազնասուրբ այս խորանի առջև Սուրբ և Անմահ Պատարագ մատուցել այս գեղեցիկ տոնի առթիվ: Նախ հոգուս պարտքն եմ համարում երախտագիտության խոսքս ուղղել ազգիս Շնորհազարդ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ում գահակալության օրոք մուտք գործեցի հոգևոր ասպարեզ և ում հայրախնամ մականի ներքո կրթվեցի և դաստիարակվեցի, և իբրև երիտասարդ հոգևորական, համեստ կարողություններս պատրաստ եմ ներդնելու ի սպաս Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի:

Իմ շնորհապարտ սերն ու զգացմունքն եմ բերում նաև հոգևոր ծնողիս՝ Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանին, ում ձեռամբ տարվույս փետրվար 5-ին կոչվեցի քահանայության՝ համալրելով Մայր Աթոռի միաբանության շարքերը: Ինչպես նաև մեր սերն ու երախտագիտությունն ենք ուղղում այն անձանց, ովքեր դույզն-ինչ նպաստեցին մեր հոգեմտավոր զարգացմանը:

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբում է Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնի Ավետման տոնը: Եվ իրապես, մեծ պատիվ է ինձ համար Սուրբ Էջմիածնում անդրանիկ Պատարագս մատուցել այս տոնին, քանզի այս օրը տրվեց ավետիս, որ ծնվելու է մարդկության Փրկիչը. «... ուրախացի՛ր, ով շնորհընկալ, Տերը քեզ հետ է» (Ղուկ. Ա 28):

Այս խոսքերը բարբառեց հրեշտակը՝ այցելելով Սրբուհի Կույս Մարիամին: Ինչպես նշում է Ավետարանիչը՝ այս խոսքերը շփոթմունքի մատնեցին Մարիամին, ինչը բնական է: Սակայն հրեշտակը մեկնում է իր խոսքերը. «... մի՛ վախեցիր, Մարիամ, որովհետև Աստծուց դու շնորհ գտար: Եվ ահա դու կհղիանաս և կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես»: Հրեշտակը, շարունակելով խոսքը, ասում է.» Սուրբ Հոգին պիտի այցելի քեզ, և նա, ով որ պիտի ծնվի քեզնից, Աստծու Որդի պիտի կոչվի» (հմմտ Ղուկ Ա 35): Այս ամենը լսելով՝ Մարիամն այլևս չի ընդդիմանում ու խոնարհաբար ասում է. «... ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը. թո՛ղ քո խոսքի համաձայն լինի ինձ»:

Արդարև, Քրիստոնեական Եկեղեցին սրբացրեց Աստվածամորը, քանզի նա իր սրտի, մտքի և հոգու բացառիկ շնորհներով առաքինության տիպար դարձավ բոլոր ժամանակների մայրերի համար: Երկրագնդի վրա ոչ մի մայր չկրեց իր զավակի նահատակության վիշտն իր անչափելի խորությամբ, որքան Աստվածամայրը՝ Գողգոթայի բարձունքի վրա: Ծունկի եկած իր խաչյալ որդու առջև՝ականջալուր եղավ անարգալից

խոսքերի, սակայն չընկրկեց, այլ իր սիրո արտահայտությամբ զովացրեց խաչյալի պապակած հոգին:

Սուրբ Կույս Մարիամը Հայ Եկեղեցու ըմբռնումի և հոգեբանության մեջ ապրում է իբրև տիպար կնոջ և օրինակելի մոր: Առհասարակ Աստվածածնի Ավետման տոնին Հայ Եկեղեցու քարոզիչներն իրենց խոսքն ուղղում են հատկապես կանանց և մայրերին, քանզի մարդկության կյանքում կնոջ կոչումը գերազանցապես մայրությունն է: Մայր նշանակում է սեր, նվիրում, համբերություն, բարություն և անձնազոհություն: Մեզանից յուրաքանչյուրն իր զբաղեցրած դիրքով, իր հաջողություններով և նվաճումներով, իր տաղանդով անժխտելիորեն պարտավոր է մոր դաստիարակիչ սիրուն: Մոր սիրտը միշտ տաք է, սերն՝ անսպառ, համբերությունն՝ անսահման, զգացումներն՝ անփոփոխ, և հոգին՝ հավիտենապես հոժար. թեև կբարկանա, կհանդիմանի և նույնիսկ շատ բաներից կզրկի իր զավակին, բայց իր բարկության պոռթկումը վայրկենական է. կների և կսիրի իր զավակին, որքան էլ ծանր լինի իր հանցանքը:

Սիրելի՛ հավատակից ներկաներ, Աստվածամոր ավետումով աշխարհը ևս մեկ անգամ լիալրվեց և լուսավորվեց: Սուրբ Աստվածածինը, Ավետարանիչների վկայությամբ, Քրիստոսի Ծնունդից մինչև Հրաշափառ Հարությունը ամեն վայրկյան տրոփող սրտով հետևեց Փրկչի երկրային ընթացքին և հոգեկան անհուն հրճվանքով և մայրական խանդաղակաթ գորովով արձանագրեց իր հոգում Քրիստոսի յուրաքանչյուր խոսքն ու պատգամը:

Աստվածամայրը հպարտ էր ու երջանիկ իր զավակով, հպարտ էր իր մայրությամբ, որովհետև ծնել էր աշխարհի լույսին՝ մարդկության Փրկչին, սիրո Աղբյուրին: Հպարտ էր ու երջանիկ, քանզի մայր էր՝ մայր բառիս լեցուն ու ամբողջական իմաստով: Խորապես գիտակից էր իր մայրության գերագույն շնորհին ու նվիրականությանը՝ ամբողջապես նվիրվելով Նրան, Որին ծնել էր, որովհետև Նա իր էության մեկ մասն էր, իրենից էր առել մարդկային մարմին, հոգի և միտք և ի վերջո իր մեջ էր կերպավորվել: Վստահաբար հայ մայրերն այս գիտակցությամբ, հասկացողությամբ ու այս հավատքով մայրացան: Հայ քույրերն այս գիտակցությամբ ու հավատքով զինվեցին լինել ճշմարիտ մայրեր ապագա հայ սերունդների: Կարող եք շատ նախասիրություններ ունենալ, բայց երբեք ու երբեք մի՛ մոռացեք, որ ամեն բանից առաջ և ամեն բանից վեր սահմանված և կոչված եք մայր լինելու:

Սիրելի՛ մայրեր և քույրեր, եղե՛ք ձեր նվիրական կոչումի բարձունքի վրա, քանզի դուք եք լուսեղեն տաճարը, հայ ընտանիքի սրբության խորանը և հայ ազգի անսասանության խարիսխը:

Արդ, սիրելինե՛ր, ահա այս մտորումներն էին, որ ցանկանում էի փոխանցել ձեզ: Վերջին տարիներին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Սուրբ Ավետման տոնը հռչակվել է Մայրության Օրհնության օր: Եվ այս առթիվ մեր շնորհավորհանքներն ենք բերում ձեզ, սիրելի՛ մայրեր և քույրեր: Թո՛ղ Աստվածամոր տիպարը ձեր հոգու և մտքի աչքերից երբեք չխամրի, և Սուրբ Կույսի անդադար բարեխոսությունը անպակաս լինի ձեր և ձեր զավակների վրայից այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

# Տ. ՎԱԶԳԵՆ ԱԲԵՂԱ ՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(9 ապրիլի 2006 թ.)

Սիրելի քույրեր և եղբայրներ ի Քրիստոս,

Սրանից շուրջ 2000 տարի առաջ հեռավոր Հրեաստանի Երուսաղեմ քաղաքում տարվա շատ օրերից ոչնչով չտարբերվող մի օր էր: Արեգակը սովորականի պես ծագել էր քաղաքի վրա և օդն, ինչպես միշտ, լի էր կազնած փոշով: Մարդկանց համար այդ օրը բնավ չպիտի նշանավորվեր, եթե չլիներ առօրյա թոհուբոհից միանգամայն տարբերվող մի արտառոց իրադարձություն՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ մուտքը Երուսաղեմ: Այդ օրը բոլոր մարդիկ զբաղված էին իրենց հանապազօրյա հոգսերով. վաճառականները շտապում էին իրնց սրահները, դատավորները՝ ատյաններ, փարիսեցիները՝ ժողովատեղիներ, սակայն այդ օրն Աստծո կամքով առանձնահատուկ մի օր էր լինելու:

Քանի որ Զատկի տոնն արդեն մոտեցել էր, Հիսուս Իր աշակերտների հետ որոշում է գնալ Երուսաղեմ: Մոտենալով Ձիթենյաց լեռանը, Նա առաքում է տասներկուսից երկուսին՝ ասելով. «Գնացե՛ք այն գյուղը, որ մեր դիմացն է. երբ այնտեղ մտնեք, կգտնեք կապված մի ավանակ, որի վրա ոչ մի մարդ երբեք չի նստել. արձակեցե՛ք այն և բերեք» (Ղուկ. ԺԹ 30): Երբ ավանակը բերվում է, Հիսուս նստում է վերջինիս վրա և առաքյալների ուղեկցությամբ ճամփա բռնում դեպ Երուսաղեմ:

Տիրոջ երկրավոր կյանքի ընթացքում սա առաջին անգամը չէր, անշուշտ, երբ Նա գալիս էր Երուսաղեմ: Առաջին անգամ Հիսուս հավիտենական քաղաք էր մտել ծննդյան Իր քառասնօրեքին, երբ ծնողների կողմից Մովսիսական օրենքի համաձայն տարվել էր Սողոմոնի տաճար՝ ընծայաբերվելու համար: Եթե Երուսաղեմ այցելության առաջին առիթով ահավոր մի դղրդյուն էր լսվել, քանի որ բացվել էր տաճարի այն դուռը, որը մարգարեության համաձայն պիտի բացվեր միմիայն Մեսիայի գալստյան առիթով, ապա այս անգամ Տիրոջ գալստյան լուրը, իբրև մի հսկա ալիք, բարձրանում ու հեղեղում է ողջ քաղաքը:

Մարդիկ թողնելով իրենց գործերը, տանուտերերն՝ իրենց ծառաներին, ծնողներն՝ իրենց զավակներին, դուրս են վազում Տիրոջն ընդառաջ: Հիսուսի անունը բոլորի շուրթերին էր, և Երուսաղեմում չկար մեկը, որ տակավին չէր լսել Տիրոջ կատարած անպատմելի հրաշքների, բժշկությունների և, ի վերջո՝ Ղազարոսի հարության մասին: Այդ իսկ պատճառով ամեն ոք ջանում էր գեթ մեկ վայրկյան շուտ հասնել քաղաքի արևելյան դարպասների մոտ՝ Հիսուս Քրիստոսին տեսնելու հույսով: Այս համընդհանուր շփոթությունը լավագույնս արտահայտել են հայ մանրանկարիչները, որոնց գործերում, համաձայն ընդունված պատկերագրության, մարդիկ նույնիսկ տա-

նիքների և ծառերի վրա են բարձրանում, որպեսզի գեթ հեռվից տեսնեն Աստծո Որդուն:

Երուսաղեմ քաղաքը և առհասարակ հին աշխարհի պատմությունը բազում թագավորների հաղթական մուտքերի է ականատես եղել, սակայն Հիսուսի մուտքը վերջիններիս ճիշտ հակապատկերը կարծես լիներ: Տիեզերքի Արարիչն ու Տերը միշտ հավատարիմ մնաց Իր խոնարհության ուխտին: Մարդիկ ակնկալում էին Դավթի որդու՝ Հրեաստանն ազատագրող ու միավորող մեկի փառավոր մուտքը Երուսաղեմ՝ թերևս զենքով ու զրահով, թերևս ներկայանալի զորքով և, ինչու չէ՝ ավարով ու հարստությամբ, սակայն իրենց աչքերի առջև բացվում էր բոլորովին մեկ այլ տեսարան: Հիսուս ավանակի վրա նստած մտնում է քաղաք՝ Իր հետ ունենալով Իր սիրելի աշակերտներին և մարդիկ, ովքեր ցնծությամբ իրենց զգեստներն էին փռում ճանապարհի վրա, որպեսզի Տերն անցնի դրանց վրայով, իսկ ոմանք էլ արմավենու և ձիթենու ճյուղերը ձեռքներին գովաբանում էին Տիրոջն ու աղաղակելով ասում. «Օրհնությո՜ւն Դավթի Որդուն, օրհնյա՜լ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնությո՜ւն՝ բարձունքներում» (Մատթ. ԻԱ 9):

Փարիսեցիներն ու դպիրները, ականատեսը դառնալով այս դեպքերի, սաստիկ ընդվզում են և պահանջում Հիսուսից, որ սաստի ու պատվիրի Իր աշակերտներին, որպեսզի լռեն, սակայն Հիսուս պատասխան է տալիս նրանց՝ ասելով. «Ասում եմ ձեզ, որ եթե դրանք լռեն էլ, այդ քարերը կաղաղակեն» (Ղուկ. ԺԹ 40):

Ահավասիկ, սիրելի հավատացյալներ, «Հիսուսի մուտքը Երուսաղեմ» տոնի ավետարանական պատումը, մի տոն, որը մեզանում անվանվում է Ծաղկազարդ և որն ունի ժողովրդական տարածում ունեցող մեկ այլ անուն ևս, որ է՝ Ծառզարդար:

Հետաքրքրական է, որ այս տոնը ևս ունի ժողովրդական և պատմության խորքը գնացող արմատներ: Բանն այն է, որ ժողովրդի կողմից ծառի ճյուղերով Հիսուսի ճանապարհը զարդարելը նաև հեռու արձագանքն էր բնության զարթոնքին և վերածնունդին սերտորեն աղերսվող նախաքրիստոնեական մի պաշտամունքի: Հիսուս մուտք գործելով Երուսաղեմ՝ ոչ թե սոսկ զարթոնք պարգևեց բնությանը, այլ նոր կյանք և իմաստ հաղորդեց մարդկային ողջ գոյությանը: Ճիշտ է, Հիսուս առաջին անգամը չէր, որ Երուսաղեմ էր գալիս, բայց այս մեկը պետք է դառնար վերջինը: Հիսուս գիտեր, որ պիտի մտներ Երուսաղեմ և այլևս անցներ Իր երկրավոր կյանքի վերջին հանգրվանին, որն էր Խաչի ճանապարհը:

Երբ Տերը մուտք է գործում Երուսաղեմ, մարդիկ ամենայն ուրախությամբ և անկեղծ ցնծությամբ օվսաննաներ էին բացականչում, սակայն նույն այդ ժողովուրդն ամբոխ դարձած մի քանի օր անց Պիղատոսի առջև կանգնած պիտի սառնասրտորեն պահանջեր ու գոչեր. «Խա՜չը հանիր, խա՜չը հանիր դրան» (Հովհ. ԺԹ 6): Հիսուս գիտեր ամեն բան, սակայն այս ամենի մասին տեղյակ լինելով հանդերձ, մարդ արարածի հանդեպ Իր անհուն սիրով լցված և հնազանդվելով Հոր կամքին՝ Քրիստոս ուղղեց Իր քայլերը դեպի մահ, որը կյանք պիտի տար ողջ մարդկությանը:

Հիսուս համընդհանուր ցնծության մթնոլորտում մուտք գործելով Երուսաղեմ՝ հոգու խորքում, սակայն, սաստիկ տխուր էր, որովհետև գիտեր, թե ինչ գալիք է

սպասվում, որի ապացույցը Քրիստոսի արցունքներն են և Երուսաղեմի մասին ասված այն խոսքերը, թե «եթե գիտենայի՜ր դու, գոնե այս օրերին, քո խաղաղությունը. բայց այժմ ծածկվեց քո տեսողությունից. որովհետև օրեր պիտի գան վրադ, երբ թշնամիներդ քո շուրջը պատնեշ պիտի կանգնեն և պիտի պաշարեն քեզ, պիտի նեղեն քեզ բոլոր կողմերից և հիմնահատակ պիտի անեն քեզ և սպանեն քո մեջ՝ քո որդիներին. և քո մեջ քարը քարի վրա բնավ չպիտի թողնեն, քանի որ քո այցելության ժամանակը չճանաչեցիր» (Ղուկ. ԺԹ 42-44): Պիտի չանցներ շատ ժամանակ, մինչև որ Երուսաղեմը հիմնովին նվաճվեր հռոմեացի զինվորների կողմից:

Այդ օրերից անցել են դարեր, բայց և մարդու Որդու խոսքի համաձայն, խաղաղությունը, որ Երուսաղեմի անունն է, կարծես իսպառ վերցվել է այդ հողից: Մինչև օրս էլ Երուսաղեմը չի գտել իր խաղաղությունն այնպես, ինչպես մարդ չի կարող գտնել իր փրկությունը Հիսուսից դուրս:

Սիրելինե՜ր, տերունական այս սքանչելի տոնի առիթով Աստծուց հայցում եմ, որ Տերն օրհնի ձեզ ամենքդ: Դուք ևս վերցրեք ուռենու ոստերն ու, ընդունելով Տիրոջը ձեր սրտերում, փառաբանեք և օվսաննաներ վերառաքեք երկնքի ու երկրի Արարչին՝ չմոռանալով երբեք, որ պիտի միշտ հավատարիմ մնանք Նրան, Ով Իր կյանքն անգամ չխնայեց մեզ համար և Ով գրկաբաց սպասում է մեզ այսօր, վաղը և հավիտյանս հավիտենից. ամեն:

# Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 ապրիլի 2006 թ.)

**«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:**

Տրտմահաղորդ այս օրը Երկնավոր Թագավոր մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ, Սուրբ և Մեծ Մատնության և Չարչարանքների հիշատակն է: Երկնավոր Թագավորը երկրավոր Իր վերջին օրերին Իր վերջին պատգամները տվեց Իր աշակերտներին և պատրաստվեց խաչելության, ապա՝ մահվան, հետո՝ թաղման, իսկ վերջում՝ շռնդալից Հարության:

Զարմանալի է ու գեղեցիկ, որ մատնությունն էլ մեր հայրերը կոչել են սուրբ և մեծ, բայց այդ ոչ թե Հուդայի վարմունքն է, այլ՝ Հիսուսի սրբագործումն այդ արարքի հանդեպ: Ընթերցվեցին ավետարանական վեց պատումներ, և մենք ուշիուշով հետևեցինք այդ պատմությանը, իսկ այժմ անդրադառնանք այդ պատմության բուն հոգևոր իմաստին՝ խորհրդին:

Սովոր էր մարդկությունը տիեզերական պատմությունից, որ չաստվածները չաստվածների հանդեպ դավադրություններ ու մատնություններ էին պատրաստում, ապա կախաղաններ, բանտարկություններ ու սպանություններ: Հայր չաստվածն անխիղճ էր իր որդիների հանդեպ, եղբայր չաստվածն անգութ էր իր քույր չաստվածուհու հանդեպ, սակայն այդ ամենը՝ մինչև Հիսուս:

Եվ ահա պատմության մեջ տիեզերքի մի փոքրիկ անկյունում, որչափ էլ մեծ և աhարկու լինի այդ ողբերգությունը, մարդն է դատում, մահապարտ հռչակում, ապա խաչ բարձրացնում Ճշմարիտ և միակ Աստծուն:

Ինչպիսի հանդգնություն մարդու կողմից և ինչպիսի հնազանդություն Աստծու կողմից: Դեմ հանդիման են Աստված և մարդ: Մի պահ կանգ է առնում պատմությունը, չի շարժվում ժամանակը, և չի շնչում բնությունը: Հավիտենական Քահանայապետը ժամանակավոր օրենսդիր քահանայապետի դիմաց, Երկնավոր Արքան փոքրիկ մի կուսակալի դիմաց: Եվ ահա պիտի արձակվի վճիռ. մահապարտ է այն մարդը, որ հռչակել էր իրեն Աստծո Որդի:

Վկայել էր Վարդապետն Իր ուսմունքը ճշմարտապես թե՛ տաճարում, թե՛ ամենուր և չէր թաքցրել ոչինչ: Եվ ահա քահանայապետը և կուսակալը վկաներ են փնտրում, որպեսզի վկայություն տան այն մասին, որը Նա ոչ ասել է և ոչ էլ՝ գործել: Արձակվում է դատավճիռը. «... մահապարտ է, պետք է նա դատապարտվի մահվան»: Իրագործվում է դատավճիռը, մահվան է դատապարտվում Երկնավոր Թագավորը՝ ո՞ւմ կողմից. Իր ձեռքով ստեղծված արարածների: Նա, որ քիչ առաջ Գեթսեմանիի պարտեզում հայացքը դեպի երկինք աղոթում էր առ Հայր Աստված, ոչ թե Իր համար, այլ բոլոր նրանց համար, ովքեր Իրեն պետք է դատապարտեին մահվան:

Այն սուրբ ձեռքերը, որ ստեղծեցին մարդկանց, այդ ձեռքերը մարդիկ պարաններով կապեցին, այն շուրթերը, որ օրհնություն ու սաղմոսներ էին տարածում և ճշմարիտ կյանքի վարդապետություն, ստացան նախատինք, թուք և ապտակ: Նա, որ կենդանություն պարգևեց մեռածին, ընթացք՝ անդամալույծին, տեսողություն՝ կույրին, և լսողություն՝ խուլին, կանգնեց մի պահ խլացածների, կույրերի և համրերի առջև, հեզությամբ և խոնարհությամբ տարավ բոլոր ծաղրանքները, որովհետև այդ էր կամքը Երկնային Հոր: Պետք է ըմպեր տխրության, տառապանքի և տանջանքի բաժակը ցմրուր: Այդ էր նախատեսված, այդ էր լինելու Իր երկրային կյանքի ավարտը, և Ինքն էլ վկայում էր խաչից Իր վերջին խոսքով՝ »Ամենայն ինչ կատարված է»: Ավանդեց հոգին Երկնավոր Հոր ձեռքերում և Սուրբ Հոգու շնորհների ներքո ավանդ թողեց մեզ մի նոր կյանք: Ահա այդ Հրաշափառ Հարության լույսի շառափներով զարդարված՝ մենք այս օրը կոչում ենք Սուրբ, Հրաշափառ և Մեծ Մատնության և Չարչարանքի հիշատակության օր:

Գոտեպնդվենք այդ խորհրդով և ընթանանք ևս երկու քայլ առաջ և ողջունենք Տիրոջ Հարության լույսը: Գոտեպնդվենք սիրով և խաղաղությամբ՝ այն երկու կարևոր պատգամներով, որ Հիսուս արտաբերեց վերջին անգամ. «... մնացե՛ք խաղաղության մեջ, հույսներդ՝ անսպառ, և սերերը ձեր միշտ՝ բարենորոգ»: Ամեն:

# Տ. ԻՍԱՀԱԿ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(30 ապրիլի 2006 թ.)

*«Հիսուս պատասխանեց և ասաց նրան. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը տեսնել»:*

(Հովհ. Գ 3)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի՛ հավատացյալներ,

Այս խոսքերը քիչ առաջ ընթերցվեցին օրվա՝ Աշխարհամատրան կամ, ինչպես ժողովուրդն է հաճախ ասում՝ Կանաչ կիրակիի Ավետարանից: Հովհաննես Ավետարանիչը բավականին հանգամանալից ձևով է ներկայացնում Հիսուսի և Նիկոդեմոսի միջև տեղի ունեցած հետևյալ սրտահույզ մեկ զրույցը, որը խորհրդաբանորեն կարելի է նկատել որպես փոխհարաբերության եղանակ Աստծո և մարդու միջև առհասարակ: Հին Ուխտի հետևորդ Նիկոդեմոսը, իշխանավոր և ուսուցիչ լինելով հանդերձ, նրբանկատությամբ, զգուշավոր և հնազանդ խոնարհումով էր իր հարցերն ուղղում Տիրոջը, և ինչպիսի սիրով էր Քրիստոս պատասխանում վերջինիս՝ շարունակ հնարավորություն ընձեռելով, որպեսզի Նիկոդեմոս կրկին ու կրկին Իրեն ուղղի իր հարցերը: Եվ որպես այդ փոքրիկ, բայց բովանդակալից զրույցի հանրագումար՝ Քրիստոս Նիկոդեմոսի միջոցով մեզ է ուղղում հետևյալ խոսքերը. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը տեսնել» (Հովհ. Գ 3):

Պատահական չէ, որ մեր Եկեղեցու հայրերը Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակիի համար ընտրել են ավետարանական այս հատվածը: Նախ նկատենք, որ աշխարհամատուռը՝ կազմված «աշխարհ» և «մատուռ» բառերից, աշխարհի առաջին մատուռն է, որ հունարեն «մարտյուռոն» բառի հետևությամբ նշանակում է նաև մարտիրոսանոց: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունից և համբարձումից հետո առաքյալները, հավաքվելով Վերնատան մեջ, Տիրոջ հետևմամբ և պատգամով օրհնում էին հացն ու գինին, համատեղ, միաբանաբար աղոթում էին և միաբանաբար ճաշում: Այդ ճաշերը կոչվում էին սիրո ճաշեր: Այսօրինակ կենցաղավարության արդյունքում ձևավորվեցին առաջին մատուռները: Ի հիշատակ եկեղեցու սահմանվեց հատուկ տոնական օր՝ Աշխարհամատրան տոնը, որը մեզ համար առանձնահա-

տուկ նշանակություն ունի: Այն առաջին հաստատությունն էր, ուր աշխարհի առաջին քրիստոնյաները համատեղ ապրում էին:

Հետագային ձևավորվեց նաև մարտիրոսների եկեղեցին և կոչվեց աշխարհամատուռ, իսկ այնուհետև գերեզմանների վրա նրանց հիշատակին կառուցվեցին վկայարաններ, մատուռներ ու եկեղեցիներ:

Կանաչն էլ գալիս է հաստատելու բնության կապը քրիստոնեության հետ: Ինչպես որ գարնանը ծլարձակում են ցանված առաջին ծիլերը, կանաչում է բնությունը, փթթում է կյանքը, նույն ձևով էլ Աշխարհամատուռն, իբրև Քրիստոսի ցանած ծիլ, աճեց ու տարածվեց համայն աշխարհում, որտեղից էլ «Կանաչ կիրակի» անվանումը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր հավատացյալ իր ողջ կյանքի ընթացքում սնունդ, աճ ու զարգացում է ունենում մի որթից, որ է Քրիստոս: Յուրաքանչյուր հավատացյալի և եկեղեցու համար սրբազան պարտք է աստվածային սերմը սերմանել մարդկանց սրտերում՝ արմատախիլ անելու համար աշխարհի չարությունները: Յուրաքանչյուր քրիստոնյա պարտավոր է իր տուրքը բերելու Աստծուն և մարդկանց, զի Աստծուն ծառայությունը ծառայություն է և մարդկանց, և մարդկանց ծառայությունը՝ Աստծուն: Ինքը՝ Աստված, քաջալերելով ու մեղմելով մեր ամենքիս ցավն ու տարակուսանքը, վստահեցնում է, որ եթե «Իրավ ինձ սիրում եք, դուք էլ կանեք այն գործերը, որ ես եմ անում և գուցե թե դրանից ավելի մեծերը» (հմմտ. Հովհ. ԺԴ 12):

Եվ իրիրավի. մի՞թե վերստին ծնվելու արդյունքում և Աստծո արքայությունը տեսնելու ձգտումը չէր առաջնորդում առաքյալներին, ովքեր Սուրբ Հոգով զորացած քրիստոնեական անբիծ հավատը տարածեցին աշխարհի բոլոր ծագերում: Մի՞թե մարտիրոսների ու սրբերի այն մեծաթիվ բույլը, որ գիտակցաբար ընդունեց մահվան պսակը, որ թողնելով հողեղեն մարմինը՝ զգեցավ պատկերը երկնավորի, չվերածնվե՞ց արդյոք սիրո և զոհաբերության ոգով, և մի՞թե մեր բյուրավոր նահատակները, որոնց 91-րդ տարելիցն ու ոգեկոչման հիշատակը կատարեցինք օրեր առաջ, լո՞ւյսը չընտրեցին աստվածային շնորհների ներշնչմամբ հաստատելով, որ ով մեռնում է մեղքի համար, հավիտյանս անմահ է արդարության համար:

Որովհետև նա, ով չի նորոգում և բարձրացնում նախնիների առաքինությունը, ամոթ ու նախատինք է իր պապերի համար և մի նոր անեծք (հմմտ. Սիրաք Ի 28): Այնքա՜ն խորն է ավետարանական խոսքը, այնքա՜ն ընդգրկուն, որ անհնարին է չընկալել մարդկությանն ուղղված հետևյալ հորդորը. «Ոչ ոք ճրագ վառելով ծածուկ տեղ չի դնի, այլ կդնի աշտանակի վրա, որպեսզի մտնողը լույս տեսնի» (Ղուկաս ԺԱ 33): Քրիստոս մեզ ուսուցանում է, որ Աստված անանց արժեքների, առաքինությունների և բարոյականության ակնկալողն է, ով մշտապես ներկա է մեր կյանքի մեջ:

Սիրելի՛ հավատացյալներ,

Այսօր յուրաքանչյուր հայի համար աղոթքի և ուխտի օր է, հոգևոր ուրախության և սիրո, ծառայության և Տիրոջը ընծայարկվելու օր, քանզի այսօր եկեղեցու հիմնադրության օրն է, այն Եկեղեցու, որի գլուխն է Քրիստոս, որը հավատք է վառում և շնորհք տալիս փրկության լույսի մեջ (հմմտ. **Ա. Տեր-Միքելյան**, Հայաստանյայց Առա-

քելական Եկեղեցու քրիստոնեականը, էջ 237)՝ հաստատված առաքյալների ու մարգարեների հիմի վրա, որի արգանդը կենարար ավազան է (Գր. Նարեկացի):

«Ինչպես արեգակի ճառագայթները սկզբից ծագում են, հետո ծավալվում, այդպես էլ անփոփոխ է խկության էության ճշմարտությունը» (**Տեր-Միքելյան**, էջ 239): Եվ այդ ճշմարտությունն այսօր գալիս է ցուցանելու, որ ազգությունն ու եկեղեցու ազգային դրոշմը իրար միահյուսված հասկացություններ են դարձել դարերի ընթացքում: Մի՞թե հեթանոսության մեջ շարունակ խարխափող և իր տկարություններին հաճախ անզիտակ, հոգևոր բարձր արժեքների կարիքն ունեցող մարդուն քրիստոնեությունը չտվեց անհրաժեշտ առավելությունները Աստծուց սպասելու համոզմունքը: Մի՞թե, հիրավի, սգավոր, արդարության քաղցն ու ծարավն ունեցող մարտիրոսները չբերեցին բարոյական առավելություններ: Մի՞թե տկար ու տկարական կերպարանքի դիմաց քրիստոնեական միտքը չբերեց տիրական ուժ և աստվածային զորություն:

Եվ, վերջապես, մի՞թե մեր երեկվա, այսօրվա ու վաղվա օրվա, մեր լուսալիր մանկան, անվախ ու քաջարի զինվորի, մեր շնորհաշատ հայրապետի ու մեծահանճար բանաստեղծի համար մենք պարտական չե՞նք քրիստոնեությանն ու Քրիստոսի Ավետարանին:

Մեր շարականներում ասվում է. «Երևալն արեգական անէանան աստղունք»:

Լուսաբացի խորհրդավոր երկունքից մինչև քաղցր ու զով գիշերվա երկնքում լռդացող աստղերը, մեր գոհունակ ճառագայթումներից մինչև համընդհանուր երջանկություն, մեզ ուղեկցում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայացքը: Եվ ինչպես որ ժամանակին Քրիստոս բարձրացրեց Իր աչքերը և հայեց Իր աշակերտներին, այդպես և այսօր նույն հայացքը՝ մեղրանուշ ու աներկբա, զորովանքով ու ողորմությամբ լեցուն, մեզ է ուղղված: Եվ այդ հայացքը մեզ է ուղղված ա՛յս եկեղեցու միջից:

Դեռևս առաքելական շրջանում, երբ կազմավորվում էին քրիստոնեական առաջին եկեղեցիները, առկա էին այնպիսի իրավիճակներ, որպիսիք խաթարում էին Ընդհանրական Եկեղեցու միասնությունը, շեղում հիմնական առաքելությունից: Բայց Քրիստոսի Եկեղեցին կարողացա՛վ հաղթահարել ճշմարտության փնտրտուքը ժամանակի և տարածության մեջ, հողմերի ու հեղեղների մեջ մնալով անշեղ ու հաստատ, առաքելական նախանձախնդիր հուզավառումով: Այդուհանդերձ, սիրելի հավատացյալնե՛ր, այսօր էլ մեր բարի ու լուսավոր երազներին, մեր սրտերի ազնիվ զարկերին հակադրվում է օտարամոլ իմաստակություն, Մաշտոցյան հարուստ ու պատկերավոր լեզվին, մեր հիրավի ինքնատիպ ժողովրդի հոգևոր ջերմությանը՝ օտարամուտ թույն: Մեր ժողովուրդն այսօր էլ ահաբեկվում է զանազան օտարածին ուսմունքներով և սեփական ժողովրդին սատարելու, սեփական Եկեղեցին շենացնելու փոխարեն ոմանք տուրք ու տեղի են տալիս:

Մարդկության պատմության ընթացքին ժամանակ առ ժամանակ երևան են եկել փափկակենցաղ, իրենց հարստության կամ ազդեցության վրա հույս դրած մարդիկ, ովքեր ինչպես սուտ մարգարեներ, անիրավությամբ ու մարդկային չգիտությամբ ցանկացել են զեղծել ու աղճատել մարդկային նկարագիրը՝ սեփական փափագին ընթացք տալու համար, ջանացել են կանգնեցնել մեր սրտերի համատրոփ զարկերն ու

պղտորել գորովով եղբայրացած մեր աչքերը, այնինչ Աստված ըստ Իր իմաստության մեզ տվել է եղբայրությա՛ն գաղափարը, սիրո՛ վարդապետությունը՝ ցույց տալու, որ արտաքին առավելություններն ու անցավոր զորությունները չեն, որ ուղեկցելու են մարդկությանը դեպի փրկագործություն, այլ լուսավոր և ընտիր գործերը, ինչպես որ գրված էլ է. «Ձեր գործերը լուսավոր և ընտիր լինեն. և մարդիկ ձեր գործերից քաջ-զության ճշմարտության համոզումն ունենան և փառավորեն երկնավոր Հորը, որ երկնքում է»: Զգույշ եղե՛ք, գրում է Պողոս առաքյալը, չլինի թե մեկը ձեզ գրավի ճար-տարամտությամբ և սնոտի խաբեությամբ. դրանք մարդկային ավանդության և բնության տարերային ուժերի վրա են հիմնված և ոչ թե Հիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետության:

Քրիստոս մեզ պատգամում է. «Եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո ար-քայությունը տեսնել»:

Վերածնությունը այլ բան չէ, եթե ոչ անտեսանելի թշնամու հակառակության ժա-մանակ ճշմարտության մեջ մնալը: Մի՛ տարուբերվեք հողմակոծ ծովի ալիքների նման, որոնց հաստատությունն ու ուղղությունը քամու ուժգնությունից է կախված: Եղեք Մայր Եկեղեցու ճշմարիտ մշակները, իսկ ճշմարիտ մշակի գործն է հավաքել օգտակար պտուղը շտեմարանների մեջ, իսկ փուշը կրակին տալ: Թե՛ վերածնությու-նը և թե՛ մանավանդ երկնային արքայության վարձը, Աստծո արքայության տեսութ-յանն արժանանալը միշտ էլ քաջալերություն է ներշնչել մեզ՝ հակադրվելու բարբա-րոսությանը քրիստոնեական անձնդիր կեցվածքով, երկյուղած բարեխղճությամբ, վա՛ռ պահելով սեփական գորովանքի ճրագը, ակնկալելով աննյութ և հոգեպարար վարձատրություն, քանզի հայ հավատացյալի փրկությունը Հա՛յ Եկեղեցու միջոցով է՝ առաքելահաստատ և սրբագործված Միածնի էջքով: Երբ մարմնի բոլոր մասերն առողջ են և գործում են, ողջ մարմինն առողջ է և գործում է սիրո մեջ (տե՛ս Եփես. Դ 14-16):

Մե՛նք ենք այսօր մեր Եկեղեցու վկայախոսները, և սա՛ է եղել Հայաստանյայց Եկե-ղեցու քահանայությունը հիմնադրած առաքյալների երազանքը: Հետևապես, չլինե՛նք օտար կամ պանդուխտ, այլ՝ համաքաղաքացի սրբերին, բնակարան Սուրբ Հոգու համար, ճշմարտության այգու մշակներ, նախանձախնդիր Եկեղեցու սուրբ խոր-հուրդներին նորոգ ծննդյամբ և Աստծո արքայության տեսությանն արժանանալու քաջ հույսով, քանզի սեր միմյանց և հայրենիքի հանդեպ, հավատարմություն Քրիս-տոսի Ավետարանին վերածնությա՛ն ոգով, ա՛յս է այսօրվա պատգամը և մեր աղոթքն ու առ բարին Աստված մաղթանքը, որպեսզի մեր հայրերի հավատքով և մարտիրոս-ների արյամբ նվիրական այս երկիրն ու Եկեղեցին խորին հարգանքով և ազգային գիտակցությամբ շարունակի իր առաքելությունը Հավատի, Հույսի և Սիրո ճանա-պարհով այժմ և միշտ և հավիտյանս. Ամեն:

*ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ*

*ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԱՆՄԵՌ ՀԻՇԱՏԱԿԻՆ*

*ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑՔԸ

Հայոց ցեղասպանությունը մեր նորագույն պատմության առանցքն է կազմում, որի շուրջ են պտտվում հայ ժողովրդի պատմության հետագա գրեթե բոլոր կարևոր իրադարձությունները: Այդ աննախադեպ ոճրագործությունը կազմակերպեցին թուրքական երեք հակոտնյա վարչակարգեր՝ սուլթան Աբդուլ Համիդը, երիտթուրքերը, քեմալականները, որոնք իրար էին ժառանգում հայասպանության գործը: Այդ հանցագործ քաղաքականության բարձրակետը հանդիսացավ 1915-1916 թթ. Մեծ եղեռնը:

Ցեղասպանությունը մեր ժողովրդին պատճառեց մարդկային, տարածքային ու մշակութային անդարմանելի կորուստներ, սոցիալական ու հոգեբանական խոր ազդեցություն գործեց հայ ժողովրդի կյանքի ամենատարբեր բնագավառների վրա: Այն անմիջական ու հեռավոր հետևանքներ է թողել մեր ազգի կենսագործունեության, հոգեկերտվածքի ու բնավորության, սերունդների հետագա ողջ սոցիալական գործունեության, նրա իղձերի ու ձգտումների վրա:

Իսկ ի՞նչ է ցեղասպանությունը: Դա միջազգային հանցագործություն է, որի նպատակն է որևէ ազգային, էթնիկական, ռասայական, կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացումը: **Ցեղասպանություն** կամ **գենոցիդ** տերմինն առաջին անգամ շրջանառության մեջ է մտցրել լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինը (ծագումով հրեա): Նա ցեղասպանություն ասելով՝ հասկանում էր հայերի կոտորածը Թուրքիայում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ապա հրեաների ոչնչացումը գերմանական ֆաշիստների կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին[1]:

1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ն ընդունեց «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիա»[2]: Այն միջազգային իրավունքի տեսանկյունից ցեղասպանությունը բնորոշող և դրա համար պատիժ սահմանող փաստաթուղթ է: Կոնվենցիան ցեղասպանությունը բնորոշում է՝ ելնելով այդ երևույթի էությունից ու նպատակներից և ոչ թե գործողության չափերից կամ զոհերի թվից: Ցեղասպանություն են համարվում այն գործողությունները, որոնք կատարվում են որևէ ազգի, ցեղային կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ: Հինգ կետերով թվարկվում են այն գործողությունները, որոնցից յուրաքանչյուրը համարվում է ցեղասպանության ակտ. 1. Խմբի անդամների սպանությունը, 2. նրանց մարմնական լուրջ վնասվածք կամ մտավոր խանգարում պատճառելը, 3. խմբի համար այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնց նպա-

---

[1] Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 448:

[2] Международные акты о правах человека. Сборник документов. Сост. д.ю.н., проф. В. А. Карташкин, д.ю.н., проф. Е. А. Лукашева. Москва, 2002, ст. 518-521.

տակն է այդ խմբի լիակատար կամ մասնակի ֆիզիկական ոչնչացումը, 4. խմբի ներսում ծննդաբերության կանխմանն ուղղված միջոցառումները, 5. երեխաների հանձնումը մարդկային մի խմբից մյուսին:

Օսմանյան կայսրությունում 1878-1922 թթ. տեղի են ունեցել բոլոր 5 կետերում նշված գործողությունները հայ ժողովրդի նկատմամբ: Հայոց ցեղասպանությունն իրականացվել է ավելի քան չորս տասնամյակների ընթացքում և եղել է թուրքական իշխանությունների պետական քաղաքականությունը: Այն իր գործադրման բնույթով ու եղանակներով կարելի է բաժանել երեք փուլերի.

1. Առաջին շրջանը ընդգրկում է 1878-1914 թթ. միջև ընկած ժամանակաշրջանը: Այն համընկնում է Աբդուլ Համիդի իշխանության տարիներին և երիտթուրքերի կառավարման սկզբնական շրջանին: Այս փուլում խոշոր զանգվածային ջարդեր տեղի ունեցան 1894-1896 թթ. և 1909 թ.: Հայերի կոտորածներն իրականացվեցին առանց բռնազաղթի, տեղերում: Դա հնարավորություն էր տալիս որոշ չափով դիմադրել ջարդարարներին, և այն չվերածվեց համընդհանուր բնաջնջման: Միաժամանակ այնպիսի պայմաններ ստեղծվեցին, որոնք հայերին ստիպում էին արտագաղթել հայրենիքից:

2. Ամենաողբերգականն ու զարհուրելին 1915-1916 թթ. տեղի ունեցած Մեծ եղեռնն էր: Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ երիտթուրքերի կառավարությունը նախապատրաստեց ու իրականացրեց հայերի զանգվածային տեղահանությունն ու ոչնչացումը: Դա Հայոց ցեղասպանության բարձրակետն էր, որի հետևանքով թուրքերը հասան տասնամյակներ շարունակ հետապնդած իրենց գլխավոր նպատակին՝ ամբողջությամբ հայազրկեցին Արևմտյան Հայաստանը:

3. Երրորդ փուլն ընդգրկում է 1917-1922 թթ. ընկած ժամանակաշրջանը: Այդ տարիներին թուրքերը շարունակեցին ոչնչացնել Մեծ եղեռնից ինչ-ինչ ճանապարհներով փրկված և Թուրքիայում մնացած հայության բեկորները: Միաժամանակ, կոտորածները դուրս եկան Օսմանյան կայսրության սահմաններից և իրենց մեջ ընդգրկեցին Անդրկովկասը: Վերջին գործողությունն իրականացվում էր հիմնականում թուրքական կանոնավոր բանակի և ադրբեջանական հրոսակախմբերի կողմից:

Քառասուն տարուց ավելի պետականորեն կիրառված հայերի ցեղասպանության քաղաքականությունն իրականացրին թուրքական երեք վարչակարգեր՝ համիդյան, երիտթուրքական ու քեմալական: Դա խոսում է այն մասին, որ Հայոց ցեղասպանությունը թուրքերի ազգային-պետական քաղաքականության հիմքում էր դրված տասնամյակներ շարունակ: Դրա վառ վկայությունն է 1915 թ. օգոստոսի 31-ին Թալեաթի արած խոստովանությունը, որ Հայկական հարցը լուծելու տեսակետով երեք ամսում ինքն ավելի շատ գործ կատարեց, քան Աբդուլ Համիդը երեսուն տարում[3]:

Հայոց ցեղասպանությունը իրականացվեց մի շարք քաղաքական ու տնտեսական պատճառներով, որով թուրքերը փորձում էին լուծել ազգայնական, ռասիստական ու ծավալապաշտական որոշ խնդիրներ:

1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով միջազգային դիվանագիտության առարկա դարձավ Հայկական հարցը: Այն առաջ քաշվեց արևմտահայերին

---

[3] **Մօրկընթաու Հ.**, Ամերիկեան դեսպան մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները, թարգմանիչ Ենովք Արմէն, Կ.Պոլիս, 1919, էջ 284:

հովանավորելու և օգնելու նպատակով, սակայն նրանց համար դարձավ նոր արհավիրք: Տերությունները նրա մասին հիշում էին, երբ անհրաժեշտ էր լինում ճնշում գործադրել Թուրքիայի վրա և որևէ օգուտ կորզել: Սուլթան Աբդուլ Համիդ II-ը զիջումներ կատարելով և չեզոքացնելով տերություններին՝ սկսեց իրականացնել արևմտահայերի պարբերական ու զանգվածային ջարդեր, որպեսզի հայերին ոչնչացնելով լուծի Հայկական հարցը:

1879 թ. մեծ վեզիր Քյամիլ փաշան սուլթան Համիդին ուղարկած նամակում գրում էր. «Պետական իրավունքը պահանջում է, որ անհետացնենք ամեն մի կասկածելի տարր, որպեսզի ապագան ապահովենք. ուրեմն այդ հայ կոչված ազգը պետք է վերացնենք, անհետացնենք, ճզմենք: Այդ բանը գլուխ բերելու համար մեզ ոչ մի բան չի պակասում. պատրաստի ունենք ամեն գործիք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ. կրոնական պատերազմ կհայտարարենք, և դա հեշտ պատերազմ կլինի այնպիսի մի ազգի դեմ, որը ո՛չ զենք ունի, ո՛չ զինվորություն և ո՛չ պաշտպան: … Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպան Տաճկական Ասիայում կրոնակից փնտրի ու չգտնի, մեզ հանգիստ կթողնի, և այն ժամանակ մենք կզբաղվենք ներքին գործերով ու բարենորոգումներով»[4]:

Թուրքերը տնտեսական, քաղաքական, ազգային և կրոնական ճնշումների միջոցով խթանում էին հայերի արտագաղթը, պարբերաբար կրկնվող կոտորածներով փոքրացնում էին նրանց թիվը, բայց դա բավարար չէր Արևմտյան Հայաստանում հայերին փոքրամասնություն դարձնելու համար: Որոշվեց զանգվածաբար մահմեդական տարրեր բնակեցել Հայաստանում: Ներգաղթած մահմեդականներին՝ մուհաջիրներին, իշխանությունները տվեցին զենք, իսկ ապրուստի միջոցներ չհատկացրին, և նրանք պետք է կա՛մ սովամահ լինեին, կա՛մ ապրեին հայերին թալանելու և կոտորելու միջոցով: Մուհաջիրները հայերից գրավեցին նրանց բնակավայրերը, տիրացան լավագույն վարելահողերին, անշարժ և շարժական գույքին, սպանվեցին հազարավոր հայեր, հարյուրավոր գյուղեր անցան այդ զինված հրոսակների ձեռքը: 1878-1904 թթ. Արևմտյան Հայաստանում բնակեցվեցին 850.000 մուհաջիրներ[5]: Մահմեդականների ներգաղթը փոխեց Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական վիճակը, սակայն չկարողացավ հայերին դարձնել փոքրամասնություն:

Հայ ժողովրդի գլխին եկած դժբախտություններին գումարվում էին խաշնարած և զինված քրդերի չդադարող հարստահարումները: Մուհաջիրներն ու քրդերը թուրքական իշխանությունների ձեռքին գործիք էին՝ իրենց հայաջինջ քաղաքականությունն իրականացնելու համար:

Արևմտյան Հայաստանում ամեն օր տեղի էին ունենում անպատիժ սպանություններ, թալան, բռնություններ: Հայերի համար ստեղծվեցին դժոխային պայմաններ: Օրինակ, եթե Բիթլիսի նահանգում 1878 թ. ապրում էր 250.000 հայ, ապա դարավերջին՝ 180.000[6]: Փաստորեն, մշտական կոտորածների ու արտագաղթի հետևանքով հայերի թիվը ոչ միայն չէր ավելացել, այլ նույնիսկ պակասել էր 70.000-ով:

Ցեղասպանության գործոններից էր նաև Համիդի կողմից պաշտոնական դոկտ-

---

[4] **Պողոսյան Ս.**, **Պողոսյան Կ.**, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. 1, Երևան, 2000, էջ 165:

[5] Նույն տեղում, էջ 88:

[6] Նույն տեղում, էջ 209:

րինա հռչակված պանիսլամիզմի գաղափարախոսությունը, որը նախատեսում էր Օսմանյան կայսրության շուրջը համախմբել մահմեդականներով բնակեցված բոլոր երկրները: Դեպի արևելք ընդարձակվելուն և մյուս մահմեդական ժողովուրդներին միանալու համար անհրաժեշտ էր վերացնել «հայկական սեպը», միաժամանակ մահմեդական մոլեռանդությամբ վարակված հետադիմական ամբոխը արագորեն էր արձագանքում քրիստոնյա հայերին բնաջնջելու սուլթանի հրահանգներին:

Սուլթան Աբդուլ Համիդը 1894-1896 թթ. կազմակերպեց հայերի զանգվածային կոտորածներ: Այդ դիվային ծրագրի գործադրման համար սուլթանն օգտագործեց քրդերի և թուրքերի կրոնական մոլեռանդությունն ու թալանչիական բնազդները: Դրան նպաստում էր մահմեդականների մոտ դարերի ընթացքում ձևավորված այն համոզմունքը, որ իրավունք ունեն անպատիժ ձևով սպանել ու թալանել հայերին:

Հետամնաց ամբոխներին գրգռելու գործին լծվեց պետական մեքենան: Դա կազմակերպված ձևով ցեղասպանություն իրականացնելու թուրքերի առաջին փորձն էր: Կոտորածներն ընթանում էին կազմակերպված և նախապես մշակված ծրագրով: Դրանք սկսվում էին փողի ազդանշանով, ավարտվում հանդիսավոր ծիսակատարությամբ՝ մոլլաները մինարեթների բարձունքից ալլահի շնորհակալությունն էին հղում ջարդարարներին: Դրանից վայրագ ամբոխն ավելի էր ոգեշնչվում, որովհետև կատարում էր սուլթանի կամքը և միաժամանակ տիրում էր հարուստ ավարի:

Կոտորածներից հետո Արևմտյան Հայաստան այցելած դոկտոր Յ. Լեփսիուսը գրում է. «Արդեն մի քանի տարի էր, ինչ հայկական ջարդերը նախապես պլանավորվում էին և մանրազնին կազմակերպվում»[7]:

Ջարդերը տեղի էին ունենում ամենաբարբարոս ձևերով, առանց սեռի ու տարիքի խտրության: Սպանությունները կատարվում էին ամենադաժան, ամենազազրելի ու անմարդկային եղանակներով, որպիսիք երբևէ հայտնի են եղել մարդկությանը: Դրանք երևան հանեցին թուրքերի բնավորության արյունարբու, ամենաստոր, բարբարոսական կողմերը:

Անզեն հայ բնակչությունն ի վիճակի չէր դիմադրելու զինված մահմեդականներին ու թուրք զինվորներին: Կոտորածներին հետևեցին ցրտաշունչ ձմեռը, սովն ու համաճարակները, որոնք նոր զոհեր խլեցին: Սպանվեց 300.000 հայ, նույնքան էլ արտագաղթեցին Եվրոպայի, Աֆրիկայի ու Ամերիկայի տարբեր երկրներ: Մոտ 200.000 հայեր ստիպված էին ընդունել մահմեդականություն: Մոտ 100.000 երեխաներ մնացին որբ: Անօթևան և առանց ապրուստի միջոցի մնացին 500.000 մարդ: Ավերվեցին 568, իսկ մզկիթի վերածվեցին 282 եկեղեցի ու վանք[8]:

Այսպիսով, հայերի թիվն իրենց պատմական հայրենիքում բավական նվազեց, իսկ սուլթանի կազմակերպած մահմեդականների ներգաղթի հետևանքով վերջիններիս թիվն աճեց, որով փոփոխություն կրեց Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը: Չնայած դրան, հայերը դեռ շարունակում էին հարաբերական մեծամասնություն կազմել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի բնակչության մեջ:

Սուլթան Համիդը 1894-1896 թթ. ջարդերից հետո զանգվածային կոտորածներ առ-

---

[7] **Օհանջանյան Ա.**, 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 30:

[8] **Պողոսյան Ս.**, **Պողոսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 463:

ժամանակ չկազմակերպեց: Սակայն նա չէր հրաժարվել Արևմտյան Հայաստանը հայազրկելու ծրագրից, այլ փոխել էր հայաթափությունն իրականացնելու եղանակը: Զանգվածային կոտորածներով աշխարհի ուշադրությունը գրավելու փոխարեն թուրքերը որդեգրեցին ամենօրյա սպանությունների, հայերի գույքն ու հողը բռնագրավելու, կյանքի համար աննպաստ պայմաններ ստեղծելու հետևանքով արտագաղթի մղելու քաղաքականություն:

Այսպիսով, ամեն տարի հազարավոր հայեր էին սպանվում, տասնյակ հազարներով էլ արտագաղթում էին, որի հետևանքով Արևմտյան Հայաստանը զրկվում էր բնիկներից: Հայերի սոցիալական և տնտեսական վիճակն ուղղակի անմխիթար էր:

1904 թ. թուրքական բանակն ու քրդերը Սասունում սրի քաշեցին մոտ 8.000 հայերի: Սուլթանի նպատակն էր ամբողջությամբ հայաթափել ազատասիրական ձգտումներով հայտնի հայկական այդ երկրամասը: Սասունի կոտորածները մեծ արձագանք գտան ողջ աշխարհում: Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները քննադատեցին այդ ոճիրը, և նրանց ջանքերի շնորհիվ էր, որ ջարդերի ալիքը չտարածվեց այլ վայրերում, իսկ Սասունը չբնակեցվեց քրդերով:

Սուլթան Համիդի օրոք Օսմանյան կայսրությունը կանգնել էր կործանման եզրին: Հսկայական չափերի էր հասել արտաքին պարտքը, լայն ծավալներ ընդունեցին ազգային-ազատագրական շարժումները, երկրի վրա մեծ ազդեցություն ունեին տերությունների դեսպանները, որոնք անընդհատ միջամտում էին կայսրության ներքին գործերին, սուլթանի հետադեմ ռազմաավատատիրական վարչակարգը արգելակում էր երկրի հետագա առաջընթացին:

Այդ ամենը դժգոհություն էր առաջացնում թուրքական նորաստեղծ բուրժուազիայի մոտ: Նրանք հայտնի էին **երիտթուրքեր** անունով և ստեղծել էին «Միություն և առաջադիմություն» (Իթթիհատ վե թերաքքի) կուսակցությունը: Սուլթանական վարչակարգը տապալելու համար 1907 թ. դեկտեմբերին Փարիզում համաձայնություն կնքեցին երիտթուրքերը, Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, հրեական, արաբական և մակեդոնական կոմիտեները:

1908 թ. հուլիսին Մակեդոնիայում Նիազի և Էնվեր բեյերի գլխավորությամբ թուրքական բանակն ապստամբեց և իրականացրեց պետական հեղաշրջում: Օսմանյան կայսրությունում հաստատվեց սահմանադրական միապետություն: Համիդի իրավունքները սահմանափակվեցին, իշխանության լծակներն անցան երիտթուրքերին: Նրանք խոստանում էին հավասար պայմաններ ստեղծել կայսրության բոլոր ժողովուրդների համար, բարելավել նրանց վիճակը: Հայերը խանդավառությամբ ընդունեցին երիտթուրքերի խոստումները, սակայն շուտով ստիպված էին մեծ հիասթափություն ապրել:

Իշխանության գալով՝ երիտթուրքերը որդեգրեցին օսմանիզմի քաղաքականությունը: Նրանք ցանկանում էին կայսրության բոլոր ժողովուրդներին ձուլել մեկ՝ օսմանյան ազգի մեջ: Հայտարարեցին, որ Օսմանյան կայսրության բոլոր հպատակներն օսմանցիներ են և պետության առաջ հավասար են՝ առանց կրոնական ու ազգային խտրականության: Հույս ունեին, որ ժամանակի ընթացքում կստեղծվեր միասնական լեզու և մշակույթ, ինչպես Ամերիկայում: Միասնական լեզվի տակ, անշուշտ, հասկանում էին թուրքերենը:

Օսմանիզմի քաղաքականության իրական նպատակն էր ձուլել մյուս ազգերին

թուրքերի հետ, վերջ տալ ազգային-ազատագրական շարժումներին և ամրապնդել կայսրությունը: Սակայն այդ քաղաքականությունն ի սկզբանե դատապարտված էր ձախողման: Կայսրության ոչ միայն քրիստոնյա ժողովուրդները, այլև մահմեդական արաբներն ունեին ազգային բարձր ինքնագիտակցություն և նրանց ձուլումը, բնականաբար, հանդիպեց լուրջ ընդդիմության: Օսմանիզմի քաղաքականությունը բացասաբար ընդունեցին նաև թուրքերն ու մյուս մահմեդականները, քանի որ դրանով վերանում էր նրանց նախկին արտոնյալ վիճակը և ոչ մահմեդականները հավասարվում էին իրենց, որը հակասում էր շարիաթի օրենքներին:

Անհաջողության մատնվելով օսմանիզմի քաղաքականության հարցում, Իթթիհատը որդեգրեց պանթուրքիզմի քաղաքականությունը: Դա ռասիստական, շովինիստական գաղափարախոսություն էր և փորձում էր ապացուցել, որ թուրքական ռասան բարձր էր կանգնած մյուս ժողովուրդներից և ստեղծված էր իշխելու համար: Մարդկային քաղաքակրթության բոլոր նվաճումները վերագրվում էին թուրքական էթնոսին[9]: Սեփական ռասայի գովերգումը ինքնանպատակ չէր, այն հիմքեր էր նախապատրաստում հետագա անհեթեթ հավակնությունների համար:

Պանթուրքիզմն իրականացվելու էր երեք փուլով. թուրքիզմ, օղուզականություն, թուրանիզմ.

1. թուրքացվելու էր Օսմանյան կայսրությունը (այն փաստորեն նախատեսում էր ոչնչացնել արևմտահայությանը),
2. միավորվելու էին օղուզ թուրքերը՝ օսմանյան թուրքերը, Հյուսիսային Պարսկաստանի ու Անդրկովկասի ազերիները և թուրքմենները (այս փուլում կա՛մ ամբողջությամբ ոչնչացվելու էին նաև արևելահայերը, կա՛մ նրանց մի մասը, և Արևելյան Հայաստանից զրավելու էին նվազագույնը Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը, Զանգեզուրը և Ղարաբաղը, որպեսզի կապվեին Ադրբեջանի հետ),
3. վերջին փուլում միավորվելու էին բոլոր թուրքալեզու ժողովուրդները:

1910-1911 թթ. Սալոնիկում տեղի ունեցած ընդհանուր ժողովների ժամանակ իթթիհատականները որդեգրեցին պանթուրքիզմի քաղաքականությունը: Կայսրության մահմեդական ժողովուրդները պետք է թուրքացվեին, իսկ քրիստոնյաները՝ ոչնչացվեին: Ապա Թուրքիային էին միացվելու Իրանական Ադրբեջանը, Կովկասը, Ղրիմը, Թաթարստանը, Միջին Ասիան, Սիբիրը, Թուրքմենստանը, Մանջուրիան և ստեղծվելու էր մեծ Թուրանը:

Այդ ծրագրի իրականացման ճանապարհին էր գտնվում Հայաստանը, և հայ ժողովուրդը դարձավ դրա առաջին զոհը: Թուրք բնակչության մեջ սկսեցին հրահրել ամենավայրենի շովինիզմ ու հայատյացություն, կոչ էին անում՝ քանի դեռ ուշ չէ, թուրքացնել Անատոլիան, իսկ հայերին ոչնչացնել: Փաստորեն, Մեծ եղեռնի գլխավոր գործոններից մեկը հանդիսացավ պանթուրքիզմի ազգայնական, ռասիստական, ծավալապաշտական գաղափարախոսությունը, որն իր սուր ծայրով ուղղված էր հայ ժողովրդի դեմ:

1909 թ. ապրիլին Կիլիկիայում տեղի ունեցան հայկական կոտորածներ, որոնք խլեցին 30.000 մարդու կյանք: Դա ցեղասպանություն իրականացնելու երիտթուրքերի առաջին փորձն էր, որի նպատակն էր հայաթափել Կիլիկիան, ուր հայերը կազ-

---

[9] **Զարեվանդ**, Միացյալ, անկախ Թուրանիա, Երևան, 1993, էջ 53-55:

մում էին բնակչության մեծամասնությունը:

Փաստորեն, Հայկական հարցը լուծելու հարցում երիտթուրքերը որդեգրել էին Աբդուլ Համիդի հայասպանական քաղաքականությունը: Նրանց որդեգրած թե՛ օսմանիզմի, թե՛ պանթուրքիզմի քաղաքականությունը նախատեսում էր հայերի ձուլումն ու ոչնչացումը: Կիլիկիայի կոտորածները նախերգանքն էին այն մեծ ոճիրի, որն իրականացրին երիտթուրքերը 1915-1916 թթ.:

1914 թ. օգոստոսին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Օգտվելով ամբողջ աշխարհին ընդգրկած թոհուբոհի ընձեռած հնարավորությունից, երիտթուրքերը իրականացրին Մեծ եղեռնը, որի հետևանքով Արևմտյան Հայաստանը լիովին հայաթափվեց: Դա Թուրքիայի մի քանի տասնամյակ վարած հայասպանական քաղաքականության շարունակությունն էր՝ ավելի մեծ ծավալներով ու ավարտուն տեսքով:

Հայկական ցեղասպանությունը Թուրքիայի պետական քաղաքականության հիմքում էր դրվել տնտեսական և քաղաքական նկատառումներով: Ըստ թուրքերի պատկերացման՝ հայերը սեպի պես խրվել էին մուսուլմանական աշխարհում, ունեին ռուսական կողմնորոշում և խանգարում էին պանիսլամական ու պանթուրքական ծրագրերի իրականացմանը: Կարևոր դեր էր խաղում նաև Հայկական հարցի միջազգայնացումը, որը հնարավորություն էր ընձեռում մեծ տերություններին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին:

Միաժամանակ թուրքերը խանդով էին նայում ձեռներեց, գործունյա և աշխատասեր հայ ժողովրդի հաջողություններին տնտեսության ու մշակույթի ասպարեզներում: Իրենց անլիարժեքությունը զիտակցելով, թուրքերը ցանկանում էին ջարդերի միջոցով ազատվել հայերի մրցակցությունից տնտեսության մեջ, ինչպես նաև տիրել հայերի ունեցվածքին:

Հայոց ցեղասպանության իրականացման համար երիտթուրքերին անհրաժեշտ էր միջազգային հարմար պահ, ինչպիսին հանդիսացավ համաշխարհային պատերազմը: 1915 թ. փետրվարի սկզբին գումարվեց Իթթիհատի Կենտրոնական կոմիտեի արտակարգ գաղտնի նիստը: Կենտրոնական կոմիտեի քարտուղար դոկտոր Նազիմը և Բեհաեդդին Շաքիրը տեսականորեն հիմնավորեցին հայերին բնաջնջելու անհրաժեշտությունը: Բ. Շաքիրը հայտարարեց. «Մեր ազգային կալուածին մէջ միայն թուրք յառաջադիմութիւնը եւ բարգաւաճումը կրնանք արտօնել, հինէն մնացած ազգերը՝ անհարազատ եւ վնասակար խոտերը արմատախիլ ընելով մեր հողը մաքրելու ստիպուած ենք»[10]:

«Հայերի բնաջնջումը խղճի կամ մարդկային զգացումների խնդիր չէ,- նշում էր Նազիմը,- Կա՛մ կհամաձայնվեք հայերի ամբողջական և արմատական բնաջնջմանը, ապահովելով մեր ներկան ու ապագան, պատրաստելով մեր զարգացման ու հզորացման ուղին, կա՛մ մերժելով այդ ծրագիրը՝ կբռնենք քայքայման ու անհետացման ճանապարհը»[11]:

Հասկանալով, որ այդ քաղաքականությունն անհնար է զետեղել մարդկային բարոյականության շրջանակներում, Նազիմը նշեց. «Անշուշտ, բողոքի, զայրույթի ալիքը

---

[10] **Մեվլան Զադե Րիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Երեւան, 1990, էջ 99:

[11] **Սիմոնյան Հ.**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 215:

պիտի տարածվի ամեն տեղ: Աիազին անկում պիտի կրի մեր բարոյական վարկը, և դրա հետևանքով նաև մեր տնտեսական վարկը: Պետք չէ մոռանալ սակայն, որ այդ վիճակը պիտի լինի ժամանակավոր, կարճ կամ երկար, որոշ ժամանակի համար միայն ու նրանից հետո ամեն ինչ մոռացության պիտի տրվի, ու մենք պիտի կարողանանք վերադառնալ միջազգային կյանքի մեջ նախկինից ավելի փայլուն դիրքի, որովհետև բազմապատկված պիտի լինի մեր ուժը: Այդ ուժն է միակ հաշվի առնելիքը կյանքի մեջ»[12]:

Այդ ծրագրի իրականացման գործնական միջոցները մշակելու համար ստեղծվեց Երեքի գործադիր մարմինը, որի անդամներն էին Բեհաեդդին Շաքիրը, Նազիմը և Միդհատ Շուքրին:

Բ. Շաքիրի առաջարկով Եռյակ կոմիտեն ստեղծեց հայերի բնաջնջման հատուկ կազմակերպություն՝ Թեշքիլաթը մախուսեն: Դրա մեջ ընդգրկվեց 30-35.000 մարդասպան: Թեշքիլաթը մախուսեն կառավարության ու օրենքների միջամտությունից զերծ, իր քայլերի մեջ անկախ և բացառապես Երեքի գործադիր մարմնի հրամաններով գործող խումբ էր[13]: Հայերի բնաջնջման համար պետք է օգտագործվեին նաև բանակը, ոստիկանությունը, քրդերը, չեթեները, մահմեդական խուժանը:

Հատուկ կազմակերպության վարչական մարմինը մշակեց հայերի բնաջնջման հետևյալ ծրագիրը.

1. թուրքական բանակ զորակոչված հայ զինվորների ոչնչացում և հայ բնակչության զինաթափում,
2. հայ մտավորականության ձերբակալում, աքսոր և ոչնչացում,
3. բոլոր հայերի բռնագաղթ դեպի Միջագետքի անապատներ և անխնա բնաջընջում:

Որոշվեցին հայերի տեղահանման և ոչնչացման ժամկետներն ըստ վիլայեթների, սանջակների, քաղաքների ու գյուղերի:

1915 թ. ապրիլի 15-ին Թալեաթի, Էնվերի ու Նազիմի ստորագրություններով հատուկ հրահանգ ուղարկվեց կայսրության տեղական իշխանություններին՝ վալիներից մինչև գյուղապետ: Հրահանգում նշված էր, որ առաջնորդվելով պատերազմում հաղթանակի հասնելու ձգտմամբ և նպատակ ունենալով կանխել Հայկական հարցի հետագա առաջադրումը, Իթթիհատը որոշել է վերջ դնել այդ հարցին՝ հայերին քշել արաբական անապատները և բնաջնջել այդ խորթ տարրը[14]:

Հրամայված էր բոլոր միջոցներով օժանդակել Իթթիհատի տեղական մարմիններին, որոնք ապրիլի 24-ին սկսելու էին հրահանգի գործադրությունը: Ովքեր չենթարկվեին այդ հրահանգին, պատժվելու էին որպես հայրենիքի և կրոնի թշնամի: Հայերի բնաջնջման հատուկ լիազորներ կարգվեցին բոլոր վայրերում:

Իրականացնելով հայերի ցեղասպանությունը՝ երիտթուրքերը ձգտում էին Օսմանյան կայսրությունը թուրքացնել, դարձնել միատարր: Դրա պատճառն այն էր, որ կյանքի բոլոր բնագավառներում հայերն ավելի հաջողակ էին, քան իշխող թուրքերը:

Թուրքերը լավ էին գիտակցում, որ հավասար պայմաններ ստեղծելու դեպքում

[12] Նույն տեղում:

[13] **Ղազարեան Հ.**, Ցեղասպան թուրքը, Բեյրութ, 1968, էջ 37:

[14] **Կիրակոսյան Ջ.**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, էջ 244:

քրիստոնյա ժողովուրդների ձեռքը կանցնեին կայսրության տնտեսական, քաղաքական, ռազմական, մշակութային կյանքի բոլոր լծակները: Դրանով էր պայմանավորված, որ չնայած Օսմանյան կայսրությունը բռնել էր քայքայման ուղին, բոլորը գիտակցում էին, որ երկրին անհրաժեշտ էին լուրջ բարեփոխումներ, նույնիսկ XIX դարում սուլթանները, իսկ XX դարի սկզբին երիտթուրքերը հրամանագրեր էին ստորագրել և հայտարարել էին կայսրության ժողովուրդների իրավահավասարության, կարգ ու կանոն հաստատելու մասին, սակայն դրանք մնացել էին թղթի վրա: Քանի դեռ թուրքերը իրենց մտավոր մակարդակով, ձեռներեցությամբ ու աշխատասիրությամբ զիջում էին հայերին ու հույներին, նրանք չէին կարող թույլ տալ Օսմանյան պետության մեջ իրավահավասարության հաստատում և բարենորոգումների գործադրություն: Անհրաժեշտ էր ոչնչացնել քրիստոնյաներին, որից հետո թուրքերը կկարողանային փորձել հետևելու եվրոպական պետությունների ավելի առաջադեմ կարգերին:

1915 թ. մայիսի 23-ին Բ. Շաքիրը պարզաբանեց հայերի ցեղասպանությունն իրականացնելու անհրաժեշտությունը և ցինիկորեն հայտարարեց, որ «Հայերը կանգնած են մեր համիսլամական և համաթուրքական սրբազան իդեալներու իրականացման ճամբուն վրա ու մենք անխուսափելիորեն կբախինք անոնց հետ: Ատիկա վեր է և դուրս է մեր անձնական զգացմունքներեն և տրամադրություններեն: Մենք հարկադրված ենք տարերայնորեն ոչնչացնել մեր ճամբուն վրայեն այն ամենը, ինչ որ արգելք հանդիսանա մեր ազգային սրբազան իդեալներուն»[15]:

Ցեղասպանության իրականացման գործում կարևոր դեր ունեին նաև տնտեսական պատճառները:

Թուրքերը ոչ պատվաբեր զբաղմունք էին համարում առևտուրը, արհեստները և հողագործությունը: Ֆ. Էնգելսը ժամանակին բավական դիպուկ էր նկատել, որ թուրքերն առևտրին մասնակցում էին միայն «քարավաններ թալանելով»[16]: Այդ պատճառով էլ կայսրության տնտեսության հիմնական մասը կենտրոնացած էր այլազգիների, հատկապես հայերի ու հույների ձեռքում: Դրան նպաստում էր նաև հայերի մտավոր ընդունակությունները, աշխատասիրությունը, ձեռներեցությունը:

1863 թ. հրատարակած իր գրքում թուրք զորավար Խուրշիդ փաշան գրում էր. «Բոլոր արհեստավորներն ու հողագործների մեծ մասը հայեր են… Մահմեդականներից չկա ոչ միայն արհեստավոր վարպետ, այլ նույնիսկ օժանդակ բանվոր: Հայերն աշխատասեր ժողովուրդ են, իսկ մահմեդականներն՝ ընդհակառակը»[17]:

Հայերի ձեռքում էր Օսմանյան կայսրության ներմուծման 60 և արտահանման 40 տոկոսը: Արևմտյան Հայաստանում հայերի ձեռքում էր առևտրի 86, արդյունաբերության 69 տոկոսը, հայեր էին արհեստավորների և մանր առևտրականների 79 տոկոսը[18]:

Ի. Գոլբորրոդկոն շեշտում էր հայերի առանձնահատուկ դերը Թուրքիայի կյանքում. «Լավագույն բժիշկը հայ էր, փաստաբանը, ուսուցիչը, ինժեները, դերասանները, ֆինանսիստները, բանկիրները, առևտրականները, ձեռնարկատերերը հայեր

[15] **Լեւոն Վարդան**, Հայկական տասնիինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970, էջ 214:

[16] **Սիմոնյան Հ.**, նշվ. աշխ., էջ 13:

[17] **Պողոսյան Ս.**, **Պողոսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 163:

[18] Նույն տեղում, էջ 62:

էին: Ունենալով բազմակողմանի բնածին ունակություններ՝ մեծ հետաքրքրասիրություն, իրավիճակին ընտելանալու հազվադեպ կարողություն, իրար ամուր բռնելով՝ հայերը հաջողությամբ ասպարեզում կարողանում էին մնալ նույնիսկ անբարենպաստ պայմաններում: … Հայերը ասիական Թուրքիայի ամենակուլտուրական ժողովուրդն են»[19]:

Թուրքական բուրժուազիան անհանդուրժելի էր համարում, որ իրենք օսմանյան շուկայում չունեին այն տեղն ու դիրքը, ինչ հայերը: Իրենց անկարողությունը թաքցնելու նպատակով երիտթուրքերը, խեղաթյուրելով իրականությունը, սկսեցին փողհարել, որ քրիստոնյաները կայսրությունում ավելի լավ են ապրել, նույնիսկ ճնշել են թուրքերին:

Պանթուրքիզմի տեսաբաններից Զիա Գյոք Ալփը գրում էր. «Մյուս էթնիկ խմբերը լքեցին օսմանյան հասարակությունը որպես կրթված, քաղաքակիրթ և հարուստ հանրություններ, մինչդեռ թշվառ թուրքերին որպես ժառանգություն մնաց միայն մի կոտրած թուր և մի արոր»[20]: Նա նշում էր, որ դարերի ընթացքում ոչ մահմեդական ժողովուրդները հանդիսացել են թուրքերի տնտեսական մակաբույծները: Ինչպես տեսնում ենք, թուրքերն ամեն ինչ տեսնում և մեկնաբանում էին ծուռ հայելու միջոցով:

Երիտթուրքերը, հանդիսանալով թուրքական նորաստեղծ բուրժուազիայի շահերի արտահայտիչը, որդեգրել էին կայսրությունում զուտ թուրքական տնտեսական համակարգ ստեղծելու ազգայնական ծրագիր: Նրանք նախատեսում էին ձերբազատվել կայսրության տնտեսության «մակաբույծ» ոչ թուրք տարրերից և ստեղծել օրգանական թուրքական բուրժուազիա, որն ի վիճակի կլիներ ապահովել Թուրքիայի և թուրք ժողովրդի տնտեսական վերելքն ու բարգավաճումը:

Ցեղասպանության պատճառներից մեկն էլ թուրքերի ձգտումն էր տիրելու հայերի ունեցվածքին: Ոչ միայն թուրք և քուրդ խուժանն էր ցանկանում տիրանալ հայերի գույքին ու հարստությանը, այլև թուրքական պետությունը: Հայերին թալանելու և ունեզրկելու միջոցով հարստանալը մահմեդական խուժանի համար դարեր շարունակ համարվել էր հեշտ ձեռք բերվող ապրուստի միջոց, և նրանք արագորեն արձագանքեցին հայերին կոտորելու հրահանգին:

Հայերի ունեցվածքին տիրանալ էր ուզում նաև Օսմանյան պետությունը: Հայերի հարստությունների բռնագրավման միջոցով էին թուրքերը մտադիր հոգալ Առաջին համաշխարհային պատերազմի ծախսերը, կրճատել կայսրության արտաքին պարտքը: Այդ պատճառով էլ կառավարությունը տեղահանությունը կազմակերպելիս հայերին արգելում էր վաճառել կամ նվիրել անշարժ և շարժական ունեցվածքը, որոնք բռնագրավվում էին պետության կողմից[21]:

Երիտթուրք ղեկավարները նույնիսկ լկտիություն ունեցան օտարերկրյա ապահովագրական ընկերություններից ու բանկերից պահանջելու ցեղասպանությանը զոհ դարձած հայերի ավանդներն ու ապահովագրական գումարները:

Պատերազմի ժամանակ ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուի հետ զրույցում Թալեաթը

---

[19] **Голобородко И.**, Старая и новая Турция, Москва, 1908, ст. 119.

[20] **Մաթոսյան Տ.**, Հայոց ցեղասպանություն և հրեական Հոլոքոստ. համեմատման փորձ, Երևան, 2005, էջ 46:

[21] **Ինճիկյան Հ.**, Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984, էջ 300-301:

նշեց, որ «հայերը հարստացել են թուրքերի հաշվին»[22]: Այդ մտայնությամբ էին առաջնորդվում թուրքերը ցեղասպանութան ժամանակ և արդարացի էին համարում վերադարձնել «մակաբույծ հայերի» կողմից թուրքերից խլված հարստությունները: Այսպիսով, ցեղասպանության իրականացման գործում երկրորդական դեր չխաղացին նաև տնտեսական պատճառները:

Ընդհանուր առմամբ, 1915-1916 թթ. ոչնչացվեց ավելի քան մեկուկես միլիոն արևմտահայ, որից 800.000-ը կոտորվեց դեռ ճանապարհին, իսկ մնացածները բնաջնջվեցին արաբական անապատներում: Մահմեդականացվեցին ավելի քան 200.000 հայ կանայք, աղջիկներ ու մանուկներ: Փրկվեցին միայն քչերը, այն էլ արաբ ժողովրդի բարյացակամության շնորհիվ: Շուրջ մեկ միլիոն արևմտահայեր գաղթականի ցուպ վերցրին: Նրանցից մոտ 400.000-ը ապաստան գտան Կովկասում և Ռուսաստանում, իսկ մնացածները՝ այլ երկրներում: Ամենուրեք նրանց հետապնդում էին սովն ու համաճարակները: Հայերի կոտորածը շարունակվում էր հայ փախստականների սովահարությամբ, և միայն քչերին հաջողվեց դուրս գալ այդ ծանր մղձավանջից[23]:

Օսմանյան կայսրությունը գրեթե ամբողջությամբ հայազրկվեց: Հայաթափված երկրամասերի մի մասն անմիջապես բնակեցվեց մահմեդականներով, իսկ մեծ մասը մնաց ավերակ ու ամայի: Մեծ վնաս հասցվեց բազմադարյան հայ պատմամշակութային արժեքներին: Ավերվեցին 2.150 եկեղեցիներ ու վանքեր, 1.500 դպրոցներ, ոչնչացվեցին հազարավոր մեծարժեք ձեռագիր մատյաններ և այլ արժեքներ[24]:

Հոգեբանական ծանր հարված հասցվեց Եղեռնը վերապրողներին, և հայ ժողովրդի հիշողության մեջ դրոշմվեցին ցեղասպանության ահավոր հետևանքներն ու վրեժի ահավոր զգացումը թուրքերի հանդեպ:

Սակայն ամենաասրսափելին հայրենիքի կորուստն էր: Դարեր շարունակ հայ ժողովուրդը վերապրել էր բազմաթիվ թշնամիների բերած արհավիրքներին, սակայն շարունակել էր գոյատևել իր հայրենի հողի վրա, իսկ Մեծ եղեռնի հետևանքով պատմության մեջ առաջին անգամ Հայաստանի 90 տոկոսը հայաթափվեց և զրկվեց իր բնիկ տերերից: 1919 թ. կատարած հաշվարկներով՝ թուրքերի կողմից 1915-1918 թթ. ընթացքում հայերին հասցված միայն նյութական վնասը կազմում էր 19.130.912.000 ֆրանկ[25]:

Ընդհանուր առմամբ, 1870-ական թվականների վերջերին սկսված, 1915 թ. իր գագաթնակետին հասած և մինչև 1922 թ. շարունակված թուրքերի իրականացրած ցեղասպանությանը զոհ գնացին 2,5-3 մլն հայեր: Ինչպես տեսնում ենք, հայերի ցեղասպանության գործընթացը շարունակվել է ավելի քան չորս տասնամյակ և գործադրվել թուրքական տարբեր վարչակարգերի կողմից, որոնք մեկը մյուսին էին ժառանգում հայասպանության գործը:

Այդ ոճիրը նոր ժամանակների մեծագույն հանցագործությունն էր ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ մարդկային քաղաքակրթության դեմ: Ցեղասպանությունների պատմության մեջ Հայոց ցեղասպանությունն առաջինն էր և ամենամեծերից: Այն իրականացվեց չափազանց դաժանորեն ու նպատակաուղղված ձևով, որի ընթացքում

---

[22] **Մորգենթաու Հ.**, նշվ. աշխ., էջ 280:

[23] **Կարապետյան Մ.**, Հայաստանը 1912-1920 թթ., Երևան, 2003, էջ 80:

[24] Յուշամատեան Մեծ եղեռնի 1915-1965, Բէյրութ, 1965, էջ 1025:

[25] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 150:

թուրքերը հասան իրենց պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական մի շարք ռասիստական, շովինիստական նպատակներին:

Ցեղասպանությունը հազարամյակների պատմության ընթացքում հայ ժողովրդի կրած ամենածանր և ամենաաղետաբեր հարվածն էր: Այն մարդկային, տարածքային, ռազմաքաղաքական, մշակութային, բարոյական զարհուրելի կորուստ էր, որի դասերը երբեք չպետք է մոռանանք: Այն ցույց տվեց, որ թուրքը, ինչ վարչակազմի կամ դիմակի տակ էլ հանդես գա, եղել և մնում է հայասպան, իսկ մեր ժողովրդի գլխավոր խնդիրն է՝ երբեք չմոռանալ և միշտ պատրաստ լինել չեզոքացնելու թուրքական վտանգը:

Հայոց ցեղասպանությունը դատապարտել են բազմաթիվ պետություններ, միջազգային հեղինակավոր կազմակերպություններ, և այդ գործընթացը շարունակվում է առ այսօր[26]: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը սկզբունքային նշանակություն ունի հայ ժողովրդի համար: Այդ ոճիրը գործադրվել է Հայկական հարցը փակելու նպատակով և մեր ժողովրդին զրկել իր պատմական հայրենիքի մեծագույն մասից: Հետևաբար, ցեղասպանության փաստի ընդունումից են բխում հայ ժողովրդի օրինական իրավունքների ճանաչումն իր կորցրած հայրենիքի նկատմամբ և հասցված վնասների հատուցումը:

Միաժամանակ, հայերի ցեղասպանության դատապարտումն ու հասցված վնասների հատուցումն ունի համամարդկային նշանակություն, քանի որ կարող է կանխարգելող ազդեցություն ունենալ հետագայում նման ոճրագործություն կազմակերպել ցանկացողների համար: Անպատժելիության մտայնության արդյունք էր ֆաշիստների կողմից հրեաների, գնչուների ու լեհերի ցեղասպանության կազմակերպումը: «Վերջիվերջո, ո՞վ է այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»[27],- հայտարարել էր Հիտլերը XX դարի երկրորդ ցեղասպանությունը նախագծելիս:

Այսպիսով, ինչպես պատմության դասերն են ցույց տվել, չդատապարտված ցեղասպանությունները նոր ոճիրների առիթ են դառնում:

[26] **Պողոսյան Ս.**, *Հայոց ցեղասպանությունը (Պատճառները, ընթացքը, հետևանքները)*, Երևան, 2005, էջ 93-96:

[27] **Բարդակչյան Գ.**, *Հիտլերը և հայերի ցեղասպանությունը*, Երևան, 1991, էջ 62:

*ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ*
*Մանկավարժական գիտությունների թեկնածու*
*Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՀՄ-ի դոցենտ*

# ՊԱՏՄԱՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ Կ.ՊՈԼՍԻ ԿՐԹԱԼՈՒՍԱՎՈ-ՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Հայոց Պատրիարքարանի «Վիճակացոյց»-ները (1901, 1903, 1908 թթ.))

Անցյալ դարի վերջերին պարբերական մամուլի էջերում, տեղագրություններում, տարեգրքերում, ավելի ուշ՝ նաև Արևմտահայ աշխարհի առանձին նահանգների, քաղաքների ու բնակավայրերի ամբողջական պատմությունն ընդգրկող հուշամատյաններում, որտեղ, պատմաազգագրական նյութերից բացի, ուշագրավ տեղեկություններ կան դպրոցների հիմնման, ուսուցիչների և աշակերտների մասին, մասնավորապես ներկայացվել են վիճակագրական որոշակի տվյալներ ու աղյուսակներ, քարտեզներ, բանահյուսական, ազգագրական նյութերի բառացանկեր:

Հրապարակված նյութերի մեծ ծավալը, վիճակագրությունը, դրանց համեմատական վերլուծությունը, ճշտումն ու լրացումները ուսումնասիրության հատուկ բնագավառ են, որի ուղղությամբ թեև որոշ քայլեր արվել են, սակայն այս կարևոր խնդրի գիտական քննությունը մի տեսակ անտեսվել է աշխարհագրագետների, պատմաբանների, ազգագրագետների և վիճակագիրների կողմից:

Հասկանալի է, որ Արևմտահայաստանի և Թուրքիայի հայաշատ բնակավայրերի դպրոցների համեմատական վիճակագրություն ստեղծելն ու ամբողջացնելը դուրս են մեր սույն ուսումնասիրության նպատակից, բայց դրանցից 3-ի՝ «Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ» Տետր Ա վիճակ 1901-1902 տարւոյ (Կ.Պոլիս, 1901 թ.), Տետր Բ վիճակ 1901-1902 տարւոյ (Կ.Պոլիս, 1903 թ.), «Վիճակացոյց թաղային վարժարանաց Կոստանդնուպոլսոյ» վիճակ 1908 հունվարի 1 (Կ.Պոլիս, 1908 թ.), վավերագրությունը կարող է նոր լույս սփռել Թուրքիայում 1880-ական թվականներից մինչև 1915 թվականը հայերի թվի, դպրոցական ցանցի խտության, ազգային փոքրամասնությունների կյանքում կրթության տարածման իրական վիճակի վրա:

Վերլուծման համար ընտրվել են Ա և Բ տետրերից բաղկացած «Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ» և «Վիճակացոյց թաղային վարժարանաց Կոստանդնուպոլսոյ» Հայոց Պատրիարքարանի պաշտոնական հրատարակությունները:

Ստորև ներկայացնում ենք Կ.Պոլսի Պատրիարքարանի Ա և Բ տետրերից բաղկացած «Վիճակացոյց»-ների ամփոփիչ աղյուսակները*:

50 Դ ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ 2006

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Ա ՏԵՏՐԻ

| ԳԱՒԱՌՆԵՐ | ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ | ԱՇԱԿԵՐՏՆԵՐ | ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ | ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ | ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ | ԱՄՍԱԿԱՆ ՀԱՍՈՅԹ ԵՒ ԾԱԽՔ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Աղրիանուպոլիս | 6 | 314 | 251 | 12 | 10 | 6130 |
| 2. Ռոտոսթօ | 9 | 1017 | 856 | 27 | 21 | 11885 |
| 3. Նիկոմիդիա | 38 | 5404 | 3103 | 134 | 78 | 32776 |
| 4. Պիլէճիկ | 10 | 1120 | 143 | 18 | 3 | 3137 |
| 5. Կուտինա | 5 | 825 | 349 | 16 | 7 | 6141 |
| 6. Զմիւռնիա | 27 | 1640 | 1295 | 55 | 54 | 35766 |
| 7. Գաղատիա | 7 | 895 | 395 | 20 | 9 | 5508 |
| 8. Սղերտ | 3 | 163 | 84 | 9 | 2 | 833 |
| 9. Կեսարիա | 42 | 3795 | 1140 | 107 | 18 | 20450 |
| 10. Ամասիա-Մարզուան | 9 | 1524 | 814 | 39 | 15 | 10395 |
| 11. Շապին-Գարահիսար | 27 | 2040 | 105 | 38 | 4 | 4699 |
| 12. Ճանիկ | 27 | 1361 | 344 | 44 | 15 | 8274 |
| 13. Տրապիզոն | 47 | 2184 | 718 | 72 | 13 | 17464 |
| 14. Կարին | 27 | 1956 | 1178 | 44 | 41 | 9495 |
| 15. Քղի | 27 | 1336 | 367 | 35 | 8 | 2035 |
| 16. Բաբերդ | 9 | 645 | 199 | 27 | 5 | 3354 |
| 17. Տիարպէքիր | 4 | 690 | 324 | 18 | 9 | 3467 |
| 18. Խարբերդ | 27 | 2058 | 496 | 49 | 9 | 8549 |
| 19. Ակն | 4 | 541 | 215 | 13 | 9 | 1967 |
| 20. Չմչկածագ | 12 | 456 | 272 | 14 | 1 | 1458 |
| 21. Արաբկիր | 18 | 713 | 223 | 23 | 2 | 2457 |
| 22. Չարսանճագ | 12 | 617 | 189 | 16 | 2 | 1576 |
| 23. Եղեսիա | 8 | 1091 | 571 | 19 | 7 | 2997 |
| 24. Պաղտատ | 2 | 68 | 46 | 9 | 2 | 1566 |
| 25. Այնթապ | 9 | 898 | 708 | 31 | 27 | 8580 |
| 26. Անտիոք | 10 | 440 | 47 | 10 | - | 1520 |
| 27. Հալէպ | 2 | 438 | 249 | 12 | 6 | 3841 |
| 28. Եօզգատ | 12 | 1197 | 557 | 30 | 13 | 10075 |
| 29. Հաճըն | 4 | 508 | 69 | 10 | 2 | 1319 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 30. Կիւրին | 12 | 736 | 78 | 18 | 2 | 3670 |
| 31. Զէյթուն | 10 | 605 | 85 | 14 | 1 | 1348 |
| 32. Տարնտէ | 2 | 260 | 70 | 4 | 1 | 500 |
| 33. Տիվրիկ | 10 | 757 | 100 | 18 | 2 | 3440 |
| Ընդհանուր | 478 | 38274 | 15640 | 1005 | 398 | 23667 2 |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Բ ՏԵՏՐԻ

| ԳԱՒԱՌՆԵՐ | ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ | ԱՇԱԿԵՐՏՆԵՐ | ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ | ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ | ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ | ԱՄՍԱԿԱՆ ՀԱՍՈՅԹ ԵՒ ԾԱԽՔ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Պրուսա | 16 | 1345 | 733 | 34 | 20 | 10509 1/2 |
| 2. Պալըքէսէր-Պանտր-մա | 8 | 700 | 634 | 22 | 13 | 7560 |
| 3. Սեբաստիա | 46 | 4072 | 549 | 62 | 11 | 6245 |
| 4. Եւդոկիա | 11 | 1408 | 558 | 37 | 13 | 7852 |
| 5. Բաղեշ | 12 | 571 | 63 | 20 | - | 2346 3/4 |
| 6. Երզնկա | 22 | 1389 | 475 | 54 | 9 | 8427 |
| 7. Կամախ | 13 | 646 | 28 | 16 | - | 1476 3/4 |
| 8. Պայազիտ | 6 | 438 | 54 | 11 | 2 | 1011 1/2 |
| 9. Մուշ | 23 | 1034 | 284 | 31 | 4 | 2439 1/3 |
| 10. Վան | 21 | 1323 | 554 | 47 | 12 | 5618 1/2 |
| 11. Լիմ և Կտուց Անապատներ | 3 | 203 | 56 | 5 | 1 | 38 |
| 12. Աղթամար | 32 | 1106 | 132 | 36 | - | 4961 1/2 |
| 13. Դերջան | 12 | 485 | 10 | 12 | - | 737 |
| 14. Սպեր-Կիսկիմ | 3 | 80 | - | 3 | - | 194 |
| 15. Բասէն | 7 | 315 | - | 7 | - | 437 |
| 16. Խնուս | 8 | 352 | 15 | 11 | 1 | 1273 |
| 17. Տիգրանակերտ | 2 | 180 | - | 5 | - | 582 |
| 18. Բալու | 8 | 505 | 50 | 14 | 1 | 1500 |
| 19. Գասթէմունի | 3 | 110 | 50 | 2 | - | 380 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 20. Գօնեա | 3 | 213 | 137 | 6 | 6 | 3200 |
| 21. Արմաշ | 2 | 190 | 110 | 5 | 1 | 730 |
| 22. Եգիպտոս | 2 | 223 | 217 | 16 | 7 | 14921 |
| 23. Կիպրոս | 3 | 63 | 37 | 8 | 1 | 5304 |
| 24. Պուլկարիա | 10 | 534 | 413 | 23 | 10 | 12725 |
| 25. Սիս եւ շրջակայք | 7 | 476 | 165 | 15 | 4 | 3889 |
| 26. Ատանա | 25 | 1947 | 808 | 40 | 29 | 11945 |
| 27. Մալաթեա | 9 | 872 | 230 | 16 | 3 | 1920 |
| 28. Մարաշ | 23 | 1361 | 378 | 34 | 10 | 8073 |
| | 340 | 20041 | 20041 | 592 | 158 | 12695 2/3 |
| Գումար Ա Տետրի | 478 | 38274 | 15640 | 1005 | 398 | 236672 |
| Համրագումար | 818 | 60315 | 22380 | 1597 | 556 | 362967 2/3 |

**Առաջին.** Հետաքրքրական կառուցվածք ունեն և՛ Ա, և՛ Բ տետրերը: Ներկայացված են 61 գավառների վիճակներ[*]: Աղյուսակներում նշվում են բնակավայրերը, վարժարանների անունները, դասընթացները՝ ըստ տարիների, աշակերտների և ուսուցիչների թիվը, ամսական հասույթներն ու ծախսերը:

**Երկրորդ.** «Վիճակացոյց»-ի Ա և Բ տետրերում արձանագրված են հայկական 818 տարբեր տիպի դպրոցների անուններ, որոնք տեղաբաշխված են Արևմտահայաստանի և Թուրքիայի հայաշատ քաղաքներում ու գյուղերում, ընդ որում՝ երկսեռ աշակերտների ընդհանուր թիվը հասնում էր 82695-ի, ուսուցիչներինը՝ 2153-ի:

**Երրորդ.** Քաղաքներից հիշվում են հետևյալները՝ Ադրիանուպոլիսը, Ռոդոստոն, Նիկոմիդիան, Պիլեճիկը, Շապին-Գարահիսարը, Զմյուռնիան, Կարինը, Կեսարիան, Ամասիան, Քղին, Բաբերդը, Դիարբեքիրը, Խարբերդը, Ակնը, Արաբկիրը, Եղեսիան, Այնթապը, Բաղեշը, Հաճնը, Կյուրինը, Զեյթունը, Եվդոկիան, Երզնկան, Վանը, Մուշը, Բայազետը և մյուս հայաշատ գավառները:

**Չորրորդ.** «Ծանոթություններ» բաժնում կան մանր տեղեկություններ ընդհանուր ցանկում չարտացոլված կաթոլիկական, բողոքական, նաև որոշ մասնավոր դպրոցների և որբանոցների, ծաղկոցների և մանկապարտեզների մասին: Հիշվում են նաև այն բարեգործների անունները, ովքեր իրենց ծախսերով հիմնել են այդ դպրոցները: Նշված է նաև գյուղական առանձին դպրոցների ուսուցիչների աշխատավարձի չափը, որը տրվել է նաև բնամթերքով (ցորեն):

Այսպես՝ Վանի առաջնորդական վիճակի «Ծանոթություններ» բաժինը տեղեկացնում է.

1 ) «Գանձանակէ կամ նպաստներէ սյունակին մեջ նշանակված Սանդխտյան վարժարանի ամսական 510 դուռուշը՝ այսինքն տարեկան 6120 դուռուշը, կհայթայթվի բարերար Սանասարյանցի կտակադրամեն և Կ.Պոլսո մեջ գտնված խանութի մը վարձքերեն.

2) Վանա մեջ կգտնվի մասնավոր վարժարան մը՝ զոր կվարե աչազուրկ Համբարձում Երամյան: Այս վարժարանը ունի 233 մանչ և աշակերտ և 12 ուսուցիչ: Իր ամսական ծախքն է

2700 ղուռուշ, որուն 1800-ը կգոյանա թոշակներէ և մնացյալը կհոգացվի նպաստով.

3) Դռնաշէն գյուղի ուսուցիչ կին մըն է, որ տանը մեջ կդասախոսէ.

4) Սույն վիճակացույցեն դուրս կմնան Վանա ազգային և օտար որբանոցներուն մեջ պատսպարվող և դաստիարակվող որբերն, որոնց թիվն է 748՝ հետևյալ բաժանմամբ.

| | մանչ | աղջիկ |
|---|---|---|
| ա) Վարա· ա | 107 | - |
| բ) Կարմրվորի | 35 | - |
| · ) Սալնապատի | - | 65 |
| դ) Ս.Խաչի | 4 | 12 |
| ե) Ամերիկյան | 292 | 175 |
| զ) Լատինացվոց | 28 | 30 |
| | 466 | 282 |

5) Վանա և գյուղերու մեջ բողոքականաց և լատինացվոց վարժարանները կհաճախեն հետևյալ թվով հայ ուսանողներ

| | մանչ | աղջիկ |
|---|---|---|
| բողոքականաց | 166 | 253 |
| լատինացվոց | 326 | 437 |
| | 492 | 690 |

Ըստ վիճակագրության՝ Վանում գործել է 21 վարժարան (7-ը՝ քաղաքում, 14-ը՝ մերձակա գյուղերում)՝ 1877 աշակերտով (59 ուսուցիչ):Վիճակացույցի «Ծանոթություններ» բաժնում տրվում են կարևոր տեղեկություններ այն վարժարանների ու դպրոցների մասին, որոնք, ըստ էության, դուրս են եղել Կ.Պոլսի առաջնորդարանի ենթակայությունից, թեև դրանք հայկական են և գործել են իբրև միսիոներական կամ մասնավոր դպրոցներ:

Դրանք դուրս են թողնված դպրոցների ընդհանուր ցանկից, բայց և կարևոր են և չի կարելի անտեսել:

Վիճակացույցի «Ծանոթություններ» բաժնում կան նաև մասնակի, նույնիսկ մանր տեղեկություններ արևմտահայ դպրոցների, ուսուցիչների, աշակերտների և համայնքների մասին: Դրանք քննության կարոտ են և կարելի է վերլուծել ըստ ժամանակագրական ընթացքի: Դրանց քննարկման որոշակիության հարցերը ունեն թեմատիկ լայն ընդգրկում: Բայց մենք հարկ ենք համարում անդրադառնալ վիճակավերլուծական մասնակի այն տվյալներին, որոնք միշտ չէ, որ չեզոք դիրք են գրավում նյութի համակողմանի քննության համար:

Ստորև դրանք ներկայացնում ենք որոշակի մանրամասներով և «Վիճակացոյցի» հիշատակումներով:

Այսպես՝ **Մշո առաջնորդական վիճակն** արձանագրել է 23 վարժարան (6-ը՝ քաղաքում, 17-ը՝ շրջակա գյուղերում)՝ 1318 աշակերտով (35 ուսուցիչ):

Պետք է ավելացնել նաև՝

1) Պատրիաիքարանի կողմից նպաստվարվող հետևյալ որբանոցների և դպրոցների աշակերտները.

| | | |
|---|---|---|
| ա) | Ս. Կարապետ վանքի որբանոցի | -45 աշ. |
| բ) | Ս. Առաքելոց վանքի որբանոցի | -57 աշ. |
| գ) | Ս. Հովհաննես վանքի դպրոցի | -25 աշ. |
| դ) | Ս. Մատնավանքի դպրոցի | -15 աշ. |
| ե) | Հազզոյի դպրոցի | -58 աշ. |
| զ) | Կինճ-Արտշենի դպրոցի | -25 աշ. |
| | | 225 աշ. |

2) քաղաքի բողոքական և մխիթարյան դպրոցների 160 աշակերտ:

Ծանուցվում է, որ Իզմիրյանց իգական վարժարանում կային 41 երեխա, որոնք բերվել էին Մուշի որբանոցից:

Մշո դաշտի մնացած 81, նաև Հազզո, Շատախ, **Գավառ, Խո**յթ ու Բռնաշեն գյուղերի դպրոցները փակվել են՝ աշակերտ և ուսուցիչ չունենալու պատճառով:

**Խարբերդում** գրանցվել է 27 դպրոց (5-ը՝ քաղաքում, 22-ը՝ շրջակա գյուղերում)՝ 2554 աշակերտով (58 ուսուցիչ):

«Ծանոթություններ» բաժնում հիշվում է, որ քաղաքի որբանոցներում ապաստանել է 850 երեխա, իսկ բողոքական ու լատինաց վարժարաններում սովորում է 702 աշակերտ:

Հիշատակվում է նաև, որ Խարբերդի 21 գյուղերի դպրոցներ չեն գործել ժողովրդի չքավորության պատճառով, իսկ հարակից Շիրոյի գյուղերն ընդհանրապես վարժարան չեն ունեցել:

Քղիում գործել է 27 դպրոց (6-ը՝քաղաքում (Կարինում), 21-ը՝ շրջակա գյուղերում)՝ 3134 աշակերտով (43 ուսուցիչ): Գործող դպրոցների շարքում թե՛ աշակերտների թվով և թե՛ կրթական մակարդակով առանձնանում են Արծնյան (603 աշ.) և Հռիփսիմյան (405 աշ.) վարժարանները:

Նաև տեղեկացվում է հետևյալը.

1) «Գյուղերու ուսուցիչներուն ուտեստի և բնակության վերաբերյալ **ծախքերը գյուղացիներն կհոգաց**վին.

2) Գյուղերու դպրոցական տարեշրջանը ութ ամիս միայն կտևե»[2]:

**Բաբերդի առաջնորդական վիճակում** ներկայացված է 9 դպրոց (2-ը՝ քաղաքում, 7-ը՝ շրջակա գյուղերում)՝ 844 աշակերտով (32 ուսուցիչ): Բարեկարգ դպրոցների շարքն են դասվում Մեսրոպյան (224 աշ.), Արամյան (135 աշ.) և Հայկազնյան (102 աշ.) վարժարաննե-

րը:

Արձանագրվում է, որ Ավերակ, Բլուր, Հնտե, Ջահմանց, Ս. Թորոս, Ռուշտի Քարավրակ, Ռումել և Օձտեղ գյուղերի վարժարանները տարվա մեջ բաց էին ընդամենը 3-4 ամիս, չունեին տնականություն և որոշակի ուղղություն: Իսկ վիճակի մյուս 13 գյուղերը ընդհանրապես դպրոցներ չեն ունեցել:

**Դիարբեքիրն** ուներ 4 դպրոց (2-ը՝քաղաքում, 2-ը՝ Լճե և Հայնի գյուղերում)՝ 1014 աշակերտով (27 ուսուցիչ): Աշակերտների թվով (754) և ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքով հայտնի էր Դիարբեքիրի Ազգային վարժարանը: Ծանուցվում է նաև, որ դպրոցներ են եղել Մուֆարգին և Հազրո գյուղերում, դրանց ծախսերը հոգացել է Նպաստից հանձնաժողովը:

Օտար վարժարան էր հաճախում 190 երեխա (90-ը՝ տղա, 100-ը՝աղջիկ): Նշվում է նաև այն մասին, որ Ազգային վարժարանի օսմաներենի ուսուցիչը տեղի մեարիֆի սնտուկից ստանում էր 1800 դուրուշ տարեկան աշխատավարձ:

**Ակնը** ուներ 4 դպրոց (1-ը՝ քաղաքում, 3-ը՝ գյուղերում՝ Ապուչեխում, Կամարակապում և Բինկյանում)՝ 756 աշակերտով (22 ուսուցիչ): Ակնի Ս. Ներսիսյան-Հռիփսիմյան վարժարանը (450 աշ.), որն ուներ Զ դասընթաց, դասվում էր ժամանակի լավագույն դպրոցների շարքը: Նրանից ետ չէին մնում նաև Վարագա (115 աշ.), Արամյան-Սանդխտյան (103 աշ.) և Ս. Մեսրոպյան (88 աշ.) վարժարանները

Ակնի բողոքական և միսիոներական որբանոցներում ապաստանել է 100 երեխա (54-ը՝ աղջիկ, 46-ը՝տղա):

**Չմշկածագի վիճակում** գրանցվել է 12 դպրոց (1-ը՝ քաղաքում, 11-ը՝ շրջակա գյուղերում)՝ 728 աշակերտով (15 ուսուցիչ):

Այս վիճակի մեջ մտնող մի շարք գյուղեր (Երից-Ազարակ, Մորշխա, Մոռնայի, Վասկավան, Ռշկունի, Ձնձոր, Ագարակ, Պետրեթիլ) բնակչության չքավորության պատճառով դպրոցներ չեն ունեցել: Չմշկածագի միակ Ս. Աստվածածին վարժարանը (135 աշ.) տարվա մեջ գործում էր ընդամենը մի քանի ամիս՝ «... առ ի չգոյե բավականաչափ հասույթի, տարեկան պյուտճեն հավասարակշռելու համար»[3]:

Ըստ առաջնորդական վիճակի՝ **Արաբկիրում** կար 18 վարժարան (5-ը՝ քաղաքում, 13-ը՝ շրջակա գյուղերում)՝ 936 աշակերտով (25 ուսուցիչ): Քաղաքում գործել է Զ դասարանով ուսումնարան (120 աշ.), Դ դասարանով իգական վարժարան (114 աշ.) և եռամյա դասընթացով Անջրդիի Վարդանյան վարժարանը, մյուս բոլոր վարժարանները երկամյա և միամյա նախակրթարաններ էին:

Լրացուցիչ հիշվում է նաև, որ Արաբկիրի Հայ-կաթոլիկ և Հայ-բողոքական վարժարաններ հաճախող 110 երեխայի, նաև 44 որբերի ուսումնական ծախսերը հոգացել է Պատրիարքարանը:

Բացի դրանից, բողոքական հայերը այստեղ ունեին երկու որբանոց (73 երեխա):

Քուշնա և Վաղշեն գյուղերի դպրոցներին հովանավորում էին Պրուսայի արաբկիրցիները: Աղն և Ծապլվար գյուղերը դպրոցներ չունեին չքավորության պատճառով:

**Այնթապում** գործում էր 9 վարժարան (8-ը՝քաղաքում, 1-ը՝ Օրուլ գյուղում)՝ 1606 ա-

շակերտով (58 ուսուցիչ):

Ընդհանուր ցանկում չեն ներկայացվել Մեսրոպյան մասնավոր դպրոցը՝100 աշակերտով, և օտար վարժարաններ հաճախող շուրջ 240 աշակերտ (157-ը՝ տղա, 53-ը՝ աղջիկ):

Դասավանդման բարձր մակարդակով առանձնանում էին Ներսիսյան (400 աշ.) և Հայկազնյան (100 աշ.) վարժարանները, որոնք ունեին բարձրագույն նախակրթարանի Ա տարին, Աղեմական (160 աշ.) և Հայկանուշյան (470 աշ.) վարժարանները՝ Բ տարին, և Վարդանյան վարժարանը՝ (179 աշ.) Գ տարին:

«Վիճակացոյցը» ծանուցում է, որ Օրուլի Ս. Սահակյան նախկրթարանի (*29* աշ., եռամյա դասընթաց) ամսական ծախքի 100 դուրուշը վճարում էր քաղաքի Հայոց եկեղեցին:

**Հաճնում** կար 4 դպրոց՝577 աշակերտով (12 ուսուցիչ):

«Վիճակացոյց»-ից դուրս են մնացել բողոքական և կաթոլիկ վարժարաններ (բողոքական՝ 67-ը՝ տղա, 98-ը՝ աղջիկ, հռոմեական՝ 18-ը՝ տղա, 12-ը՝ աղջիկ) հաճախող 195 երեխա:

Կեդրոնական նախակրթարանը (283 աշ.), որը կենտրոնական վարժարանի դեր էր կատարում Հաճնում, ուներ բարձրագույն նախակրթարանի երկամյա (Ա և Բ) դասընթաց, իսկ Ս. Գևորգ (169 աշ.) և Ս. Թորոս (87 աշ.) երկսեռ վարժարաններն ունեին քառամյա դասընթաց:

Հաճնի Ս. Հակոբի վանքին կից գործում էր Ազգային որբանոցը (26 որբ տղաներ) Դ դասընթացով, որի ծախսերից (ամսական 17 օսմ. **ոսկի) 12 օսմ. ոսկին վճարում էր** Նպաստից կեդրոնական հանձնաժողովը, իսկ 5 ոսկին՝ տեղացի հայերը:

**Զեյթունի առաջնորդական վիճակը** արձանագրել է 10 դպրոց (6-ը՝քաղաքում, 4-ը՝ շրջակա գյուղերում)՝ 690 աշակերտով (15 ուսուցիչ):

«Ծանոթություններ» բաժնում նշվում է, որ սույն Վիճակացույցից դուրս են մնացել հայ բողոքական դպրոցի 40 և հայ բողոքական որբանոցի 30 աշակերտներ: Առաջնակարգ վարժարանների շարքն են դասվել Զեյթունի իգական վարժարանը (85 աշ.)՝ երկամյա դասընթացով, Կեդրոնական նախակրթարանը (120 աշ.)՝ քառամյա, և Ազգային վարժարանը (105 աշ.)՝ երկամյա դասընթացներով:

Այդպես էր նաև Զեյթունի Ս. Աստվածածնի որբանոցը՝ 83 որբերով, ուներ երեք ուսուցիչ, ամսական ծախսն էր 1500 դուրուշ:Բաղեշի վիճակում գրանցվել է 12 դպրոց (5-ը՝ քաղաքում, 7-ը՝ շրջակա գյուղերում)՝ 634 աշակերտով (20 ուսուցիչ):

Ուշագրավ է այն փաստը, որ սովորողների ընդհանուր թվի միայն 10%-ն էր աղջիկ (Ս. Գևորգ՝ 36, Ս. Սարգիս՝ 4, Ս. Թորոս՝ 23):

Հաշվառման մեջ չեն մտցվել Բաղեշի տարբեր որբանոցների 208 որբեր և օտար վարժարաններ հաճախող 228 երեխա:

Բաղեշի հայաբնակ թաղերում գործում էր նաև չորս մասնավոր ծաղկոց, որտեղ հաճախում էր 105 երեխա (42-ը՝ տղա, 63-ը՝ աղջիկ), որը նույնպես դուրս էր մնացել Վիճակացույցից:

**Երզնկայի վիճակում** հաշվառվել է 22 դպրոց (5-ը՝ քաղաքում, 17-ը՝ շրջակա գյուղերում)՝ 1864 աշակերտով (63 ուսուցիչ): Բարեկարգ դպրոցների շարքն էին դասվում քաղաքի

Երզնիկյան (250 աշ.), Կեդրոնական (280 աշ.), Նարեկյան (160 աշ.), Արամյան (120 աշ.) և Քրիստինյան (350 աշ.) վարժարանները:

Վիճակացույցը ծանուցում է նաև՝

ա) «Այս վիճակին քանի մը գյուղերու վարժարանները փակ կմնան, գյուղացվոց նյութական անձկության պատճառով.

բ) Գյուղերու վարժարանները միայն ձմեռ ժամանակ բաց կմնան, գյուղացվոց երկրագործ ըլլալուն պատճառով.

գ) Շըխլի, Կարմրի և Վարի-Չիֆթլիկ գյուղերում դպրոցները խարխլված ըլլալով, աշակերտները այս կամ այն գյուղացվույն տանը մեջ կհամախմբվին և դաս կառնեն»[4]:

**Բայազետի (Պայազիտ) վիճակում** գրանցվել է 6 դպրոց (1-ը՝ քաղաքում, 5-ը՝ շրջակա գյուղերում)՝ 392 աշակերտով (13 ուսուցիչ): Դպրոցների մեջ առանձնանում էր՝ Բայազետի Կեդրոնական (103 աշ.) և Թոփրակ-Կալեի Ս. Աստվածածին վարժարանները (103 աշ.), (վերջինս ուներ բարձրագույն նախակրթարանիԱ տարի): Լավագույն դպրոցներ էին համարվում նաև Կարաքիլիսեի և Խաստուրի երկդասյա ուսումնարանը:

Ընդհանուր ցանկում չեն ներկայացվել Բայազետի Ազգային որբանոցի 26 որբերը և Կա-*ր*աքիլիսեի երկու մասնավոր դպրոցներում սովորող աշակերտները:

**Խաստուրի երկդասյա ուսումնարանը** հիմնադրվել է 1884 թվականին Պոլսո Միացյալ Ընկերության նախաձեռնությամբ Ս. Աստվածածին վանքին կից՝ «Պոլսո Միացյալ Ընկերության Խաստուրի ուսումնարան» անվան տակ:

Խաստուրն ուներ ևս մեկ դպրոց, որ բացվել էր հայ կաթոլիկ համայնքի կողմից 1887 թվականին:

Ուսումնարանում դասավանդվել են հայոց լեզու և գրականություն, կրոն, պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, թվաբանություն, թուրքերեն, ֆրանսերեն, երգ-երաժշտություն և մարմնամարզություն առարկաները: Դպրոցի ուսուցիչները ներքին կարգով մասնակի փոփոխություններ էին մտցրել հայ գրականություն, պատմություն, երգ-երաժշտություն առարկաների ծրագրերում՝ մեծ տեղ տալով հայ ժողովրդի պատմությանը և հայրենասիրական երգերին:

Ուսման տևողությունը 5 տարի էր, իսկ 1906 թվականին ավելացել էր նաև 6-րդ դասարանը: Ուսուցումը երկսեռ էր: Պարապմունքները սկսվում էին վաղ առավոտյան և փոքր ու մեծ ընդմիջումներով շարունակվում մինչև ուշ երեկո:

Ուսումնարանը գործել է մինչև Հայոց Մեծ եղեռնը՝ յուրաքանչյուր տարի տալով 15-20 ընթացավարտ: Ընդհանուր թվով ուսումնարանը տվել է 450-500 ընթացավարտ:

Ուսումնարանի շրջանավարտներից շատերը իրենց ուսումը շարունակել են Ալաշկերտի բարձրագույն նախակրթարանում, Կարինի Սանասարյան վարժարանում, Երևանի գիմնազիայում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և այլ բարձրագույն կրթօջախներում:

Պոլսո Միացյալ Ընկերությունն իր ենթակայության տակ գտնվող դպրոցների աշխատանքների վերահսկողությունն իրականացնում էր տեսչական մարմինների միջոցով, որոնք գտնվում էին տարբեր վայրերում: Ալաշկերտի դպրոցները մտնում էին «Կարնո շրջանակի մեջ»: Բարեբախտաբար պահպանվել են միացյալ ընկերության տեղեկագրերը,

որոնք պարբերաբար հրատարակվել են: Այդ կարևոր փաստաթղթերում մանրակրկիտ տրված են ծրագրերը, ուսուցիչների անուն-ազգանունները, տարեկան վարձատրության չափը, ամփոփումներն ու հաշվետվությունները[5]:

Աղթամարի կաթողիկոսության ենթակայությամբ գործել է 32 դպրոց (1-ը՝ Աղթամարում, 31-ը՝ շրջակա գյուղերում և վանքերում)՝ 1238 աշակերտով (36 ուսուցիչ):

Ծանուցվում է, որ՝

1) «Աղթամարա վանքին վարժարանին ծախքը եղող ամսական 680 դուռուշի գումարը, զոր նշանակած ենք զանազան նպաստներու սյունակին մեջ, կհոգացվի Աղթամարա վանքին հասույթներեն: Նույն վանքի հասույթներեն կտրվի նաև Մոկսի չորս թաղերու վարժարանին (60 աշ.)՝ ամսական 50 դուռուշ, և Թաղավան վարժարանին (95 աշ.)՝ 50 դուռուշ.

2) Աղթամարա գյուղերուն ամենամեծ մասը փոխանակ դրամի՝ ցորենի նպաստներով կհոգան իրենց վարժարաններու ծախքը, այսինքն ուսուցիչներուն ամսականը: Այդ ցորենի չափերը՝ չափը 20 դուռուշ, հաշվված է այս ցուցակին մեջ՝ տեղական գինին համաձայն.3) Նարեկա վանքը Նարեկ գյուղի վարժարանին ծախքերուն կմասնակցի Վանա 6 չափ ցորեն տալով, որ կներկայացնէ ամսեկան 10 դուռուշ»[6]:

| Բնակավայր | դպրոց | աշակերտ | ուսուցիչ |
|---|---|---|---|
| ա) Դերջան | 12 | 495 | 12 |
| բ) Սպեր և Կիսկիմ | 3 | 80 | 3 |
| գ) Բասեն | 7 | 315 | 7 |
| դ) Խնուս | 8 | 367 | 12 |
| | 30 | 1177 | 34 |

Հարկ է նշել, որ Խնուս-Բերդում Ս. Գևորգյան վարժարանից բացի (40 աշ. քառամյա դասընթաց) գործում էր նաև Խաշխաշյան մասնավոր վարժարանը, որտեղ հաճախում էր 25 աշակերտ:

Վերոնշյալ գյուղերի դպրոցները տարվա մեջ գործում էին ընդամենը 8 ամիս, իսկ շատերի դռները տարին բոլոր մնում էին փակ՝ գյուղացիների չքավորության պատճառով:

**Արմաշի վանահայրության ներքո** գործել են Արմաշի Նարեկյան (190 աշ.) և Խասկալի Ս. Հակոբյան (110 աշ.) երկսեռ վարժարանները՝ 300 աշակերտով (6 ուսուցիչ): Երկուսն էլ բարձր նախակրթարաններ էին՝ ուսուցման բարձր և եռամյա դասընթացներով:

Արմաշի թաղային վարժարանը մատակարարվում էր Դպրեվանքի կողմից (տարեկան 6000 դուռուշ): Դրա փոխարեն վանքը գանձում էր դպրոցի կալվածական հասույթները, որոնց ընդհանուր գումարը չէր գերազանցում 1000 դուրուշից:

Նյութապես ապահովված էր նաև Խասկալի թաղային վարժարանը, որի կալվածները տարեկան բերում էին 1500 դուրուշի հասույթ, նույնչափ գումար հայթայթվում էր ուխտավորների նվիրատվություններից, որը լիովին բավարարում էր վարժարանի մատակարարումը:

Ուշադրության արժանի է մի կարևոր հանգամանք ևս. դպրոցների քանակը բուն Արևմ-

տահայաստանի տարածքում ավելի քիչ էր, քան Թուրքիայի հայաշատ քաղաքներում ու բնակավայրերում:

Այսպես՝ **Տրապիզոնի վիճակում** գործել է 47 դպրոց՝ 2902 աշակերտով (85 ուսուցիչ): Վիճակացույցից դուրս է մնացել պետական և զանազան օտար վարժարաններ հաճախող 100 աշակերտ: Այս վիճակում գտնվող Բայրանի, Կոոմելայի, Լապոնայի և Կապանի գյուղերի նախակրթարանները մշտապես չեն գործել:

**Սեբաստիայի վիճակում** գործել է 46 դպրոց՝ 4531 աշակերտով (73 ուսուցիչ): Ընդհանուր ցանկում չի հաշվառվել պետական, մասնավոր և օտար վարժարաններ հաճախող ավելի քան 2033 աշակերտ:

**Ադանայի վիճակում** արձանագրվել է 25 վարժարան՝ 2755 աշակերտով (69 ուսուցիչ): Վարժարաններից 8-ը գործել է Ադանայում, որոնց մեջ իբրև լավագույն դպրոցներ առանձնանում էին Աբգարյան (180 աշ.), Արամյան (280 աշ.), Աշխենյան (140 աշ.) վարժարանները, Զ, Ը, Թ դասընթացներով: Վիճակացույցի ընդհանուր բաժնում չի արտացոլվել պետական, մասնավոր և օտար վարժարաններ հաճախող ավելի քան 560 աշակերտ:

Վիճակացույցը ծանուցում է՝ «Գոչոլուզ և հայ գյուղերու վարժարանները մոտ երկու տարիե ի վեր փակ կմնան տեղացվոց չքավորության պատճառով: Իսկ Օճազը և Էոզերլի գյուղերու վարժարանները 1901-ին փակվեցան պյուտճեի անձկության պատճառով»[7]:

**Մարաշի վիճակում** գրանցվել է 23 դպրոց՝ 10-ը՝ քաղաքում, 13-ը՝ մերձակա բնակավայրերում (1669 աշակերտ, 44 ուսուցիչ):

Վարժարաններից հիշատակության են արժանի հետևյալները՝ Ս. Խաչ Մայր եկեղեցու 5 վարժարանները (530 աշ.), Ս. Գևորգ (90 աշ.), Ս. Աստվածածին (160 աշ.), Ս. Ստեփանոս (236 աշ.): Հարկ է նշել, որ Մարաշի Ս. Ստեփանոս վարժարանն ուներ որբանոց (20 որբ), որին կից արհեստանոցներում երեխաները սովորում էին մուճակագործություն և կոշկակարություն:

Մանր տեղեկություններ բաժնում նշվում է, որ օտար վարժարաններ են հաճախել 2814 երեխա, որը պիտի ավելացնել ընդհանուր թվի վրա:

Չնայած բնակչության խտությանը, այնուամենայնիվ Մարաշի վիճակի մեջ գտնվող Տեմրեք, Անճրգ, Արպենց, Թավուրլու, Հովտու, Շիվիլկի, Պանտուք, Տրդատը, Քեոթեքլի հայաբնակ գյուղերը դպրոցներ չեն ունեցել:

Կոստանդնուպոլսի թաղային վարժարանների «Վիճակացոյց»-ի (1908 թ.) համաձայն՝ մայրաքաղաքում գործել է 42 հայտնի վարժարան ու դպրոց, տրված են աշակերտների և ուսուցիչների ընդհանուր թիվը՝ 5379 աշակերտ, որից 1602-ը սովորել են անվճար, և 294 ուսուցիչ:

Լրացուցիչ նշվում է, որ պետական և զանազան հայ ու օտար վարժարաններ հաճախող ուսանող-ուսանողուհիների թիվը հասնում է 1500-ի:

Համեմատական վիճակագրությամբ տրված են 1897-1908 թթ. ամենամյա աշակերտների և ուսուցիչների թիվը, ընդ որում՝ 1897-ին Պոլսի հայկական դպրոցներում սովորում էր 3765 աշակերտ, որոնց թիվը զնալով աստիճանաբար աճել է՝ հասնելով 5379-ի: Նույնպիսի աճ նկատվում է նաև ուսուցիչների կազմում՝ 199-ից հասել է 294-ի[8]:

Հայտնի է դառնում, որ ռուսական սահմաններին մոտ գտնվող (ռուսական զորքերի կողմից 1877-1878 թվականներին գրավված և հետ վերադարձված նահանգներ ու շրջաններ) բնակավայրերում, որտեղ բնակչության հիմնական կազմը հայերն էին՝ իրենց հայրենիքում, Թուրքիայի մնացած հայաբնակ գավառների համեմատությամբ, դպրոցների քանակով հասել էին նվազագույնի, այսպես՝ Բաբերդի վիճակ՝ 7, Կարինի վիճակ (առանց Էրզրում քաղաքի)՝ 12, Սպերի գավառ՝ 3, Բասենի՝ 7, Բայազետի (Ալաշկերտը ներառյալ)՝ 6, Դիարբեքիրի՝ 4, և այլն:

Ճիշտ է, որոշ գյուղերում վանքերին կից եղել են փոքրիկ դպրոցներ, որոնց մի մասը գործել է գաղտնի պայմաններում, սակայն դրանք ընդհանուր առմամբ հետապնդել են մեկ նպատակ՝ գրաճանաչ դարձնել երեխաներին ու հասակավորներին:

Սույն «Վիճակացոյց»-ները ժամանակին արժանացել են հայ մտավորականների, մասնավորապես Գր. Զոհրապի ուշադրությանը՝ կայսերապետության մեջ հայկական դպրոցների և մանկավարժական մտքի առավելությունները ներկայացնելիս հայ դատի պաշտպանության շրջանակներում:

1913 թվականին Փարիզում **Մարսել Լեար** ծածկանունով հրատարակած «Հայկական հարցը փաստաթուղթերու լույսի տակ» գրքույկում Գր. Զոհրապը ուշագրավ վիճակագրական տեղեկություններ է հաղորդում հայկական դպրոցների հարաբերական աճի վերաբերյալ: Նա նշում է, որ 1908 թվականին, Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո, հայերը, օգտագործելով նոր վարչակարգի ժամանակավոր և հարաբերական թույլատու վերաբերմունքը, գրեթե տասնապատկեցին դպրոցների թիվը՝ մասնավորապես գավառներում: Այսպես, եթե Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1901-1903 թվականների վիճակագրության համաձայն՝ հայկական ջարդերից (1894-1896 թթ.) ընդամենը հինգ տարի անց՝ Աբդուլ Համիդի գահակալության ամենամռայլ տարիներին, Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և կայսրության մյուս հայաշատ վայրերում գործել է 818 դպրոց՝ 82695 երկսեռ աշակերտներով, որոնք միայն Հայոց պատրիարքարանի ենթակայության ներքո գտնվող դպրոցներն էին և, եթե դրան ավելացվի հայ կաթոլիկ և բողոքական համայնքների 250 դպրոց՝ 3000 սովորողներով և մասնավոր դպրոցները, ապա դպրոցների ընդհանուր թիվը կհասնի մոտավորապես 1200-ի՝ 130.000 երկսեռ աշակերտությամբ. «Գրեթե անհավատալի է սարսափի այդ շրջանին համար»,- գրում է Գր. Զոհրապը: Կարելի է հաստատել, շարունակում է իրավագետ գրողը, որ ներկայիս թրքական Հայաստանի մեջ (1913 թ.) գործում են շուրջ 1785 կրթական հաստատություններ ավելի քան 282.000 սովորողներով, այն դեպքերում, երբ «Թուրքերը հազիվ կրնան հաշվել 150 դպրոց՝ 1700 աշակերտով. քյուրտերը ոչ իսկ մեկ դպրոց ունին»[9]:

Ի մի բերելով Կ.Պոլսի Պատրիարքարանի կողմից հրատարակված «Վիճակացոյց»-ներում ներկայացված հայկական դպրոցների հիմնման ու աշխատանքային գործունեության պատմության հետ կապված հարցերը՝ հանգում ենք այն եզրակացության, որ դրանք կարևոր փաստաթղթեր են և իրենց տեսակի մեջ՝ եզակի, որովհետև հանգամանորեն ներկայացված են գրեթե բոլոր ուսումնական հաստատությունները 19-րդ դարի 70-ական թվականներից մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը (ուսուցիչների և աշակերտների թիվը,

դասավանդվող առարկաները, դպրոցական դասընթացները, Պատրիարքարանի ենթակա-յության և օտար ու մասնավոր դպրոցները), մինչդեռ դրանք առ այսօր գիտական լուրջ քննության չեն ենթարկվել: Ժամանակն է, որ դրանք ըստ արժանվույն գնահատվեն և դրվեն գիտական շրջանառության մեջ:

**Գրականություն**


1. «Վիճակացոյց» գավառական ազգային վարժարանաց Թուրքիոյ, Տետր Բ, Վիճակ 1901-1902 տարու, Կ.Պոլիս, 1903, էջ 10:
2. Նույն տեղը, Տետր Ա, էջ 14-15:
3. Նույն տեղը, էջ 20:
4. Նույն տեղը, Տետր Բ, էջ 6:
5. Տե՛ս Եռամեայ տեղեկագիր 21 օգոստոս 1908-1911 օգոստ
6. ոս 31, Կ. Պոլիս, 1912, էջ 60-70:
7. Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ, Տետր Բ, էջ 11:
8. Նույն **տեղը, էջ** 22:
9. Տե՛ս Վիճակացոյց թաղային վարժարանաց Կոստանդնուպոլսոյ, Կ. Պոլիս, 1908, հունվարի 1:
10. Գր. Զոհրապ, Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ, Բերյութ, 1973 (թարգմանված՝ 1913 թ. Փարիզում հրատարակված գրքից):

*ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու,դոցենտ*

# ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայերի և պարսկահայերի մեծամասնությունն ապաստան գտավ Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում, ուր գաղթականական բազմաթիվ կոմիտեների և ցարական օժանդակության միջոցներով կազմակերպվեց վերջիններիս օգնության գործը:

Եղբայրական Օգնության կոմիտեի *Իգդիրի* հանձնաժողովն իր գործունեությունը սկսեց այն ժամանակ, երբ տեղեկություններ ստացվեցին այն մասին, որ 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կովկասյան ճակատում ռուսական բանակի նահանջի հետևանքով սկսել էր գաղթել հայ բնակչությունը: Մինչ այդ արդեն գոյություն ուներ կառավարական կարգադրություն այն մասին, որ գաղթականները չպետք է հանգրվանեին Սուրմալուի գավառում, քանի որ այնտեղ էր տեղավորված ռուսական բանակը[1]: Բացի դրանից, նահանջի այդ տագնապալի օրերին սպասվում էր, որ հենց Սուրմալուի ժողովուրդը կարող էր դիմել հավանական գաղթի: Սակայն գաղթականները չէին կարող ուղղակի կտրել-անցնել Սուրմալուի գավառը՝ առանց այնտեղ հանգստանալու, մի կարևոր հանգամանք, որը հանձնաժողովը հաշվի առնելով՝ որոշեց գաղթականների հանգստի համար տեղ նախապատրաստել Իգդիրում և նրա շրջակա գյուղերում: Այդ նպատակով, կառավարության և տեղական կամավորների աջակցությամբ, հրավիրվեց Իգդիրի շրջակա հայկական գյուղերի աչքի ընկնող ներկայացուցիչների մի խորհրդակցություն, որի անդամները հանձն առան եկող գաղթականներին տեղավորել Իգդիրի շրջակայքում[2]: Գաղթականների տեղավորման համար քաղաքը բաժանվեց 7 թաղերի, յուրաքանչյուրը՝ երեքական թաղապետերով: Հետագայում, հաշվի առնելով, որ գաղթը կարող էր կրել տարերային մեծ բնույթ, հանձնաժողովն իր անդամներից մեկին գործուղեց Երևան և Էջմիածին՝ կաթողիկոսից և Երևանի հասարակայնությունից օգնական ուժեր, դրամ և մթերք խնդրելու նպատակով[3]:

Գաղթականության հոսանքը դեպի Իգդիր սկսվեց 1914 թ. դեկտեմբերի 23-ից[4]: Համապատասխան միջոցառումներ ձեռնարկվելուց հետո գաղթականներին ընդառաջ ուղարկվեցին դատարկ սայլեր և հացամթերք:

Ընդունելությունը և գաղթականներին տներում տեղաբաշխելն այնքան ծանր էր ու դժվարին, որ թաղապետերից շատերը հրաժարվեցին իրենց պարտականությունները կատարե-

[1] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ .18, թ. 29:
[2] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 29:
[3] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 29:
[4] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 30:

լուց: Դեկտեմբերին Իգդիրի շրջան գաղթեցին 3200 գաղթականական ընտանիքներ՝ մոտ 30-32 հազար մարդ, որոնցից 1840 ընտանիքը՝ Ալաշկերտի, 1170-ը՝ Ղարաքիլիսայի, և 191-ը՝ Դիադինի շրջաններից[5]: Գաղթականների ծախսը հոգում էր Համառուսական Զեմսկի միությունը:

Այսպես շարունակվեց մինչև 1915 թ., որից հետո առաջ եկան նոր դժվարություններ:

Ռուսական Կովկասյան բանակի հուլիսյան նահանջից հետո Իգդիրը դարձավ փախըստականների գլխավոր կենտրոնը: 1915 թ. հուլիսի 30-ին Էջմիածնից ուղարկած իր հեռագրում Հայաստանի կենտրոնական կոմիտեի (ՀԿԿ) նախագահ Ս. Հարությունյանը հայտնում էր, որ «…. փախստականները անընդհատ գալիս են ամեն օր … Իգդիրում՝ ինչպես առաջին կայան, դիտվել են 20000 հոգի: Իգդիրից մինչև Օրգով, թուրքական Կարեկում, Իգդիրում, Մարգարա գյուղերում… հիմնված են բժշկասանիտարական և սննդատու կայաններ: Իգդիրից մինչև թուրքական սահմանը շրջագայում են ձիավորներ, որոնք ժողովում են ճանապարհին մնացած երեխաներին, հիվանդներին և մեռածների դիակները[6]…: Իգդիր են հասնում օրական մինչև 50 որբ երեխաներ… Իգդիրում …որոշեցինք փախստականների մոտավոր թիվը, այն է՝ Վանի շրջանից՝ 203000 հոգի, Մանազկերտից՝ 60000 …, մահացությունը Իգդիրում հասնում է 15-ի….»[7]:

Իգդիրից ստացված մեկ այլ հեռագրում նշվում էր. «Ով չի տեսել փախստականների անսահման սարսափի աղաղակող պատկերը, նա չի կարող և ոչ մի հեռագրից թեկուզ մոտավոր գաղափար կազմել կատարվող և շարունակվող սարսափի մասին»: «Փախստականների և գաղթականների դրությունը անտանելի է դառնում,- գրում է «Մշակ»-ը: Ամեն օր գալիս են հազարներով, բոբիկ, մերկ ու քաղցած: Օգնություն չկա, անապաստան և առանց հացի կտորի դժբախտները մեռնում են փողոցներում: Մահը անողոք հնձում է իր մանգաղով մեծ թվով մարդկանց, մանավանդ երեխաներին[8]«: Կովկասյան բանակում որպես գթության քույր աշխատող ռուս նշանավոր գրող Լև Տոլստոյի դուստրը՝ Ալ. Տոլստոյան, կովկասյան երկրամասում անօթևան և ընչազուրկ վիճակում գտնվող հայ գաղթականների մասին ունեցած տպավորությունները ամբողջացնելով «Русские Ведомости «-ում, գրում էր. «Քաղցը ինձ ձգեց Իգդիր, հայկական փոքրիկ, կեղտոտ ավան… ուր ես եկա համառուսական զեմստվային դաշնակցության բժշկասննդական դաշտային 7-րդ խմբի հետ աշխատելու… փախստականների մեծ մասը կանայք և երեխաներ են: Տղամարդիկ շատ քիչ են, կան մի քանի ծերեր: Ամենքը կեղտոտ, հյուծված և գրեթե հիվանդ են: Նրանք ծածկված են ինչ-որ … գունավոր և կեղտոտ լաթերով, այդ մարդիկ սարսափելի և ճնշող տպավորություն են թողնում: Այսպես հագնված սրանք ստիպված են եղել 150-200 վերստ ճանապարհ կտրել… Այս փախստականները մասամբ եկել են ոտքով, մասամբ ուղտերով… Ես երբեք առիթ չեմ ունեցել այս տեսակ տանջանքներ տեսնել: Այդ մարդիկ զրկված են ոչ միայն իրենց ընտանիքներից, մերձավորներից,

---

[5] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 31:

[6] «Հորիզոն», 1915 թ. օգոստոսի 4, թիվ 173, նաև «Արև», 1915 թ. օգոստոսի 6, թիվ 116:

[7] «Հորիզոն», 1915 թ., օգոստոսի 9, թիվ 178:

[8] «Մշակ», 1915 թ., հունվարի 5, թիվ 4:

այլև նրանք զրկված են տնից, կայքից և ամեն ինչից»[9]:

Գաղթականների կանոնավոր տեղափոխումը հաջող իրականացնելու համար 1915 թ. հուլիսի 22-ին Էջմիածնի Եղբայրական Օգնության կոմիտեի գլխավոր կարգադրիչ հանձնաժողովի լիազոր անդամ Խորեն եպիսկոպոսի նախագահությամբ կայացավ Իգդիրի Եղբայրական Օգնության մասնաժողովի նիստը: Հաշվի առնելով գաղթականական մեծ հոսանքի հետևանքով առաջացած գործի բարդությունը և բոլոր կազմակերպությունների միանման գործունեությունն Իգդիրի շրջանում՝ առաջարկվեց կատարել գործի կանոնավոր բաժանում[10]: Միաժամանակ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Իգդիրը գաղթականական վերջին հանգրվանը չէր, ընդունվեց մի առաջարկ, որի համաձայն շրջանի գաղթականության ամեն տեսակի հոգսերը պիտի հոգար բժշկական մի փոքր անձնակազմ, որը կարևորագույն և անմիջական օգնություն պիտի ցույց տար դժվարին րոպեներին: Իսկ երկարատև բժշկությունը թողնվում էր Անդրկովկասի մյուս կենտրոններին: Իգդիրից ստացված հեռագրերից մեկում նշվում էր, որ «... հիվանդները ստանում են օրական մի ֆունտ հաց՝ հաճախ մի ամբողջ ընտանիքի համար և դա կազմում է նրանց ամբողջ պարենը... Հիվանդները հիվանդ են մեծ մասամբ փորհարինքով: Ամբողջ օրերով նրանց մեծամասնությունը մնում է առանց բժշկական օգնության՝ պառկած օրերով նեղ փողոցներում և այգիներում, առանց որևէ մեկի ուշադրությունը գրավելու: Խմում են կեղտոտ ջուր, ուտում են մրգեղենի փողոցային մնացորդները և մեռնում են օրական երեք, չորս տասնյակներով: Դիակները երկար ժամանակ մնում են անթաղ Իգդիրում....»[11]: Ժողովում Խորեն եպիսկոպոսի կողմից առաջարկվեց և որոշվեց նաև բժշկական երեք կետեր բաց անել Իգդիրում, որոնց ղեկավարումը հանձնվեց Թիֆլիսի ՀԿԿ խմբին[12]:

Երկարատև խորհրդակցությունից հետո որոշվեց մասնաժողովի տեղական կազմն ուժեղացնել նոր անդամներով և ընդունել այն իբրև ղեկավար մարմին[13]:

Սակայն շուտով, 1915 թ հոկտեմբերի 3-ին, Իգդիրում կայացած գաղթականական մասնաժողովի նիստում, Երևանի նահանգապետի առաջարկությամբ, խնդիր դրվեց փոխադրելու Սուրմալու գավառում ապաստանած բոլոր գաղթականներին, շնորհիվ որի գաղթականների թիվը գավառում զնալով նվազեց[14]:

1916 թ. մայիսին Սուրմալու գավառում կային մոտ 4834 գաղթականներ, որոնցից 3000-ը ապրում էին գավառի գյուղերում, իսկ 1000-ը՝ Իգդիրում[15]: Նույն թվականի հուլիսին գաղթականների թիվը նոր գաղթի հետ կապված մեծացավ՝ հասնելով 6359-ի[16], իսկ օգոստոսին՝ 10000-ի[17]:

---

[9] «Մշակ», 1915 թ., փետրվարի 12, թիվ 31:

[10] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1279, թ. 1, նաև ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 75:

[11] «Արև», 1915 թ., սեպտեմբերի 22, թիվ 59:

[12] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1279, թ. 13, նաև ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 75:

[13] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1279, թ. 2, նաև ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 75:

[14] ՀԱԱ, ֆ.102, ց. 1, գ. 1057 2 մաս, թ. 278:

[15] «Մշակ», 1916 թ., հունիսի 3, թիվ 121:

[16] «Արև», 1916 թ., հուլիսի 29, թիվ 165:

[17] «Հորիզոն», 1916 թ., օգոստոսի 28, թիվ 192, նաև «Վան-Տոսպ», 1916 թ., հոկտեմբերի 16, թիվ 47:

Մինչև 1916 թ. հունվարը գաղթականները նպաստ էին ստանում Եղբայրության Օգնության Իգդիրի մասնաճյուղից և Քաղաքների միության հանձնաժողովից, իսկ հունվարից սկսած նպաստը բաշխվում էր պետական գանձարանից՝ Եղբայրության Օգնության Իգդիրի ենթակոմիտեի միջոցով, որը գործում է Ս. Մատինյանի նախագահության ներքո:

Լուրջ ուշադրություն էր դարձվում գաղթական երեխաների կրթության հարցին: Եղբայրության Օգնության տեղական կոմիտեն Սուրմալուի շրջանում պահում էր 9 գաղթականական դպրոցներ՝ 2000 երկսեռ աշակերտներով և 15 ուսուցիչներով: Գաղթականական դպրոց կար նաև Իգդիրում՝ իր հինգ բաժանմունքներով և մի քանի արևմտահայ ուսուցիչներով[18]:

1916 թ. ամառային զաղթը պատճառ դարձավ նոր դժվարությունների և տեղիք տվեց նոր մտորումների: 1916 թ. հուլիսին Իգդիրում կայացած գաղթականական գործով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների բազմամարդ խորհրդակցությունը որոշեց իրականացնել Իգդիր ժամանող փախստականների դիմավորման հետևյալ կարգը. փախստականներին Աբաղայի դաշտում խմբված քրդերի հարձակումներից պաշտպանելու համար որոշվեց հրավիրել Երևանում գտնվող կամավորներին՝ այդ մասին ստանալով հատուկ թույլտվություն, ճանապարհին բացել երկու-երեք կայաններ՝ այդ հարցում ստանալով Մոսկվայի Հայկական կոմիտեի աջակցությունը, և ուժեղացնել Իգդիր-Վան ուղղությամբ գործող սննդատու կայանների գործունեությունը: Վերոհիշյալ որոշումները իրականացնելու համար ընտրվեցին լիազորներ՝ մեկը Իգդիրից՝ Վ. Քաջազնունին, իսկ մյուսը՝ բժ. Մանդինյան [19]:

1914 թ. դեկտեմբերի 21-ին Երևանում գործող ընտրյալ բոլոր մարմինները, Խորեն եպիսկոպոսի ղեկավարությամբ, հրավիրեցին մի ժողով, որի ժամանակ ստեղծվեց 25 անդամներից բաղկացած Եղբայրական Օգնության խառը հանձնաժողով: Վերջինիս վրա դրվեց Երևանի նահանգում գաղթականներ ընդունելու և տեղավորելու պարտականությունը: Դեկտեմբերի 26-ին կայացած ժողովում հանձնաժողովի կազմը համալրվեց նոր անդամներով, ընտրվեց գործադիր մարմին, կազմակերպվեցին ծխական համայնական ենթակոմիտեներ և զանազան մասնաճյուղեր[20]:

Գաղթականներին ընդունելու և փոխադրության գործը կազմակերպելու նպատակով դեկտեմբերի 22-ին Էջմիածին մեկնեցին գործադիր մարմնի նախագահ Խորեն եպիսկոպոսը, անդամներ Գրիգոր Տեր-Խաչատրյանը և Սմբատ Խաչատրյանը: Նույն օրը, կաթողիկոսին տեսակցելուց և դրամական գումարներ ստանալուց հետո, գործադիր մարմնի անդամները ուղևորվեցին Իգդիր, որտեղ կազմակերպեցին Եղբայրության Օգնության մասնաճյուղ և ներկայացան 4-րդ զորաբանակի հրամանատար գեներալ Օգանովսկուն, որպեսզի վերջինս կազմակերպի գաղթականների տեղափոխումը վերադարձող զինվորական դատարկ սայլերով: Վերջինիս կարգադրությամբ գեներալ Աբացիևը զինվորական դատարկ այդ սայլերով

[18] «Հորիզոն», 1916 թ., նոյեմբերի 15, թիվ 255:

[19] «Հորիզոն», 1916 թ., օգոստոսի 5, թիվ 173:

[20] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 109, նաև գ. 184, թ. 1, նաև ֆ. 57, ց. 2, գ. 1257, թ. 1, նաև **С. Асланяц.** Среди беженцев (личнные впечатления), Астрахань 1915, стр.11-12.

գաղթականներին փոխադրեց Երևանի նահանգ: Նկատի ունենալով այն, որ գաղթականները Իգդիրից Էջմիածին և Սարդարապատի շրջան էին մեկնում Մարգարա գյուղի վրայով, հանձնաժողովը ժամանակին Մարգարա ուղարկեց հրահանգիչներ, ինչպես նաև հագուստեղեն, վերմակներ, հաց և դրամ[21]:

Որպեսզի Սարդարապատի շրջանում գաղթականներին տեղավորելու գործը կատարվեր կանոնավոր ձևով, հանձնաժողովը նախապես այն հանձնեց Սարդարապատի շրջանի գործակալ Գարեգին քահանային: Վերջինս, համաձայն հանձնաժողովի տրված հրահանգի, պատրաստել էր մի ցուցակ, թե որքան ընտանիք ու շունչ կարող էր տեղավորել շրջանը[22]:

Էջմիածնից Երևան գալու ժամանակ գաղթականներն անցնում էին Փարաքար գյուղով, որտեղ ստեղծվել էր մի մարմին, որը գյուղով անցնող գաղթականներին դպրոցական ընդարձակ մի շինության մեջ բաժանում էր կերակուր, թեյ, հաց և ապա ճանապարհում դեպի Երևան[23]:

1915 թ. հունվարի 30-ի վիճակագրությամբ շուրջ 24665 գաղթականներ ընդունելու և տեղավորելու համար Երևանում դատարկվեցին թեմական դպրոցի և դպրոցական այլ շենքեր, բացի դրանից վարձվեց նաև Ս. Սարգիս եկեղեցուն կից ընդարձակ մի շինություն[24]: Բոլոր շենքերն ունեին իրենց կառավարիչները՝ հանձին ծխական համայնական ենթակոմիտեների, որոնք հոգում էին իրենց խնամքին հանձնված գաղթականների կարիքները:

Երևանում գաղթականների համար բնակարան ճարելը անհնար էր: Անհրաժեշտ շենքեր չլինելու պատճառով գաղթականներին տեղավորում էին հանրակացարաններում: Երևանում կային այդպիսի 5 հանրակացարաններ՝ 1300-ից ավելի գաղթականներով: Վատ վիճակում էր հանրակացարանների մաքրությունը և առողջապահական պայմանները: Գաղթականները դրամական նպաստի փոխարեն ստանում էին հաց, թեյ, շաքար և ճաշ[25]: Օգնության այս ձևն ավելի թանկ էր, բայց ուներ որոշ առավելություններ: Քաղաքների միության Երևանի կոմիտեն սկզբնական շրջանում սնունդ էր մատակարարում 3 հանրակացարաններին, բայց 1915 թ. դեկտեմբերի վերջերից հանրակացարանների գործը կենտրոնանում է Եղբայրական Օգնության կոմիտեին կից կազմված առանձին հանձնախմբի ձեռքում:

Միաժամանակ գործում էին գաղթականներին ցուցակագրող և տեղափոխող մասնաճյուղեր, որոնցից առաջինը, խմբերի բաժանված, ցուցակագրում էր գաղթականներին, իսկ երկրորդը՝ ամեն օր ամփոփելով ցուցակները, տեղափոխում էր նրանց գյուղերը, համաձայն նախապես ստացված այն ցուցակների, թե որ գյուղում որքան գաղթական ընտանիք պետք է ուղարկել: Ընդ որում, տեղափոխումը կատարվում էր այնպես, որ հնարավորության սահմաններում միևնույն գյուղի գյուղացիները տեղավորվեին մի գյուղում կամ հարևան երկու գյուղերում[26]: Գաղթականների համար իջևանատներ էին պատրաստված Էյլար, Սուխոյ

---

[21] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 109, նաև գ. 184, թ. 1, նաև ֆ. 57, ց. 2, գ. 1257, թ. 1:

[22] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 109 և 111, նաև գ. 184, թ. 1:

[23] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 110:

[24] Մատենադարան, ֆ. 2, Մաթևոս արքեպս. Տեր-Մաթևոսյան, ց. 55, թղթ. N 174, գ. 4, թ. 1:

[25] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 126, թ. 3, նաև գ.18, թ. 110, նաև «Վան-Տոսպ», 1916 թ., հունվարի 31, թիվ 10:

[26] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 110:

ֆանտան, Ախտա և Ելենովկա գյուղերում, որտեղ գաղթականները ստանալով թեյ և հաց՝ ուղարկվում էին մոտակա գյուղերը:

Ստուգումն անհրաժեշտ էր, որպեսզի գաղթականներն այդ վայրերում նպաստ չստանային և ճիշտ ցույց տրվեր ընտանիքների անդամների թիվը: Այնուհետև, գաղթականներին տրվում էր գրքույկ, որով նրանք նպաստ էին ստանում և այդ մասին գրքույկում նշվում էր: Տեղեկանալով այն մասին, որ Երևանում և նրա շրջակայքում բնակվող փախստականները, անհամեմատ էժան գնով ալյուր գնելով Երևանի ընկերության պահեստից, այն թանկ գնով վաճառում էին տեղացի հացթուխներին և ապա ստիպված էին լինում թանկ գներով էլ պատրաստի հաց գնել նույն հացթուխներից, ընկերությունը որոշեց Երևանում բնակվող փախստականներին հասանելիք ալյուրը հանձնել Եղբայրական Օգնության կոմիտեին, որը նախապես պատրաստակամություն էր հայտնել հաց թխել և պատրաստի հացը մատչելի գներով վաճառել փախստականներին[27]:

Թեև հանձնաժողովը ամեն կերպ աշխատում էր գաղթականներին նահանգից դուրս չհանել, նույնիսկ չուղարկել Ալեքսանդրապոլի գավառ, նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլ էին գալիս Սարիղամիշի շրջանի գաղթականները, այնուամենայնիվ, հանձնաժողովը ստիպված էր բավարարել խնդրատուների պահանջները և նրանց ուղարկել Թիֆլիս, Կարս և Ալեքսանդրապոլ:

Այդ ժամանակ Երևան ժամանած ու Երևանից զանազան գյուղեր ուղարկված և քաղաքում ապաստանած գաղթականների թիվը հասնում էր 8017-ի[28]: Գյուղերում նախքան գաղթականների գալը ընտրված Եկեղեցական Օգնության հոգաբարձության միջոցով, հավաքվել էր որոշ քանակությամբ ալյուր և դրամ: Մինչև 1915 թ. փետրվարի 2-ը թե՛ Երևանի և թե՛ Բայազետի գավառների յուրաքանչյուր գյուղ ինքն իր ժողոված գումարներով էր պահպանել ապաստանած գաղթականներին: Որոշ գյուղեր գաղթականներին բաժանել էին ալյուր կամ հաց, իսկ որոշ տեղերում էլ բաց էր թողնվել միայն դրամ:

Փետրվարի 2-ից սկսած գաղթականներին ալյուր կամ հաց բաժանելու պարտականությունն իր վրա վերցրեց Եղբայրական Օգնության Երևանի հանձնաժողովը, որը փետըրվարի 16-ից մինչև մարտի 5-ը գաղթականներից յուրաքանչյուրին բաժանեց 30-ական ֆունտ ալյուր: Բացի ալյուրից, շրջանային մարմիններին իրավունք էր տրված հիվանդ և կարիքավոր ընտանիքներին բաժանել թեյ և շաքար[29]: Հանձնաժողովի որոշմամբ քաղաքի զանազան բնակարաններում և սենյակներում պատսպարվածներին բաշխվում էր դրամական նպաստ՝ յուրաքանչյուր շնչին 10 կոպեկի չափով: Այդ նպատակով քաղաքում կազմվել էր 3 հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որը կազմված կանոնավոր ցուցակների համաձայն 10 օրը մեկ անգամ բաշխում էր նպաստը: Համապատասխան թերթիկների միջոցով գաղթականները հագուստեղենի պահեստներից ստանում էին բոլոր անհրաժեշտ պարագաները: Առանց հագուստեղենի ոչ մի գաղթական քաղաքից դուրս չէր ուղարկվում[30]:

---

[27] «Աշխատանք», 1916 թ., սեպտեմբերի 17, թիվ 40:

[28] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 110:

[29] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 113:

[30] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 113:

Հանձնաժողովն ուներ բժշկական մասնաճյուղ, որի կազմի մեջ մտնում էին Երևանի բոլոր հայ բժիշկները և որոնք հերթով, օրական 2-ը, այցելում էին բոլոր գաղթականներին: Գաղթականական հոսանքի սկզբում քիչ էին տարածված վարակիչ հիվանդությունները, սակայն բավականին մեծ թիվ էին կազմում ցրտահարվածները:

Երևանն ուներ 500 մահճակալով 2 գաղթականական հիվանդանոց, որոնք պահվում էին Քաղաքների միության Երևանի կոմիտեի կողմից[31]: Գործում էին նաև Եղբայրական Օգնության 50 և Քաղաքների միության 150 տեղանոց լազարեթները[32]: Հաշվի առնելով առողջապահական պայմանների պահպանման անհրաժեշտությունը՝ Թամամշևը 1916 թ. նոյեմբերին Երևանի քաղաքագլխին ուղղված իր հեռագրում նշում էր Քաղաքների միության հաշվին բաղնիքներ բացելու անհրաժեշտությունը[33]: Գաղթականության առաջին իսկ օրերից հանձնաժողովը հիվանդ գաղթականներին ուղարկում էր քաղաքային հիվանդանոց, իսկ թեթև հիվանդները բուժվում էին հանրակացարաններում: Հաշվի առնելով գաղթականական հիվանդանոցի ստեղծման անհրաժեշտությունը՝ հանձնաժողովը 1915 թ. հունվարի 1-ին այդպիսի՝ 1-50 մահճակալով հիվանդանոց բացեց Ս. Սարգիս եկեղեցուն կից վարձու շենքում, իսկ մարտի 1-ից բացեց սուր վարակիչ հիվանդությունների բարաք:

Հիվանդ գաղթականների թվի մեծացման հետ միասին տարածվեց նաև տիֆը, որով հիվանդ գաղթականներին տեղավորեցին թեմական դպրանոցի շենքում[34]:

Մեծ ուշադրություն էր ցուցաբերվում որբերի նկատմամբ: Սկզբում նրանց հատկացվեց Գայանյան դպրոցի սենյակներից մեկը, իսկ հետագայում նրանք տեղավորվեցին ՎՀԲԸ մեծացված որբանոցում: Որբանոցների գործն առաջ տանելու համար Երևանի մասնաճյուղի կողմից ընտրվեց 14 հոգուց բաղկացած որբախնամ վարչություն՝ բժիշկ Արամ Գրիգորյանի նախագահությամբ: Նկատի ունենալով այն, որ փախստականների մեջ կային փոքրահասակ որբեր, որոնց պահելը ահագին մեծ դժվարություն էր ներկայացնում, հանձնաժողովը այդպիսիներին ի պահպանություն տվեց զավակ չունեցող ընտանիքներին՝ այն պայմանով, որ անհրաժեշտության դեպքում վերադարձնեն՝ տված ստորագրության համաձայն[35]: Այդ ժամանակ Երևանի որբանոցներում կային 620 որբեր, որոնց մի մասը՝ շուրջ 260 հոգի, շուտով ուղարկվեցին Դիլիջան և Ղարաքիլիսա[36]:

Նոր որբերի համար քաղաքում համապատասխան շինություններ չգտնվելու պատճառով հարկ համարվեց որբանոցներ բաց անել շրջանում և երեխաներին պատսպարել քաղաքից դուրս: Այդ նպատակով ընտրվեց մի հանձնախումբ, որը և 50 հոգու համար մի որբանոց բացեց Ծաղկաձորի շրջանի Ախտա գյուղում[37]: Որբերի մեծամասնությունը Վանից և նրա հարակից շրջաններից էին:

---

[31] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 126, թ. 3, նաև գ. 7, թ. 19, նա – ЦГИА Р Гр., ф. 520, оп. 1, д. 94, л. 23.

[32] ЦГИА Р Гр., ф. 520, оп. 1, д. 197, л. 2.

[33] ЦГВИА РФ, ф. 12614, оп. 1, д. 24, л. 72.

[34] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 113-114:

[35] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 116:

[36] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 126, թ. 3, նաև «Աշխատանք», 1916 թ., մայիսի 7, թիվ 2:

[37] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 126, թ. 3, նաև «Աշխատանք», 1916 թ., մայիսի 7, թիվ 2:

Գաղթականների մեջ անախորժ վեճեր և կռիվներ լինելու հետևանքով 1915 թ. դեկտեմբերի 1-ին գաղթականներից կազմվեց 3 հոգուց բաղկացած մի հանձնախումբ, որը շաբաթական 3 անգամ նիստեր էր գումարում առաջնորդարանում: Այդ հանձնախմբի կողմից մի ամսվա ընթացքում քննվում էր միջին հաշվով 60 գործ: 1915 թ. դեկտեմբերից մինչև 1916 թ. մայիսը հանձնախումբը ստանձնել էր 218 դատական գործ, որոնցից վճռել, կարգադրել և մերժել էր 177-ը, իսկ հաջորդ կիսամյակն էր փոխանցել 41-ը: Դատական գործերի մեծ մասն իրենց բնույթով հիմնականում 2-ն էին՝ 1. ժառանգական և իրարից բաժանվելու և 2. յուրացված ապրանքների խնդիրներ: Դատավարություններն անվճար էին, իսկ ծախսերը հոգում էր Եղբայրական Օգնության կոմիտեն[38]:

Երևանում գործարաններ և արդյունաբերական հաստատություններ չունենալու պատճառով՝ ստեղծված աշխատանքի բյուրոն հնարավորություն չուներ գործ հայթայթել գաղթականների համար: Եվ դա այն ժամանակ, երբ Երևանում ապաստանած գաղթականների մոտ կեսը՝ 10000 հոգի, կազմում էին քաղաքացի փախստականների հոծ զանգված: Պատերազմից առաջ Վանի 3851 արհեստավորներից Կովկաս էին հասել 3000 հոգի: Նրանց մեծ մասը կենտրոնացել էր Երևանում և Թիֆլիսում: Որպես օգնություն Երևանի 30 արհեստավորներին տրվել էր շատ ողորմելի մի գումար՝ 7500 ռ[39]:

Կային նաև մեծ քանակությամբ առևտրականներ՝ գաղթած Վանից, Բիթլիսից, Ալաշկերտից և Ղարաքիլիսայից, որոնք իրենց մասնավոր հավաքույթներից մեկի ժամանակ նկատելով, որ առևտրական դասն իր ներկայացուցչական մասնակցությունը չուներ տիրող հասարակական գործերի մեջ և գտնելով, որ անհրաժեշտ էր իր գործունեության մասնակցությունը Հայաստանի վերաշինության մեծ գործին, ընտրել էր 9 առևտրականներից բաղկացած մի մարմին՝ արևմտահայ առևտրական դասը համազգային և ամեն կարգի ժողովների մեջ ներկայացնելու իրավասությամբ[40]: Երևանում բացվել էր նաև աշխատանքի տուն, որտեղ կենտրոնացվել էր փախստականների համար կատարվող հագուստեղենի և սպիտակեղենի պատրաստման գործը: Կատարվել էր Քաղաքների միության 13000 և Եղբայրական Օգնության 8000 կտոր զգեստների և անկողինների պատվերը[41]: Մեծ հաջողությամբ էր գործում «Վասպուրականի հայ կանանց միությունը», որը ստեղծվել էր 1909 թ. մարտին Վանում և վերակազմվել էր 1916 թ. մարտին Երևանում՝ նպատակ ունենալով գոհացում տալ Վասպուրականի հայ կանանց տնտեսական, մտավոր և բարոյական կարիքներին[42]:

Գնալով մեծանում էր Երևանի նահանգի փախստականների թվաքանակը: Նահանգապետ Ստրելբիցկու տվյալներով՝ 1916 թ. մարտի 6-ին Երևանի նահանգում կային շուրջ 87466 գաղթականներ, որոնցից 22140-ը տղամարդիկ, 28971–ը կանայք և 36355–ը երեխաներ էին: Դրանցից 7200-ը կենտրոնացված էին Էջմիածնում: Բացի հայերից, որոնք կազմում էին թվական մեծամասնություն, կային նաև 340 քրդեր, 4834 թաթարներ, 505 ասորիներ:

38 «Աշխատանք», 1916 թ., հունիսի 4, թիվ 10:

39 «Աշխատանք», 1916 թ., հուլիսի 23, թիվ 24:

40 «Հորիզոն», 1916 թ., ապրիլի 14, թիվ 80:

41 ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 126, թ. 3, նաև «Վան-Տոսպ», 1916 թ., հունվարի 31, թիվ 10:

42 «Աշխատանք», 1916 թ., նոյեմբերի 19, թիվ 58:

Ընդհանուր թվից մոտ 10000-ը 5 տարեկանից ցածր երեխաներ էին, իսկ 16400 հոգի էլ հանդիսանում էին անաշխատունակ[43]: 1916 թ. վերջերին գաղթականության ընդհանուր թվաքանակը Երևանի նահանգում հասավ 90740-ի[44], իսկ արդեն 1917 թ. հունվարին նույն նահանգում տեղաբաշխված էին 121000 գաղթականներ, որոնցից հայերը կազմում էին 112674, քրդերը՝ 7457, ասորիները՝ 649, Կովկասի թաթարները՝ 101, հույները՝ 85, և ռուսները՝ 26[45]:

Հաշվի առնելով ռազմական հանգամանքների պատճառով բացահանված (էվակուացված) Երևանի պետական ատյանի վերադարձն իր հիմնական վայրը, ինչպես նաև համաճարակային հիվանդությունների տարածման արգելումը և քաղաքի պարենային ճգնաժամի թեթևացումը, գեներալ Թամամշևը 1916 թ. օգոստոսի 12 –ին իր թիվ 3920 հրամանով անհրաժեշտ էր համարում Երևանում չընդունել նոր գաղթականների, ինչպես նաև այնտեղ գտնվող շուրջ 15000 գաղթականների մի մասին տեղափոխել հարևան Ալեքսանդրապոլի գավառ[46]:

1914 թ. դեկտեմբերին Սարիղամիշի իրադարձությունների հետևանքով շուրջ 60000 գաղթականներ ապաստան գտան *Կարսի* շրջանում[47]:

Այդ ժամանակ Կարսում գործում էին օգնության երկու կոմիտեներ՝ ա) Շրջանային և բ) Հասարակական, որոնցից առաջինը գտնվում էր Կարսի ռազմական նահանգապետ, գնդապետ Ա. Դ. Պողգուրսկու նախագահության տակ, իսկ երկրորդը կազմվել էր ՎՀԲԸ տեղական բաժանմունքի տնօրինության ներքո[48]: Շրջանային կոմիտեի կազմի մեջ, բացի նահանգապետից և նրա օգնականից, մտնում էին նաև տեղական կառավարական հիմնարկությունների պետերը, հայ և ուղղափառ հոգևորականության ներկայացուցիչները և հասարակական որոշ անձինք: Չնայած կոմիտեն կազմակերպվել էր 1914 թ. սեպտեմբերի 24-ին, սակայն այն իր գործունեությունը սկսեց հոկտեմբերի 18-ին: Պատերազմից տուժածներին օգնություն տալու նպատակով մինչև 1915 թ. հունվարի 1-ը կոմիտեն իր սեփական նախաձեռնությամբ հավաքել էր 3613 ռ., իսկ Կովկասյան գլխավոր կոմիտեից և Կովկասի փոխարքայից ստացել էր համապատասխանաբար 5000 և 10000 ռ.:

Շրջանային կոմիտեն իր հատուկ լիազորների միջոցով օգնություն էր ցույց տալիս գլխավորապես շրջանի ծայրամասային գյուղերի պատերազմից տուժածներին և գաղթականներին: Հասարակական կոմիտեն բաղկացած էր տեղական հայ համայնքի ընտրված ներկայացուցիչներից՝ տեղական վանահոր գլխավորությամբ: Սկզբնական շրջանում օգնությունը տարածվում էր միայն Սարիղամիշի շրջանում հանգրվանած գաղթականների վրա, իսկ հետագայում կոմիտեն իր գործունեության ոլորտի մեջ առավ նաև Կարսը, ուր Սարիղամիշի կռիվների հետևանքով ծվարել էին շուրջ 8000 գաղթականներ, որոնցից 6000-ը հայեր էին: Հասարակական կոմիտեն կազմեց տարբեր հանձնաժողովներ, այդ թվում՝ նաև աշխատան-

---

[43] ЦГИА Р Гр., ф. 520, оп. 1, д. 16, л. 65.

[44] ЦГИА Р Гр., ф. 520, оп. 1, д. 39, л. 115.

[45] ЦГИА Р Гр., ф. 520, оп. 1, д. 94, л. 33.

[46] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 94, թ. 215, նաև Մատենադարան, ֆ. 2, Գարեգին Հովսեփյան, ց. 44, թղթ. 95, գ. 590:

[47] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 21:

[48] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 42:

քի բյուրո, որը մինչև 1915 թ. հունվարը աշխատանքի ընդունեց շուրջ 500 գաղթականների[49]:

1915 թ. հունվարի 4-ին Կարս ժամանեց Կովկասյան գլխավոր կոմիտեի լիազոր Ս. Հարությունյանը, որը գաղթականների դրությունը պարզելու և օժանդակություն կազմակերպելու նպատակով տեսակցեց նահանգապետի հետ: Նույն օրը Կովկասյան գլխավոր կոմիտեի լիազորի ներկայությամբ գումարվեց գաղթականներին օժանդակող տեղական մարմնի ժողով, որի ժամանակ արձանագրվեց, որ Կարսում և նրա շրջակայքում իրենց հանգրվանն էին գտել հիմնականում Բասենից գաղթած մոտ 20000 գաղթականներ: Խորհրդակցությունը եկավ այն համոզմանը, որ բոլոր հասարակական-բարեգործական ընկերությունների գործունեությունը ցանկալի է առաջ տանել ներդաշնակ ուղղությամբ: Գաղթականական գործի վրա ուղղակի հսկողություն հաստատելու նպատակով անհրաժեշտություն զգացվեց ընտրել շրջիկ 3 գործիչներ: Անհրաժեշտ համարվեց գաղթականներին տեղավորել գյուղերում, իսկ քաղաքում թողնել այն գաղթականներին, ովքեր աշխատանք ունեին: Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նպաստի բաշխման ձևը ցարդ չէր տվել դրական արդյունք, ժողովը որոշեց դադարեցնել դրամի բաշխումը և իրականացնել մթերքների, տաք հագուստեղենի, սպիտակեղենի և անհրաժեշտ այլ իրերի անմիջական մատակարարում, որոնց կարիքը մեծ էր գաղթականների շրջանում: Ի վերջո, որոշվեց նաև շրջանի երկու կարևոր վայրերում բացել հիվանդանոց-ընդունարաններ և հրավիրել 2 բժիշկ և 4 ֆելդշեր: Այդ բոլոր միջոցառումների իրականացման համար հատկացվեց ընդամենը 15000 ռուբլի[50]:

Չնայած գոյություն ունեցող երկու կոմիտեների առկայությանը, այնուամենայնիվ, գաղթականների վիճակը սկզբնական շրջանում հուսահատական էր: Բացակայում էր նաև գործունեության միասնությունը:

Գաղթականների օգնության գործն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով, Կովկասյան գլխավոր կոմիտեի լիազորի առաջարկությամբ, Կարսի գաղթականական կոմիտեի 1915 թ. հունվարի 7-ի նիստում որոշվեց կազմակերպել Գործադիր հանձնաժողով, որի վրա դրվեցին մի շարք պարտականություններ, այն է՝ գաղթականների օգնության գործի կազմակերպումը, գաղթականների շրջանում հաշվառում կատարելը և պատերազմից տուժած ժողովրդի տնտեսական վիճակի ուսումնասիրումը: Գործադիր հանձնաժողովի կազմի մեջ մտան 9 հոգի, որոնցից 3-ը՝ Հայկական, 3-ը՝ Մահմեդական, և 1-ը՝ Հունական Բարեգործական ընկերությունների ներկայացուցիչներ էին, իսկ մյուս երեքը՝ Շրջանային կոմիտեի անդամները[51]: Քանի որ ՀԲԸ Կարսում գաղթականներին ցույց էր տալիս ինքնուրույն օգնություն, Շրջանային կոմիտեն իր 1915 թ. հունվարի 7-ի նիստում որոշեց, որ ավելի նպատակաուղղված ձևով աշխատելու համար ցանկալի է, որ ՀԲԸ մասնաճյուղը միանա Կարսի Շրջանային կոմիտեին: Բարեգործական ընկերությունը հայտնելով իր համաձայնությունը՝ սերտ կապի մեջ մտավ Կարսի Շրջանային կոմիտեի հետ՝ ունենալով իր ներկայացուցիչը ինչպես Շրջանային կոմիտեում, այնպես էլ Գործադիր հանձնաժողովում:

Գործադիր հանձնաժողովն իր գործունեության սկզբնական փուլում հանդես բերեց

[49] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 57:

[50] «Հորիզոն», 1915 թ., հունվարի 9, թիվ 5, նաև «Արև», 1915 թ., սեպտեմբերի 30, թիվ 160:

[51] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 21:

եռանդուն գործունեություն: Այն անցկացրեց գաղթականների հաշվառում, բացեց սննդատու կայաններ, ցույց տվեց օգնություն ինչպես դրամով, այնպես էլ բնամթերքով, գաղթականներին տեղաբաշխեց տարբեր շրջաններում և այլն: Գործադիր հանձնաժողովին օգնություն էր ցույց տալիս ԿՀԲԸ, որն իր վրա էր վերցրել նահանգի 25000 արևմտահայ գաղթականների պարենավորման գործը[52]:

1915 թ. հունվարի 5-ին անցկացված վիճակագրության համաձայն, Կարսի նահանգում ապաստանել էին 46998 գաղթականներ[53]: Վերջիններս տեղաբաշխված էին հետևյալ կերպ. ա) Կարս քաղաքում՝ 6600 հույներ և 5000 հայեր, 632 փախստականական հայ ընտանիքները տեղավորվել էին գլխավորապես քաղաքի Բայրամ փաշա և Քրոյի մահլա թաղերում: Փախստականներից շատերը իրենց հետ բերել էին տնային անասուններ և տեղաշորեր: Նյութապես փախստականների վիճակը, չնչին բացառությամբ, աննախանձելի էր[54]: բ) Մոտակա Մանտրա գյուղում՝ 1500 հոգի, գ) Սողանլուղի գավառամասում՝ 9000 հոգի, դ) Խորասանի շրջանում՝ 4746 հոգի, ե) Նախիջևանի շրջանում՝ 6906 հոգի, զ) Շորագյալի շրջանում՝ 5500 հոգի, է) Զարումանի շրջանում, որտեղ մեծամասնությունը կազմում էին ռուսները՝ 5746 հոգի, ը) Կաղզվանի շրջանում՝ 2000 հոգի: Ընդամենը՝ 46998 հոգի[55]:

Գաղթականների վերջնական հաշվառումն ավարտվեց 1915 թ. փետրվարի 25-ին: Համաձայն այդ հաշվառման՝ Կարսի ռուսահպատակ գաղթականների թիվը կազմում էր 25673 հոգի, որից Կարս քաղաքում՝ 4640 հույներ, 1542 հայեր, Կարսի շրջանում՝ 4210 հույներ, 2960 հայեր, 720 ռուսներ, Զարուշատի շրջանում՝ 2470 հույներ, 1020 հայեր, 626 ռուսներ, Շորագյալի շրջանում՝ 4345 հայեր,1915 հույներ, 510 ռուսներ, Խորասանի շրջանում՝ 350 հայեր, 315 հույներ և 62 մահմեդականներ[56]:

Ռուսահպատակ գաղթականները եկել էին Կարսի, Կաղզվանի, Օլթիի և Արդահանի շրջաններից[57]: Իսկ նույն շրջանի թուրքահպատակ գաղթականների թիվը հասնում էր 26811 հոգու, որից Կարս քաղաքում՝ 6244, Կարսի շրջանում՝ 9341, Կաղզվանում՝ 998, և Կաղզվանի շրջանում՝ 10250 հոգի[58]: Ընդամենը՝ 52484 գաղթականներ[59]:

Ինչպես երևում է վիճակագրությունից, Կարսի շրջանն աչքի էր ընկնում ազգային կազմի իր բազմազանությամբ: Այստեղ, բացի արևելահայերից և արևմտահայերից, ապրում էին նաև հույներ, ռուսներ և մահմեդականներ: Մեծամասնությունը կազմում էին արևմտահայ գաղթականները, որոնք գաղթել էին ինչպես Վասպուրականի տարբեր շրջաններից՝ Բասենից և Ալաշկերտից, այնպես էլ Օլթիից և Արդահանից: Հույները և ռուսները գաղթել էին Կարսի սահմանամերձ շրջաններից և տեղաբաշխված էին հիմնականում Կարս քաղաքում,

---

[52] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 81:

[53] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 18, նաև ֆ. 27, ց. 1, գ. 249, թ. 1, նաև “Кавказское слово” , 1915 г., 18 февраля, N 39.

[54] «Մշակ», 1915 թ., հունվարի 21, թիվ 13, թ. 18, նաև «Հորիզոն», 1915 թ., փետրվարի 20, թիվ 39:

[55] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 18:

[56] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 21-22:

[57] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 22:

[58] «Հորիզոն», 1915 թ., փետրվարի 20, թիվ 39:

[59] ЦГИА Р Гр., ф. 519, оп. 1, д. 6, лл. 299-302.

Կարսի, Զարուշատի, Շորագյալի և Խորասանի շրջաններում: Ընդ որում, հույները շատ վայրերում, այդ թվում՝ Կարս քաղաքում, Կարսի և Զարուշատի շրջաններում, ռուսահպատակ գաղթականների մեջ կազմում էին մեծամասնություն:

1915 թ. մարտին սկսվեց գաղթականության մի մասի վերադարձն իրենց բնակության նախկին վայրերը: Գաղթականների այն մասը, որոնք փորձում էին մնալ Կարսի շրջանում, ենթարկվում էին շրջանի ռազմական ղեկավարության քմահաճույքներին, քանի որ վերջիններս անթույլատրելի էին համարում գաղթականների բնակությունը սահմանամերձ շրջաններում և ենթագծից 25 վերստ հեռավորություն ունեցող տարածքում: Այդ էր պատճառը, որ տեղական վարչակարգը, ռազմական ղեկավարության պահանջով, մարտի 24-ից բռնի կերպով տեղահան արեց Կարսից մինչև Օլթի ընկած և Սարիղամիշ-Ալեքսանդրապոլ երկաթգծի շրջակայքում հանգրվանած գյուղերի մոտ 6000 գաղթականների, որոնք ճարահատյալ տեղափոխվեցին և ապաստանեցին Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի և Բորչալուի գավառներում[60], որտեղ առանց այդ էլ շատ էին գաղթականները: Պատերազմից վնասվածներին օգնող ՀԿԿ-ին Կարսից ուղղված հեռագրում նշվում էր, որ «Կարսի և երկաթուղու գծի շուրջն ընկած շրջակա գյուղերի փախստականները հեռացվում են, նրանք մի քանի հազար են, որոնց մեծ մասը ուղևորվում են Ալեքսանդրապոլի գավառը…»[61]:

Ռազմական իշխանություններն արգելում էին Կարսում մնալ նույնիսկ գաղթականական այն ընտանիքներին, որոնց մեջ կային հիվանդներ և ճանապարհների վրա աշխատող տղամարդիկ: Նրանք չէին թողնում գաղթականներին ապրել տեղարնիկ այն ընտանիքների հետ միասին, որտեղ չկար անգամ զորք տեղավորելու մտադրություն[62]: Գաղթականների կազմակերպված այդ տեղափոխումը, որն իրականացնում էր ԿՀԲԸ, ավարտվեց 1915 թ. ապրիլի 10-ին:

Բացի ԿՀԲԸ, որը մինչև 1915 թ. օգոստոսի 1-ը շրջանի գաղթականների կարիքների համար ծախսել էր 17394 ռ. գումար, Կարսի շրջանի գաղթականներին դրամական օգնություն էր ցույց տրվում նաև Կովկասյան գլխավոր կոմիտեի միջոցներից: 1915 թ. օգոստոսի 1-ին Կովկասյան գլխավոր կոմիտեից ստացվեց 218600 ռ.[63]: Միևնույն ժամանակ Կարսի շրջանում կազմակերպված հանգանակությունից ստացվել էր 6230 ռ., Քաղաքների միությունից՝ 4000 ռ., հույն տարբեր բարեգործներից՝ hօգուտ հույն փախստականների՝ 6871 ռ., և տարբեր մահմեդականներից՝ hօգուտ պատերազմից տուժած մահմեդականների՝ 9312 ռ.: Ընդամենը՝ 26413 ռ[64].: 1915 թ. օգոստոսի 1-ին գաղթականների օգտին հանգանակված ընդհանուր գումարը կազմում էր 245013 ռ.[65]:

Մինչև 1915 թ. նոյեմբերի 1-ը յուրաքանչյուր գաղթականի համար հատկացվեց 1 ռ. 50

60 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 18, նաև «Փայլակ», 1915 թ., ապրիլի 9, թիվ 9:

61 «Հորիզոն», 1915 թ., փետրվարի 11, թիվ 32:

62 «Հորիզոն», 1915 թ., փետրվարի 20, թիվ 39:

63 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 22:

64 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 22:

65 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 22:

կոպ. - 2 ռ. (օրական՝ 5-7 կոպեկ) ամսական նպաստ[66]: Աշխատավոր ունեցող ընտանիքները, եթե դրանք 6 հոգուց պակաս էին, նպաստ չէին ստանում: Իսկ եթե ընտանիքները վեց անձից ավել էին, ամեն մի հոգու համար վճարվում էր 10 կոպեկ[67]:

Նպաստի աստիճանական աճն ինքնին վկայում է այն մասին, որ գաղթականական տեղական կոմիտեն ոչ մի ջանք չէր խնայում գաղթականների ապրելակերպը լավացնելու ուղղությամբ: Սակայն, այնուամենայնիվ, ամսական 1 ռ. 50 կոպ. – 2 ռ. (օրական 5-7 կոպ.) նպաստը մի չնչին գումար էր թեկուզև ամենավատ ձևով ապրելու համար: Եվ շնորհիվ այն բանի, որ գաղթականների մի մասն աշխատանք էր որոնում այլ վայրերում և կամ օգտվում էր գյուղական հասարակության օժանդակությունից (ինչպիսին էլ լիներ գաղթականների դրամական օգնության կարողությունը, գլխավոր ծանրությունն ընկած էր տեղական գյուղացիության ուսերին, որի մատուցած ծառայությունները վեր էին ամեն տեսակի գովասանքներից), հնարավոր էր լինում մի կերպ գոյատևել:

Շատ գյուղերում սննդի պակասության հետևանքով 1914 թ. դեկտեմբերին սկսեցին տարածվել տարբեր տեսակի համաճարակային հիվանդություններ (դիֆտերիա, ծաղիկ, քութեշ, սիֆիլիս և մասնավորապես տիֆ): Բժշկական օգնության բացակայությունը նախանգում, ինչպես նաև աղքատությունը և կյանքի հակաառողջապահական պայմանները սկզբնական շրջանում նպաստում էին համաճարակի արագ տարածմանը: Առավել վատթար վիճակում էին գտնվում գյուղական շրջանները, ուր դրությունն ավելի հուսահատական էր: Մեծ տոկոս էր կազմում փախստականների մահացությունը: Յուրաքանչյուր գյուղում օրական գրանցվում էր մահացության 2-3 դեպք[68]: Հետագայում բժշկական օգնությունը դրվեց որոշակի հիմքերի վրա: Այդ է վկայում թեկուզև այն փաստը, որ 1915 թ. մարտ-ապրիլ ամիսներին Կարսում ապաստանած 6000 գաղթականներից բժշկական օգնություն էին ստացել 2144 հոգի[69]:

1916 թ. փետրվարից բժշկական օգնության գործն անցավ Քաղաքների միության տնօրինությանը, որի հետևանքով կանխվեցին բծավոր տիֆի և խոլերայի համաճարակները: Կարսի շրջանում բացվեցին 140 մահճակալով 13 բժշկա-ֆելդշերական կայաններ[70]:

Հաշվի առնելով վերոհիշյալ վտանգը, ինչպես նաև սննդի պակասությունը, Կովկասյան գլխավոր կոմիտեն առաջարկեց դադարեցնել այն անձանց նպաստի բաշխումը, որոնք հանգրվանել էին իրենց նախկին բնակավայրերում և չէին համապատասխանում «գաղթականներ» անվանը: Նման առաջարկությունը ճիշտ էր, թե սխալ, այնուամենայնիվ, Կովկասյան Գլխավոր կոմիտեն ստիպված էր դիմելու նման քայլի՝ իսկական գաղթականների վիճակը քիչ թե շատ ամոքելու նպատակով, չնայած դրանից տուժում էին «գաղթականներ» անվանը չհամապատասխանող, սակայն գաղթականներից ամենևին էլ չտարբերվող ճարահատյալ տեղաբնիկները:

---

[66] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 22:

[67] «Մշակ», 1915 թ., հունվարի 21, թիվ 13:

[68] «Հորիզոն», 1915 թ., մարտի 29, թիվ 67:

[69] «Հորիզոն», 1915 թ., ապրիլի 21, թիվ 85:

[70] ЦГИА Р Гр., ф. 519, оп. 1, д. 90, лл. 168-169.

Բնակչության քանակական կազմի որոշակի փոփոխությունից հետո, կապված ռազմական իշխանությունների անբարյացակամ քաղաքականության հետ, հետագայում Կարսի շրջանի գաղթականների թվաքանակը նվազեց՝ հասնելով մոտ 16000-ի, որոնցից Կաղզվանի գավառում՝ 2973, Կարսի շրջանում՝ 2821, Սողանլուի շրջանում՝ 2165, Շորագյալի շրջանում՝ 1938, Զարուշատի շրջանում՝ 259 հոգի: Բացի դրանից, 378 գաղթականներ էլ ապրում էին Արդահանում: Ընդամենը՝ 10534[71]: 1915 թ. մայիսին Երևանի նահանգապետին ուղղված գեներալ Վոլսկու հեռագրից պարզվում է, որ Կարսում ապաստանել էին նաև մոտ 6000 գաղթականներ՝ Ստավրոպոլի նահանգից և Կուբանի շրջանից[72]: Գաղթականներ կային նաև Օլթիում:

Վիճակագրությունից պարզ երևում է, որ Կարսի շրջանի գաղթականության թիվը, նախորդ հաշվառման հետ համեմատած, նվազել էր: Եթե նախորդ անգամ արևմտահայ գաղթականների թիվը հասնում էր 26811 հոգու, ապա այժմ այն չէր անցնում 16000-ից: Բնակչության քանակական կազմի այդ փոփոխությունը, ինչպես վերևում արդեն նշեցինք, առնչվում էր ռազմական իշխանությունների անբարյացակամ քաղաքականության հետ: 1915 թ. հոկտեմբերի 28-ին Կարսի ռազմական նահանգապետի նախագահությամբ տեղի ունեցավ գաղթականների հարցով զբաղվող տեղական կառավարման հիմնարկների՝ Հայկական, Մահմեդական և Հունական բարեգործական ընկերությունների, ինչպես նաև ՀԿԿ ներկայացուցիչների խորհրդակցություն գաղթականության մասին, որը հրավիրել էր ցարական կառավարությունը օգոստոսի 30-ի հիման վրա: Խորհրդակցության ժամանակ ընթերցվեց Կովկասի փոխարքայի օգնական Պետերսոնի հեռագիրը, որով գաղթականների օգնության գործն անցնում էր պետության տնօրինության ներքո: Որոշման համաձայն՝ տեղական գաղթականական կոմիտեն վերանվանվեց գաղթականների օգնության Կարսի Շրջանային կոմիտե: Կազմակերպվեցին գաղթականների օգնության շրջանային կոմիտեներ՝ շրջանի պետերի նախագահությամբ և ՀԿԲԸ մասնակցությամբ: Նոր օրենքի համաձայն՝ Կարսում յուրաքանչյուր գաղթականի համար, անկախ տարիքային առանձնահատկություններից, սահմանվեց պետական նպաստ 15 կոպեկի չափով: Իսկ պետական առաջին նպաստը բաժանվեց 1915թ. նոյեմբերի սկզբներին[73]:

Գաղթականության օգնության գործը պետության ձեռքն անցնելուց հետո մեծ ուշադրություն դարձվեց նաև որբ երեխաների հավաքման, նրանց կենտրոնացման և դաստիարակության վրա: 1915 թ. նոյեմբերի 1-ին Կարսում բացվեց որբանոց, որը 1916 թ. հունվարին ուներ Խնուսի, Մանազկերտի և Ալաշկերտի շրջաններից գաղթած շուրջ 25 որբեր[74]:

Վասպուրականի երկրորդ գաղթի ժամանակ կառավարության կարգադրության համաձայն Կարսի գաղթականները հեռացվեցին քաղաքից և նրանց թույլատրվեց բնակվել քաղաքից 25 վերստից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող տարածքներում: Գաղթականները հիմնականում տեղավորվեցին Շորագյալի (Շիրակի, 8000 հոգի) և Կաղզվանի շրջաններում

---

[71] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 23:

[72] ՀԱԱ, ֆ. 50, ց.1, գ. 49, թ. 50:

[73] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 23-24:

[74] «Հորիզոն», 1915 թ., հունվարի 30, թիվ 22:

(12000 հոգի[75]):

Քանի դեռ պատերազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում ծավալվում էին թուրքական տարածքում, արևմտահայ փախստականները տեղավորվել էին Սարիղամիշում և նրա շրջակայքում գտնվող հայկական գյուղերում: Երբ պատերազմական գործողությունները տեղափոխվեցին ռուսական տարածք, և թուրքերը գրավեցին Օլթին ու Արդահանը և հարձակվեցին նաև Սարիղամիշի վրա, այն ժամանակ ոչ միայն Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում ապաստանած արևմտահայ փախստականները, այլև Սարիղամիշի, Օլթիի, Բասենի, Արդվինի, Արդանուշի և Արդահանի ու նրա շրջակա հայ գյուղերի բնակիչները գաղթեցին Ալեքսանդրապոլի գավառ: Անհրաժեշտ է նշել Սարիղամիշի, Օլթիի և Արդահանի պաշտոնական պետական կառավարիչների անբարյացակամ վերաբերմունքը հայ գաղթականության նկատմամբ՝ այն առումով, որ նրանք ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռք չառան գաղթականներին համապատասխան ձևով Ալեքսանդրապոլի գավառ հասցնելու ուղղությամբ: Օլթիում տեղական չերքեզ հրամանատարը միայն կեսգիշերին քաղաքի բնակիչներին տեղեկացրեց այն մասին, որ թուրքերն արդեն շրջապատել են քաղաքը և որ անհրաժեշտ է գաղթել: Դրա հետևանքով գաղթը կրեց խուճապային և անկազմակերպ բնույթ[76]:

Փախստականների հոսանքը դեպի Ալեքսանդրապոլի գավառ մեծ չափեր ընդունեց՝ սկսած 1914 թ. դեկտեմբերի 10-ից: Գաղթականների թիվը Ալեքսանդրապոլում հասավ 3000-ի, որոնցից 600-ը հույն փախստականներ էին: Վերջիններս, նախապես իմանալով օրհասական վտանգի մասին, կարողացել էին փրկել իրենց ունեցվածքի մեծ մասը[77]:

Պետք է նշել, որ հենց առաջին օրվանից փախստականների խնամքի գործը դրված էր կանոնավոր հիմքերի վրա: Թե՛ հայ և թե՛ հույն փախստականներին ցույց էր տրվում հավասարաչափ օգնություն:

Կաթողիկոսի 1914 թ. սեպտեմբերի 28-ի թիվ 1512 կոնդակի համաձայն՝ նույն թվականի հոկտեմբերի 30-ին Ալեքսանդրապոլում ընտրվեց և նոյեմբերի 2-ից իր գործունեությունը ծավալեց Կենտրոնական ազգային կոմիտեն, որը գտնվում էր կաթողիկոսի հովանավորության և Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսի նախագահության ներքո[78]: Կենտրոնական ազգային կոմիտեն բաղկացած էր մի քանի բաժանմունքներից, որոնցից աչքի էին ընկնում վիրավորներին, կամավորներին և հատկապես գաղթականներին օգնող, ինչպես նաև վիճակագրական տեղեկություններ հավաքող բաժանմունքները[79]: Կենտրոնական ազգային կոմիտեի գաղթականական բաժանմունքի առաջին խնդիրը եղավ փախստականների համար առանձին բնակարանների որոնումը և վերջիններիս տեղավորումն այդ կացարաններում: Արդեն 1916 թ. հունվարին, շնորհիվ իր եռանդուն գործունեության, գաղթականական հանձնաժողովին հաջողվեց փախստականներին տեղավորել քաղաքի 18 բնակարաննե-

[75] «Այգ», 1916 թ., նոյեմբերի 6, թիվ 71:
[76] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 1:
[77] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 2:
[78] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 5:
[79] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 1:

րում[80]։

Գաղթելով խոր աշնանը և ձմեռվա սկզբներին, այն էլ Հայաստանի խիստ բնակլիմայական պայմաններ ունեցող տարածքում, փախստականները շատ էին տուժել ցրտից։ «Հորիզոն»-ի Ալեքսանդրապոլի թղթակիցը մռայլ գույներով էր նկարագրում քաղաքում ապաստանած գաղթականների դրությունը. «Ամեն տեղ ցրտից ու քաղցից կուչ եկած մարդիկ են, մեծ մասամբ կանայք ու երեխաներ։ Վառարաններ համարյա թե չկան։ Բոլորը կիսամերկ են, համարյա բոբիկ… մայրերը հուսահատությամբ երեխաները ձգած և նրանց քովը կուչ եկած, նայում են ցրտից գալարվող վտիտ ու կիսամերկ անդամներին։ Արցունքը չորացած նրանց աչքերին և բողոքի խոսքը այլևս լռած շրթներին»[81]։ Դրա հետևանքով, Ալեքսանդրապոլ հասնելուց հետո, գաղթականների շրջանում ի հայտ եկան ծանր հիվանդությունների դեպքեր, որոնցից լայն տարածում էին ստացել տիֆը և ծաղիկը։ Ամեն օր արձանագրվում էին մահացու դեպքեր։ Կոմիտեի առաջ ծագեց նոր՝ մեծ խնդիր, այն է՝ բժշկական օգնություն հասցնել բոլոր հիվանդներին։ Քաղաքի 2 բժիշկները չէին հասցընում կատարել իրենց առջև դրված բոլոր պարտականությունները։ Այդ առումով մեծ ծառայություն մատուցեցին և ժամանակին օգնություն հասցրեցին հայ կամավորների և հատկապես Վարդանի կամավորական խմբի բժիշկները և սանիտարները, որոնք այդ ժամանակ գտնվում էին Ալեքսանդրապոլում։ 1914 թ. դեկտեմբերի 28-ին Ալեքսանդրապոլում բացվեց 15 մահճակալով հիվանդանոց՝ գավառի բժշկական անհամար կարիքները որոշ չափով թեթևացնելու համար։ Միաժամանակ, կոմիտեն հեռագրերով դիմեց Պետրոգրադի, Մոսկվայի, Թիֆլիսի և Բաքվի գաղթականական կոմիտեներին՝ խնդրելով աջակցություն ցուցաբերել բժշկական գործը անհրաժեշտ հունով տանելու համար[82]։

Կենտրոնական ազգային կոմիտեն գաղթականներին բաժանում էր հագուստեղեն և կոշկեղեն։ Երբ սկսվեցին ցրտերը, և դրսից սպասվող օգնությունն ուշացավ, Կենտրոնական ազգային կոմիտեն պարտք վերցրած գումարներով ձեռք բերեց 3000 ռ. արժողության 1000 զույգ հողաթափեր, 2200 զույգ գուլպաներ, 200 գդակներ, 300 զույգ տրեխներ և 100 հատ տաք հին պիջակներ[83]։ Կազմակերպվեցին նաև աշխատանքի և վիճակագրական բյուրոներ և բացվեց իրերի պահեստ։

Քանի որ փախստականների թիվն օրեցօր ավելանում էր, կոմիտեն քաղաքը ծանրաբեռնվածությունից ազատելու համար նպատակահարմար գտավ գյուղացի փախստականներին տեղավորել Ալեքսանդրապոլի գյուղերում, որտեղ գաղթականների օգնության գործը կազմակերպելու նպատակով նախապես ընտրվել էին տեղական գաղթականական կոմիտեներ։ Միաժամանակ, որպեսզի դյուրանա շարունակ եկող փախստականներին ընդունելու և տեղավորելու գործը, կոմիտեն Բասենի, Օլթիի, Սարիղամիշի շրջանների փախստականներով բնակեցված գյուղեր գործուղեց լիազորների։

1914 թ. դեկտեմբերի 30-ին Ալեքսանդրապոլ եկավ Բաքվի գաղթականական կոմիտեի

[80] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 2։

[81] «Համբավաբեր», 1916 թ., հունվարի 3, թիվ 2, էջ 61։

[82] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 2։

[83] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 380, թ. 14։

լիազոր Երվանդ Թաղիանոսյանը, իսկ 1915 թ. հունվարի 1-ին՝ Միքայել Պապաջանյանը, ո-րոնք հավանություն տվեցին տեղի գաղթականների օգնության գործի կազմակերպման եղա-նակներին[84]:

1915 թ. հունվարի 7-ին կաթողիկոսի թիվ 42 կոնդակի համաձայն հաստատվեց Ալեք-սանդրապոլի Եղբայրական կոմիտեի կազմը[85], որով նոր լիցք հաղորդվեց գաղթականների բազմաբնույթ կարիքների բավարարման գործին: Գաղթականներին օգնություն կազմակեր-պելու համար այն իր միջից ընտրեց և կազմեց մի շարք բաժանմունքներ, այն է՝ քաղաքա-յին, գյուղական, պահեստի, դպրոցական, որբախնամ, կամավորների, հանգանակիչ, գրա-սենյակի և աշխատանքի[86]: 1915 թ. սեպտեմբերին Ալեքսանդրապոլի Եղբայրական Օգնութ-յան կոմիտեն քաղաքում խնամում էր մոտ 7000 փախստականների, որոնք գաղթել էին Մա-նազկերտի, Բուլանըղի և Այնթափի շրջաններից: Նույն ժամանակաշրջանում Ալեքսանդրա-պոլի գավառի գյուղերում տեղավորվել էին 10000 գաղթականներ: Գյուղական վայրերը բա-ժանված էին 5 շրջանների, որոնք ունեին կոմիտեի տեղաբնակ 5 լիազորներ[87]:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում հատկապես գաղթական երեխաների կրթության վրա, որի վառ ապացույցն էր գաղթականական դպրոցի հիմնումը 280 աշա-կերտների համար: Դպրոցի բացմանը մեծապես նպաստեց Բաքվի գաղթականական կոմի-տեի աջակցությունը, որն ուղարկեց 650 ռ. դրամ: Դպրոցը բաղկացած էր 3 բաժանմունքնե-րից, իսկ առաջին բաժանմունքն ուներ 4 զուգընթաց դասարաններ, որոնցից մեկը նախա-տեսված էր հույն երեխաների համար: Դպրոցում դասավանդում էին Արղության դպրոցի շրջանավարտները[88]:

Ամբողջ Ալեքսանդրապոլի գավառում օգնությունը կատարվում էր Եղբայրական Օգնութ-յան կոմիտեի Ալեքսանդրապոլի բաժանմունքի միջոցով: Միայն Փամբակի շրջանում էր, որ օգնության գործն իրականացնում էր տեղական կոմիտեն, որը նյութական միջոցներ էր ստանում Ալեքսանդրապոլի Կենտրոնական ազգային կոմիտեից, իսկ վերջինս էլ իր միջոց-ները համալրում էր Կովկասյան գլխավոր կոմիտեից, Էջմիածնի Կարգադրիչ հանձնաժողո-վից, ուրիշ բարեգործական հիմնարկներից և տեղական նվիրատվություններից: 1915 թ. գարնանը Ալեքսանդրապոլի գավառում էին գտնվում 22815 գաղթականներ, որոնք տեղա-բաշխված էին հետևյալ կերպ.

---

84 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 4:

85 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 9:

86 «Վան-Տոսպ», 1916 թ., սեպտեմբերի 11, թիվ 42, նա – Отчет находящегося под Высоким Покровительством Его Святейшества Католикоса всех армян Александропольского Армянского комитета “Братской помощи” с 1-го ноября 1914 по 1-е мая 1915 г., Александрополь, 1915, стр. 2-5.

87 «Վան-Տոսպ», 1916թ., սեպտեմբերի 11, թիվ 42, նա – Отчет находящегося под Высоким Покровительством Его Святейшества Католикоса всех армян Александропольского Армянского комитета “Братской помощи” с 1-го ноября 1914 по 1-е мая 1915 г., Александрополь, 1915, стр. 2-5.

88 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 11:

| | տղամար-դիկ | կանայք | երեխա-ներ | ընդամե-նը |
|---|---|---|---|---|
| Հանրակացարաններում | 435 | 968 | 1201 | 2604 |
| Քաղաքի մասնավոր տներում | 701 | 1582 | 1957 | 2240 |
| Գավառի գյուղերում | 4069 | 5015 | 6887 | 15971 |
| Ընդամենը՝ | 5205 | 7565 | 10045 | 22815[89] |

Վիճակագրությունից պարզ երևում է, որ Ալեքսանդրապոլի գավառի գաղթականների մեջ մեծամասնությունը կազմում էին երեխաները, իսկ հետո միայն կանայք և տղամարդիկ: Թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք և թե՛ երեխաները մեծամասնություն էին կազմում գավառի գյուղերում, և դա հասկանալի է, քանի որ գաղթածների մեծամասնությունը Արևմտյան Հայաստանի գյուղական վայրերի բնակիչներ էին: Պարզ է դառնում նաև, որ քաղաքի մասնավոր տներում, հանրակացարաններում ապաստանածների հետ համեմատած, հանգրվանել էին մոտ երկու անգամ ավելի շատ գաղթականներ, մի հանգամանք, որ վկայում էր այն մասին, որ տեղական բնակչությունը բարյացակամ էր տրամադրված գաղթականության նկատմամբ: Շատ անկանոն էր գաղ[90]թականների պետական նպաստի բաշխումը, որն իրականացվում էր մեծ ձգձգումներով: Եվ եթե դրան ավելացնելու լինենք այն իրողությունը, որ գավառում տիրում էր կենսամթերքների վերին աստիճանի թ[91]անկություն (մի ֆունտ յուղը վաճառվում էր 1 ռ. 70 կոպ., մի փութ ալյուրը՝ 5-6 ռ.), իսկ ալյուրի, շաքարի վաճառումը և զգեստների բաժանումը կենտրոնացված էր միայն Կա

րսում, ապա միանգամից պարզ կդառնա գաղթականների թշվառ և անօգնական վիճակը: 1916 թ. օգոստոսյան գաղթից հետո Ալեքսանդրապոլի գավառ տեղափոխվեցին գաղթականների նոր խմբեր, որոնց մեջ մեծամասնություն էին կազմում սասունցիները՝ թվով 8000 հոգի: Այդ մասին Ալեքսանդրապոլի Եղբայրական Օգնության կոմիտեի նախագահը, քաղաքագլուխը և գավառային կառավարիչը Թամամշևին ուղղված իրենց հեռագրում նշում էին. «Վկայում ենք, որ օգոստոս ամսից ի վեր Ալեքսանդրապոլի գավառ եկած փախստականները, գլխավորապես սասունցիները թվով 8000, բոլորն էլ… բոլորովին մերկ են և չունեն անկողիններ: Նրանց մահ է սպառնում, եթե ամենակարճ միջոցում ձմռան համար ամենաանհրաժեշտ պարագաները չտրվեն… Կոչ ենք անում փախստականների գործով զբաղվող բոլոր հաստատություններին, այ[92]և բոլոր մասնավոր բարեգործներին, օգնել պատերազմի դժբախտ զոհերին..»: Վերջիններս Թամամշևից պահանջում էին 20000 ռ. դրամ, ինչպես նաև 1500 կոմպլեկտ կանացի ս[93]պիտակեղեն, 150 կոմպլեկտ տղամարդու և 1000 կոմպլեկտ երեխաների հագուստեղեն: Գաղթականական գործով զբաղվող ներկայացուցիչների գործու-

[89] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 380, թ. 14:

[90] «Համբավաբեր», 1916 թ., սեպտեմբերի 11, թիվ 37:

[91] «Համբավաբեր», 1916 թ., սեպտեմբերի 11, թիվ 37:

[92] «Աշխատանք», 1916 թ., նոյեմբերի 5, թիվ 54:

[93] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 233, թ. 18:

նեությունը համախմբելու նպատակով 1916 թ. հոկտեմբերի 25-28-ը Ալեքսանդրապոլի ազգային առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցավ գավառի այդպիսի 50-ից ավելի ներկայացուցիչների համընդ[94]հ

անուր մի ժողով, որի ժամանակ ընտրվեց 9 հոգուց բաղկացած նորակազմ մի մարմին:Գնալով աստիճանաբար մեծանում էր Ալեքսանդրապոլի գավառի գաղթականության թիվը: 1917 թ. դեկտեմբերի 11-ին հայկական փախստականական կազմակերպությունների գլխավոր խորհրդին ուղղված նամակում Ալեքսանդրապոլի Եղբայրական Օգնության կոմիտեի տվյալներով, նույն թվականի օգոստոս-դեկտեմբեր ամիսներին Ալեքսանդրապոլի շրջանում ապրում էին շուրջ 25082-25596 փախստականներ (որոնցից 1099-ը՝ մինչև 5 տարեկան երեխաներ էին, իսկ 7082-ը՝ նոր գաղթականներ), ո[95]րոնց մեծամասնությունը Բուլանըղի և Մանազկերտի շրջաններից գաղթածներ էին: Շարունակում էր տիրել կենսամթերքների թանկությունը: Այդ էր պատճառը, որ ԿՀԲԸ կողմից Ալեքսանդրապոլի 116 գյուղերի համար բացվեցին 4 սպառողական խանութներ, որոնք 1917 թ. օգոստոսից սկսած յուրաքանչյուր գաղ[96]թականի ամսական բաժանում էին 30 ֆունտ ալյուր, կես ֆունտ շաքար և այլ մթերքներ: 1917 թ. սեպտեմբերին Ալեքսանդրապոլի գաղթականական գործերով զբաղվող բոլոր մարմինների կողմից կազմված մի պատգամավորություն ներկայացավ Գևորգ Ե Կաթողիկոսին՝ Ալեքսանդրապոլի գավառում տեղավորված գաղթականության օգտին հանգանակություն սկսելու նպատակով: Վեհափառը, համամիտ լինելով պատվիրակության առաջարկությանը, ցանկություն հայտնեց հանգանակությանը հաղորդել համընդհանուր բնույթ: Նույն խնդրանքով 1917 թ. հոկտեմբերին կաթողիկոսին ներկայացավ երկրորդ պատվիրակությունը: Սակայն այս անգամ, հաշվի առնելով գավառի գաղթականության ցավալի վիճակը և այդ վիճակին շուտափույթ ապավինելու հրամայական պահանջը, կաթողիկոսը համաձայնվեց հանգանակության վերաբերյալ կոնդակ տալ միայն այն ժամանակ, երբ կոմիտեն այլևս հնարավորություն չէր

94 «Հորիզոն», 1916 թ., նոյեմբերի 11, թիվ 253:

95 ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 19, թ. 9, նա – ЦГИА Р Гр., ф. 519, оп. 1, д. 39, лл. 116-117, նաև «Աշխատանք», 1917 թ., սեպտեմբերի13, թիվ 37:

96 «Աշխատանք», 1917 թ., սեպտեմբերի 13, թիվ 37:

*ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

# ԻՐԱՎԻՃԱԿԸ ՏԱՐՈՆՈՒՄ ԵՎ ՍԱՍՈՒՆՈՒՄ 1915 Թ. ՋԱՐԴԵՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1908 թ. երիտթուրքական Սահմանադրությունից հետո փոխվում է հայ ազգային-ազատագրական պայքարի թե՛ ռազմավարությունը և թե՛ մարտավարությունը: Այդ պայքարի առաջամարտիկ կուսակցությունը՝ Հ.Յ. Դաշնակցությունը, հավատարիմ երիտթուրքերի հետ 1907 թ. դեկտեմբերին Փարիզում գումարված Օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերի կոնգրեսի որոշումներին, 1908 թ. հուլիսյան հեղաշրջումից հետո դադարեցրեց հեղափոխական գործունեությունը և տարվեց Թուրքիայի բարեփոխման և ժողովրդավարացման աշխատանքներով: 1909 թ. Վառնայում տեղի ունեցած ՀՅԴ հինգերորդ ընդհանուր ժողովը որոշում է.

«1) Հրաժարիլ այժմյան Թյուրքիո և Իրանի մեջ, իբրև սահմանադրական երկրներ, դավադրական միջոցներու գործադրութենեն.

2) Կիրարկանել կազմակերպության մարտական բոլոր ուժերը սահմանադրությունը պաշտպանելու և ռեակցիոնի դեմ կռվելու համար»:[1]

Ինչպես համոզվում ենք, Դաշնակցությունը հանդես է գալիս Սահմանադրության հռչակած կարգախոսների պաշտպանի դերում և հրաժարվում է դավադրական մարտավարությունից: Դժբախտաբար, հավատ ընծայելով երիտթուրքերի նկատմամբ, Դաշնակցությունը հետին պլան է մղում ինքնապաշտպանության խնդիրը և ավելի շատ տարվում է խորհրդարանական գործունեությամբ: Նրա այսպիսի գործունեությունը շարունակվում է մինչև 1911 թվականը, երբ վերջնականապես պարզ է դառնում, որ երիտթուրքերը համիդյան քաղաքականության նորովի շարունակողներն են և ոչինչ չեն անում հայության կացությունը բարելավելու առումով: 1911 թ. օգոստոս-սեպտեմբերին կայացած ՀՅԴ վեցերորդ ընդհանուր ժողովը, որը հիմնականում նվիրված էր երիտթուրքերի հետ հարաբերությունների քննարկմանը, որոշում է խզել հարաբերությունները երիտթուրքերի հետ[2]: Վերջնական խզումը տեղի է ունենում 1912 թ. մայիսի 5-ի «պահանջագրով», որը երևում է նույն կուսակցության 7-րդ ընդհանուր ժողովի արձանագրություններից[3]:

Երիտթուրք-Դաշնակցություն համագործակցության խզման պատճառները յուրահատուկ կերպով է բացատրում Ռուբեն Տեր-Մինասյանը: Մատնանշելով Սահմանադրությունից հետո կուսակցության գործելակերպի հիմնական գծերը, որոնք նախատեսում էին սահմանադրական ռեժիմի ամրապնդում և կուլտուրական ու տնտեսական գործունեություն, նա այնուհետև հետևյալն է գրում. «Իրականության մեջ դարձած էինք երիտասարդ թուրքերու քաղաքականության ամենեն հավատարիմ

---

[1] Հայտարարագիր և որոշումներ Հ.Յ. Դաշնակցության ընդհանուր ժողովին, 1910, էջ 26:

[2] Տե՛ս **Վահան Փափազյան,** Իմ հուշերը, հտ. երկրորդ, Բեյրութ, 1952, էջ 158:

[3] Տե՛ս Հ.Յ. Դաշնակցության յոթերորդ ընդհանուր ժողովի որոշումները, 1913, էջ 7:

կողմնակիցները: Հակառակ այդ իրողության՝ մենք տեսականորեն ընդդիմադիր դիրքի մեջ կգտնվեինք թե՛ Սահմանադրության և թե՛ Իթթիհատին հանդեպ, քանի որ մեր տեսությամբ «Ատեմի Մերքեզիեթը»- վարչական և քաղաքական ապակենտրոնացումը – կմնար մեր հիմնական պահանջը: Իրական կյանքի մեջ մենք ձուլված էինք Իթթիհատի հետ, բայց գաղափարական գետնի վրա կմնայինք նրա հակառակորդը: Մյուս կողեն՝ մենք իրական կյանքի մեջ հակառակ էինք «Աhրար» կուսակցության կամ այլազգերու, մակեդոնաց և արաբ ժողովուրդներու ձգտումներուն, երբ անոնք կուզեին ապակենտրոնացում և նույնիսկ անջատում, բայց գաղափարապես նրանց հետ էինք: Դա հակասություն էր, և բացահայտ հակասություն: Մեր հոգին և մարմինը բաժանված էին: Եվ այդ իրողությունը պատճառ կդառնար, որ թե՛ Իթթիհատ և թե՛ Աhրարը մեր հանդեպ վերապահ դիրք բռնեն: Ու մենք կզրկվեինք «թե՛ ժամից և թե՛ ջամիից»[4]:

Այսպիսով, ստացվում է, որ Հ.Յ. Դաշնակցություն - երիտթուրք հարաբերությունները ի սկզբանե էլ դատապարտված էին խզման: Այնպես որ սխալ էր 1908 թ. Սահմանադրությունից հետո երկրորդական պլան մղել ինքնապաշտպանության խնդիրը և տարվել ավելի շատ խորհրդարանական գործունեությամբ: Այս ամենը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին իրենց բացասական հետևանքներն ունեցան ողջ արևմտահայության, այդ թվում նաև Տարոնի և Սասնո հերոս ժողովրդի նկատմամբ:

ՀՅԴ - երիտթուրք հարաբերությունների խզումից հետո, երբ արդեն ակնհայտ էր, որ աշխարհաքաղաքական գործընթացները տանում են մեծ պատերազմին, Դաշնակցությունը վերստին փորձեց ձեռնամուխ լինել Տարոնի և Սասնո ժողովրդի զինման աշխատանքներին, բայց դրա համար նա արդեն կորցրել էր և՛ ժամանակը, և՛ հնարավորությունը:

1913 թ. վերջերին Հ.Յ. Դաշնակցության կողմից որպես պատասխանատու գործիչ կրկին Տարոն է առաքվում Ռուբենը, որն այն քչերից էր, որոնք հավատ չէին ընծայել Սահմանադրության նկատմամբ, և անցել էր Ժնև՝ համալսարանում սովորելու: Թեպետ նա Տարոն էր եկել՝ որպես դպրոցների ընդհանուր տեսուչ, սակայն, «ավելի շատ կխոսեր ինքնապաշտպանության խնդիրներու շուրջ, քան կրթության»[5]:

Իսկ ինքնապաշտպանության խնդիրն իրոք հետին հարթություն էր մղված: Մշեցի հուշագիր Մ. Բդեյանը, անդրադառնալով 1908 թվականից հետո Տարոնում տիրող իրավիճակին, վկայում է, որ ՀՅԴ մեջ էին արագորեն մտնում այնպիսիները, «որոնք անցյալին մեջ բնավ երբեք նեղություն և չարչարանք տեսած չէին» և նոր գործիչները «այդ կարգի մարդոց քվեներով շարունակ կջլատեին մեր (ՀՅԴ գործիչների - Ա. Ն.) գործողությունները և գաղտնապես պատրաստվելու մեր առաջարկներուն միշտ հակակարծիք էին»[6]:

Նույնը հաստատում է նաև հայտնի հերոս, խմբապետ Սասունցի Մուշեղը (Մուշեղ Ավետիսյան): «Սահմանադրությունը հրապարակ բերած էր զանազան տարրեր,- գրում է նա,- որոնց մեջ անվստահելիներն ալ չէին պակասեր: Գարմենի (Մկրտիչ

---

[4] **Ռուբեն,** Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Զ (6), Լոս Անճելըս, 1951, էջ 42:

[5] Նույն տեղում, հ. 3(7), Լոս Անճելըս, 1952, էջ 56:

[6] **Սարգիս և Միսակ Բդեյաններ,** Հարազատ պատմություն Տարոնո, Գահիրե, 1962, էջ 264:

Մելքոնյան, 1908 թ. հետո Տարոնի և Սասնո ՀՅԴ պատասխանատու գործիչը- Ա. Ն.) նախաձեռնությամբ ստեղծված էր համայնական կազմակերպություն, անոնց մեջ ալ սպրդած էին այդ տարրերն: Գարմենի տնտեսական և քաղաքական ծրագիրը շատ ընդարձակ էր և օգտակար, սակայն, անհրաժեշտ վստահելի տարրերը կպակասեին: Հետզհետե դժգոհությունները կշատանային համայնական այս կազմակերպության շուրջ: Հին ֆետայիներու դիտողությունն այն էր, որ ինքնապաշտպանության գործը ետևի վրա կձգվի: Ամեն մարդ լծված էր իր տնտեսական վիճակը բարելավելու աշխատանքին: Այլևս զենքի մասին մտածող չկար: Շատեր նույնիսկ իրենց զենքերը կծախեին՝ երկրագործական գործիքներ առնելու համար»[7]:

Այս պայմաններում հասկանալի է, թե ինչքան ծանր աշխատանքներ էին սպասվում Ռուբենին: Հասնելով Տարոն՝ նա իր շուրջն է վերստին համախմբում (Ռուբենը Տարոնում և Սասունում գործել էր նաև 1906-08 թթ.) փորձված ֆիդայիներին՝ Գոմսա Կորյունին, Ավրանա Արամին, Ալիջանի Միսակին, Փեթարա Մանուկին, Սասունցի Մուշեղին և այլոց:

Նրանց առաջին գործն է լինում Մշո դաշտի բոլոր գյուղերի զենքերի և կռվող ուժերի ցուցակագրումը: Ինչպես վկայում է Սասունցի Մուշեղը, կռվող ուժերը շատ էին, բայց զենքերը՝ քիչ, այն էլ՝ մեծ մասամբ «չախմախլի» հրացաններ: Ուստին, որոշում են անհապաղ սկսել զինման աշխատանքները, ինչն, անշուշտ, շատ բարդությունների հետ էր կապված: Զենքեր ճարելու համար Էրզրում է ուղարկվում Կորյունը: Իհարկե, դա շատ բարդ խնդիր էր և հիմնականում կախված էր դրամից, որը գրեթե չկար: Հիրավի, ի՞նչ կարելի էր անել մեկ տարվա ընթացքում, երբ գրեթե երկու տասնամյակ տևած աշխատանքներն այդ առումով տվել էին նվազագույն արդյունք: Այդ բոլորով հանդերձ, Ռուբենի ամբողջ ուշադրությունն այդ խնդրի վրա էր, և նա կրթական խնդիրների քողի տակ ձգտում էր անել այն, ինչ անում էր մինչև 1908 թվականը[8]: Այդ պարզ երևում է նրանից, որ միշտ ընկերների կրթական գործերի անդրադարձներին նա հետևյալ հատկանշական խոսքերով է հակադրվում. «Լավ է այդ բոլորը, սակայն Մշո դաշտը ոչ Եվրոպա է և ոչ ալ Պոլիս, թուրքն ու քյուրտը մեր մշակույթեն ոչինչ չեն հասկանար, եթե մեր դպրոցները ու անկից առաջ մեր պատիվը պաշտպանելու միջոցներ չունինք, օր մը կրկին կնստենք մոխիրի վրա»[9]:

Սակայն, նախապատրաստվելու համար, ինչպես նշեցինք, ժամանակը շատ քիչ էր: Որոշ աշխատանքներ Ռուբենը կարողանում է կատարել: Բայց ավելին նրա ուժերից վեր էր: Ի՞նչ կարող էր նա անել, երբ, ինչպես վկայում է Միսակ Բդեյանը, «Կազմակերպությունը պատրաստ դրամ չուներ տրամադրելու, խումբ չկար, որմե ամսական գանձվեր, քաղաքին հայ հարուստներեն պահանջել, գանձել անհնար էր, անոնք արդեն ո՛չ մեկ ժամանակ այդ սովորությունը ունեցած են, անոնք ուժով դիմադրություն ցույց տալու կողմնակից չեն եղած ոչ անցյալի մեջ և ոչ ալ կըլլան ներկայիս, իրենց դրամը պահած էին, որ նեղության պարագային, իբր փրկանք տային թուրքերուն և այդպիսով փրկեին իրենք զիրենք»[10]:

---

[7] **Ռուբեն,** նշվ. աշխ., հ. է(7), էջ 57-58:

[8] Այդ մասին մանրամասն տե՛ս **Աշոտ Ներսիսյան,** Ռուբեն, Երևան, 2002:

[9] **Ռուբեն,** նշվ. աշխ., հ. է(7), էջ 59:

[10] **Սարգիս և Միսակ Բդեյաններ,** նշվ. աշխ., էջ 29:

Պայմաններն ավելի են վատթարանում, երբ սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը (1914 թ. հուլիսի 19): Ինչպես գրում է Սասունցի Մուշեղը, Ռուբենը հրավիրում է «շրջանի գործիչներին և Ջեֆոնի (զինման ֆոնդ - Ա. Ն.) մարմինը Մուշ, ընդհանուր խորհրդակցության համար»[11]: Խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էին Տարոնի նշանավոր դեմքերը, Ռուբենը «մանրամասն կերպով պարզեց քաղաքական կացությունը»:

Ռուբենը խորհրդակցության ժամանակ մոտավորապես հետևյալն է ասում. «Մենք, եթե ժամանակ շահելու քաղաքականություն է, որ կիետևենք, Սերվեթն ալ (Տարոնի կառավարիչը - Ա.Ն.) իր առանձին հաշիվներն ունի: Պարզ է այլևս, որ երկուքիս ալ համբերությունը հատած է, զառնուկի նայվածքով իրարու աչքերուն մեջ կշարունակենք նայիլ, սակայն իրարու հոգին հանել կուզենք: Չես գիտեր ո՞ր ժամուն պիտի նետվինք իրարու կոկորդին»[12]:

Ընդհանրապես, սխալ է այն տեսակետը, որով Ռուբենին վերագրվում է այն համոզմունքը, որ նա ձգտել է ժամանակ շահել, մինչև հասնեն ռուսական զորքերը[13]:

Ճիշտ է, փորձելով նախապատրաստել Տարոնի և Սասնո ինքնապաշտպանությունը և զինումը, որը թերի մնաց, նա դեպքերի վաղաժամ զարգացման հետևանքով հույսն արդեն դրել էր ռուսական զորքերի վրա, բայց մինչ այդ նա գործել է ընդհանուր ապստամբություն կազմակերպելու և պահի հասունանալու դեպքում դրան գնալով՝ հայությունն ազատագրելու ծրագրով: Իսկ այդ պահը կարող էր հասունացած լինել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, եթե 1908 թ. հետո այդպիսին լիներ հայ քաղաքական կուսակցությունների գործունեության ուղղվածությունը: Նրա զգուշավոր գործելակերպը պետք է պայմանավորել միայն ու միայն թուրքական կառավարությանը վաղաժամ դեպքերով ջարդերի առիթներ չտալու ցանկությամբ, որի դեպքում կխոչընդոտվեին առանց այն էլ մեծ դժվարությամբ տարվող զինման աշխատանքները: «Եզրակացությունը այն եղավ այս խորհրդակցության,- գրում է Սասունցի Մուշեղը,- որ պետք է վերջնական կարգադրությունները գլուխ բերել, Մշո դաշտի և Սասնո ժողովրդին փրկությունը ապահովելու համար: Հարցը երկար դիմանալու մեջ կկայանար, բոլորն ալ կմտածեին, որ ռուսական բանակները կրնան օգնության հասնել և դյուրացնել գործը: Այս ժողովեն վերջ, Ռուբեն առանձին ըսավ ինծի, որ **կրնա հակառակն ալ պատահի, պետք է գործերը այդ նախատեսությամբ դասավորել**» (Ընդգծումը մերն է-Ա.Ն.)[14]:

Այսպիսով, Ռուբենը չի գործել և նպատակ էլ չի ունեցել իր գործունեությունը կազմակերպել ռուսական զորքերի շուտափույթ հասնելու հավատի վրա, այլ՝ դրանց հասնելուն ձգտել է վաղահաս դեպքերի պատճառով աշխատանքների սակավարդյունք մնալու պայմաններում: Ռուբենի և նրա նման մտածող հատուկենտ գործիչների (Արամի, Իշխանի և այլն) նպատակն այն չէր, որ Արևմտյան Հայաստանը գրավվեր ռուսական զորքերի կողմից և կցվեր ցարական կայսրությանը: Թերահավատ լինելով Ռուսաստանի նկատմամբ, նա իր գործունեությամբ ձգտել է թուրքերին

---

[11] **Ռուբեն,** նշվ. աշխ., հ. Է(7), էջ 59:

[12] Նույն տեղում, էջ 60:

[13] **Ա. Աստվածատրյան,** Ռուբենը, տե՛ս □Հայրենիք□ ամսագիր, թիվ 11(333), նոյեմբեր, 1953, էջ 48:

[14] **Ռուբեն,** նշվ. աշխ., հ. Է(7), էջ 60:

հայերի դեմ զգռելու առիթներ քիչ տալ, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո փորձել է հասնել ՀՅԴ այնպիսի գործելակերպի, որով չխորացնի հայ-թուրքական հարաբերությունների անջրպետը: Ավելի շատ հակվելով դեպի սեփական ուժերին ապավինելու գաղափարին՝ նա խորհուրդ էր տալիս չոգևորվել մեծ տերությունների խոստումներով: «Ռուբենն ասում էր,- գրում է Արամ Մանուկյանը,- որ բարենորոգումների հարցը (1912-14 թթ. - Ա. Ն.) նոր փոթորիկ պիտի բերեր հայ ժողովրդի գլխին: Նա ավելի քան «թրքասեր» էր իր հայացքներով և գործունեությամբ, շատ մոտ հարաբերության մեջ էր թուրք գործիչների հետ, ամեն բան անում էր, որ հայ-թուրքական հարաբերությունները նորմալ ընթացք ունենան, բայց երկրի գործիչներից առաջինն էր, որ իրենից անկախ պատճառներով փախստական դարձավ»[15]:

Ճշմարիտ է, կարճ ժամանակամիջոցում հնարավոր չէր շատ գործ կատարել, բայց Ռուբենի կատարածի չափը երևում է նախորդների գործունեության հետ համեմատելու դեպքում:

Կացությունը Տարոնում բարդանում է 1914 թ. հուլիս-օգոստոս ամիսներից, երբ սկսվում է զորահավաքը, որից հայերն ամեն կերպ փորձում էին խույս տալ: Վահան Փափազյանը (Կոմս), որը գտնվում էր Վանում, վկայում է, որ Ռուբենը մի նամակ է այդ օրերին ուղարկում Վան: «Վասպուրականը սերտ հարաբերության մեջ էր Դուրանի (Տարոնի) հետ,- գրում է նա,- Հոն վերահաստատված էր մեր ընկեր Ռուբենը, որ նոր վերադարձած էր Էրզրումեն և մտահոգ էր Տարոնի կացության վերաբերմամբ, գրեթե նույն վիճակը կտիրեր և հոն: Հոկտեմբերի սկիզբն էր, որ ստացվեցավ անկե ավելի լուրջ մտահոգություն պատճառող նամակ մը: Քյուրդերը շարժման մեջ էին, զորք կպահանջվեր հայերեն, շրջանի պատգամավոր Գեղամը (Գեղամ Տեր-Կարապետյանը-Ա. Ն.) վերադարձած էր Պոլիս»[16]:

Այս պայմաններում որոշվում է, որ Կոմսը մեկնի Մուշ՝ միառժամանակ այնտեղ մնալու, ապա՝ Կ. Պոլիս անցնելու համար: Նրա Մուշ մեկնելը պայմանավորված էր նրանով, որ «ոչ ոք կմնար կառավարության հետ հարաբերություն պահող, առաջնորդ Խարախանյանը չէր կրնար զորեղ միջամտություններ ընել: Կարիք կզգային պաշտոնական հանգամանք կրող ընկերոջ մը»[17]:

Ճանապարհին Բիթլիսում նա արդեն լսում է ռուս-թուրքական պատերազմի հայտարարության մասին: Այդ օրհասական պահերին Տարոնում առկա կացությունը և հայ ղեկավարների դիրքորոշումները պարզելու տեսանկյունից խիստ գնահատելի են Կոմսի տեղեկությունները: Նախ ճշտենք, թե ինչպիսին էր ժողովրդի տրամադրությունը պատերազմի պայմաններում: «Աշնանային այդ ամիսներին,- գրում է նա,- մեծ ու փոքր ընկերները կժողովվեին մեր ակումբը զրույցի: Խիստ կհետաքրքրվեին քաղաքական և պատերազմական անցուդարձերով: Օրվան աղետալի չարիքը զինվորագրությունն էր, որ կմտահոգեր ժողովուրդը: Աղաղակող հակասություն կթվեր թրքական բանակին զինվոր երթալը: Ռուսը պատերազմ է հրատարակեր, կովի մեջ է մեր թշնամի թյուրքին դեմ: **Ռուսը քրիստոնյա է և կուզե ազատել հայերը - ինչպես**

---

[15] Արամը, մահվան հիսնամյակին առթիվ, Երևան, 1991, էջ 345:

[16] **Վահան Փափազյան**, նշվ. աշխ., էջ 296:

[17] Նույն տեղում, էջ 296-297:

**երթալ թուրքերու հետ միանալ և կռվել ազատարարներու դեմ, այս տրամադրությունը շատ ավելի զորացավ, մանավանդ, երբ մեզմե լսեցին, թե կամավորական գունդեր կազմված են նույնիսկ Անդրանիկի, Քեռիի և իրենց ծանոթ այլ պետերու գլխավորությամբ**» (Ընդգծումը մերն է-Ա. Ն.)[18]:

Ընդգծումից մի ավելորդ անգամ պարզ է միտումը. ռուսների դեմ ինչպես կռվել՝ միացած վաղեմի թշնամու հետ: Եվ այս խռհերի ընդհանրության պայմաններում անտեսվում էր ամենակարևոր հանգամանքը, այն է՝ եթե մեր ազատարար ռուսները ուշանան, ինչպե՞ս ենք դիմակայելու ջարդարար թուրքին: Բայց շատ քչերն էին կասկածում ռուսների ուշանալուն: Առաջնորդարանում նոյեմբերի վերջերին հրավիրված մի խորհրդակցության ժամանակ, որը քննում էր թուրքական բանակին զինվորներ տալու-չտալու հարցը, Մշո առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանի «գլխավոր մտահոգությունն էր խոհեմ քայլերով ու փոքր զիջումներով ժամանակ շահել: **Կային ռուսական բանակի հառաջացման հավանականությունները, հետզհետե պիտի պարզվեր մթնոլորտը և հաջորդող նոր դեպքերը, որոնցմե կրնայինք օգտվել և վերջապես ժամանակ պետք էր մեզի՝ ինքնամփոփվելու և պատրաստվելու:**

**Սրբազանը խիստ անհանգիստ էր հայ կամավորներու մասնակցութենեն, անոր երկյուղ մը ուներ հետևանքներեն. կուզեր մխիթարվել անով, թե շուտով թերևս կրնային հասնել Տարոնի դաշտը, մինչ այդ պետք էր չխզել հարաբերությունները կառավարության հետ և ստեղծել այնպիսի կացություն, որ որևէ կասկած չհրավիրեր և հարկադրեր ավելի անտանելի միջոցների դիմելու**» (Ընդգծումը մերն է - Ա. Ն.)[19]:

Հետևությունն այս է՝ Տարոնի հայ ղեկավարները իրենց գործունեությունը ամբողջովին պայմանավորում էին ռուսական զորքերի շուտափույթ առաջանալու նկատմամբ հավատով, և հայ կամավորական շարժման բուն արևմտահայության նկատմամբ ունենալիք դժբախտ հետևանքների վերաբերյալ երկյուղն էլ կարող էր անցնել նրանց գործողությունների արագացմամբ և Տարոն շտապ մուտքով: Մոռացվում էր, որ ռուսներն էլ ունեին իրենց հաշվարկները:

Միայն Ռուբենն էր, որ փորձում էր չգործել ռուսների շուտափույթ հասնելու հույսով, բայց նրա գործունեությունը ոչ իրենից կախված պատճառներով առավել հայանպաստ հետևանք չէր կարող տալ: Նա ձգտում էր մասնակի դրվագներից խուսափելով ժամանակ շահել և առավել նախապատրաստվել: Բայց շուտով ստիպված դառնում է փախստական, որով թուլանում է առավել արդյունավետ գործելու հնարավորությունը: Իսկ դա լինում է հետևյալ հանգամանքներում: Սարիղամիշի ճակատամարտից հետո (1914 թ. դեկտեմբեր – 1915 թ. հունվար) Մուշ քաղաքում միաժամանակ խուճապ է սկսվում: Այդ օրերին կառավարությունը տեսնելով, որ «մեծ հույս չկա հայ նորակոչիկներ ժողովելու, ճակատը (մինչև Խնուս) մթերք ղրկելու խմբեր կազմեց - «ամելիա թապուրներ»- և առաջարկեց, որ հայերը զոնե այդքան աջակցություն բերեն երկրի պաշտպանության գործին»[20]:

Բայց այդ խմբերի ստեղծման նպատակն, անշուշտ, ոչ այնքան «երկրի պաշտպա-

---

[18] Նույն տեղում, էջ 314:

[19] Նույն տեղում, էջ 317-318:

[20] **Վահան Փափազյան,** նշվ. աշխ., էջ 327:

նության գործին» աջակցությունն էր, որքան այդ պատրվակով հայ տարրը ջլատելը, քայքայելն ու կոտորելը: Մյուս կողմից էլ առկա էին Մշո կառավարիչ Սերվեթ բեյի կողմից քուրդ աշիրեթների ղեկավարներին (Մուսա բեկ և այլն) հայոց դեմ գրգռելու գործողությունները: Այս բոլորով հանդերձ՝ Սերվեթն արտաքուստ հայ ղեկավարների հանդեպ դրսևորում էր բարյացակամ վերաբերմունք: 1915 թ. Նոր տարվա տոնին Տարոնի մյուս թուրք ղեկավարները (վարչական, դատական և զինվորական) այցելում են վերջիններիս: «Հյուրերը կընդունէր գլխավորապես Ռուբենը, իբր տանտեր,- գրում է Կոմսը,- ես հյուր կնկատվեի, հոն կգտնվեին տեղացիներեն նաև Մճոն, Կորյունը, Տիգրանը և այլ ընկերներ»[21]: Այդ օրերին Սերվեթն առանձնապես ուշադիր վերաբերմունք է ցույց տալիս Կորյունի նկատմամբ և տոներից հետո Ռուբենի միջոցով նրան առաջարկում է «ստանձնելու դաշտային միլիսի պետի պաշտոնը»[22]:

Այս առաջարկի նպատակը մեկն էր՝ խորամանկությամբ իր կողմը քաշել և ապա՝ ոչընչացնել Տարոնի մարտական ղեկավար ուժերին: Ուստին այն մերժվում է: Այդ օրերին Տարոնի «հին և կարևոր ընկերներու» հետ տեղի են ունենում մի շարք խորհրդակցություններ, որոնց ընթացքում արտահայտվում են տարաբնույթ տեսակետներ: Օրինակ, Պոլեի Մճոն (Մկրտիչ Պոլեյան) և Բերդակ գյուղի Օսկանը առաջարկում են հարձակվել պետական զինանոցների վրա, Ռուբենը՝ Տափըկ գյուղի պահականոցի վրա և ազատել Սասունը ներքին թշնամիներից: Կոմսը և ոմանք գտնում էին, որ ռազմամթերքները սակավ էր հարձակողական ձեռնարկների համար: Հարկավ, քայլերի ուշացման կամ դրանցից զգուշանալու հիմնական պատճառը ռազմամթերքի քիչ քանակն էր և ռուսների հանդեպ տածած հույսը: Այս խորհրդակցությունից հետո Ռուբենը որոշում է արագացնել Մշո դաշտի ինքնապաշտպանության կազմակերպման աշխատանքները: Իսկ Կոմսը, որը ճանապարհների փակվելու հետևանքով չէր կարողացել մեկնել Կ. Պոլիս, մնում է Մուշ քաղաքում:

Փետրվարի 6-ին Ռուբենն ու Կորյունը հասնում են Մշո դաշտի Գոմս գյուղը և իջևանում Կորյունի տանը: Այստեղ տեղի է ունենում մի դեպք, որն անհնար է դարձնում Ռուբենի դաշտում մնալը: Նույն օրվա երեկոյան այստեղ են գալիս Աղջան գյուղի մյուդիրը, հասնանցի Ջավալի Ուսեն, Ջիբրանցի Դրպոյի Ջաֆարի աղան և Շեյխ Մեհմեդ Էմինը՝ ոստիկանների խմբով: Կարո Սասունու վկայությամբ՝ Շեյխ Մեհմեդ Էմինը, որը Կորյունի թշնամին էր և Մշո իթթիհատական ակումբի անդամ, «կառավարիչեն հրահանգ ստացած էր ոչնչացնել Կորյունը և Ռուբենը, անոնց միամիտ մեկ վայրկյանեն օգտվելով»[23]:

Ըստ Կոմսի վկայության՝ «Քիչ մը վերջ Կորյունի սենյակը կմտնա իրեն հինավուրց բարեկամ քյուրտ ժանդարմա մը և կըսե, թե Ֆախկիի (Աղջանի մյուդիրի -Ա. Ն.) միտքը գեշ է, գիշերը հրահանգած է պատուհանեն սպանել Կորյունը (և Ռուբենը, իհարկե) և թե այս մասին հրահանգված է Մուշի իթթիհատի քլյուպեն»[24]: Այնուհետև հերոս Կորյունը «առանց ժամանակ թողնելու, որ ժանդարմները իրենց ոճիրը գործադրեն, անմիջապես ծակեր կբանա պատուհանեն դուրս ուշ ատեն, իր խոտի դեզե-

---

[21] Նույն տեղում, էջ 334:

[22] Նույն տեղում, էջ 335, նաև՝ **Կ. Սասունի**, Պատմություն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1956, էջ 766:

[23] **Կ. Սասունի**, նշվ. աշխ., էջ 770-771:

[24] **Վահան Փափազյան**, նշվ. աշխ., էջ 339-340:

րեն խուրձեր կփոխադրե ախոռի դռան առջև, դուռը դուրսեն կգոցե և կրակ կուտա, քանի մը հոգի կհաջողին երդիքե փախչել, մեկ քանին կփորձեն դուրս նետվիլ և կգնդակահարվեն, իսկ 1-2 հոգի կայրին»[25]:

«Աղջանի մյուտիրը կրակի մեջեն կպոռա,- գրում է Կ. Սասունին,- թե ինքը անմասն եղած է դավադրութենեն: Կորյուն թույլ կուտա անոր դուրս գալու, ինչպես նաև այն քյուրտին, որ իրեն լուր տված էր: Մյուսները կսպանվին գնդակներեն և հրդեհեն»[26]:

Ռուբենը մի նամակ է գրում Սերվեթ բեյին և տալիս է մյուդիրին, որ հանձնի նրան: Նամակով նա «կբացատրեր դեպքին էությունը, կառավարության բռնած դիրքը և անոր ունեցած պատասխանատվությունը»[27]:

Գոմս գյուղի դեպքից հետո Ռուբենն ու Կորյունը մեկնում են Ս. Կարապետ, իսկ հաջորդ օրը քաշվում են Ս. Հովհաննու վանքը: Այսպիսով, նրանք Սասուն են անցնում՝ խույս տալով կառավարության հետապնդումներից և ոչ թե միտումնավոր են թողնում Մշո դաշտի ինքնապաշտպանության խնդիրը: Դա հաստատում է Կոմսը՝ գրելով. «Ռուբենը և Կորյունը ակամա զրկվեցան դաշտը կազմակերպելու հնարավորութենեն ու փախստական դարձան»[28]:

Հասնելով Ս. Հովհաննու վանքը՝ Ռուբենն ու Կորյունը այնուհետև լուր են ուղարկում Սասունցի Մուշեղին, որը Սասունում էր գտնվում տակավին 1914 թ. աշնանից, որպես Սասնո ինքնապաշտպանության գործի պատասխանատու: Նրանց հետ էր հայդուկների մի փոքրիկ խումբ (Գոմսա Մելիք և Մոսո, Պզտիկ Արամ Հակոբյան, Ալիջանի Միգրան և այլն): Սասունցի Մուշեղի ձեռք առած միջոցների շնորհիվ «բոլոր խումբերն ալ առանց բախումի կհաջողին հասնիլ Սասունի Շենըք գյուղը»[29]:

Սասունցի Մուշեղը Ռուբենի հետ հանդիպում է Շենիքի նշանավոր հայդուկ Չոլոյենց տանը: Ռուբենն անմիջապես հրահանգում է տասնհինգ շալակավորներ առնել ու անմիջապես իջնել Ս. Հովհաննու վանքը, այնտեղ ամբարված զենքերն ու ռազմամթերքը Սասուն փոխադրելու համար: Սասունցի Մուշեղն անմիջապես խմբով, ձյուն ու բուքին չնայելով, իջնում է Ս. Հովհաննու վանք: Առավոտյան Մշո Գոմեր գյուղից լուր են առնում, որ Սերվեթի զինվորները շարժվելու են դեպի վանք՝ Ռուբենին և Կորյունին փնտրելու: Մուշեղն անմիջապես լուր է ուղարկում Փեթարա Մանուկին, որպեսզի իր խմբով շտապի վանք՝ հարձակման պարագային օգնելու համար: Մանուկը շուտով հասնում է և պահեստի ամբողջ զենքը վերցրած՝ գիշերը հեռանում են, բայց ճանապարհին սկսված փոթորիկը անկարելի է դարձնում լեռներ բարձրանալը:

Մուշեղն ու Մանուկը ենթադրելով, որ Գոմերի թուրքական զորքը շարժվել է դեպի Ս. Հովհաննու վանքը, անցնում են Գոմեր, որի ձորից բարձրանում են Փեթար գյուղը և ապա շարունակելով ճանապարհը՝ հասնում են Կուրտիկ լեռը: Սակայն, շուտով այնպիսի բուք է սկսվում, որ թվում է, թե «խումբը դատապարտված է խեղդվելու ձյու-

---

[25] Նույն տեղում, էջ 340:

[26] **Կ. Սասունի,** նշվ. աշխ., հ. է(7), էջ 771:

[27] **Ռուբեն**, նշվ. աշխ., հ. է(7), էջ 61:

[28] **Վահան Փափազյան,** նշվ. աշխ., էջ 340:

[29] **Ռուբեն,** նշվ. աշխ., հ. է(7), էջ 62:

նին մեջ»[30]: Ստիպված կրակում են: Բարեբախտաբար, Շենիքում կրակոցները լսվում են և սահմաններով գալիս են օգնության: «Կփոխադրվենք Շենքը,- գրում է Սասունցի Մուշեղը,- Ռուբենի ուրախությունը չափ ու սահման չունի: Շնորհիվ իրեն ըրած արագ կարգադրության, կարևոր քանակությամբ զենք ու ռազմամթերք փրկված էր: Հետագա կռիվներու ընթացքին հասկացվեցավ անոնց կարևորությունը»[31]:

Այս տեղեկությունից կարելի է ենթադրել, որ Ռուբենը հնարավոր է համարել իր և Կորյունի Սասուն անցնելուց հետո Գոմսի դեպքի պատրվակով նրա վրա հարձակումը, ուստին շտապ միջոցառումներ է մշակել՝ պաշտպանվելու համար:

Ռուբենի Սասուն բարձրանալուց հետո, 1915 թ. մարտի կեսերին, երբ թուրքական իշխանությունների դրդմամբ Մուսա բեկի հրոսակները մտնում են Գրգուռի ստորոտում գտնվող Մուշաղշեն գյուղը և սրի քաշում գյուղապետ Գասպարին իր ընտանիքով, ինչպես նաև մի քանի ազդեցիկ մարդկանց և գյուղը ավարի ենթարկում, ինչպես վկայում է Կոմսը՝ «Մեր շրջաններուն մեջ զայրույթը իր գագաթնակետին հասավ, հին մարտիկները կպահանջեին այլևս լեռ բարձրանալ»[32]:

Նրանցից առաջինը Տարոնի հայտնի հերոս Պոլեի Մճոն էր: Մարտյան մի օր Մուշ քաղաքում գտնվող Կոմսը մի նամակ է ստանում Մճոյից, որը «կգրեր, թե այլևս չհանդուրժելով ստեղծված կացությունը մեր երեսուն ընկերներով Առաքելոց վանքը կգտնվի իբր բողոքի ցույց, կհանձնարարեր պահանջել կառավարութենեն վերջ տալ անիշխանության, եթե ոչ իբր ըմբոստներ ազատ պիտի համարեն ինքզինքին: **Նախապես ոչինչ հայտնած էին մեզ իրենց որոշման մասին, երևի վախենալով, որ արգելք կլինենք**» (Ընդգծումը մերն է - Ա. Ն.)[33]:

Ընդգծվածից պարզ է, որ Մշո դաշտի ուժերը հեռանում էին Սասուն իրենց որոշմամբ և ոչ թե Ռուբենի կամ Կոմսի հետ համաձայնեցնելով, որոնց մեղադրում են Մշո դաշտի ուժերը Սասունում կենտրոնացնելու սխալ գործելակերպի մեջ[34]: Շուտով Մճոն իր խմբով, Առաքելոց վանքի վրա ուղարկված չերքեզ հարյուրապետ, Սերվեթի սիրելի Մեհմեդ բեյին 7-8 ոստիկանների հետ սպանելուց հետո իր խմբով բարձրանում է Սասուն և միանում է Ռուբենին:

«Մճոյի այդ ձևով լեռ երթալը,- գրում է Կոմսը,- վարակիչ դարձավ գյուղերու մեջ ամեն րոպե դավադրություն սպասելու վտանգին ենթակա մեր մարտիկներուն համար, անոնցմե ոմանք նույնպես աննշմարելի՝ գնացին միանալու ըմբոստներուն»[35]:

Այս մեջբերումը տեղիք է տալիս հետևյալ եզրակացությունների.

Առաջին. Մշո դաշտի որոշ (և ոչ թե բոլոր) մարտական ուժերը Սասուն էին բարձրանում ինքնակամ և ոչ թե Ռուբենի հրահանգով, որը նշանակում է, որ եթե ընտրվել էր «սխալ ռազմավարություն», ապա դա Ռուբենի մեղքով չէր:

Երկրորդ. Եթե Սասուն բարձրացող ուժերը հնարավորություն ունենային Մշո դաշտում ըմբոստության դիմելու, նրանք երբեք չէին բարձրանա Սասուն, որպեսզի

---

[30] Նույն տեղում, էջ 63:

[31] Նույն տեղում, էջ 63-64:

[32] **Վահան Փափազյան,** նշվ. աշխ., էջ 342:

[33] Նույն տեղում:

[34] Տե՛ս **Աղան Տարոնեցի**, Պատասխանատուները Տարոնի եղեռնին, Սան Ֆրանցիսկո, 1966, էջ 63-66:

[35] **Վահան Փափազյան,** նշվ. աշխ., էջ 342:

չքլատվեին Մշո դաշտի ուժերը: Կռվողներն, անշուշտ, բարձրացել են Սասուն՝ համոզված լինելով, որ չեն կարող երկար կռվել դաշտում: Անշուշտ, դեր է ունեցել նաև այն հանգամանքը, որ չեն ենթադրել համատարած ջարդերի ծրագիր, որի համար ոչ մեկին չի կարելի մեղադրել: Այնպես որ Սասուն բարձրանալը պայմանավորված էր դաշտում գործելու անհնարինությամբ և գոնե Սասունում ինքնապաշտպանության կազմակերպումով երևույթները փրկելու համոզմունքով՝ չանտեսելով ռուսական բանակի շուտափույթ հասնելու հնարավորությունը:

Հետաքրքիր է, որ Ռուբենին «սխալ ռազմավարության» մեջ մեղադրողներից Մ. Բդեյանը հետևյալն է գրում. «Մեզի պես փորձառուներն իսկ որոշ կարծիք չէին կրնար հայտնել այս պատահածներուն մասին, դեռ և ոչ մեկ տեղի ջարդի կամ խռովության լուր մը լսած էինք, և ռուս բանակը մոտիկ ըլլալով՝ վտանգը մեզմե շատ հեռու կնկատեինք:

**Սասուն պարեն և զենք կփութացնեինք**, իսկ պարենի փոխադրությունը արդեն կանոնավոր կերպով կշարունակվեր սարատակի գյուղերեն, ուրկե սասունցի կիները կկատարեին փոխադրությունը իրենց շալակներով» (Ընդգծումը մերն է - Ա. Ն.) [36]:

Այսպիսով, ընդգծվածից պարզ է, որ Մշո նշանավոր գործիչներն իրենք էլ հիմնականում Սասուն էին տեղափոխում զենքն ու պարենը: Այսինքն՝ նրանց ուշադրությունն էլ հիմնականում Սասնո վրա էր սևեռված:

Եզրակացությունն առկա փաստերից հետևյալն է՝ չեն անտեսվել ո՛չ Մշո դաշտը և ո՛չ էլ Սասունը, այլ երկուսի համար էլ փորձել են անել այն, ինչ հնարավոր էր: Իսկ եթե որոշ առաջնայնություն տրվել է Սասունին, ապա դա պայմանավորված էր նախ նրանով, որ նրա վրա հարձակումներն սկսվել են ավելի վաղ (դեռևս փետրվար ամսից՝ քուրդ աշիրեթների կողմից), և երկրորդ՝ միշտ նախկիններում առաջին հարվածը կրել էր Սասունը: Ստեղծված պայմաններում Սասնո մարտական ուժերը նախապատրաստվում էին դիմակայելու թուրք-քրդական ուժերին, իսկ Տարոնի առաջնորդները հույս ունեին, որ ուր որ է կհասնեն ռուսական զորքերը: Սակայն ռուսական զորքերն ուշացան, Տարոնի հերոս ժողովուրդը ենթարկվեց սոսկալի նախճիրի: Սասունը դիմեց յոթամսյա հերոսական մաքառման, բայց այն նույնպես ողբերգական ավարտ ունեցավ: Իսկ թե ինչպես տեղի ունեցավ այս ամենը, դա մեկ այլ ուսումնասիրության թեմա է:

---

[36] **Սարգիս և Միսակ Բդեյաններ,** նշվ. աշխ., էջ 341:

*ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ*
*Պատմական գիտությունների դոկտոր*

# ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1918 Թ. ՄԱՐՏ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրումից հետո Արևմտյան Հայաստանում թուրքական բանակի առաջխաղացման և դրան զուգորդող ու հաջորդող իրադարձությունների համատեքստում Կայսերական Գերմանիայի ունեցած դերակատարումը դեռևս հանգամանալից լուսաբանման չի ենթարկվել, մինչդեռ առանց դրա չի կարող ամբողջանալ ինչպես այդ շրջանի իրադարձությունների գիտական քննությունը, այնպես էլ Հայաստանի առաջին Հանրապետության և Գերմանիայի փոխհարաբերությունների ընդհանուր համապատկերը:

Թվում է, թե Գերմանիան պետք է որոշակի պարտավորություններ կրեր Բրեստի պայմանագրով Թուրքիային հանձնված Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների քրիստոնյա և, բնականաբար, նաև հայ ազգաբնակչության անվտանգության ապահովման հարցում, քանի որ նա մի կողմից Օսմանյան կայսրության դաշնակիցն էր, այդ պետության վրա իրական ազդեցություն ունեցող միակ տերությունը, և մյուս կողմից՝ գերմանական կողմը կարևոր դերակատարում էր ունեցել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վավերացման և, բնականաբար, նաև վերոնշյալ շրջանները Թուրքիային հանձնելու գործում: Գերմանիայի կառավարությունը, ինչպես վկայում են գերմանական դիվանագիտական փաստաթղթերը, լիովին հասու էր վերոնշյալ վտանգներին և դրանք կանխարգելելու իր որոշակի պարտավորվածությանը: Ինչպե՞ս էր, սակայն, դա իր գործնական դրսևորումը ստանում: Պաշտոնական Գերմանիան թուրքական զորքերի առաջխաղացման դեպքում հայկական կոտորածների բացառումը և թուրքական կողմում հայ ազգաբնակչության հանդեպ լոյալ դիրքորոշման ցուցաբերումը դեռ Բրեստի պայմանագրի ստորագրումից առաջ, 1918 թ. հունվարին, Օսմանյան կայսրության արտգործնախարարի և ֆինանսների նախարարի հետ տեղի ունեցած հանդիպումներում դարձրել էր բանակցման խնդիր: Ինչպես այդ ժամանակ, այնպես էլ փոքր-ինչ ավելի ուշ՝ մի կողմից Օսմանյան կայսրության Մեծ վեզիրի, արտգործնախարարի և նրա ներկայացուցիչ Խալիլ բեյի, իսկ մյուս կողմից՝ Գերմանիայի կանցլերի, պետքարտուղար Քյուհլմանի և դեսպան Բեռնշտորֆի միջև կայացած բանակցություններում թուրքական կողմը չէր զլանում տալ ամենապերճ հավաստիացումները հայերի հանդեպ իր «խաղաղասիրական» մտադրությունների վերաբերյալ: «Երբ Բրեստ-Լիտովսկի զինադադարի հաստատումից հետո մոտեցել էր այն ժամանակ ռուսների կողմից գրավված՝ արևելյան Անատոլիայի գավառների ազատումը,- նշում էր պետքարտուղարի տեղակալը հարցի շուրջ ռայխստագում իր կատարած պարզաբանումների ժամանակ,- մենք հայերի հանդեպ վարքագծի հարցի առնչությամբ անմիջապես կապվեցինք թուրք պետական այրերի հետ և նրանց ասացինք, թե Թուրքիայի ամենասեփական շահերի, նաև իր դաշնակիցների հետ նրա

փոխհարաբերությունների առումով որքան կարևոր է, որ թուրքական զորքերի մտնելու ժամանակ հայ բնակչության հանդեպ անկարգությունները բացառվեն, և որ սկզբից ևեթ քրիստոնյա և մահմեդական տարրերի միջև խաղաղ փոխհարաբերությունների հիմքեր ստեղծվեն: ... Կայսերական կառավարությունը Հայկական հարցի նշանակությունը թուրքական կառավարության աչքերին դեմ անելու ոչ մի առիթ բաց չի թողել և կատարել է որոշակի առաջարկներ, թե ինչպես կարելի է խուսափել հետագա արյունահեղությունից և տևականորեն խաղաղ իրադրություն ստեղծել: Նա մասնավորապես շտապ կերպով խորհուրդ է տվել մուտք գործող զորամասերի կարգապահությունը պահպանել, հայ կամավորական ջոկատներին կամովի ենթարկվելու կոչ անել, նրանց, եթե նրանք կհետևեն այդ կոչին, տրամադրել համաներում..., բացի այդ՝ նաև առնվազն վճռել ու սկսել դեպի կայսրության խորքերը արտագաղթածների վերադարձը, ինչը փոխադրամիջոցների հետ կապված՝ ներկայիս դժվարությունների պայմաններում անշուշտ իրագործելի չէ: ... Հստակ հավաստիացումներից հետո մենք իրավունք ունենք հավատալ, որ (թուրքական, Ա. Հ.) կառավարությունը վճռել է հայերի հանդեպ մեղմ լինել և կկարողանա անմեղ բնակչությանը առանձին հրոսակախմբերի գործողությունների համար պատասխանատու չդարձնել ու կանխել այնպիսի դեպքերը, ինչպիսիք տեղի են ունեցել 1915 թվականին...»[1]:

Չնայած պետքարտուղարի տեղակալը չէր նշում այդ խոստումների իրականացման երաշխիքների կամ վերահսկման լծակների մասին, քանի որ դրանք չկային, և հարցի վերաբերյալ գերմանա-թուրքական երկխոսությունը կառուցվում էր բացառապես «հավաստիացումների և վստահության» հիմքի վրա, այնուամենայնիվ, ինչպես վկայում են դիվանագիտական տեղեկագրերը, գերմանական կառավարությունը ակնհայտորեն ոչ միայն չէր քաջալերում Բրեստի պայմանագրով Թուրքիային հանձնվող շրջանների հայաթափումը, այլև դրանում ամենևին շահագրգռված չէր: Միաժամանակ Բրեստի պայմանագրի ընդունումը նա անխուսափելի էր համարում հայերի համար և ձգտում էր իր ազդեցությունը գործադրել թուրքական կառավարության երաշխիքների և հավաստիացումների հիման վրա հայկական կողմին պայմանագրի ընդունման մտքի հետ հաշտեցնելու համար: Երբ Տրապիզոնում արդեն սկսվել էին բանակցությունները, և թուրքական կողմը անդրկովկասյան սեյմին փորձում էր պարտադրել ընդունել Բրեստի պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող հոդվածը, Գերմանիան իր հերթին մտահոգություն էր արտահայտում Անդրկովկասյան սեյմի, այդ թվում՝ հայկական կողմի ընդդիմության հանդեպ, և անընդունելի համարելով մի կողմից Թուրքիայի դեմ պատերազմելու, մյուս կողմից՝ անգլիացիների կամ որևէ այլ երրորդ ուժի աջակցությունը խնդրելու հայկական շրջաններում ի հայտ եկող կոչերը, տարածաշրջանում «խաղաղ իրադրության» ստեղծման համար անհրաժեշտ էր համարում, որ հայերը հրաժարվեին ընդդիմության փորձերից, անկախության իրենց ձգտումներից, որոնց «անհուսալիությունը այժմ ստիպված են գիտակցել», և ընդառաջեին թուրքերի կողմից առաջարկվող հաշտությանը: Հայկական կողմի մոտ այդ դիրքորոշումը ձևավորելու համար հարկ էր համարվում օգտագործել մինչև իսկ հայերի գերմանացի բարեկամների ազդեցությունն ու հեղինակությու-

---

[1] Der Völkermord an den Armeniern 1915/16, Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, Herausgegeben von Wolfgang Gust, Springe 2005, էջ 567.

նը: «Մենք,- նշում էր գերմանական ԱԳՆ-ի պետքարտուղարի տեղակալը մարտի 21-ին ռայխստագում ունեցած իր ելույթի ժամանակ,- գոհունակությամբ կողջունեինք, եթե հայերի գերմանացի բարեկամները իրենց ազդեցությունը գործադրեին հայերին անօգուտ դիմադրությունից, որը հավասարազոր կլիներ ինքնասպանության, նախազգուշացնելու և նրանց համոզելու համար, որ թուրքերի հետ բանակցեն իրենց հպատակման մասին: Մոտակա համաներման վերաբերյալ կարգադրություն արձակելու համաձայնությունը տրվել է»[2]:

Թուրքական պահանջը, սակայն, ինչպես սեյմի, այնպես էլ հայոց Ազգային խորհրդի կողմից մերժվեց, որից հետո, ինչպես հայտնի է, սկիզբ առան պատերազմական գործողությունները: Արդեն մարտի 13-ին թուրքերը մտել էին Էրզրում, իսկ ապրիլի 10-ին գրավեցին նաև Սարիղամիշը[3]: Նրանց գրավումներն ուղեկցվում էին տեղում մնացած հայերի կոտորածներով և այլ ամենազարհուրելի ոճրագործություններով:

Ինչ վերաբերում էր նոր իրադրությունում երկու դաշնակիցների միջև իրականացվող երկխոսությանը, ապա թուրքական կառավարությունը հավատարիմ մնալով իր ավանդական գործելակերպին՝ գերմանական դաշնակցին շարունակ հավաստիացումներ էր տալիս հայ ազգաբնակչության հանդեպ անկարգությունների բացառման և խաղաղ փոխհարաբերությունների հաստատման իր ցանկությունների մասին, իսկ Գերմանիան փորձում էր իր՝ նմանապես արդեն ավանդական դարձած բարեկամական հիշեցումներով ու նախազգուշացումներով «նպաստել» դրանց իրագործմանը: Այդօրինակ նախազգուշացումների անարդյունավետության մեծ փորձառություն ունեցող պաշտոնական Գերմանիան, անկասկած, որևէ հիմք չէր կարող ունենալ իր դաշնակցի խոստումներին հավատ ընծայելու համար, այնուհանդերձ նա այդ հարցում թուրքական կողմի վրա ազդելու այլ ճանապարհ, քան բարեկամական դիվանագիտական երկխոսությունն էր, չէր տեսնում: Իսկ արդյոք ինչպիսի՞ ընթացք և արդյունք ուներ այդ երկխոսությունը:

Գերմանական կառավարությանը որոշակի անհանգստություն էր պատճառում Բրեստի պայմանագրի ստորագրումից հետո թուրքական շրջաններում վերստին սանձազերծված ազգայնամոլական և պանթուրքական տրամադրությունների շեշտակի վերելքը, որ հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Մարտի 17-ին ԱԳՆ-ն Բուխարեստում գտնվող պետքարտուղարին տեղեկացնում էր, որ Կոստանդնուպոլսում մեծ վեզիրի բացակայությունը (որը նույնպես Բուխարեստում էր գտնվում) խիստ ցավալի էր, քանի որ թուրքական «բոլոր ազդեցիկ շրջանները հաղթանակի, նացիոնալիզմի և պանիսլամիզմի գլխապտույտի մեջ են», և միայն Թալեաթը կարող էր սանձերն իր ձեռքում հավաքել ու հայերի հանդեպ քաղաքականության վերաբերյալ կատարելով նախկինում հանձն առած պարտավորություններին համապատասխանող հայտարարություններ՝ «հանդարտեցնել» հակահայկական տրամադրությունները: Ըստ այդմ՝ հեռագրում պետքարտուղարին առաջարկվում էր Թալեաթին դրդել, որ նա դեռ Բուխարեստից շտապ կերպով հրահանգներ ուղարկեր Կոստանդ-

---

[2] Անդ:

[3] **Կարապետյան Մ. Խ.,** Հայաստանը 1912-1920 թվականներին, Երևան, 2003, էջ 214:

նուպոլիս հայերի հանդեպ իրագործվելիք քաղաքականության վերաբերյալ[4]:

Ինչպես տեղեկացվում էր պետքարտուղարի՝ մարտի 20-ի պատասխան հեռագրում, նա այդ մասին Թալեաթ փաշայի հետ զրույց էր ունեցել: Վերջինս, սակայն, նշել էր, որ այդ առումով Բուխարեստից նա շատ բան չէր կարող անել, սակայն Կոստանդնուպոլիս վերադառնալուն պես մտադիր էր հրամանագիր հրապարակել համաներման մասին[5]:

Դա, իհարկե, թուրքական նոր հայաջինջ գործողությունների համար ժամանակ շահելու նպատակ հետապնդող մի հերթական քայլ էր, քանի որ հետագայում ևս այդ, այսպես կոչված, «համաներումը», որը թուրքերի կողմից գրավված շրջաններում պետք է հայերի դեմ ոտնձգությունների արգելման երաշխիք դառնար և միաժամանակ դեռևս կենդանի աքսորյալներին հնարավորություն տար վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը, երբևէ չիրագործվեց:

Հարկ է նշել, որ չնայած Գերմանիան մտադիր չէր հայերի և մյուս քրիստոնյաների դեմ թուրքական կամայականություններն ու վայրագությունները զենքի ուժով արգելել[6], այնուհանդերձ այդ հարցում չէր որդեգրել նաև ծայրահեղ հաշտվողական կեցվածք: Արդեն մարտի 22-ին արտգործնախարարությունը, վկայակոչելով Լիոնի հայկական լրատվական գրասենյակի տեղեկությունները, դեռ Բուխարեստում գտնվող պետքարտուղարին հեռագրում էր, որ Տրապիզոն մտնելուց հետո թուրքերը նոր վայրագությունների են դիմել, «Հեռացող հազարավոր ռուսների զինդակահարել կամ կենդանի այրել են: Հայերը աննկարագրելի չարչարանքների են ենթարկվում: Երեխաներին լցնում են պարկերը և նետում ծովը: Ծեր տղամարդկանց և կանանց խաչում ու խեղդում են, բոլոր երիտասարդ աղջիկներն ու երիտասարդ կանայք տրվել են թուրքերի ձեռքը»[7]:

Այնուհետև տեղեկացնելով, որ Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանն այդ մասին տեղյակ է ու համապատասխան առարկություններ է կատարել, ԱԳՆ-ն պետքարտուղարին առաջարկում էր այդ հարցը բարձրացնել Թալեաթի առաջ:

Եվս երկու օր անց արտգործնախարարությունից՝ պետքարտուղարի տեղակալ ֆոն դեր Բուշեի կողմից Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը հաղորդվում էր, որ հայերի դեմ մամուլում սանձազերծված քարոզարշավի անմիջական հրահրողը, ըստ ստացված լուրերի, Էնվեր փաշան էր, և դեսպանությանը հանձնարարվում էր գեներալ ֆոն Զեկտի միջոցով ազդել Էնվերի վրա՝ այդ քարոզարշավին վերջ տալու հա-

---

[4] Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke,Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919. էջ 374-375:

[5] Անդ, էջ 377:

[6] Ի պարզաբանումն դրա կարող է, անշուշտ, որոշակի հիմնավորվածությամբ այն տեսակետն արտահայտել, որ տիրող պատերազմական իրավիճակում Գերմանիան թուրք դաշնակցի հետ իր փոխհարաբերությունները չէր կարող վտանգել, և պատահական չէ, որ պաշտոնական Գերմանիան նույնպես իր կողմից ազդու միջամտության բացակայությունը հիմնավորելու համար հարկ եղած դեպքում օգտագործում էր այդ բացատրությունը: Ինչպես, սակայն, շուտով կլուսաբանվի, գերմանական շրջանները միանշանակորեն այդ տեսակետին չէին հարում, և կային նաև կոշտ միջամտության կողմնակիցներ, որոնք այդօրինակ մտահոգությունները անհիմն էին համարում:

[7] Անդ:

մար[8]:

Ապրիլի 3-ին Բուշեն Կոստանդնուպոլսի դեսպանին ուղարկված մեկ այլ հեռագրում հաղորդում էր, որ նախկին ռուսական սահմանները հատելով՝ թուրքական զորքերը հասնում են խիտ հայկական բնակավայրերին: Քանի որ դրանով «աճում էր անկարգությունների վտանգը», պետքարտուղարի տեղակալը դեսպանին հանձնարարում էր Բ. Դռան վրա ազդեցություն գործադրել, որպեսզի զորամասերի հրամանատարներին հրամայվեր խստագույն կարգապահություն պահպանել և խաղաղ բնակչության հանդեպ ցուցաբերել անաչառ վերաբերմունք:

Ապրիլի 15-ին Բաթումի, իսկ ևս 10 օր անց Կարսի գրավմանը հաջորդող իրադարձությունները, սակայն, վերստին վկայում էին, թե թուրքական կանոնավոր և անկանոն զորքերը որքան հետևողականորեն էին իրագործում հայության սպանդը, և ըստ էության որքան ամուլ էին գերմանական առարկությունները: Գերմանական կառավարությունը, սակայն, շարունակում էր բացառապես զուսպ դիվանագիտական առարկությունների ճանապարհով ընթանալ նաև այն ժամանակ, երբ դեպքերը կատարելապես փաստարկում էին դրանց անարդյունավետությունը[9], մի ճանապարհ, որից նրան չշեղեցին նույնիսկ հայ ժողովրդի՝ արտերկրի բարեկամներից հնչող թախանձագին կոչերը, խնդրանքներն ու նախազգուշացումները: Ինչ վերաբերում էր հայկական կողմին, վերջինս իր հերթին գործադրում էր բոլոր ջանքերը՝ թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը և հայ ժողովրդի լիակատար բնաջնջումը կանխելու նպատակով ձեռք բերելու Գերմանիայի աջակցությունը:

Ինչպես դեռ մարտի 6-ին հայտնի հրապարակախոս դր. Վիկտոր Նաումանի կողմից կանցլեր իշխան Հերտլինգին ուղղված հեռագրում էր ասվում, մի շարք հայեր (որոնց անունները չեն հիշատակվում) դիմել էին նրա միջնորդությանը՝ Գերմանիայի կառավարության ուշադրությունը Թուրքիային հանձնվող տարածքների հայ բնակչության համար ստեղծված տագնապալի և վտանգավոր իրադրության վրա հրավիրելու և Գերմանիայի պաշտպանությունը հայցելու համար:

Անդրադառնալով 1915-16 թթ. 1,5 միլիոն հայերի բնաջնջման փաստին, որի պատասխանատվությունը Անտանտի կողմից արդեն իսկ նաև Գերմանիային էր վերագրվում, Վ. Նաումանը կանցլերին մատնանշում էր պաշտպանիչ միջոցառումների չիրագործման դեպքում Օսմանյան կայսրությանը հանձնված տարածքներում գտնվող հայության մնացորդների սպանդի անխուսափելիությունը և դրանից բխող ծանր հետևանքները: «Այն, որ նոր սպանդ կսկսվի, եթե մենք դրա դեմ ոչինչ չձեռնարկենք, թուրքերի ներկայիս գրգռված տրամադրության պարագայում ինքնին հասկանալի է,- նշում էր նա:- Բայց դրանից առաջին հերթին մենք կվնասվենք, քանի որ աշխարհը, եթե նույնիսկ անիրավացիորեն, մեզ դրա համար պատասխանատու կդարձնի: ... Ես այս խնդրանքը կատարում եմ ոչ միայն մարդասիրության շահերից ելնելով, այլև որպես գերմանացի հայրենասեր...»[10]:

---

[8] Անդ:

[9] Անշուշտ, դա որոշակիորեն թելադրված էր նաև հետագայում մեղսակցության մեղադրանքներից խուսափելու նպատակով:

[10] Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004, էջ 475:

Մարտի 19-ին արտգործնախարարությանը մի ուղերձ է հղում նաև գերմանահայկական ընկերությունը, որը ստորագրել էին դր. Պաուլ Ռոհրբախը, Էվալդ Շթիրը և պրոֆ., դր. Մարտին Ռադեն: Նրանք ԱԳՆ-ին մատնանշում էին, որ եթե Գերմանիան ազդու կերպով չմիջամտի դեռ կենդանի աքսորյալներին իրենց հայրենիքը վերադառնալու հնարավորություն ընձեռելու և Հայաստանում թուրքական բանակի ու հայ կամավորականների միջև բռնկված մարտերի դադարեցման համար, ապա ստեղծված իրավիճակը հանգեցնելու էր Թուրքիայում հայ ժողովրդի լիակատար բնաջնջմանը: ԱԳՆ-ին վերստին հիշեցնելով այն, թե արևմտահայության աքսորի և բնաջնջման առնչությամբ Գերմանիայի դեմ արդեն իսկ ինչպիսի մեղադրանքներ էին հնչում, ուղերձի հեղինակները նախազգուշացնում էին, որ եթե գեթ հիմա գործուն քայլ չձեռնարկվեր հայության մնացորդների փրկության համար, ապա աշխարհը Գերմանիային մեղսակից էր համարելու հայ ժողովրդի բնաջնջման հարցում: Այդ քայլը նրանք համարում էին պատերազմից առաջ Օսմանյան կայսրության և մեծ տերությունների միջև համաձայնեցված բարեփոխումների փաթեթի իրականացումը:

Նամակագիրները հարկ էին համարում նաև ընդգծել, որ եթե Գերմանիայի կողմից որևէ ազդու միջամտություն տեղի չունենար, ապա հայկական հարցը վերջինիս համար հետագա խաղաղության բանակցություններում մի շատ «անհաճո» թեմա էր դառնալու, մինչդեռ եթե վերոնշյալ փաթեթի իրականացմամբ հայկական կողմին գոհացում տրվեր, ապա հետագայում թշնամիներն այլևս չէին կարող Գերմանիայի դեմ օգտագործել հայկական հիմնահարցը[11]:

Գերմանիայի կառավարությանն ուղղված ողջամիտ կոչերը չէին դադարում: Ապրիլի 2-ին կանցլերին ուղղված իր նամակում Քյոլնի արքեպիսկոպոս Հարթմանը նույնպես, շեշտելով 1915 թ. հայերի հալածանքների առնչությամբ աշխարհում բազմիցս ի հայտ եկած պնդումները Գերմանիայի համապատասխանատվության վերաբերյալ, նրան կոչ էր անում անել ամեն բան՝ հայերի հանդեպ թուրքական հետագա ոճրագործությունները կանխելու համար: «Ոչ միայն իմ հավատակիցների հանդեպ ցավակցությունը, այլև ամենից առաջ Գերմանիայի անվան պատվազրկման՝ իմ մտահոգությունն է ինձ դրդել այս ուղերձը հղել Ձերդ Գերազանցությանը»[12],- նշում էր նա:

Իսկ ապրիլի 13-ին Մոսկվայից, Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կողմից Չիչերինի և Կարախանի ստորագրությամբ, մի հեռագիր ուղարկվեց Գերմանիայի արտգործնախարարությանը. «Թուրքական զորամասերի կուտակումը կովկասյան ճակատում ուղեկցվում է հայ ազգաբնակչության զանգվածային ոչնչացմամբ,- նշվում էր հեռագրում: - ... Պայմանագիրը, որը մենք հարկադրված էինք Բրեստում ստորագրել, Արդահանի, Կարսի և Բաթումի շրջանների բնակչությանն է թողնում իրենց ճակատագրի ընտրությունը: Այդ շրջաններում տեղի ունեցող դեպքերն ապացուցում են, որ հայ ժողովրդի ոչնչացման 10 տարի ի վեր իրագործված քաղաքականությունը շարունակվում է նաև այժմ: Թուրքական ճակատում գերակշռությունը Ռուսաստանի կողմն էր, որը միայն այն պատճառով հարկադրվեց

---

[11] Անդ, էջ 478:

[12] Անդ, էջ 481:

հանձնել Արդահանը, Կարսը և Բաթումը, քանի որ Գերմանիան Թուրքիայի դաշնակիցն էր: Այն ոճրագործությունների պատասխանատվությունը, որոնց ենթարկվում է հայ ազգաբնակչությունը այսօր թուրքական զորամասերի կողմից գրաված տարածքներում, ընկնում է Գերմանիայի վրա, որի ուղղակի աջակցությամբ է Թուրքիան այդ շրջանները պահանջել: Արտաքին գործերի կոմիսարիատը... անհրաժեշտ է համարում, որ Գերմանիան արագ և եռանդուն կերպով միջամտի Կովկասում տեղի ունեցող դեպքերին՝ կանխելու համար խաղաղ բնակչության հետագա ոչնչացումն ու մորթումը, ինչպես դա Արդահանում է եղել»[13]:

Մեկ օր անց, ապրիլի 14-ին, Նիկողայոս Աղոնցի և Հակոբ Զավրիևի ստորագրությամբ նաև Հայոց Ազգային խորհրդի կողմից է մի հեռագիր ուղարկվում Գերմանիայի արտգործնախարարությանը, որտեղ դարձյալ շեշտվում էր կատարվող ոճրագործությունների համար Գերմանիայի համապատասխանատվության հանգամանքը: «Հայաստանը... նոր տառապանքների է մատնվել,- նշվում էր հեռագրում:- Ռուսական զորքերի նահանջն օգտագործելով՝ թուրքական զորքերը անմիջապես ներխուժեցին անպաշտպան երկիրը՝ բնաջնջման ենթարկելով ոչ միայն բոլոր թուրքահայերին, այլև ռուսահայերին: Հակառակ խաղաղության պայմաններին, որոնցով ճանաչվում է բոլոր կովկասյան շրջանների ինքնորոշման իրավունքը, թուրքական բանակը երկիրն ավերելով և քրիստոնյա բնակչությանը ոչնչացնելով՝ առաջանում է Արդահանի և Կարսի դեմ: Հայերի հետագա ճակատագրի պատասխանատվությունը ամբողջովին ծանրանում է Գերմանիայի վրա, քանի որ նրա պնդումով ռուսական զորքերը դուրս բերվեցին հայկական շրջաններից: Այժմ նրանից է կախված թուրքական զորքերին սովորական դարձած անկարգություններից ետ պահելը, որոնք տեղի են ունենում վրեժխնդրության և կատաղության հողի վրա: Դժվարությամբ կարելի է հաշտվել այն մտքի հետ, որ մի մշակութային պետություն, ինչպիսին Գերմանիան է, որն իր դաշնակցի՝ Թուրքիայի վրա ազդելու հնարավորություն ունի, կթույլատրի, որ Բրեստի խաղաղության պայմանագիրը հայ ժողովրդի համար, որը պատերազմի մեջ ներքաշվել է իր կամքին հակառակ, դառնա անհամար տառապանքների աղբյուր: Այդ պատճառով Ազգային խորհուրդը հավատում է, որ Դուք նոր սարսափներից առաջ հայ ժողովրդի պաշտպանության նպատակով թուրքական իշխանությունների դեմ կձեռնարկեք անհրաժեշտ և միայն Ձեզ համար հնարավոր միջոցառումները»[14]:

Մարտի 13-ին, իսկ այնուհետև նաև մայիսի 17-ին կանցլերին ուղերձներ հղեց նաև Հայաստանի օգնության շվեյցարական միությունը: Մեկ անգամ ևս հիշատակելով 1915 թ. հայ ժողովրդի զանգվածային սպանդը՝ միությունն իր տագնապն ու մտահոգությունն էր արտահայտում այն առնչությամբ, որ թուրքական լրատվամիջոցները հասարակայնությանը տեղի ունենալիքի մասին ճիշտ նույն ձևով էին նախապատրաստում, ինչպես 1915 թվականին: «Առանձին հայ ղեկավարների իրական կամ կարծեցյալ դաժանությունները այնպես են ներկայացվում, որ եվրոպացի ըն-

[13] Անդ, էջ 483-484:

[14] Պետքարտուղարի տեղակալը, հեռագիրն իր հերթին ուղարկելով Կ. Պոլսի գերմանական դեսպանին, նրան հրահանգում էր այդ մասին տեղեկացնել թուրքական կառավարությանը և միաժամանակ վերջինիս մատնացուցել թուրքական կողմի «գործելակերպի վտանգավորությունը»:

թերցողը մնացյալ ամեն բան պետք է ըմբռնի որպես թուրքական կայսրության ինքնապաշտպանություն,- նշվում էր մայիսի 17-ի ուղերձում:- 1915 թ. այնպես եղավ, որ այդ «օրինական ինքնապաշտպանությունը» հասցրեց մինչև հարյուր հազարավոր կանանց ու երեխաների ոչնչացմանը: Սարսափելի մոտ է այն եզրակացությունը, որ 1918 թվականին հետևելու են նույն նախերգանքն ու վերջաբանը: ... Մենք չենք կարող հավատալ, որ Գերմանիայի պաշտպանությունը ձեռք բերելու բոլոր խնդրանքները պետք է զուր լինեն, ... որ Գերմանիայի կողմից պաշտպանված Թուրքիան իր՝ գերմանական սպաների կողմից ղեկավարվող բանակն օգտագործում է քրիստոնյաներին ամենանողկալի ձևով հալածելու համար: ... Մենք համոզված ենք, որ քրիստոնյա գերմանական կայսրությունը Արևելքի քրիստոնյաների հանդեպ իր պատասխանատվությանը գիտակից է և իրեն թույլ չի տա թուրքական ժխտումների հիման վրա սպասել: Մեր այդ հույսի չիրականացումը Շվեյցարիայում, որտեղ բողոքականներն ու կաթոլիկները երկյուղ են ապրում հայերի համար, զգետնող տպավորություն կգործի, առաջին հերթին հենց Շվեյցարիայի ժողովրդի այն հատվածի մոտ, որը Գերմանիայի հանդեպ ըմբռնում ունի և նրա հակառակորդների պրոպագանդայի համար մատչելի չէ»[15]:

Ինչևէ, չնայած հայության հանդեպ թուրքական բանակի կողմից իրագործվող վայրագությունների վերաբերյալ բոլոր տեղեկություններին և նախազգուշացումներին, պաշտոնական Գերմանիան, ինչպես նշվեց, փորձում էր բացառապես դիվանագիտական խողովակներով ազդել թուրքական պաշտոնական շրջանների վրա: Դրա վկայությունն է, օրինակ, պետքարտուղարի տեղակալի կողմից ապրիլի 15-ին դեսպանին ուղարկված հեռագիրը, որտեղ վերջինիս հանձնարարվում էր ստուգել թուրքական կողմի նորագույն ոճրագործություններին վերաբերող տեղեկությունների իսկությունը և միաժամանակ անձամբ հաղորդումներ կատարել թուրքական կողմից զրավված տարածքներում տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ: «Քանի որ Բրեստի պայմանագրի՝ Կարսին, Արդահանին և Բաթումին վերաբերող որոշումը Թուրքիայի համար մենք ենք ուժի մեջ մտցրել,- նշում էր Բուշեն,- մենք կհայտնվենք ծայրահեղ անախորժ դրության մեջ, եթե այժմ բարձրացված մեղադրանքները համապատասխանում են իրականությանը: Մենք պարտավոր ենք պահանջել, որ Թուրքիան մեղմ վարվի քրիստոնյա բնակչության հետ և ամեն տեսանկյունից հարգի նրանց իրավունքները: Նաև մենք իրավունք ունենք պահանջել, որ թուրքերը մեզ իրազեկեն նշված տարածքներում տեղի ունեցող ամեն բանի մասին: Ձերդ Գերազանցությունը պետք է այդ նպատակով մեծ վեզիրի և արտգործնախարարի հետ զրուցի և Թալեաթ փաշային հիշեցնի Բուխարեստից վերադարձից հետո հայերի համար համաներում արձակելու իր խոստումը: Ներկա պահին այդ միջոցառումը մեզ խոստանում է հանգստացուցիչ ազդեցություն գործել ամենուրեք արդեն ուժգին զգոված հասարակական կարծիքի վրա: Այն չպետք է անտեսի նաև նախկին ռուսական տարածքներում բնակվող հայերին»[16]:

Դեսպանը ճշգրտորեն կատարում է հանձնարարությունը՝ մեծ վեզիրին տեղե-

---

[15] Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...., էջ 499-500:

[16] Deutschland und Armenien 1914-1918..., էջ 379:

կացնելով, որ եթե Թուրքիան կամենում էր, որ Գերմանիան աջակցեր Կովկասում Թուրքիայի քաղաքականությանը, ապա պետք է գերմանական կողմին երաշխիք տար հայկական խնդրի առնչությամբ։ Թալեաթը իսկույն նեթ նրան հավաստիացնում է, որ այդ հարցին վերաբերող նրա խոստումն այլևս կարող է զաղտնի չպահվել, որ նա դեսպանին լիազորում է արտգործնախարարությանը տեղեկացնել համաներման մոտալուտ հրապարակման մասին՝ միաժամանակ ավելացնելով, որ ինչպես համաներումը, այնպես էլ դրա հետ միասին խաղաղ հայ բնակչությանը դրամական փոխհատուցման և հայրենիք վերադառնալու իրավունքի տրամադրման հարցերի կանոնակարգումը նախապատրաստման փուլում են գտնվում[17]։

Չբավականանալով այդ հաղորդումով՝ ԱԳՆ-ն ապրիլի 26-ին պահանջում էր այդ համաներման հրապարակումից առաջ իրեն տեղեկացնել, թե արդյոք վերադարձի իրավունքը միայն աքսորյալների՞ն, թե՞ նաև Ռուսաստան փախած հայերին էր վերաբերում, և արդյոք ի՞նչ նպատակների համար էր նախատեսված փոխհատուցում կատարել[18]։

Դեսպանը այդ հարցի առնչությամբ նոր հանդիպում է ունենում Թալեաթի հետ, որը տեղեկացնում է, թե համաներումը միայն Թուրքիայում գտնվող հայերին է վերաբերելու, քանի որ երկրում չգտնվողներին ետ վերադարձնելը «վտանգավոր» կլիներ։ Իսկ ինչ վերաբերում էր դրամական նվիրատվությանը, ապա այն իբրև թե պետք է կատարվեր ունեզրկված հայերի կրած վնասների փոխհատուցման համար։ Ինչպես Թալեաթն էր նշում, հայերը ըստ հնարավորին պետք է ընտրություն կատարեին իրենց նախկին ունեցվածքի և մի որոշակի դրամագլխի միջև[19]։

Ուշագրավ է, որ Թալեաթի պատասխանը չէր բավարարում գերմանական ԱԳՆ-ին, որը ցանկալի էր համարում հայրենիք վերադառնալու թույլտվություն տալ նաև բռնազաղթած հայերին։ Այդ նպատակով մայիսի 6-ին ԱԳՆ-ն նոր հեռագիր է ուղարկում դեսպանին՝ նրան հանձնարարելով գեներալ Լոսովին առաջարկել, որ նա, իբրև իրեն տրված հրահանգների փաթեթի հավելում, փորձի արտագաղթածներին վերադարձի թույլտվություն տալու վերաբերյալ թուրքական «տարակույսները» հաղթահարել։ Նշելով, որ նրանց դեպի Թուրքիա վերադարձի թույլտվության հատկացման ցանկությունը հայկական կողմն է արտահայտել՝ ԱԳՆ-ն այդ առնչությամբ ավելացնում էր, որ այդ հայերի՝ Կովկասում կուտակված լինելը հողի ու կենսամիջոցների բացակայության պայմաններում կհանգեցներ ընդհարումների տեղի ոչ հայկական բնակչության հետ[20]։

Գերմանիան Թուրքիայի հետ իր դիվանագիտական երկխոսության ընթացքում պարբերաբար ընդգծում էր կնքված պայմանագրերիցածանցվող պարտավորությունների պահպանման և տեղական բնակչության նկատմամբ վայրագությունների բացառման անհրաժեշտությունը։ Բաթումի բանակցությունների նախօրեին, ապրիլի 30-ին, գերմանական ԱԳՆ-ի կողմից բանակցություններին մասնակցող գերմանա-

[17] Անդ, էջ 380։

[18] Անդ։

[19] Անդ, էջ 380-381։

[20] Անդ, էջ 382։

կան ներկայացուցչությանն ուղղված ցուցումների 3-րդ կետում մասնավորապես նշվում էր, որ թուրքական կառավարությանը հարկավոր էր դրդել, որ նա Բրեստի պայմանագրով Թուրքիային տրված այն տարածքներում, որտեղ հայերը փակ համայնքներում էին ապրում, նրանց տեղական ինքնավարություն, իսկ երկրի մյուս շրջաններում իրենց եկեղեցական և մշակութային գործերը կարգավորելու լիարժեք ազատություն տրամադրեր[21]:

Թուրքական կառավարությունը, Գերմանիայի նախազգուշացումների և առաջարկների առնչությամբ տալով համապատասխան հավաստիացումներ, սակայն քաջ գիտակցելով, որ Գերմանիան վերոնշյալ խնդիրների պատճառով երբևէ ուժի դիրքերից չէր խոսի և չէր վտանգի երկու երկրների դաշնակցային հարաբերությունները, ոչ միայն այդ առաջարկների իրականացման ուղղությամբ որևէ գործուն քայլ մտադիր չէր ձեռնարկել, այլև, ընդհակառակը, շարունակում էր խորանալ հայկական տարածքներում՝ առաջանալով դեպի Երևան[22]:

«Հայերի հետ բանակցելու որևէ շարժառիթ չկա,- արդեն ապրիլի 13-ին ԱԳՆ-ին հաղորդում էր Կ. Պոլսի դեսպան Բեռնշտորֆը,- քանի որ թուրքերի՝ անակնկալ արագությամբ հաջորդող ռազմական հաջողությունները նրանց դարձրել են իրենց նախկին տարածքի, ինչպես նաև Բաթումի, Արդահանի և Կարսի սանջակների մեծագույն մասի տերը: Կովկասի հարավային շրջաններում ապրող հայերի հետ բանակցությունները ինքնին կսկսվեն, քանի որ այդ դեպքում հարցը վերաբերում է նաև Կովկասյան հանրապետությանը»[23]:

Երբ թուրքական բանակը Բրեստի պայմանագրով իրենց հատկացված տարածքների զավթումից հետո շարունակեց առաջանալ, գերմանական կողմում, որն ակնհայտորեն այդ հանգամանքի հետ հաշվի չէր նստել, ի հայտ եկան լուրջ տագնապներ և անհանգստություններ նաև այն պատճառով, որ Գերմանիան թուրքերի առաջխաղացմամբ և զրավումներով վտանգված էր տեսնում նաև Անդրկովկասում իր սեփական տնտեսական շահերը: «Թուրքական՝ չափ չճանաչող պահանջը,- մայիսի 15-ին հեռագրում էր գեներալ ֆոն Լոսովը,- նաև Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Երևանի զուտ հայկական շրջանների, Բրեստի պայմանագրի շրջանակներն էապես գերազանցող տարածքների զրավման, միայնակ կերպով Կովկասի տնտեսական շահագործման և Անդրկովկասում նույնպես հայերի լիովին բնաջնջման նպատակ է հետապնդում:

Թուրքերը, առանց ինձ նախապես տեղեկացնելու և իմ համաձայնությունը ստանալու, ամսի 13-ի երեկոյան վերջնագրի ձևով պահանջել են իրենց տրամադրել

---

[21] Անդ, էջ 381:

[22] Թուրքական դեմագոգիան որևէ սահման չէր ճանաչում: Հատկանշական է, որ մարտի կեսերին, երբ Թալեաթը խոստանում էր, այսպես կոչված, «համաններում» և վերադարձի հնարավորություն տրամադրել աքսորյալներին, 4-րդ բանակային կորպուսի հրամանատար Ալի Իհսան փաշան իր տարածաշրջանում, մասնավորապես Մամուրեթ-ուլ-Ազիզի վիլայեթում, տեղահանում և վտարում էր հայերի վերջին մնացորդներին: Չնայած մայիսի 15-ին կանցլերը և դեսպանությունը Հալեպի հյուպատոս Ռոսլերի միջոցով տեղեկացվեցին այդ մասին, այնուհանդերձ համապատասխան եզրահանգում կատարելու ցանկություն չդրսևորեցին: Deutschland und Armenien 1914-1918..., էջ 383:

[23] Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...., էջ 483:

Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Ես դրա դեմ բողոքել եմ: Իմ միջնորդական առաջարկությունը, որի հիման վրա կարևորագույն և ամենահրատապ հարցերը սկզբունքորեն մեկ ժամում կարելի է կարգավորել, հետևյալն է.

Թուրքերը պետք է Բրեստի պայմանագիրը ճանաչեն որպես հիմք:

Թուրքական մեծամտությունը շոյելու և նրանց ետդարձը դյուրացնելու համար Ախալցխայի մահմեդական շրջանը սահմանների կարգավորման ձևով փոխանակվում է Բաթումից հյուսիս ընկած վրացական տարածքի և Կարսի շրջանի զուտ հայկական արևելյան մասի հետ, ընդ որում՝ Կարսի ամրոցը մնում է թուրքերին...»[24]:

Գեներալ ֆոն Լոսովն այնուհետև ավելացնում էր, որ հենց որ այդ առաջարկն ընդունվի, գերմանացիների վերահսկողության ներքո Կարս-Ջուլֆա հատվածում թուրքական զորքերի փոխադրումը կարող էր սկսվել: Այդ պատճառով նա խնդրում էր ուղարկել մի հանձնաժողով, որն իր հետ միասին Թիֆլիսում կզբաղվեր երկաթուղուն առնչվող խնդիրներով, ինչպես և մի գերմանական գումարտակ, որը Ալեքսանդրապոլից մինչև Ջուլֆա բոլոր կայարաններում կստանձներ կարգ ու կանոնի վերահսկումը: Դա, նշում էր նա, համապատասխանում էր նաև կովկասցիների ցանկությանը և նրանց պահանջն էր, քանի որ նրանք թուրքերի հանդեպ մեծ անվստահություն ունեին ու վճռականաբար մերժում էին թուրքական կողմից երկաթուղու ղեկավարումը կամ դրա վրա ազդեցություն ունենալը:

Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Բեռնշտորֆն իր հերթին այդ առնչությամբ հավելում էր, որ Հալիլը, Վեհիբը իր հետ սկզբունքորեն նույն կարծիքին են, սակայն Էնվերը շարունակում է իր տեսակետը պնդել և պահանջում էր իսկույննեթ վերջնագիր ներկայացնել: «Եթե Կովկասում պետք է խուսափել մի նոր արյունահեղ պատերազմի բռնկումից, այդ առնչությամբ նշում էր Բեռնշտորֆը, ապա դեսպանը պետք է մեծ վեզիրին անհապաղ հայտարարի, որ գերմանական բանակի գլխավոր հրամանատարությունը Էնվերի պահանջը բնավ չի կարող պաշտպանել և բողոք է բարձրացնում դաշնակիցների շահերը ծանր կերպով վնասող թուրքական գործելակերպի դեմ»[25]:

Գերմանական կառավարությունը, սակայն, հակված չէր ընդունելու ֆոն Լոսովի առաջարկը և Թուրքիային պարտադրելու պահպանել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանները, մինչդեռ հայկական կողմը իրադրության վատթարացմանը զուգընթաց ավելի և ավելի էր փորձում ապավինել Գերմանիայի աջակցությանը թուրքական նոր վայրագությունները և կոտորածները կանխելու համար: Այդ նպատակով Հայոց ազգային խորհրդի կողմից ապրիլի երկրորդ կեսին մի պատվիրակություն է մեկնում Բեռլին, որի կազմում երեք անձինք էին՝ Ա. Ջամալյանը, Գ. Մելիք-Կարագյոզյանը և Լ. Նազարյանցը:

Դեռ մինչև Բեռլին հասնելը պատվիրակությունը «քաղաքակիրթ աշխարհին» ուղղված մի սրտառուչ կոչ է ուղղում, որը ապրիլի 20-ին հրապարակվում է Լիոնի ռադիոհաղորդագրությամբ: «Վերջին երեք օրերի կոտորածներից ու արտաքսումներից հետո, որոնք այնպիսի վայրագությամբ և դաժանություններով իրագործվեցին, ինչպես մինչ այդ պատմությունը չէր տեսել, ...Հայաստանը կանգնած է մի նոր աղե-

[24] Անդ, էջ 497-498:

[25] Անդ, էջ 498:

տի առաջ, որը հանդիսանալու է թուրք կառավարողների կամքով մի ամբողջ ժողովրդի բնաջնջման ավարտը: Բոլոր վայրերում, որտեղ նրանք մուտք են գործում, հայերին սիստեմատիկ կերպով մորթում են: Արդյոք քաղաքակիրթ աշխարհը թույլ կտա՞, որ բազմահազար ծերերը, այրիներն ու որբերը շարունակեն մատնվել այդ բռնակալներին, որոնց ձեռքերը դեռ կարմիր են իրենց հայրերի, եղբայրների և երեխաների արյունով: Նահատակների անունից, որոնց ոսկորները ծածկում են Հայաստանի դաշտերը, ամենասուրբ զգացումների, արդարության, մարդկայնության և առաքինության անունից, կանանց և անպաշտպան երեխաների անունից պատվիրակությունը իր կոչն է ուղղում բոլոր քաղաքակիրթ ժողովուրդներին, որպեսզի նրանք իրենց ձայնը բարձրացնեն, քանի դեռ չափազանց ուշ չէ, և որպեսզի նրանք իրենց միջամտությամբ արգելեն, որ շարունակվի մի հին ազգի ոչնչացումը, որն այնքան ծառայություններ է մատուցել քաղաքակրթությանը, որն իր աշխատանքով և բնական ձիրքերով հանդիսանում է առաջադիմության տարր և հարյուրամյակներ ի վեր լավագույն միջնորդն է եղել Արևմուտքի մշակույթի ու Արևելքի ժողովուրդների միջև»[26]:

Բեռլին հասնելուց հետո, ապրիլի 28-ին, նրանք մի ուղերձ են հանձնում ԱԳՆ-ին, որտեղ գերմանական կառավարության ուշադրությունը հրավիրում էին հայության ճգնաժամային դրության վրա և խնդրում ազդու կերպով միջամտել՝ արգելելու համար ինչպես հայերին, այնպես էլ Կովկասի տարածքի բարօրությանը սպառնացող աղետը: Հաջորդ օրը պատվիրակությունը ԱԳՆ-ին ուղղված մեկ այլ նամակում ընդգծելով, որ միայն Գերմանական կայսրությունն էր ի վիճակի կասեցնել թուրքական ոճրագործությունները, մատնանշում էր այն միջոցառումները, որոնց իրագործման դեպքում հնարավոր կլիներ ապահովել Կովկասի հայ բնակչության անվտանգությունը: Ըստ այդմ, նախ անհրաժեշտ էր իսկույնևեթ կանգնեցնել թուրքական բանակի առաջխաղացումը, այնուհետև իրագործել Կարսի, Արդահանի և Բաթումի բնակչության ինքնորոշման իրավունքը այն կարգով, որ ազգային պատկանելության գործոնը հաշվի առնվեր և քվեարկության իրավունք տրվեր նաև փախուստի դիմած բնակիչներին: Բացի այդ, հարկավոր էր թուրքերին արգելել որևիցե պատրվակով խախտել Բրեստի պայմանագրով վճռված սահմանները: Թուրքերը իրավունք չպետք է ունենային միջամտել Կովկասի ներքին գործերին: Ապահովել այն հայերի անվտանգությունը, որոնք բնակություն կհաստատեն Թուրքահայաստանում կամ կցանկանան վերադառնալ այնտեղ գտնվող իրենց բնակավայրերը: Այնուհետև ընդգծելով, որ առաջին երեք առաջարկները համապատասխանում էին Բրեստի պայմանագրի որոշումներին՝ պատվիրակության անդամները հույս էին հայտնում, որ պայմանագիրը ստորագրած Գերմանիան նրա ոտնահարումը չէր հանդուրժի: Վերջում պատվիրակությունը խնդրում էր՝ առանց ժամանակ կորցնելու մի գերմանական հանձնաժողով ուղարկել տեղում իրադրությունը քննելու, վերոնշյալ առաջարկներին ընթացք տալու և վերահսկողություն իրականացնելու համար[27]:

Մայիսի 4-ին պատվիրակությունը հայության արդի վիճակի և փախստականների

---

[26] Անդ, էջ 486-487:

[27] Անդ, էջ 487-488:

վերադարձի հարցի վերաբերյալ նաև մի հուշագիր է ներկայացնում ԱԳՆ-ի գաղտնի խորհրդական Գյոպերտին՝ միաժամանակ խնդրելով նրա միջնորդությունը կանցլերի հետ տեսակցություն ունենալու համար: Հուշագրում հակիրճ և ազդու կերպով ներկայացնելով այն ողբերգությունները, որոնք հայությունն ապրել էր ինչպես Երկրորդ աշխարհամարտի բռնկումից հետո, այնպես էլ թուրքական վերջին ներխուժման օրերին, պատվիրակությունը դարձյալ Գերմանիայի աջակցությունն էր հայցում թուրքական զորքերի դեմ հուսահատ պայքար մղող հայությանն օգնելու համար: «...Մեր ժողովրդին առանձնակի ցավ պատճառեց, որ այդ անմարդկայնությունները կատարվում են Գերմանիայի դաշնակցի կողմից,- նշվում էր ուղերձում,- Գերմանիայի, որին մենք սովորել էինք ակնածանքով վերահայաց նայել, որի մեծ մշակույթը մեզ համար այնպես օրինակելի և ուղենշային էր, ինչպես Առաջավոր Ասիայի ոչ մի այլ ժողովրդի համար չի եղել, որի լեզուն մեր դպրոցներում առանձնահատուկ սիրով էր ուսուցանվում, որի համալսարաններում մեր ամենանշանակալից անձինք ստացել են իրենց կրթությունը, և որի հայերեն թարգմանված գիտական և բանաստեղծական բազմաթիվ գործերը մեր մտավորականության ամբողջ սերունդներ են ոգեշնչել ու կրթել...»[28]:

Հուշագրի հեղինակներն ընդգծելով, որ թուրքական կառավարությունը ձեռնամուխ էր եղել հայ ժողովրդի լիակատար բնաջնջմանը, գերմանական կառավարության ուշադրությունը հրավիրում էին նաև այն հանգամանքի վրա, որ թուրքական զորքերի դեմ հայ ժողովրդի հուսահատ և վճռական պայքարը կարող էր վերածվել անանցանելի լեռներից մղվող փոքրամասշտաբ, սակայն տևական պատերազմի, որի հետևանքները անհնար էր կանխատեսել:

Կանցլերի հետ պատվիրակության տեսակցության խնդրանքը, իհարկե, մերժվեց: Նրանք կարողացան հանդիպել միայն ԱԳՆ-ի պետքարտուղարի տեղակալին և գաղտնի խորհրդական Գյոպերտին: Իսկ թե ինչպիսին էր Գերմանիայի պաշտոնական պատասխանը, ցույց է տալիս այդ առթիվ Գյոպերտի կողմից մայիսի 21-ին հեղինակված նոթագրությունը: Նա զրույցի ժամանակ պատվիրակությանը տեղեկացրել էր, որ թուրքերի կողմից «ռազմական պատճառներով» Արդահանի, Կարսի և Բաթումի սահմաններն անցնելը գերմանական զինվորականության կողմից համարվել է «իրավացի», և որ «այս ու այնտեղ» հայերի հետ տեղի ունեցած ընդհարումների առնչությամբ թուրքական կառավարության հետ տեղի է ունենում հեռագրերի փոխանակություն: Միաժամանակ Գյոպերտը պատվիրակության անդամներին հայտնում է, որ մոտակա շրջանում Կովկաս է ուղարկվելու Թուրքիայի ու թուրքերի լավ գիտակ զնդապետ բարոն ֆոն Կրեսը, որին առանձնահատուկ կերպով խնդրվել է զբաղվել հայերի հարցերով, և հայ պատվիրակները հայրենիք վերադառնալուց հետո կարող են հարկ եղած դեպքում դիմել նրան, ինչպես և գեներալ ֆոն Լոսովին[29]:

Հայոց ազգային խորհուրդը կարիք չուներ, իհարկե, սպասել Գյոպերտի ցուցումներին՝ գեներալ ֆոն Լոսովին դիմելու համար: Բաթումի բանակցություններին մասնակցող հայ պատվիրակները բազմիցս հանդիպումներ են ունենում գեներալ Լոսովի

[28] Անդ, էջ 495:

[29] Deutschland und Armenien 1914-1918..., էջ 388:

հետո, որը նույնպես մասնակցում էր բանակցություններին, և մինչև իսկ խնդրում են նրան նվաճել Կովկասի հայկական շրջանները: «Մենք եղանք Լոսովի մոտ,- գրում են պատվիրակության խորհրդականներ Հ. Օհանջանյանը և Մ. Պապաջանյանը,- նրա օգնությունը խնդրեցինք հայերի պաշտպանության գործում: Նա խոստացավ այդ մասին հեռագրել Կայսր Վիլհելմին և խոստացավ խնդիր հարուցել զինվորներ ստանալու համար և ասաց, որ եթե հայերը որոշեն պատվիրակություն ուղարկել Գերմանիա, ապա ինքը նրան կվերցնի իր հետ: Առանձին հույսեր նա չտվեց... Մենք 23-ի զիշերը ուղարկեցինք գրավոր դիմում՝ խնդրելով օկուպացնել Կովկասի հայկական շրջանները»[30]:

Լոսովը, բնականաբար, որքան էլ ըմբռնումով էր մոտենում հայերի համար ստեղծված լրջագույն կացությանը, չէր կարող հույսեր տալ, քանի որ նա զինվորական էր, կատարող և նույնիսկ մեծագույն ցանկության դեպքում, բայց առանց համապատասխան հրահանգների չէր կարող կոշտ միջամտության նախաձեռնություն հանդես բերել: Եվ, այնուամենայնիվ, ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, նա իրապես հայ պավիրակներին կեղծ խոստումներ չէր տվել և գերմանական կառավարությանն ուղղված իր բարեխիղճ ու մանրազնին տեղեկատվության միջոցով ձգտում էր ձեռք բերել այդ հրահանգները: Ինչպես տեղեկացվում էր նրա՝ ԱԳՆ-ին ուղղված մայիսի 23-ի հեռագրում, անդրկովկասյան պատվիրակության հայ ներկայացուցիչները մի շարք այլ հայ վստահված անձանց հետ միասին իր հետ արդեն բազմիցս հանդիպումներ էին ունեցել, ընդունել էին, որ մինչև պատերազմը իրենք քաղաքականապես դեպի Ռուսաստանը և Անգլիան էին կողմնորոշվել, ինչի համար, սակայն, ինչպես գեներալն էր նշում, նրանց մեղադրել չէր կարելի: Նրանք ֆոն Լոսովին միաժամանակ հանդիսավորապես վստահեցրել էին, որ եթե հայերի փրկությունը Գերմանիայի միջոցով տեղի ունենա, ապա իրենք ընդմիշտ կապված կլինեն Գերմանիայի հետ: Դա մատնանշելով որպես կարևոր նախադրյալ՝ հայկական հարցի առնչությամբ ողջ աշխարհում Գերմանիայի դեմ տարվող պրոպագանդան «մեկ հարվածով» չեզոքացնելու համար՝ գեներալը դարձյալ կառավարության ուշադրությունը հրավիրում էր հայերի համար ստեղծված ճգնաժամային իրադրության վրա: «Ինչպես ես շարունակ տեղեկացնում եմ, թուրքական քաղաքականության նպատակը հայկական շրջանների մշտական գրավումը և հայերի բնաջնջումն է: Թալեաթի և Էնվերի բոլոր երկուստեք հավաստիացումները կեղծ են: Կոստանդնուպոլսում հաղթանակել է ծայրահեղ հակահայկական ուղղությունը: Թուրքական ծրագիրն այսօր պարզ է. նրանք վստահ են, որ կստանան Ախալցխայի մահմեդական շրջանը: Ախալքալաքի լիովին հայկական շրջանը նրանք փորձում են փաստերը քողարկելով ներկայացնել որպես Ախալցխայի շրջանին պատկանող տարածք: Ալեքսանդրապոլ քաղաքը նրանք գրավել են: Նրանք ուզում են զավթել դեպի Ջուլֆա տանող երկաթուղին՝ ներառյալ երկաթուղուց դեպի հարավ ընկած 25 կիլոմետրանոց մի գոտի՝ այն երբեք չվերադարձնելու համար, թաթար բնակչության համաձայնությամբ զավթել Ելիզավետպոլի և Բաքվի նահանգները, միաժամանակ շարժվել դեպի Բաքու՝ այնտեղի բոլշևիկներին քշելու և այնտեղ ամրանալու համար: Ճակատում՝ Ախալքալաքից հա-

30 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, էջ 112:

բավ գտնվող թուրքական զորամասերը առաջանում են Թիֆլիսի և Երևանի դեմ: Քուրդ և թաթար կամավորները, որոնք ուղեկցում են բանակին, բնակավայրերում թալանում և սպանում են հայերին: Բոլոր տղամարդիկ տարվում են: Հայկական զորամասերը նահանջում են դեպի արևելք՝ առճակատումներից խուսափելու համար: Հայ բնակչությունը փախչում է դեպի արևելք, շուտով ստիպված կլինի հանդիպել թաթարներին, ինչը պետք է կոտորածների հանգեցնի: Հայ բնակչության համար այլևս տեղ չի մնում, որի վրա նա կարողանա ապրել: Դա պետք է հասցնի պարտիզանական կռվի, որը Ալեքսանդրապոլ-Ջուլֆա գծի վրա անհնար է դարձնելու փոխադրումն ու մատակարարումը, որոնք մեր շահերից են բխում: Ես ենթադրում եմ, որ թուրքերը հենց այդ դիտավորությունն ունեն: Հայոց ազգային խորհրդի կողմից լիազորված պատվիրակությունը խնդրում է Գերմանիայի պաշտպանությունը հայ ժողովրդի լիովին բնաջնջումը կասեցնելու համար, խնդրում է հայկական տարածքի մնացորդը գերմանական հովանավորության տակ վերցնել: Այդ մասին պաշտոնական գրությունը իմ ձեռքում է: Անհրաժեշտ է Թուրքիայի վրա իսկույնևեթ հաստատուն ճնշում գործադրել, եթե հայերի բնաջնջումը պետք է արգելվի: Խնդրում եմ հնարավորինս շուտ մի ռազմանավ ուղարկել, մի գումարտակ դեպի Փոթի և հրահանգներ հայկական պաշտոնական պարզաբանման վերաբերյալ: Անհրաժեշտ է անհապաղ գործել»[31]:

Գեներալ ֆոն Լոսովը, որը փոքր-ինչ ավելի ուշ Թիֆլիս ժամանած զնդապետ Կրեսի հետ միասին ակնհայտորեն թուրքական կողմին հակազդելու գերմանական բանակի ամենաարմատական թևն էր ներկայացնում, վերոնշյալ հաղորդագրությունից մեկ օր առաջ մեկ այլ հեռագրով արդեն տեղեկացնում էր, որ թուրքական արշավանքի հետևանքով Անդրկովկասյան կոնֆեդերացիան փլուզվել էր, Ելիզավետպոլում և մյուս թաթարական շրջաններում թուրքական դրոշներն էին բարձրացված, և որ թուրքական կանոնավոր ու անկանոն ուժերն արշավում էին Երևանի վրա: «Կոստանդնուպոլսի նոր թուրքական իմպերիալիզմի նպատակը ամբողջ Կովկասի նվաճումն է,- հայտարարում էր նա իր հեռագրում,- Թալեաթի և կոմիտեի նպատակը հայերի լիակատար բնաջնջումն է, Կոստանդնուպոլսում պատերազմի վաշխառուների նպատակը Թուրքիայի կողմից գրաված կովկասյան պետությունների հյութաքամումն է: Դեպի Պարսկաստան զորքերի փոխադրումները միայն պատրվակ են թուրքական բոլոր պահանջները հարկադրելու համար: Թուրքերը ... ուզում են Կովկասը թալանել առանց որևէ գերմանական...» [32]:

Այնուհետև տեղեկացնելով, որ Վրաստանը մայիսի վերջին իր անկախությունը հռչակելով՝ արտգործնախարար Չխենկելիի միջոցով պաշտոնապես խնդրելու էր Գերմանիայի հովանավորությունը, և որ հայկական պատվիրակությունը գերմանական կայսերը և Թուրքիայի քրիստոնյա դաշնակիցներին աղերսագին կերպով խնդրում էր հայ ազգաբնակչությանը ջարդերից պաշտպանել, ֆոն Լոսովը ցուցում-

---

[31] Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel ”Deutschland und Armenien” herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke, zusammengestellt und eingeleitet von Wolfgang Gust. Տե՛ս ինտերնետային ցանցում. http:/home.t- online.de/home/wolfgang.gust/dvita.htm., Թիվ 395. փաստաթուղթը:

[32] Բնագրում միտքը մնում է անավարտ: Տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...., էջ 501:

ներ էր խնդրում Վրաստանի խնդրանքի հանդեպ դիրքորոշում ցուցաբերելու համար։ Անձամբ նպատակահարմար համարելով բավարարել Վրաստանի խնդրանքը, որի միջոցով Կովկասում Գերմանիայի ներկայությունը կապահովվեր, իսկ թուրքերի՝ Վրաստանում ամրանալու հավանականությունը կբացառվեր, Լոսովը մտահոգվում էր, որ հայերը նույնպես կամենում էին անկախացումից հետո Վրաստանի նման խնդրել Գերմանիայի հովանավորությունը։

Հատկանշական է, որ մայիսի 23-ին ֆոն Լոսովի հեռագիրն ուղարկելով ԱԳՆ՝ դեսպան Բեռնշտորֆը նշում էր, որ գեներալ ֆոն Զեկտը արդեն կատարել էր համապատասխան բոլոր կարգադրությունները, որի պատճառով ինքն անձամբ ի վիճակի չի եղել Թուրքիայի կառավարության մոտ հաջողությամբ առարկություններ կատարել «այդ միջոցառումների» կապակցությամբ։ Միաժամանակ դեսպանը հավաստիացնում էր, որ կատարվածը չէր դատապարտում, այլ ավելի շուտ հակված էր ընդունելու ֆոն Զեկտի դիրքորոշումը։

Դժվար չէ նկատել, որ այստեղ հարցը վերաբերում էր թուրքական առաջխաղացման և ոճրագործությունների առնչությամբ գերմանական ռազմական ներկայացուցչության երկու տարբեր դիրքորոշումների, և ի տարբերություն ֆոն Լոսովի, որ Թուրքիայի դեմ հարկադրանքի միջոցառումներ գործադրելու կողմնակից էր, գեներալ ֆոն Զեկտը ներկայացնում էր գերմանական զինվորականության առավել լոյալ և հանդուրժողական թևը։ Եվ պատահական չէ, որ դեսպանը, որին չէր հաջողվել վերոնշյալ նախազգուշացումների ճանապարհով որևէ կերպ ազդել թուրքական կողմի վրա, պատասխանատվությունը իրենից վանում էր՝ անձամբ ևս իր համերաշխությունը հայտնելով ֆոն Զեկտի տեսակետներին[33]։ Դեսպանի մտահոգմամբ ներկա իրադրությունը չէր լինի, եթե կովկասցիները ժամանակին հետևեին անմիջապես խաղաղություն հաստատելու իր խորհրդին, մինչդեռ այժմ, ըստ նրա, դրա համար չափազանց ուշ էր։ Ըստ այդմ նա առաջարկում էր մի հերթական առևտուր կատարել Թուրքիայի հետ. թուրքական կառավարության կովկասյան քաղաքականության հարցում Գերմանիայի տևական աջակցությունը երաշխավորելու դիմաց Թուրքիայից պահանջել, որ նա գրավոր կերպով Կովկասում, որոշակի բնագավառներում Գերմանիայի տնտեսական շահերի գերակայությունն ընդունելու երաշխիքներ տար[34]։

Թուրքական ոճրագործությունների հանդեպ դեսպան Բեռնշտորֆի հանդուրժողական դիրքորոշումը առավել ընկալելի դարձնելու համար արժե թերևս նշել, որ երբ մայիսի վերջին Թիֆլիս ժամանեց զնդապետ (հետագայում՝ գեներալ) ֆոն Կրեսը, որը տեղի ունեցող իրադարձությունների և հայ ժողովրդին սպառնացող բնաջնջման վտանգի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվությանը զուգահեռ ԱԳՆ-ին ուղղված իր թղթակցություններում նաև այն տեսակետն էր զարգացնում, որ Գերմանիան պետք է հնարավորինս շուտ ազդու միջոցներ ձեռնարկեր թուրքերին կանգնեցնելու համար, դեսպանը ԱԳՆ-ին առաջարկում էր ֆոն Կրեսին հնարավորինս շուտ ուղարկել Կ. Պոլիս՝ նրա և ֆոն Զեկտի քայլերը համապատասխանեցնելու համար, որոնք «եթե ձեռք-ձեռքի տված» չաշխատեին, կարող էին ի հայտ գալ «անկանխատեսելի հե-

---

33 Անդ, էջ 501։

34 Անդ, էջ 502։

տեանքներ»[35]:

Ինչևէ, ինչպես վկայում են գերմանական դիվանագիտական տեղեկագրերը, գերմանական բարձրաստիճան զինվորականության մի նշանակալից մասը ամենևին էլ իրավացի չէր համարում թուրքական բանակի կողմից Բրեստի պայմանագրով նախատեսված սահմանների խախտումը, և Գյոպերտի կողմից հայ պատվիրակությանը տրված հավաստիացումն իրականությանը չէր համապատասխանում: Այնուհանդերձ, Գերմանիայի պաշտոնական քաղաքականությունը հեղինակվում և մշակվում էր կանցլերի գրասենյակում, որը ամենևին էլ մտադիր չէր հրաժարվել իր ավանդական քաղաքականությունից, այն է՝ Թուրքիայի հետ հարաբերությունները չվտանգել և միաժամանակ փորձել պաշտոնական ու ոչ պաշտոնական նախազգուշացումների միջոցով իրեն ապահովագրել թուրքական կառավարության ոճրագործությունների համար մեղսակից և համապատասխանատու համարվելու վտանգից: Դրա առավել ցցուն օրինակը կարելի է համարել գեներալ ֆոն Լոսովի վերոնշյալ ահազանգից հետո, մայիսի 26-ին, արտգործնախարարության կողմից Կոստանդնուպոլսի դեսպանին ուղղված հրահանգը, որտեղ նրան մասնավորապես հանձնարարվում էր Բ. Դռանը «բարեկամաբար, սակայն որոշակի ձևով, բանավոր կերպով» հայտնել, որ գերմանական կայսերական կառավարությունն իրեն վերապահում էր Կովկասում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները վերահսկելու իրավունք և պահպանում էր իր դիրքորոշումը Արդահանի, Կարսի և Բաթումի շրջանների ներսում կամ դրանցից դուրս իրագործված այն միջոցառումների առնչությամբ, որոնք չեն համապատասխանում Բրեստ-Լիտովսկի խաղաղության պայմանագրին: Հրահանգվում էր նաև հայտնել, որ կայսերական կառավարությունը Կովկասում թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը և նշված երեք շրջաններից դուրս թուրքական պրոպագանդայի իրականացումը չի կարող ո՛չ պաշտպանել և ո՛չ էլ հավանություն տալ դրանց, որ Գերմանիան վրացական կառավարությանը ճանաչում էր որպես օրինական կառավարություն և սկզբունքորեն ճանաչում էր Վրաստանի անկախությունը՝ օսմանյան կառավարությանը կոչ անելով նույնը անել և հարգել Վրաստանի սահմանները, իսկ Վրաստանի ճշգրիտ սահմանագծումը պետք է տեղի ունենար Գերմանիայի մասնակցությամբ: Ինչ վերաբերում էր Հայաստանին, ապա գերմանական կառավարությունը Օսմանյան կառավարությանը խնդրում էր Թուրքիայի կողմից գրաված տարածքներում ապահովել պատշաճ վերաբերմունք հայերի նկատմամբ և իրեն իրավունք էր վերապահում ավելի մանրամասն առաջարկներ կատարել այդ ուղղությամբ: Հրահանգի 5-րդ կետով Օսմանյան կառավարության ուշադրությունը հրավիրվում էր այն բանի վրա, որ Թուրքիան Գերմանիայի դեմ գոյություն ունեցող քաղաքական պայմանագրերից չէր կարող պաշտպանության կամ աջակցության պահանջներ բխեցնել այնպիսի ռազմական կամ դիվանագիտական գործողությունների համար, որոնք նա նախաձեռնում էր առանց Գերմանիայի համաձայնության կամ հակառակ Գերմանիայի խորհրդի: Գերմանիան այդօրինակ, ինքնիշխան կերպով սկսված ձեռնարկումները մերժում էր և պարտավոր էր հետևանքները թողնել Թուրքիայի վրա: Իսկ եթե ուժերի կամայական փոշիացման հետևանքով Թուրքիայի

[35] Անդ, էջ 511:

ընդհանուր դրությունը վատանար և պայմանագրային կարգով վավերացված նպատակները հարցականի տակ դրվեին, ապա Թուրքիան պետք է միայնակ կերպով հաշվի նստեր այդ իրադրության հետ: Նմանապես նաև Գերմանիան չէր կարող հետագայում քողարկել Թուրքիային, եթե նրա կողմից Կովկասի քրիստոնյա բնակչության նկատմամբ անկարգություններ կատարվեին:

ԱԳՆ-ն, բացի այդ, դեսպանին հանձնարարում էր գեներալ ֆոն Լոսովի հետ համաձայնեցմամբ Բ. Դռանը առաջարկներ կատարել Վրաստանի սահմանազծման և հայերի հանդեպ պատշաճ վերաբերմունքի ցուցաբերման առնչությամբ՝ նշելով, որ ԱԳՆ-ն չէր կարող բավարարվել հայերի վերաբերյալ թուրքական կողմից տրվող հավաստիացումներով, և որ անհրաժեշտ էր առնվազն գերմանացի սպաների կամ քաղաքացիական պաշտոնյաների միջոցով գրաքննության չենթարկված տեղեկատվություն ստանալ[36]:

Հատկանշական է, որ գերմանական կառավարությունը մի կողմից խուսափում էր վերոնշյալը Բ. Դռանը գրավոր կերպով ներկայացնել և կամենում էր բավարարվել միայն «բարեկամաբար, սակայն որոշակի ձևով, բանավոր կերպով կատարվող պարզաբանմամբ», մյուս կողմից՝ մայիսի 26-ին նույն տեքստը հեռագրում էր Վիեննա՝ առաջարկելով, որ նույնը աներ նաև Ավստրիայի կառավարությունը, որպեսզի թուրքական կառավարությանը պարզ դառնար, որ դա երկու դաշնակիցների միասնական մոտեցումն էր: «Մենք ո՛չ մեր սեփական ժողովրդի, ո՛չ էլ աշխարհի առաջ չենք կարող պատասխան տալ նրա համար, որ թողել ենք, որ Բրեստի պայմանագրի որոշումները, որոնք մեր օգնությամբ են ուժի մեջ մտցվել, չարաշահվեն որպես Կովկասի քրիստոնյաներին հալածելու ազատությունը երաշխավորող փաստաթուղթ»,- նշված էր Վիեննա ուղարկված հեռագրում»[37]:

Մայիսի 27-ին դեսպանն այդ առնչությամբ արդեն հանդիպում էր ունեցել մեծ վեզիրի, ԱԳ նախարարի և Էնվերի հետ, որոնք հերքել էին ֆոն Լոսովի արտահայտած տեսակետները՝ հայտնելով, որ իրենք մտադիր չեն նվաճել ամբողջ Կովկասը, այլ իրբև թե ուզում են հնարավորություն ունենալ իրենց զորքերը անվնաս ուղարկելու Պարսկաստան և Միջագետք: Նրանք դեմ չէին Վրաստանից ամբողջովին դուրս բերել թուրքական ուժերը, սակայն իրենց առաջխաղացումը պատրվակում էին այն հանգամանքով, որ կովկասցիները Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը երբևէ չէին ճանաչել, և որ իրենք նպատակ ունեին նրանց հարկադրել ճանաչել այն: Ինչ վերաբերում էր հայերին, ապա դեսպանը մատնանշում էր, որ այդ հարցը հեշտությամբ կկարգավորվի, երբ գերմանացի սպաներ կուղարկվեն Կովկաս:

Բեռնշտորֆը միաժամանակ առաջարկում էր իրեն լիազորել, հնարավորինս շուտ նախաձեռնել Կովկասի վերաբերյալ բանակցությունների սկսում դաշնակիցների և Թուրքիայի կառավարության միջև: Գնդապետ ֆոն Կրեսի՝ Թիֆլիս ժամանելուց հետո, նշում էր նա, դարձյալ հնարավորություն կստեղծվեր այնտեղից ուղղակի կերպով հավաստի տեղեկություններ ստանալ, որոնք կարող էին հիմք դառնալ բանակ-

---

[36] Անդ, էջ 502-504:

[37] Revidierte Ausgabe..., Տե՛ս 396-րդ փաստաթուղթը: Համտ. Deutschland und Armenien 1914-1918..., էջ 389-392:

ցությունների համար[38]:

Արտգործնախարարությունը հենց նույն օրը, մայիսի 27-ին, իր ընդառաջումն էր հայտնում առաջարկի կապակցությամբ՝ նշելով, որ բանակցությունների նպատակը Անդրկովկասյան կոնֆեդերացիայի, իսկ եթե վերջինս արդեն գոյություն չուներ, ապա Վրաստանի և Թուրքիայի միջև փոխհամաձայնության ձեռքբերումը պետք է լիներ, և բացի այդ, քանի որ հայկական հարցը նույնպես նշանակալից դեր պետք է խաղար, հայ պատվիրակները այդ բանակցությունների միջոցով իրենց հարցերն ավելի լավ կարող էին կարգավորել, քան Գերմանիա մեկնելով:

Այս խոսքերը ինքնին պարզորոշ վկայում են, թե որքան անօգուտ էին հայ պատվիրակների՝ Բեռլինում գործադրած ջանքերը: Իր առաքելությունը համարելով ավարտված և մայիսի 30-ին վերջին ուղերձը հղելով արտգործնախարարությանը՝ պատվիրակությունը վերադարձավ: Այնտեղ տեղեկացնելով, որ թուրքական զորքերն արդեն ներխուժել են Երևանի նահանգ և առաջանում են դեպի Երևան ու Էջմիածին՝ հեղինակները տեղեկացնում էին, որ եթե դաշնակիցները նրանց չկանգնեցնեն, ապա հայերը ստիպված կլինեն կենաց ու մահու պայքարի դուրս գալ, «և եթե նրանց հուսահատ դրությունը նրանց մղի հուսահատ ձեռնարկների, որոնք ամբողջ Կովկասը կվերցնեն բոցերի մեջ, ապա դրա պատասխանատվությունը իրենք չէ, որ պիտի կրեն»[39]:

Իսկ այն բանից հետո, նշվում էր ուղերձում, երբ թուրքերը բազմիցս գերմանական կառավարությանը խոստացել էին Կովկասի սահմանները չանցնել, մինչդեռ Բաթումի բանակցությունները չավարտված՝ դրժեցին իրենց խոստումը, այլևս հայերը ոչ մի հավատ չեն կարող ընծայել թուրքական խոստումների հանդեպ: Պատվիրակությունը նաև նախազգուշացնում էր, որ հակառակ պատերազմում չեզոք դիրքորոշում ունենալու իր մտադրությանը, հայկական կողմը հարկադրված էր լինելու ընդունել ցանկացած օգնություն, ո՛ր երկրի կողմից էլ որ դա ցուցաբերվեր, և ի վերջո դարձյալ իր հույսն էր արտահայտում առ այն, որ գերմանական կառավարությունը ազդու քայլերի կդիմեր թուրքական առաջխաղացումը կանգնեցնելու համար[40]:

Իսկ ինչպե՞ս էր պաշտոնական Գերմանիան կամ, ավելի շուտ, նրա դեսպանը հնարավոր համարում խնդրի կարգավորումը ստեղծված ծայրահեղ ճգնաժամային պայմաններում: «Երբ արդեն Կովկասյան հանրապետությունը լուծարվել է, իմ կարծիքով այլ բան չի մնում, քան Հայաստանը միացնել Վրաստանին՝ վերցնելով գերմանական զորքերի պաշտպանության ներքո,- գրում էր Բեռնշտորֆը մայիսի 31-ին: - Դրա համար, սակայն, պետք է առկա լինի փոխհամաձայնություն: Այլապես Կովկասում կբռնկվեն ռասսայական և կրոնական պատերազմներ, որոնք կշարունակվեն այնքան ժամանակ, մինչև այլևս ոչ ոք չի մնա: Թուրքերը բոլոր օրինական և անօրի-

[38] Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...., էջ 505: Գեներալ ֆոն Լոսովը, որը մինչ այդ գտնվում էր Բաթումում, կարճ ժամանակով մեկնել էր Կոնստանցա, իսկ գնդապետ ֆոն Կրեսը դեռ չէր ժամանել Թիֆլիս: Դեսպանի այդ տեղեկությունը կատարվել էր միայն հավուր պատշաճի, քանի որ Կովկասում գտնվող գերմանական զինվորականները, բնականաբար, նույնիսկ մեծ ցանկության դեպքում, չէին կարող գործել առանց հրահանգների, իսկ դրանք հետագայում էլ բացակայում էին:

[39] Անդ, էջ 510:

[40] Անդ:

նական միջոցներով կպայքարեն անկախ Հայաստանի գաղափարի դեմ: Նրանք չեն ուզում իրենց սահմանի մոտ մահացու թշնամի ունենալ: Կովկասի ներկայիս իրադրությունում կարելի է ընդունել, որ ամենուրեք, որտեղ հայերը թվական գերակշռություն ունեն, սպանելու են թուրքերին, և հակառակը նույնպես տեղի կունենա այնտեղ, որտեղ մեծամասնությունը թուրքեր են»[41]:

Վերոնշյալ տեսակետին հակառակ, թուրքական կառավարությունը ձգտում էր Հայաստանը տեսնել ոչ թե Վրաստանի, այլ Ադրբեջանի կազմում, անշուշտ, հասկանալի է, թե ինչ պատճառներով: Ինչպես Կ. Պոլսի գերմանական դեսպանը ԱԳՆ-ին տեղեկացնում էր իր՝ հունիսի 1-ին ԱԳՆ առաքված տեղեկագրում, Թալեաթը և Էնվերը իրեն իրազեկել էին, թե Հալիլը խաղաղություն էր հաստատել Վրաստանի և, այսպես կոչված, «Հարավկովկասյան հանրապետության հետ», որի բնակչությունը պետք է «բաղկանար հայերից և թաթարներից»[42]:

Եթե նույնիսկ դեպքերից առաջ անցած Թալեաթի և Էնվերի այդ տեղեկությունը իրականությանը չէր համապատասխանում, ապա ամեն դեպքում դա բացահայտում էր Անդրկովկասի հայության և հայկական տարածքների հետ այդ եղանակով վերջնական հաշվեհարդար տեսնելու թուրքական կողմի դիտավորությունը: Տվյալ տեղեկությունը, ամենայն հավանականությամբ, նպատակ ուներ պարզ դարձնել Գերմանիայի վերաբերմունքն այդ առնչությամբ և վերջինիս նաև ըստ հնարավորին հաշտեցնել այդ գաղափարի հնարավորության հետ:

Պաշտոնական Գերմանիան, ինչպես վկայում է ԱԳՆ-ի կողմից հունիսի 3-ի ամսաթըվով Կ. Պոլսի դեսպանին ուղղված հանձնարարականը[43], ակնհայտորեն դեմ էր Թալեաթի և Էնվերի առաջարկած լուծմանը: «Խաղաղության պայմանագրերը, որոնք Թուրքիան կստորագրի առանց համաձայնեցնելու իր դաշնակիցների հետ, մեր կողմից չեն կարող ճանաչվել,- նշված էր այնտեղ,- քանի որ դրանք կհակասեն 1916 թ. սեպտեմբերի 28-ի գերմանա-թուրքական պայմանագրի 3-րդ հոդվածով ամրագրված՝ անջատ հաշտության կնքման արգելքին: Մենք կարող ենք միայն այնպիսի պայմանագրերը ընդունելի համարել, որոնք չորս դաշնակիցների մասնակցությամբ են գլուխ գալիս: Ձերդ Գերազանցությանը ես խնդրում եմ Բ. Դռանը դա տեղեկացնել...: Բոլոր կողմերից, Իսպանիայի թագավորից, Շվեյցարիայից, ինչպես նաև բոլորովին վերջերս այստեղ եկած՝ Հայոց ազգային խորհրդի պատվիրակների կողմից մեզ խնդրանքներ են ուղղվում հայերին օգնելու համար, և այն ամենի համար, ինչ պատահում է նրանց հետ, մեզ պատասխանատու են համարում: Մենք, որպես Բրեստի պայմանագրի համաստորագրող, որը թուրքերի առջև բացել է ճանապարհը դեպի Արդահան, Կարս և Բաթում, չենք կարող խուսափել այդ պատասխանատվությունից: Մեր միանգամայն վստահելի հեղինակությունների և հայ պատվիրակների

[41] Անդ, էջ 511:

[42] Անդ, էջ 512:

[43]Անդ, էջ 514-515: Կայսերական Գերմանիայի քաղաքական արխիվում գտնվող այդ գրության սկզբնամասում Քյուհլմանը հայտնում է, որ մտադիր էր դա ուղարկել Կ. Պոլսի դեսպանին: Արդյոք այն ուղարկվել է, թե ոչ, հաստատապես անհնար է ասել: Եթե, սակայն, նկատի առնենք, որ արխիվում բացակայում է նաև դեսպանի պատասխան հաղորդագրությունը, իսկ ընդամենը մեկ օր անց հայկական և թուրքական կողմերի միջև ստորագրվեց Բաթումի պայմանագիրը, ապա կարելի է ենթադրել, որ այն չի ուղարկվել:

տեղեկությունները համապատասխանում են այն հարցում, որ թուրքերը, հաշվի չառնելով իրենց բոլոր խոստումները, ծրագրված կերպով ոչնչացնում են Կովկասի հայերին կամ բարեհաճ պասիվությամբ թույլատրում են դա անել: Այդ իրավիճակում մենք պարտավոր ենք պնդել, որ թուրքական կառավարությունը ոչ միայն իր խոստումներին համապատասխան հետագա առաջխաղացումը անմիջապես և վերջնականապես դադարեցնի, այլև այսուհետ առանց հապաղման նաև ազդու երաշխիքներ ստեղծի՝ արդեն գրաված տարածքներում հայերին կանոնավոր և անկանոն զորամասերի կամայականություններից պաշտպանելու համար: ... Ինչպես գեներալ Լուդենդորֆն է գեներալ ֆոն Զեկտին հեռագրել, Թուրքիան չի կարող ակնկալել, որ մենք նրան գերմանական արյունով կամ գերմանական ծախսերով դարձյալ թուրքական տարածք կտրամադրենք, որի պաշտպանումը ... նա անձամբ արհամարհում կամ վտանգում է: Նման մի վտանգում կարելի է նաև հայերի դեմ իրագործվող անկարգություններում տեսնել, քանի որ դրանով ամբողջ քաղաքակիրթ աշխարհը Թուրքիայի և նրա դաշնակիցների վրա կզայրանա, և դրա հետևանքով կդժվարանա կորցրած տարածքները դիվանագիտական ճանապարհով վերստին ձեռք բերելու հեռանկարը»[44]:

Սարդարապատում, Ղարաքիլիսայում և այլ շրջաններում հայ ժողովրդի մղած հերոսական պայքարը, այնուհանդերձ, թուրք զավթիչներին պետք է հարկադրեր հրաժարվել Հարավկովկասյան հանրապետության ստեղծման դիտավորությունից և ուղղակի բանակցությունների մեջ մտնել հայկական կողմի հետ: Չնայած Հայաստանի Հանրապետությունը, Գերմանիայից որևէ շոշափելի աջակցություն չստանալով, հարկադրված էր հունիսի 4-ին ընդունել թուրքական կողմի պայմաններն ու ստորագրել Բաթումի պայմանագիրը, այնուամենայնիվ դրանով նա նաև ինքնահաստատեց իրեն՝ փաստելով իր գոյության անժխտելի իրավունքը:

Բրեստ-Լիտովսկի խաղաղության դաշնագրից մինչև Բաթումի պայմանագրի ստորագրումն ընկած ժամանակամիջոցում պաշտոնական Գերմանիան, այսպիսով, շարունակում էր հայ ժողովրդի դեմ թուրքական ոճրագործություններին հակազդել գրեթե բացառապես Բ. Դռանն ուղղված զուսպ դիվանագիտական նախազգուշացումներով և հորդորներով, որոնք հայ ժողովրդի բնաջնջման՝ թուրքական կառավարության քաղաքականության և համապատասխանաբար նաև տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների վրա որևէ էական ազդեցություն չէին կարող գործել:

---

[44] Անդ:

*ՄԱՐԳԱՐԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ՀԱՎԱՏԻ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Համաստեղի գրական առաջին փորձերը բանաստեղծություններ և մանրապատումներ էին[1]: Սկսնակ գրողը ներկայացնում է հետաքրքիր երևույթներ, իրավիճակներ, անդրադառնում Աստված-մարդ առնչություններին, կեցության իմաստասիրական բազմաթիվ խնդիրների, որոնց քննությամբ զբաղվեց ողջ ստեղծագործական կյանքում: Քաղաքակիրթ աշխարհի պատկերը հսկա Քաղաքն է, որտեղ համընդհանուր անտարբերության թունոտ միջավայրում չկա Սեր. մարդիկ կտրվել են Երկնքից, ապրում են միայն երկրային հոգսերով, ուրախություններով: Իսկ Գյուղից առանձին տեսարաններ պատկերող մանրապատումներում փոխվում են գույները, տրամադրությունը: Այդ մանրանկարներում կա գույնի, բառի զգացողություն, որը պատմվածքներում պիտի դառնա համաստեղյան աշխարհընկալման դրսևորման ձև: Սա արդեն գրողի՝ մեզ ծանոթ աշխարհն է, որը հիշողություն չէ, այլ Բոստոնի մի անկյունում հարատևող Գյուղը՝ աշխարհից հեռու, աշխարհի օրենքներին անհաղորդ: «»

«Գիւղը», «Անձրեւ» ժողովածուների հերոսների համար բարիքների արարումը զուգադրվում է Հավատին: Գյուղացին ակնածում է Երկնքից, և ներդաշնակ է մարդու կապը հողի ու հողից քաղած իմաստնության շնորհիվ նաև Աստծո հետ: Տափան Մարգարը, Փիլիկն ու նրանց համագյուղացիները հացի արարման օրենքներով ապրող մարդիկ են, ներողամիտ ու հավատավոր մարդիկ, որոնք մարդու ու մարդկության համար գոյության ուրիշ դաշտ չեն էլ պատկերացնում: Բայց աշխարհում չարը հզոր է, և գյուղաշխարհի բնակիչները հարկադրված լքում են բնօրրանը, թափառում երկրե երկիր՝ իրենց հետ տանելով ոչ միայն հիշողություններ, այլև չարին հակադրվելու գենետիկ ուժը, որ բնաշխարհ վերադառնալու միակ հույսն է:

Աշխարհի ու մարդկության երգիծական պատկերը Համաստեղի «Այծետոմար» պոեմն է: Տեր Մարուքեն կորած խաչը փնտրող գյուղացիների երեք խմբերից մեկի առաջնորդն է: Պոեմի իսկական հերոսը ժողովուրդն է՝ դյուրահավատ, խոսքը գործից չտարբերող, անմիաբան, մի խոսքով՝ ամբոխ, որ ցնծությամբ է դիմավորում հաղթողին, ծաղրուծանակի ենթարկում քիչ առաջ փառաբանած հերոսին, երբ վերջինս վրիպում է:

Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» դյուցազնավեպում արարելու և խաղաղ ապրելու իրենց իրավունքը պաշտպանելու համար գյուղացիները հարկադրված են կռվի դաշտ գնալ: Վեպում գրողը շեշտում է մի հետաքրքիր հանգամանք. Մարտիկը մարդ սպանելու հարկադրանքին առաջին անգամ առնչվեց, երբ նրա աչքի առաջ Կիրոսը խեղդեց հայ քահանային սպանած քրդին: Հետո այրված եկեղեցիները, որոնց մոխիրներում դեռ կան այրված մարդկանց ոսկորների մնացորդները, կախաղան բարձրացված քահանաների դիակները լրացրին պակասը: Մարտիկը հայոց ազատամարտի դրոշակակիրն է: Համաստեղն արձանագրում է, որ մեր ազգային գոյամարտն էլ պարզապես մարդու հողագործ, արարող տեսակի ու բանական արարածի տեսքով

ավարառու, արյունռուշտ էակների կռիվ է։ Ճիշտ է, կռվի դաշտում հաճախ պարտվում է հողագործը, բայց գրողը հաղթանակը վերապահում է հոգևորին։

Ինքնաճանաչողության ճամփան մարդուն տանում է դեպի Երկինք։ Համաստեղը մարդկանց բաժանում է հավատավորների և վախկոտների. առաջինները մահից էլ չեն երկնչում, իսկ երկչոտները սարսափում են անգամ կյանքից։ Գրողը քրիստոնեությունը փառաբանում է որպես համատիեզերական բարություն, մարդուն Երկնքի հետ կապող արարման ոգի։ Ամենամեծ չարիքը պատերազմն է, իսկ ինքնաոչնչացման մոլուցքով տարված մարդկությունը շարունակ անցնում է պատերազմների բովով։

Սկսվեց Համաշխարհային երկրորդ պատերազմը։

1942-ին, երբ գրողը գրում էր «Քրիստոսի երկրորդ գալուստը» դրամատիկական պատկերը, թվում էր՝ «Էս աշխարհը կը փլի», ինչպես վերնագրել է Համաստեղը իր պատմվածքներից մեկը։ Տխուր ու անմխիթար է պատերազմի թատերաբեմ դարձած աշխարհի պատկերը։ Մարդիկ կտրվել են հոգևորից, ոչ մի դաս չեն քաղել պատմության արյունոտ էջերից, և Քրիստոսը «նորէն եկած է մարդոց հոգիին մէջ երկինք մը ստեղծելու», որ մաքրի մարդկանց «տեսակ մը ածխահանքեր» դարձած հոգիները։ Մարդիկ պարզապես վախենում են «անօթի մնալէ», իսկ երկչոտը ստրուկ է, այլ խոսքով՝ անկատար։ Ավետարանական պատմության ծանոթ ընթացքով գրողը բացում է մարդու հոգու աչքերը. կյանքն առանց հավատի լոկ գոյություն է՝ անիմաստ ու ահավոր իր դատարկությամբ։ Քրիստոսը հիշեցնում է հանրահայտ պատվիրանները։ Մարդիկ փորձում են «հասկնալ, թէ ո՞րն է ճշմարտութիւն ըսուած անծանօթ թռչունը»։ Քրիստոնեական մարդասիրությունն ու տիեզերական բարությունն իրականանալի են, բայց վտանգավոր են. քանդում են նյութապաշտ աշխարհի հիմքերը։

Լսվում է Քրիստոսի ձայնը. «Իմ հայրը զիս ղրկեց, որովհետեւ աշխարհի չարութիւնը մինչեւ երկինք բարձրացաւ, որովհետեւ այլանդակուեցաւ կերպարանքը Իր ստեղծած մարդուն, որ Իր պատկերին նմանութիւնն ունէր։ Մարդիկ դարձան դիւահարներ ու չզիտցան չարը բարիէն զանազանել...

Ճշմարիտ, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, չար մարդուն վրայ կարելի է կարեկցիլ միայն, ինչպէս կը կարեկցիք հաշմանդամին եւ կամ կոյրին։ Նախընտրէք մարմնով հաշմանդամ ըլլալ, քան հոգիով։ Հարուստ է եւ երջանիկ այն աղքատը, երբ բարի է։ Իսկական երջանկութիւնը բարի զգալուն եւ մտածելուն մէջն է։ Բարութիւնը արուեստներու մեծագոյնն է...»։

Անցած երկու հազարամյակում աշխարհում ոչինչ չի փոխվել։ Համաստեղի դրամատիկական պատկերում Քրիստոսը կոչ է անում. «Եղէք բարի դուք ձեզի հանդէպ», քանզի «Բարի եղէք ձեր դրացիին հանդէպ» պատվիրանը «չհասկցուեցաւ ամբողջ 2000 տարի»։ Գերխնդիրը «ներքին մարդուն» ճանաչելն է, իսկ մարդու կյանքի նպատակը ինքնաճանաչողությունը պիտի լինի. «Երբ ճանչնաք դուք ձեզ, ճանչցած կ՚ըլլաք նաեւ Իմ Հայրը եւ կ՚ըլլաք կատարեալ, ինչպէս Իմ Հայրն է։ Մարդոց ձգտումը պէտք է ըլլայ նմանիլ Աստծոյ, եւ այդ նմանութիւնը աւելի շատ հոգեկան է, որովհետեւ Աստուած հոգի է։ Կատարեալ հոգին կատարեալ կը դարձնէ նաեւ կերպարանքը»։

Կրկնվում է նաև ավետարանական պատմության ծանոթ պատկերը. ամբոխը պահանջում է դատել Քրիստոսին։ Համաստեղը կարեկցում է մարդուն և մարդկության խղճին մի նոր ծանրագույն մեղք չբարդելու համար փոխում է դեպքերի վախճանը. Քրիստոսը հանկարծամահ է լինում. «Այդպէս, այդպէս, կը պաշտեն սպաննելու համար եւ կամ կը սպաննեն պաշտելու համար։ Օհ, մարդը շատ է վտանգաւոր։ Ես

մեծ չեմ Քրիստոսի չափ՝ ներելու համար»,- բանաձևում է Համաստեղի հերոսներից մեկը: Վերջում հնչում է Քրիստոսի խոսքը. «Ինչ որ աշխարհինն էր, աշխարհին ձգեցի: Երկնքէն բերի սերմերը միայն, սերմերը ճշմարտութեան եւ բարութեան...

Այժմ դուք պիտի ըլլաք այն հողին ժիր մշակները, իմ հավատարիմ աշակերտները: Մի վախնաք բանտէն ու չարչարանքէն, վասնզի գեղեցիկ բաները չարչարանքէն կը ստեղծուին: Իմ հայրը ընտրեց ժամանակը զիս իրեն կանչելու, եւ ես Անոր է որ կը վերադառնամ:

Ճշմարիտ, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, ինչ որ չար է՝ մարդկային է, ինչ որ բարի է՝ աստուածային է: Խղճալով օգնեցէք մարդոց ձեր խօսքերով, երկնքի խօսքերով: Օգնեցէք զօրաւորին, դատաւորին, յաղթողին ու պարտուողին, օգնեցէք իշխանին, օգնեցէք թագաւորին...»:

Մարդիկ կամա թե ակամա դարձան մարդասպաններ, բայց Երկինքը նորից բարեհաճ եղավ նրանց նկատմամբ՝ ցույց տալով մաքրվելու, Մարդ դառնալու ճանապարհը: Երկիրը կարող է դառնալ ոճրագործների բնակատեղի, եթե մարդը մոռանա ներելու և ներվելու աստվածային շնորհը. չէ՞ որ դարեր շարունակ հանուն արդարության երկրի վրա թափված մարդկային արյան միջոցով արդարություն չի հաստատվել: Համաստեղը փորձում է մարդուն հեռու պահել անարդարությունից և կրկին հիշեցնում է ավետարանական ճշմարտությունները: Նա պաշտպանում է արարման, հեքիաթի, երազի գոյության իրավունքը. դրանք հայի ազգային նկարագրի անկյունաքարերն են:

Աշխարհը ձևացնում է, թե ապրում է բարության, մարդասիրության օրենքներով, արյուն է հեղում՝ հանուն խաղաղության և եղբայրության, բայց իրականում ամեն ինչ այլ պատկեր ունի: Համաստեղը համառ ու անկոտրում հավատով է նայում մարդուն ու գալիքին: 1957 թ. տպագրված «Աղօթարան»-ում նա ամփոփում է իր կենսափորձն ու աշխարհընկալումը: «Կը հաւատամ, որ կաս, Տէր», « հայտարարում է գրողն ու մարդու առաջ բացում տիեզերքի անսահմանությունը: Համաստեղի աղոթամատյանում լսվում է Գր. Նարեկացու ձայնը. հարյուրամյակները փոխել են մարդու կյանքն ու կենցաղը, հարստացրել իմացությունը, բայց իդեալները նույնն են: Համաստեղի քնարական հերոսն անցել է «Մատեանի» մաքրագործող բովով: Դարեր շարունակ Աստվածաշունչը սովորեցրել է մարդուն տիեզերական բարության օրենքները, բայց, ինչպես ապացուցում է կյանքը, զրեթե ապարդյուն: «Աղօթարան»-ում անմոռանալի է մուրացկանի պատմությունը (Աղոթք Դ), որը խորհրդանշում է բնության և մարդու ներդաշնակ գոյության պատկերը: «Տեսեք դատաստանը որբի և այրու, արդար դատեցեք աղքատին ու խեղճին: Փրկեցեք աղքատին ու տնանկին» (Սաղմ. ՁԲ 3-4),- այս կանոնը քաջ գիտե ամեն մի քրիստոնյա: «Աղօթարանի» քնարական հերոսը մերժեց մուրացկանին, որի կերպարանքով Տերն էր այցի եկել ու մերժվել: Հակառակ Ավետարանի՝ մարդը իրենից դուրս է փնտրում իսկական խաղաղությունը: Փնտրում է և չի գտնում, չի կարող գտնել. անհավատ մարդը ենթակա է ատելության ու կրքի հողմերին, իսկ Սերը պարզապես չի ապրում այդ պայմաններում: Չկա Սեր, չկա նաև Աստված, ուրեմն չկան երազ ու հավատ, այլ խոսքով՝ կա գոյություն, բայց չկա կյանք:

Ամենօրյա վազքի ու փնտրտուքի պայմաններում մարդը ժամանակ չունի, իսկ ճանաչողության և ինքնաճանաչողության համար հաճախ աչքերի փոխարեն պարզապես սիրտ է պետք ունենալ: Համաստեղը չի վախենում աշխարհից ու չի խոսում մեղքի մասին. նրա համար առաջնայինն ապրելու վայելքն է, որն աստվածային շնորհ է: Սերը միավորում է Մարդուն Արարչի հետ, դառնում սերմնացանի աղոթք,

ստեղծագործություն, ծաղկի գույն ու թովչանք, մահկանացուին օգնում է անցնել հավիտենականության սահմանը: Դավիթ սաղմոսերգուի օրինակով Համաստեղն էլ Նարեկացու պես խնդրում է.

*Կարելի՞ց եղիր ինձ որպես բժիշկ*
*Եվ ո՛չ թե կանչիր դատաքննության իբրև դատավոր* (Բան ԻԳ, Բ):

«Աղոթարան»-ում Համաստեղը ներկայացնում է մարդուն դեպի Մարդը (որ նույնն է, թե դեպի Աստված) տանող ճանապարհը՝ կրկին հավաստելով Մարդու երկնային ծագումը: Նարեկացու և Համաստեղի աղոթքները կարելի է հասկանալ նաև որպես մարդու հետաքրքիր երկխոսություն իր էության անքակտելի մասի՝ Աստծո հետ: Նարեկացին կամուրջ է նետում մարդու և Աստծո միջև, իսկ Համաստեղը քայլում է դեպի Տերը տանող այդ կամրջով՝ փայփայելով Աստվածամարդու իդեալը: Ի վերջո, մարդու զրույցն Աստծո հետ ավարտվում է կատարյալ ներդաշնակությամբ. «Չեմ ըսեր, կամքդ թող ըլլայ, Տէր, որովհետեւ դուն իմ մէջ կամք ես ու իմացականութիւն: Դուն իմ մէջ ներդաշնակութիւն ես, Տէր:

Իմ գոյութեան մէջ է, Տէր, որ կ՚ամբողջանայ քու կերպարանքը ու իմ հաւատքին մէջ՝ քու յաւիտենականութիւնը...

Ամէն»:

Գր. Նարեկացու և Համաստեղի աղոթքը մարդու հզոր ինքնակատարելագործման փորձ է՝ հավերժական և ամեն մեկի կյանքով կրկնվող:

Մեր ժողովրդի ազգային նկարագրի անբաժան մասն է մարդասիրությունը. ահա թե ինչու առաջինը պետականորեն ընդունեցինք քրիստոնեությունը: Համաստեղի ձեռագրերից մեկում կա այսպիսի գրառում. «Հին հեթանոսական աստուածները առաւելապէս ֆիզիկական ուժի ներկայացուցիչներ էին, յաղթ ու կրակէ աչքերով եւ այդ ուժով էր, որ կը տիրապետէին: Այդ յաղթ աստուածներուն յաղթեց փափկակազմ, բարակ հասակով, արցունքի չափ բարի աչքերով Քրիստոս մը: Հաղթանակեց իր հոգիով ու երկնքով: Մենք ընդունեցինք քրիստոնէութիւնը, որովհետեւ հոգեկան էր, մարդկային ու աստուածային»: Նախապատմական շրջանում գիր, գրականություն, հարուստ մշակույթ ստեղծած հայ ժողովուրդը հասել էր մշակութային զարգացման բարձր մակարդակի և կարող էր բաժանվել ուժի պաշտամունքով ապրող մարդկությունից, փարվել համամարդկային մարդասիրության գաղափարներին:

Նամակներից մեկում Համաստեղը ցավով է խոսում հեթանոսական մշակույթի ոչընչացման մասին, բայց նաև արձանագրում է, որ քրիստոնեական մշակույթը բարձրացավ այդ հիմքի վրա, այլապես հնարավոր չէր լինի Ոսկեդարը քրիստոնեության ընդունումից ընդամենը մի դար անց: Քրիստոնեությունը ձուլվեց մեր ազգային նկարագրին և դարձավ հայ մշակույթի հիմքը: Հինգերորդ դարի պատմագրության համար Համաստեղը տիպական է համարում փաստերի և դեպքերի ճշմարտացի վերարտադրությունը՝ սկսած Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ քրիստոնեության մուտքի հետ կապված մանրամասների նկարագրությունից մինչև Մաշտոցի տեսիլքն ու Ավարայր. «Հոգեպէս ուժեղ ժողովուրդներն են որ կրնան յաղթել պարտութիւնով: Վարդան յաղթեց աւելի ուժեղացնելով հայ ժողովուրդի հոգեկան սահմանները: Ան հոգեկան սնունդ տուաւ և քրիստոնէութեան մէջ դրաւ ազգային ուժեղ նկարագիր»: Հինգերորդ դարի պատմագրությունը ոչ միայն մեր ժողովրդի պատմության, իսկ Մ. Խորենացու մատյանի օրինակով՝ նաև հեթանոսական շրջանի գրա-

կանության պատառիկների, այլև մարդկության պատմության հավաստի վավերագիրն է։

Հավատը, երազն ու հեքիաթը զուգադրվում են հայի էության մեջ, և նա հյուսում է մարդու, աշխարհի, Երկնքի ասքը, որտեղ իշխում են արարման, աշխատանքի, հողից ծնված բարության օրենքները՝ Երկնքի կապույտով ներկված։ Համաստեղը շեշտում է՝ մեր ժողովուրդը հեթանոսական շրջանում հզոր էր և ուժեղ, բայց քրիստոնյա հայն առավել հզոր է հոգևոր ուժով, որի առաջ անզոր են բանակները։ Նա մեր ազգային նկարագրի մեջ տեսնում է երկու եզր՝ արյան հոսքով սերնդից սերունդ անցնող ֆիզիկական ուժը և դարերի ընթացքում մեր արյան անբաժանելի մաս դարձած քրիստոնեական մարդասիրությունը։ Հայի կես-հեթանոս, կես-քրիստոնյա նկարագիրը աշխարհի չարն ու բարին հասկացող, չարից տառապող, բայց բարու հաղթանակին անվերապահ հավատացող մարդու պատկերն է, որը հաստատում է գրողի ողջ ստեղծագործությունը՝ առաջին պատմվածքից, դրամատիկական գործերից սկսած մինչև «Սպիտակ ձիաւորը» դյուցազնավեպն ու «Առաջին սէրը» ինքնակենսագրական վերջին վիպակը։ Հայի ազգային նկարագրի և հավատի բաղադրիչները պապերից ժառանգած ուժը և քրիստոնեական մարդասիրությունն են։ Կարևորը Հավատի գոյության փաստն է, իսկ ձևերն անցողիկ են, անէական։ Հայ ժողովրդի հավատի հիմքում եղել և մնում է հողի հետ առանձնահատուկ կապը, որ պարբերաբար քննության է ենթարկվում և, որպես օրենք, դիմադրում ու դիմանում։

«Հաւատք քո կեցուսցէն զքեզ» վերնագրված հոդվածում Համաստեղը զուգահեռներ է գտնում հայոց հավատի և հայրենասիրության միջև. «Հայաստանը նոյնպէս եղած է նպատակ, երկնքի կապոյտին չափ անսահման, թերևս անոր համար, որ քրիստոնէութիւնը, որպէս մշակոյթ, մուտք գործեց և տարածուեցաւ Հայաստանի մէջ տարերային ուժի թափով»։ Գրողը գրերի գյուտն արժևորում է նաև որպես քրիստոնեական սրբությունններն ու սրբերին հայացնելու միջոց, որի շնորհիվ «Անոնց համար երկնքի կապոյտին վրայ Հայաստանի քարտեզի գծերը կային լուսաշող»։ Նաև սրանով հայ ժողովուրդը, հակառակ ամեն ինչի, «նահատակներով ուժեղացուց իր ապրելու կամքը, ողբերգութեան մէջ հասունցուց իմաստութիւնը»։ Եզրակացություն՝ «հայ ազգը պարտութեամբ հաղթանակած է»։

Համաստեղը «գենետիկ» ատելություն չունի թուրք ժողովրդի նկատմամբ, բայց արձանագրում է փաստը. «Անոնք աւերեցին, քար քարի վրայ չթողուցին շէն երկրի մը մէջ, ուր հացի եւ ջրաղացներու հալալ աշխատանքը կար, ուր կանաչները աղօթքի ջերմեռանդութեամբ կը ծլէին, ուր անձրևը օրհնութեան մը պէս կ՚իջնէր առէջ առ առէջ, ու արեւին տակ արտերը ցորեաններուն՝ ոսկի գոյն կառնէին…»։ Դիպուկ է թուրքի բնութագիրը՝ «անընդունակ եղած է իր ինքնուրոյն մշակոյթն ստեղծելու»։ Ավելին, «Բոլոր կրօնները բարոյական հիմքի մը վրայ կառուցուած են, ինչպէս նաեւ Ղուրանը, եւ սակայն թուրքը այդ Ղուրանը իր բարբարոս բնազդներուն հարմարցուց։ Զարդեց՝ Ալլահին անունով»։ Հիշենք, որ «Սպիտակ ձիաւորը» վեպի հերոսը՝ Չերչի Կիրոսը, եվրոպացի դիվանագետին ասում է. «Երբ կը ջարդուէր հայ ժողովուրդը, ըսիք, որ Աստուած իր սիրելի զաւակներուն այդպէս է կամեցեր։ Ըսէք նաեւ, որ թուրքերն են դարձեր Ալլահին սիրելին եւ Ալլահը այդպէս կամեցեր է… չէ, մենք չենք ջարդէր, միայն կ՚ուզենք, որ չի ջարդուինք»[2]։

«Զրոյց համայնավար բարեկամի մը հետ» հոդվածում Համաստեղը գրում է. «Գեղեցիկ նպատակների հասնելու համար շիտակ ճամբով պէտք է քալել։ Ծուռ ճամբան միշտ ալ քառս կը տանի։ Գեղեցկութեան ճամբան միշտ ալ շիտակ է, ծաղկոտ ու

ճշմարիտ: Գեղեցիկ բաները յանդգնութենէն կը ծնին: Քրիստոնէութեան մէջ եթէ կայ տկարութիւն մը, ան ալ դժոխքի սպառնալիքն է: Այդ վախի ազդեցութեան ներքեւ է, որ մարդիկ կը շեղին իրական, մարդկային բարոյականութենէն ու իրենք զիրենք ձգած են դժոխքէ խուսափելու հաշիւներուն մէջ: Եթէ կրօնքի մէջէն վերցուի դժոխքի սպառնալիքը, այն ատեն մարդկային բարոյական ըմբռնումը կը դառնայ աստուածային: Ան պիտի օգնէ իր նմաններուն մարդկայնօրէն ոչ թէ դժոխքէն խուսափելու համար, որ առաւելապէս եսասիրական է»:

Մարդու ազատությունը ծնվում է հոգու և հոգևոր աշխարհի անսահմանությունից: Հավատը չի հանդուրժում ոչ մի հարկադրանք, վեր է մարմնական ցանկությունների պատնեշներից. հոգևոր ազատությունը ծագում է Սիրուց: Համաստեղը հավատարիմ է Աստվածաշնչի՝ «ներսի մարդովը» չարին ու չարիքին հակադրվելու անհրաժեշտությանը (Առ Հռովմայեցիս Է 22): Մարդու կապը Երկնքի հետ վերջնականապես խզված չէ, իսկ մարդկությունն ունի հայ ժողովրդի անմնացորդ նվիրվածության օրինակը Երկնքին:

«Ազգերը հաւաքական մաքառումներ են ու պաշտպանութիւն,- գրում է Համաստեղը:- Ապրած են այն ազգերը, որոնք հարուստ եղած են մշակոյթով, որովհետեւ մշակոյթը առաւելապէս հոգեկան ուժի գիտակցական ստեղծագործութիւնն է: Այդ ուժը անմատչելի բերդ մըն է, որուն ոչ մեկ թշնամի կրնա հասնիլ: Հայ ժողովուրդը այդ բերդին մէջ գտաւ իր պաշտպանութիւնն ու ինքզինք ձգեց հաւիտենականութեան մէջ: Այո՛, հայ ժողովուրդը հաւիտենական է: Հզօր ազգերու հզօր բանակները ժամանակաւոր հաղթանակներ տարած են միայն…»:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համաստեղի՝ հոդվածում հիշատակվող գրական երկերը (բացի «Սպիտակ ձիաւորը» երկհատոր վեպից) և հոդվածները հրատարակել ենք «Համաստեղ. Մոռացված էջեր» գրքի Ա, Բ, Գ հատորներում (Երևան, 2005 թ.):

2. **Համաստեղ,** Սպիտակ ձիաւորը, Լոս Անճելես, 1952, հատոր 2, էջ 525:




# ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 23-ին Հայ Եկեղեցու վարդապետների շարքը համալրվեց ևս չորսով: Արագածոտնի թեմի առաջնորդանիստ Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում Տ. Սահակ, Տ. Աբգար, Տ. Մկրտիչ և Տ. Հովակիմ աբեղաները, ձեռամբ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, արժանացան մասնավոր վարդապետական աստիճանի: Հոգեշնորհ Հայրերը նախապես իրենց վարդապետական թեզերը հաջողությամբ պաշտպանել էին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում հետևյալ թեմաներով՝

1. Հոգեշնորհ Տ. Աբգար աբղ. Հովակիմյան՝ «Սուրբ Դիոնիսիսիոս Արիսպագացին հայ մատենագրության մեջ»:
2. Հոգեշնորհ Տ. Մկրտիչ աբղ. Պռոշյան՝ «Ֆեմինիստական փրկաբանության վերլուծության փորձ»:
3. Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբղ. Մանուկյան՝ «Էկումենիզմը XX դարում և Հայ Եկեղեցին»:
4. Հոգեշնորհ Տ. Սահակ աբղ. Մաշալյան՝ «Հավատք և հրաշք»:

Վարդապետական իշխանության տվչությունը ծիսական հանդիսավորությամբ կատարելու համար եռամեծ վարդապետ Գրիգոր Տաթևացին խմբագրել է մի կանոն, որը բաղկացած է երկու մասից՝ Մասնավոր վարդապետության կանոն՝ չորս աստիճաններով, և Ծայրագույն վարդապետության կանոն՝ տասն աստիճաններով, ամբողջը՝ տասնչորս աստիճան: Ծիսակարգը բաղկացած է հրապարակային քննությունից, ընթերցվածներից, շարականներից, տվչության բանաձևերից ու աղոթքներից:

Ընծայյալին տրված իշխանության առաջին մասը կոչվում է մասնավոր վարդապետություն և ունի չորս աստիճաններ, որոնք տրվում են եկեղեցու չորս կողմերում հետևյալ հերթականությամբ՝ արևմտյան, հարավային, հյուսիսային և արևելյան: Արարողությունը կատարվում է Գիշերային ժամերգության վերջում և Առավոտյան ժամերգության սկզբում. «Կատարեն զգիշերապաշտօնն մինչև ցառաւօտու ժամն՝ Լցաք» (Մաշտոց Ձեռնադրության, Վաղարշապատ, 1876, էջ 68):

Հայ Եկեղեցու ավանդույթի համաձայն՝ վարդապետական աստիճանն ուղիղ կերպով տրվում էր նույն աստիճանավորի ձեռքով: Այսպես էր սկզբունքը թե՛ Մխիթար Գոշի, թե՛ Տաթևացու բարձրագույն տիպի դպրոցներում, թե՛ Սյունաց վարդապետարանում: Մեր մատենագրության մեջ հաճախ ենք վարդապետական զավազաններ ներկայացնող ցանկերի հանդիպում: Նմանօրինակ ցանկեր կան Առաքել Դավրիժեցու «Եկեղեցական պատմության» ԼԲ գլխում, ինչպես նաև Մայր Մաշտոցում (տպ.

Կ.Պոլիս, 1807, էջ 335-337)՝ «Ցանկ անուանց վարդապետացն մեծաց, որք ետուն աշակերտաց իւրեանց գծայրագոյն իշխանութիւն վարդապետական գաւազանք ի սկզբանէ մինչեւ յաւուրս մեր» խորագրի ներքո և այլուր:

Այսօր իրողությունը փոքր-ինչ այլ է. թեև ունենք ծայրագույն վարդապետություն և ծայրագույն վարդապետներ, բայց վարդապետությունը ուղղակի վարդապետական գծով չի տրվում կամ փոխանցվում: Այս իրավունքը վերապահված է վարդապետ եպիսկոպոսներին: Ս. Էջմիածնում տպված Ձեռնադրության Մաշտոցում այս մասին կարդում ենք. «...զզէնու եպիսկոպոսն, որ ընկալեալ իցէ զմասնաւոր և գծայրագոյն իշխանութիւն վարդապետութեան, որ կոչի Մեծ Վարդապետ»: Արարողության սկզբում եպիսկոպոսը բազմում է վարդապետական աթոռի վրա: Եպիսկոպոսի կողքին կանգնում է սարկավագը (կամ այլ հոգևորական)՝ ձեռքին ունենալով շղարշով ծածկված գավազան:

Մասնավոր վարդապետության առաջին աստիճանը տրվում է եկեղեցու արևմտյան կողմում: Շարականի երգեցողությունից հետո խարտավիլակը Սուրբ Եկեղեցու անունից բարձրաձայն խնդրում է եպիսկոպոսին հրավիրելու Խոսքի սպասավորներին «...ի պատիւ յաստիճան Մասնաւոր Վարդապետութեան»:

Եպիսկոպոսը հարցնում է խարտավիլակին, թե ընծայյալներն ունե՞ն պահանջված գիտություն, ուղղափառ դավանանք և հրաժարվո՞ւմ են բոլոր տեսակի աղանդներից ու հերձվածներից: Խարտավիլակի հաստատական պատասխանից հետո եպիսկոպոսը պահանջում է, որ ընծայյալները հրաժարվեն բոլոր տեսակի հերձվածներից և աղանդավորներից, ովքեր ընդդիմացան մեր Աստծո՝ Հիսուս Քրիստոսի ուղղափառ հավատքին:

Ընծայյալները հայտարարում են, որ հրաժարվում ու նզովում են բոլոր տեսակի հերձվածներն ու աղանդները՝ անվանապես թվարկելով դրանք: Այնուհետև հայտարարում են, որ աշակերտում և հետևում են բոլոր ուղղափառ հայրերին, վարդապետներին, հայրապետներին և Սուրբ ժողովների բանաձևումներին (Նիկիայի 325 թ, Պոլսի 381 թ. և Եփեսոսի 431 թ.):

Եպիսկոպոսի կողմից տրված այս հարցումները՝ **ունի՞ բավարար գիտություն, հրաժարվո՞ւմ է հերձվածներից կամ ունի՞ ուղղափառ դավանություն**,- ցույց է տալիս վարդապետական աստիճանի կարևորությունն ու նշանակությունը:

Հայ Եկեղեցում «վարդապետությունը» մի տեսակ գիտական աստիճան է, որ կուսակրոն հոգևորականն ստանում է երկար տարիներ ուսանելով որոշ հմտություն և պատրաստություն ձեռք բերելուց հետո: Այն տիտղոսները, ներբողական և իմաստազեղ արտահայտությունները (մեծ, վսեմական, անհաղթ, կորովաբան, ամենագով, արդյունական, հոգեհանճար, քաղցրահանճար, գերիմաստ, տիեզերալույս և այլն), որոնք հայ պատմագիրների կողմից և ձեռագրերի հիշատակարաններում տրվում են հայ վարդապետների համար, ցույց են տալիս այն մեծ հարգանքը, որին հայ ժողովուրդն արժանացրել է վարդապետությունը հարազատագույն ձևով արժևորած հոգևորականներին:

Բոլոր կրոններում էլ կան հատուկ պաշտոնյաներ, որոնց գործն է իրենց կրոնն ուսուցանել, քարոզել, մեկնել, մեկ խոսքով՝ վարդապետել: Հայ Եկեղեցում էլ Քրիստոսի Ավետարանի քարոզությունը, Սուրբ Գրքի մեկնությունը, քրիստոնեական կրոնի ուսուցումը վարդապետներին է հանձնված:

«Նոր Հայկազյան Բառգիրքը» այսպես է ստուգաբանում «վարդապետ» բառը. «Վարդապետ, didaskalos, doctor, magister, վարժապետ, ուսուցչապետ, ուսուցիչ, օրենուսույց, րաբունի, ճարտար, վարիչ և վերակացու ուսմանց» և այլն:

Աստծո և Նրա պատգամների մասին խոսելու համար կատարյալ գիտություն է պետք: Նրանք, ովքեր ցանկանում են «ուղղակի մեկնել զաստուածային զգիրս, նաև վասն Աստուծոյ խօսել», պետք է լինեն շատ երկյուղած, մշտարթուն, աղոթասեր և անդադար ընթերցեն Հին և Նոր Կտակարանները: Մասնավորաբար պետք է մաքուր խիղճ և անարատ հոգի ունենան, որպեսզի արժանի լինեն աստվածային գիտության շնորհներին:

Ըստ Մխիթար Գոշի՝ վարդապետը պետք է ծանոթ լինի Հին և Նոր Կտակարաններին, ինչպես նաև «կանոնական հրամանաց»: Վերջինիս կանոնների համաձայն՝ վարդապետը պետք է լինի ուսյալ, ինչը պետք է ստուգվի խիստ քննությամբ:

Վարդապետական աստիճանին հասնելու համար Սյունաց դպրոցում իմաստասիրական հմտություն էր անհրաժեշտ, ինչպես նաև լինել հեզ, հնազանդ, խոնարհ և երկյուղած, վարել անապական և անարատ կյանք: Ահա թե ինչու հայ վարդապետի կերպարի մեջ իմացական ընդունակություններն ու ապրած կյանքն ընկալվել են որպես իրարից անբաժան, ինչպես արևի լույսն ու ջերմությունը: Այսպիսի պատրաստությունից և ուղղափառությունը քննելուց հետո եպիսկոպոսն օրհնությամբ գավազանը տալիս է ընծայյալներին: Գավազանն իշխանության խորհրդանիշն է: Եկեղեցու հոգևոր իշխանը եպիսկոպոսն է, հետևաբար գավազանն էլ, իբրև հոգևոր իշխանության խորհրդանիշ, իրավունք ունի կրելու միայն եպիսկոպոսը: Սակայն, քանի որ հոգևոր իշխանության էական մաս է կազմում քարոզությունը կամ վարդապետությունը, ուստի վարդապետներին էլ են գավազան կրելու իրավունք տվել՝ իբրև նշանակ իրենց հոգևոր իշխանության: Հայ Եկեղեցու մեջ հիմա հիմնականում գործածվում է երկու ձևի գավազան.

ա) երկգլխյան օձաձև գավազան կամ վարդապետական,

բ) մեկ գլխով օձաձև գավազան կամ եպիսկոպոսական:

Գրիգոր Տաթևացին ասում է, որ գավազանը շատ խորհրդավոր իմաստներ ունի: Ապա ավելացնում է, թե վարդապետի գավազանը խորհրդանշում է իշխանությունը, և սա հայտնի է գավազանի խաչաձև գլխից: Վարդապետի գավազանի գլուխը կաթողիկոսի գավազանի պես գնդաձև չէ, որը նշանակում է, թե կաթողիկոսը ողջ հայոց ազգի վրա հոգևոր իշխանություն ունի: Եպիսկոպոսի գավազանի պես կեռ և միակողմանի էլ չէ, որ նշանակում է, թե եպիսկոպոսը միայն իր թեմում է իշխում: Վարդապետի գավազանը խաչաձև է, և սա ցույց է տալիս, որ նրա քարոզելու իշխանությունն անսահման է. «Ի չորս կողմն աշխարհի իշխէ, և ի հաւատացեալս եւ յանհաւատս, ի քահանայս եւ յաշխարհականս, յեկեղեցիս եւ յարտաքս»: Գավազանը վար-

դապետին են տալիս, իսկ ձեռքը նշանակում է գործ, այսինքն՝ իշխանություն է տրվում իրեն գործելու, որովհետև խոսքը գործով է հաստատվում (Զմերան հատոր, էջ 168-169):

Մասնավոր վարդապետական առաջին աստիճանի տվչությամբ իշխանություն է տրվում ողջամիտ վարդապետությամբ Ավետարանը քարոզելու: «Ողջամիտ վարդապետություն» ասելով հասկանում ենք ոչ միայն քրիստոնեական հավատքի ճշմարիտ քարոզությունը, այլև մասնավորապես Հայ Եկեղեցու դավանությունը: «Ա՛ռ զսուրբ զաւազանս ի ձեռաց Հոգւոյն Սրբոյ, ունել իշխանութիւն քարոզել զբանն կենաց ողջամիտ վարդապետութեամբ յունկն հաւատացելոց»: Շարականով (ԱԿ Աշակերտք Քրիստոսի) և «Պահպանիչ»-ով ավարտվում է առաջին աստիճանի տվչությունը:

Երկրորդ աստիճանը տրվում է եկեղեցու հարավային կողմում: Եպիսկոպոսը, գավազանը տալով հրավիրյալներին, ասում է. «Ա՛ռ քեզ իշխանութիւն ի Հոգւոյն Սրբոյ ընդունել զերկրորդ աստիճան վարդապետութեան ուսուցանելոյ զտգէտս եւ խրատելոյ զստահակս»: Նույնպես շարականով (ԲԿ Երրորդութիւն անբաժանելի) և «Պահպանիչ»-ով ավարտվում է երկրորդ աստիճանի տվչությունը, որով վարդապետն իրավունք է ունենում ուսուցանելու տգետներին, խրատելու ստահակներին, այսինքն՝ նրանց, ովքեր հեռու են քրիստոնեական հավատքից:

Երրորդ աստիճանը տրվում է եկեղեցու հյուսիսային կողմում: Եպիսկոպոսը նույն ձևով տալիս է գավազանը ընծայյալներին և ասում «Ա՛ռ զերրորդ աստիճան մասնաւոր վարդապետութեան՝ կարողութեամբ Հոգւոյն Սրբոյ կոչել յապաշխարութիւն զմեղուցեալս եւ դարձուցանել զմոլորեալս ի գիտութիւն ճշմարտութեան: Եւ դու՝ երեւեալ Հովուապետին ընկալցիս զանթառամ փառաց պսակն»: «Որ սիրող էք, ԱԿ» շարականով և «Պահպանիչ»-ով ավարտվում է երրորդ աստիճանի տվչությունը: Վարդապետին իշխանություն է տրվում «կարողութեամբ Հոգւոյն Սրբոյ» մեղավորներին զղջալ տալ, ապաշխարելու կոչել և ցույց տալ առ Աստված տանող ճանապարհը:

Չորրորդ աստիճանը տրվում է եկեղեցու արևելյան կողմում: Այստեղ եպիսկոպոսն ընդարձակ աղոթք է կարդում ընծայյալների վրա: Աղոթքի առաջին մասը՝ «Օրհնեալ ես Տէր Աստուած մեր», ուղղված է Հայր Աստծուն: Ի մասնավորի այստեղ հայցում ենք Ամենակարողին՝ «Եւ արդ Տէր Բարերար. աղաչեմք զքեզ եւ աղերսեմք. մի հայիր յանարժանութիւնս մեր, եւ մի անտես առնել զպաղատանս մեր. առաքեա զշնորհս ամենազօր Հոգւոյդ Սրբոյ ի վերայ ծառայիցս Քո, որ հրաւիրեցան յաստիճան վարդապետութեան»: Աղոթքի երկրորդ մասը՝ հանգիստը՝ «Աստուած Ամենազօր եւ մարդասէր Հոգի», ուղղված է Սուրբ Հոգուն, որտեղ ազդու արտահայտություններով խնդրվում է Աստծո խնամքը նորընծա վարդապետների վրա, որպեսզի համարձակ քարոզեն, մեղավորներին սրբեն, մոլորյալներին դարձի բերեն, տգետներին լուսավորեն, ստահակներին կշտամբեն, բարիներին հաստատեն և, վերջապես, բանավոր հոտին հրավիրեն Աստծո թագավորություն: Այս աղոթքից հետո եպիսկոպոսը գավազանը տալիս է ընծայյալներին ու ասում. «Ա՛ռ զչորրորդ աստիճան մասնաւոր վարդապետութեան ի ձեռաց Հոգւոյն Սրբոյ եւ ե՛րթ եւ քարոզեա՛ զԱւետարանն

սուրբ եւ զպրակս առաքելոց եւ մարգարէից, եւ զպատուէր օրհնադրութեանց Հարցն Սրբոց՝ ողջամիտ վարդապետութեամբ ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ, առանց աչառանաց եւ երկիւղի ուսո՛ եւ խրատեա՛, սաստեա՛, յանդիմանեա՛ եւ դարձեալ մխիթարեա՛ ըստ առաքելոյն բանի: Եւ դու եղիցիս առաջի Տեառն մշակ առանց ամօթոյ եւ ծառայ ազնուական, գրելով զանուն քո ի դպրութեան կենաց ընդ երջանիկ դասս սուրբ վարդապետաց»:

Մասնավոր վարդապետության չորրորդ և վերջին աստիճանի տվչության հրահանգն իր մեջ բովանդակում է թե՛ առաջին երեք բանաձևերի և թե՛ աղոթքի իմաստները: Չորրորդ աստիճանն ավարտվում է շարականով (ԳՁ, Ամոլք հաւատոյ), «Պահպանիչ»-ով և «Հայր մեր»-ով:

Ապրիլի 23-ին Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի, կատարվեց նաև մասնավոր վարդապետական աստիճանների տվչության կարգը: Ընծայացուները, ուսուցչապետ Ս. Մեսրոպի շիրիմի առջև ծնրադիր վերանորոգելով իրենց ուխտը, ստացան վարդապետական գավազաններ:

Մասնավոր վարդապետի իշխանությունը ծայրագունության համեմատ բավական սահմանափակ է, քանի որ իր մեջ ներառում է միայն քարոզությունը, այսինքն՝ ծայրագույն վարդապետի իշխանության մեկ մասի գործադրության մեջ է պարփակվում: Այս է պատճառը, որ տրված իշխանությունը մասնավոր է կոչվում: Այս նկատի ունենալով՝ Վարդապետական աստիճանի տվչության ժամանակ Եզնիկ Սրբազանը հավուր պատշաճի հոգեշունչ շնորհավորական խոսք ասաց՝ ի մասնավորի շեշտելով. «Աղոթում ենք առ Աստված, որ Տերը Սուրբ Հոգու յոթնարփյան շնորհներով պսակազարդի ձեզ, որպեսզի է՛լ ավելի զորանալով՝ արժանանաք նաև Ծայրագունության տասն աստիճաններին»: Որպեսզի Հայոց Եկեղեցին կրկին մոտենա մեր լուսամիտ եկեղեցական հայրերի և եռամեծ վարդապետների մտավոր կատարելության մակարդակին: Որպեսզի մեր վանքերը վերստին դառնան «մայրաքաղաք ամենայն իմաստից» (ասել է 1318 թ. մի ժամանակագիր՝ Գլաձորի համալսարանի համար), նոր Սյունյաց վարդապետարան, նոր Հաղբատ ու Սանահին, նոր Կարմիր վանք ու Սկևռա, նոր Գետիկ ու Խորանաշատ:

*ՕԳՍԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԻՐԶՈՅԱՆ*



## Տ. ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ՊՌՈՇՅԱՆ

Ծնվել է 1975 թ. օգոստոսի 13-ին Էջմիածին քաղաքում:

1982-1992 թթ. սովորել և ավարտել է տեղի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը:

1993-1998 թթ. ուսանել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1998-1999 թթ. ուսումնառությունը շարունակել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի: «»

2000 թ. Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Խոսրով Անձևացու «Պատարագի մեկնության» աստվածաբանությունը» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

2001-2003 թթ. ուսանել է Լիցի համալսարանում (Անգլիա)՝ ստանալով Աստվածաբանության բակալավրի (BA) աստիճան:

2003-2004 թթ. սովորել է Քարդիֆի համալսարանում (Անգլիա)՝ ստանալով Աստվածաբանության մագիստրոսի (MTH) աստիճան:

2004 թ. հոկտեմբերին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ նշանակվել է Սևանի վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսչի պաշտոնակատար, իսկ 2005 թ. սեպտեմբերից՝ տեսուչ:

2006 թ. ապրիլի 21-ին Մայր Աթոռում պաշտպանել է վարդապետական թեզ «Ֆեմինիստական փրկաբանության վերլուծության փորձ» թեմայով և ապրիլի 23-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:



# Տ. ՀՈՎԱԿԻՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 19-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

1983-1993 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1994-1999 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1999-2000 թթ. ուսումը շարունակել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանում:

1998 թ. սովորել է Շվեյցարիայի Ժնև քաղաքի Բոսսեի Էկումենիկ դպրոցում:

2001 թ. սովորել է Դանիայի Արհուս քաղաքի Դիակոնալ դպրոցում՝ ուսումնասիրելով սոցիալական աստվածաբանություն:

2000 թ. հուլիսի 16-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. հուլիսից աշխատում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում:

2001 թ. հոկտեմբերի 22-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Դրվագներ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պատմությունից» թեմայով՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

2001 թ. նոյեմբերի 11-ին, ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2002-2004 թթ. ուսանել է Մոսկվայի հոգևոր ակադեմիայում (Սերգիև Պոսադ)՝ ստանալով Աստվածաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2004 թ. հունիսից կրկին աշխատում է Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում:

2005 թ. օգոստոսին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ նշանակվել է Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու:

2006 թ. ապրիլի 21-ին Մայր Աթոռում պաշտպանել է վարդապետական թեզ «Էկումենիզմը 20-րդ դարում և Հայ Եկեղեցին» թեմայով և ապրիլի 23-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:



# Տ. ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՇԱԼՅԱՆ

Ծնվել է 1962 թ. Ստամբուլում (ավազանի անունը՝ Շահան):

1983 թ. հոգևոր սպասավորության է անցել Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանում:

1983-1987 թթ. սովորել է Ստամբուլի համալսարանի փիլիսոփայության բաժնում:

1986 թ. ձեռնադրվել է սարկավագ ձեռամբ Երանաշնորհ Տ. Շնորհք Պատրիարք Գալուստյանի:

1989-1994 թթ. աստվածաբանություն է ուսանել Լոնդոնի համալսարանում:

1992 թ. կուսակրոն քահանա է ձեռնադրվել ձեռամբ Երանաշնորհ Տ. Գարեգին Պատրիարք Գազանճյանի:

1994-1997 թթ. եղել է Երուսաղեմի հայոց Պատրիարքության տեսուչը:

1997-1999 թթ. կրթությունը շարունակել է Դուբլինի համալսարանում (Իռլանդիա):

1999-2005 թթ. եղել է Կ. Պոլսի հայոց Պատրիարքության միջեկեղեցական և միջկրոնական հարաբերությունների բաժնի վարիչը, ինչպես նաև հոգևոր հովիվ Կ. Պոլսի հայոց եկեղեցիներում:

2005 թվականից Նոր Կտակարանի ներածություն և մեկնություն է դասավանդում Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ապրիլի 21-ին Մայր Աթոռում վարդապետական թեզ է պաշտպանել «Հավատք և հրաշք» թեմայով և հաջորդ օրը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Շահան արքեպս. Սվաճյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

# Տ. ԱԲԳԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Ծնվել է 1972 թ. հուլիսի 23-ին Բաթում քաղաքում:

1979-1989 թթ. սովորել և ավարտել է տեղի Ստեփան Շահումյանի անվան թիվ 12 հայկական միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել և 1995 թ. ավարտել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ավարտաճառ պաշտպանելով «Հայոց դավանաբանական մտքի արձագանքները Ներսես Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ» թեմայով:

1995 թ. հոկտեմբերի 22-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1996 թ. հունիսի 2-ին Մայր Աթոռում, ձեռամբ Տ. Շահե արքեպս. Աճեմյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2001-2004 թթ. Հայրապետական տնօրինությամբ մեկնել է Ավստրիա և ուսանել Զալցբուրգի աստվածաբանական համալսարանում՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

2004 թ. վերադառնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ փետրվարի 20-ին նշանակվել է Վրաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո:

2005 թ. հոկտեմբերի 11-ից հոգևոր սպասավորության է կոչվել Սյունյաց թեմում:

2006 թ. ապրիլի 21-ին Մայր Աթոռում պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Ս. Դիոնիսիոս Արիսպագացին հայ մատենագրության մեջ» թեմայով, և ապրիլի 23-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

# ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ ավարտաճառերի պաշտպանություն:

Քննիչ հանձնաժողովը, որի կազմում էին Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը և Տ. Ղևոնդ քհն. Մայիլյանը, նախագահությամբ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, դրական գնահատականի արժանացրեց Մանուկ սրկ. Մալխասյանի («Տաճարի խորհրդաբանությունը»), Հայկ սրկ. Բարսեղյանի («Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք պարապմանցը» հայ մատենագրության մեջ») և Սահակ սրկ. Ղազարյանի («Տոտալիտար աղանդների և ապակառուցողական պաշտամունքների գործունեության մեթոդները») ավարտաճառերը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՈւԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵՐԻ ՎԱՆՔ

Ապրիլի 1-ին Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Մուտն ի Վիրապ տոնին, Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, նախաձեռնությամբ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ու աջակցությամբ Վազգենյան Հոգևոր Դպրանոցի, կազմակերպվել էր ուխտագնացություն Արագածոտնի թեմի Տեղերի վանք:

Ուխտագնացությանը ճեմարանականների հետ մեկտեղ մասնակցեցին մի շարք համալսարանների (Երևանի պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան, Երևանի պետական տնտեսագիտական համալսարան, Վ. Բրյուսովի անվան լեզվաբանության համալսարան) շուրջ 300 ուսանողներ: Ուխտավորներին միացան նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ:

Տեղերի վանքում ուսանողներին ողջունեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը: Վանքի Ս. Աստվածածին եկեղեցում Տ. Զավեն քահանա Մարկոսյանի ձեռամբ մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագի ընթացքին քարոզ խոսեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Վազգեն աբեղա Նանյանը՝ մասնավորաբար հիշեցնելով, թե ինչպես Սուրբ Գրիգոր Լուսավորիչը երկար տարիներ մնաց Խոր Վիրապում և իր հոգում ու սրտում հավաքեց Աստծո Լույսը, ապա դուրս գալով տարածեց ողջ հայ ժողովրդին: Հայր Սուրբը հորդորեց, որպեսզի այդ լույսը երիտասարդները ևս ընդունեն իրենց սրտերում և հոգիներում:

Ս. Պատարագի ավարտին ճեմարանականների և համալսարանականների համատեղ ուժերով կազմակերպվեց մշակութային միջոցառում: Լավագույն ասմունքողներին և երգողներին հանձնվեցին մրցանակներ:

Տեղերի վանքից ուխտավորներն ուղևորվեցին Ամբերդ: Հակառակ առատ ձյան՝ ուսանողները հասան Ամբերդի Սուրբ Աստվածածին եկեղեցի, ուր կատարվեց երեկոյան ժամերգություն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Ապրիլի 22-ին, համաձայն հին տոմարի, Վիրահայոց թեմի Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ, Սուրբ Էջմիածին և Բաթումի Սուրբ Փրկիչ եկեցեցիներում մատուցվեց Ճրագալույցի Սուրբ պատարագ: (Նշենք, որ թեմի Սամցխե-Ջավախքի փոխառաջնորդությունը եկեղեցական տոները նշում է նոր տոմարով): Հընթացս Պատարագի ընթերցվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի՝ վիրահայությանն ուղղված շնորհավորական ուղերձը:

Մինչ ուշ երեկո շարունակվեց հավատացյալների անդադրուն հոսքը հայոց եկեղեցիներ: Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցու դռները բաց էին ամբողջ գիշեր: Եկեղեցու սպասավորների հետ միասին, այդ օրն աղոթքով լուսացրեցին հավատացյալները, նրանք, ովքեր Ավագ Շաբաթվա խորհրդաշատ օրերին մասնակիցն էին դառնում եկեղեցում անցկացվելիք հոգեպարար արարողությունների:

Ապրիլի 23-ի առավոտյան մատուցվեց Զատկական Սուրբ Պատարագ: Առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցում պատարագիչն էր թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Հավարտ արարողության Սրբազան Հայրն ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի՝ վիրահայությանն ուղղված շնորհավորական ուղերձը, որից հետո առաջնորդ Սրբազան Հայրը շնորհավորեց ներկաներին և ուղղեց նրանց քարոզի իր խոսքը:

Զատկական տոնը նշանավորվեց եկեղեցու բակում թեմի մշակութային բաժնի նախաձեռնած համերգով, որը վերածվեց ժողովրդական մեծ տոնախմբության:

## ԱՊՐԻԼ 24-Ի ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Ապրիլի 24-ին, ժամը 10.00-ին, նախաձեռնությամբ Վրաստանի հայկական համագործակցության կենտրոնի և Վրաստանի «Նոր սերունդ» հայկական միավորման, Վրաստանում Թուրքիայի դեսպանատան մոտ կազմակերպվեց խաղաղ հանրահավաք և մոմավառություն: Մասնակցում էին հայ երիտասարդներ Թբիլիսիից, ներկայացուցիչներ Վրաստանի քրդական և ասորական համայնքներից:

Հարյուրի հասնող ցուցարարների խումբը եկել էր Թուրքիայի ներկայիս իշխանությունների կողմից Հայոց եղեռնը դատապարտելու պահանջով: Համաբնույթ բովանդակություն ունեին հնչող հայտարարություններն ու կոչերը, հայրենասիրական ոգեշունչ երգերը: Մասնակիցներն ընթերցեցին նաև «Տերունական աղոթք»-ը ու կատարեցին Կոմիտասի «Տէր ողորմեա»-ն: Ի հիշատակ անմեղ զոհերի՝ դեսպանատան առջև դրվեց ծաղկեպսակ: Ըստ նախատեսվածի, դեսպանին պետք է փոխանցվեր բողոքի նամակ-դիմումը, ուր հավաքի մասնակիցները Հայոց Մեծ եղեռնը ճանաչելու պահանջով դիմում էին Թուրքիայի ղեկավար մարմիններին: Պատճառաբանելով, որ այդ օրն աշխատանքային չէ, դեսպանատան աշխատակիցները նամակը չընդունեցին:

Ժամը 11.00-ին Վիրահայոց թեմի եկեղեցիներում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ և կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ անմեղ նահատակների: Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ հայոց եկեղեցում արարողությունն անցավ հանդիսապետությամբ թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի: Արարողությանը ներկա էին Վրաստանի հայ խորհրդարանականներ, Վրաստանի հայերի միության նախագահին ու վարչության անդամները, վիրահայ այլ հավատավորներ ու մտավորականության ներկայացուցիչներ և մեծ թվով հավատացյալներ: Այստեղ էր նաև Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը և դեսպանատան այլ պաշտոնյաներ:

Քարոզի իր խոսքում առաջնորդ Սրբազան Հայրը վիրահայությանը կոչեց միասնական լինել հատկապես այս օրը ու միանալով ազգիս այսօրյա պահանջին՝ դատապարտել և ճանաչել տալ Ցեղասպանության փաստը ողջ մարդկությանն ու ոճրագործության հետնորդ Թուրքիային: Այս գործում Առաջնորդը կարևորեց սփյուռքահայության դերը, ովքեր նվիրված ու անձնուրացաբար շարունակում են Հայ Դատի արդար պաշտպանները լինել: Նա երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր այս օրերին հայ ժողովրդի կողքին են:

Սրբազանը նաև շեշտեց այն հանգամանքը, որ բոլոր կրոններում էլ մեղսագործությունն անպայման ապաշխարություն է պահանջում: Դեռ ազատվում են մեղքից, զղջում և ապա նոր հաշտության գալիս: Չդատապարտված մեղքը նոր մեղք է գործում: Ուստին բոլորս միասին Թուրքիային կոչում ենք ապաշխարության...

Ժամը 14.00-ին Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական դրամատիկական թատրոնում անցկացվեց հուշ-երեկո՝ մասնակցությամբ Վիրահայոց թեմի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգևոր երգչախմբի, թատրոնի առաջատար դերասանների և անհատ կատարողների:

Ներկաներին ողջունեց Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը: Պատմական հայացք նետելով հայոց ամենաողբերգական տարիներին, դեսպանն ընդգծեց կարևոր այն փաստը, որ չնայած թուրք յաթաղանի հայակործան ոճրագործությանը՝ հայ ժողովուրդը շարունակում է ապրել ու բարգավաճել այսօր էլ: Նա հայտնեց, որ այս օրերին Թուրքիայի և Կանադայի հեռուստաընկերությունները ցուցադրելու են «Արարատ» և Է. Գոդենբերգի Հայոց ցեղասպանության մասին պատմող կինոնկարները, իսկ ֆրանսիական իշխանությունները որոշում են կայացրել Եղեռնի անմեղ նահատակների հիշատակը հավերժացնող հուշարձան կանգնեցնել: Սա հույս է ներշնչում,- ասաց պարոն Սիլվանյանը,- որ դարասկզբի առաջին հանցագործությունը առաջիկայում կպատժվի»:

Միջոցառման ավարտին Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանն ընթերցեց վիրահայության անունից Վրաստանի խորհրդարանի խոսնակ Նինո Բուրջանաձեին ուղղված նամակը, որը կոչ էր Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դրանով իսկ աշխարհի ոճրագործությունները կանխելու:

Ժամը 18.00-ին Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցում կայացավ էկումենիկ համերգ՝ նվիրված Հայոց Մեծ եղեռնի անմեղ նահատակների հիշատակին: Հոգևոր երգեցողությամբ հանդես եկան Սուրբ Գևորգ եկեղեցու, Վրաստանում Կաթոլիկ, Բապտիստական և Լյութերական եկեղեցիների հոգևոր երգչախմբերը: Երեկոն անցկացնելու գաղափարն ու նախաձեռնությունը պատկանում էր թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին: Նշենք, որ այսօրինակ միջոցառումն

իր բնույթով անդրանիկն է վիրահայոց սուրբ տաճարում և ընդհանրապես Վրաստանի քրիստոնեական հարանվանությունների միջև:

Այդ օրը հայոց եկեղեցում էին մասնակից քույր Եկեղեցիների առաջնորդները՝ Վրաստանում Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Ջուզեպպե եպիսկոպոս Պազոտտոն, Լյութերական Եկեղեցու առաջնորդ Անդրեաս եպիսկոպոս Շտյոկլը, Բապտիստական Եկեղեցու առաջնորդ Մալխազ եպիսկոպոս Սոնղուլաշվիլին: Ներկա էր և Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին նահատակների հիշատակը: Ողջունելով բոլորին՝ Վազգեն Սրբազանը շնորհակալ եղավ նրանց՝ հայության չսպիացած վիշտը կիսելու համար: Այնուհետև քույր Եկեղեցիներից յուրաքանչյուրն իր լեզվով աղոթք կարդաց և իր խոսքն ուղղեց նահատակների ոգեկոչմանը: Նրանք դատապարտեցին Ցեղասպանության ոճրագործ-հեղինակներին ու հայտնեցին պատրաստակամություն՝ չարագործության դեմ միասնական պայքար մղելու համար:

Մալխազ եպիսկոպոս Սոնղուլաշվիլին շնորհակալություն հայտնեց Վազգեն Սրբազանին՝ միասնական երգեցողության կազմակերպման ու այն հավուր պատշաճի անցկացնելու համար, և առաջարկեց ավանդական դարձնել այն:

Ժամը 20.00-ին, առաջնորդությամբ Սրբազան Հոր և Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանի, եկեղեցուց ներկաների երթն ուղղվեց դեպի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին հայոց եկեղեցի (Հավլաբար): Միասնական աղոթքից հետո եկեղեցու խորանի առջև 91 մոմեր վառվեցին՝ խորհրդանշելով, որ Մեծ եղեռնից անցել է 91 տարի: Միջոցառումը կազմակերպել էր Վրաստանի հայ երիտասարդների միությունը:

1915-ի նահատակների հիշատակը ոգեկոչող սգո միջոցառումներ անցկացվեցին Վրաստանի հայաբնակ շրջաններում և գյուղերում ևս:

Ապրիլի 24-ին, հանդիսապետությամբ Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի փոխառաջնորդ Տ. Բաբգեն աբեղա Սալբիյանի, Սուրբ և Անմահ Պատարագ մատուցվեց Ախալքալաքի Սուրբ Խաչ, Նինոծմինդայի Սուրբ Սարգիս և Ախալցխայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայոց եկեղեցիներում:

Հավարտ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Ախալցխայի հայությունը ծաղկեպսակներ դրեց և մոմեր վառեց Հայոց Մեծ եղեռնի նահատակների հիշատակը հավերժացնող Խաչքարի առջև: Միջոցառումներին մասնակցում էին շրջանային և վարչական իշխանության մարմինների ներկայացուցիչներ:

Բաթումի Սուրբ Փրկիչ եկեղեցում այդօրյա պատարագիչն էր հոգևոր հովիվ Տ. Կիրակոս աբեղա Դավթյանը: Հոգեհանգստյան արարողությանը հաջորդեց տեղի հայ համայնքի նախաձեռնությամբ եկեղեցում անցկացված սգո միջոցառումը:

Հայոց ցեղասպանության 91-րդ տարելիցը նշվեց և Վրաստանի Քվեմո-Քարթլիի տարածաշրջանի Ծալկայի հայահոծ շրջանում: Եղեռնի նահատակների հոգու լուսավորությունը խորհրդանշող խարույկ վառվեց շրջանի ամենաբարձր տեղում՝ Խաչգյուղում, ապա՝ մյուս գյուղերում: Խարույկն ուներ 1915-2006 ձևը և վառվեց ամբողջ գիշեր:

*ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Հայոց ցեղասպանութեան բիւրաւոր զոհերու յիշատակը ոգեկոչուեցաւ Գերմանիոյ զանազան համայնքներու եւ քաղաքներու մէջ: Համայնքային կեդրոնական ձեռնարկները տեղի ունեցան 24 Ապրիլին Գերմանիոյ մայրաքաղաք Պեռլինի, ինչպէս նաեւ Քէօլնի մէջ:

**Քէօլնի** հայ համայնքի ձեռնարկը, որուն իր ներկայութիւնը բերաւ նաեւ Գերմանիոյ հայոց առաջնորդ Գարեգին արքեպս. Պեքճեան, տեղի ունեցաւ առաջնորդանիստ Սուրբ Սահակ-Մեսրոպ եկեղեցւոյ մէջ: Եկեղեցին ամբողջապէս լեցուն էր հայ ու ոչ հայ ներկաներով, պաշտօնական եկեղեցական հիւրերով: Հիմնական բանախօսն էր յայտնի հրապարակագիր, Հայ Եկեղեցւոյ«Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանի շքանշանակիր Ռալֆ Ճորտանոն: Բացի հարգելի Ճորտանոյէն, խօսք ըսաւ Գերմանական Խորհրդարանի անդամ Տիկ. Ուրսուլա Հայնէն: Ձեռնարկը եզրափակուեցաւ առաջնորդ Սրբազանի արտասանած հոգեհանգստեան աղօթքով, մասնակցութեամբ ներկայ հոգեւորականներու դասին:

**Պեռլինի** հայ եկեղեցական համայնքը 23 Ապրիլ 2006-ին Եղեռնի յիշատակին կազմակերպած էր լեցուն յայտագիր մը, որ սկսաւ նոյն օրը Լուիզըն համայնքի Աւետարանական եկեղեցւոյ մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտօնով: Արարողութեան նախագահեց եւ ապա յաւուր պատշաճի քարոզ մը խօսեցաւ շրջանի հովիւ Հոգեշնորհ Տ. Խաչատուր աբեղայ Կնեազեան:

Յուշատօնի աշխարհիկ բաժինը կատարուեցաւ Հայ Տան մէջ, ուր բացման խօսք ըսաւ վարչութեան ատենապետուհի Տիկին Սոնա Այփէր: Օրուան ամենահետաքրքրական պահն էր մանուկներու ներկայացուցած «Վերջին Մտածումը» անուանուած թատերախաղը, որ նուիրուած էր հայոց նահատակներուն: Իսկ պարոն Մարաշ, որ գիտական աշխատանքներ ու հրատարակութիւններ ունի Ցեղասպանութեան մասին, խօսք առնելով, պատասխանեց ներկաներու Ցեղասպանութեան առնչութեամբ տուած հարցումներուն:

Ընդմիջումներուն երգչուհի Մարօ Ֆարմանեան հայկական դասական երգերով հարըստացուց հնչած ելոյթները եւ հանդիսութիւնը փակուեցաւ Հայր Սուրբի աղօթքով:

**Հանաուի** հայ համայնքին ձեռնարկը տեղի ունեցաւ 23 Ապրիլ 2006, քաղաքի Վալոնիշ-Նիտէրլէնտիշէ եկեղեցւոյ մէջ: Տեղի ունեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, որուն աւարտին հայերէն եւ գերմաներէն լեզուներով յաւուր պատշաճի քարոզ խօսեցաւ շրջանի հոգեւոր հովիւ Սերովբէ վրդ. Իսախանեան: Այնուհետ Սերովբէ Հայր Սուրբը իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Ֆրանքֆուրթի Հայ մշակութային միութեան ձեռնարկին, որուն հիմնական բանախօսն էր Գերմանիոյ Պօխում քաղաքի համալսարանին կից գործող Սփիւռքի եւ Ցեղասպանութեան ուսումնասիրման զրասենեակի պատասխանատու աշխատակից Տիկ. Քրիսթին Փլաթ: Յիշատակի խօսք արտասանեց նաեւ Գերմանահայոց կեդրոնական խորհուրդի ատենապետ տոքթ. Շաւարշ Յո-

վասափեան: Ձեռնարկը եզրափակուեցաւ Սերովբէ վարդապետի արտասանած հոգեհանգստեան աղօթքով:

Նոյն օրը, երեկոյեան, Սերովբէ վրդ. Իսախանեան եւ Տ. Հայազատ քհնյ. Մարտիկեան իրենց մասնակցութիւնը բերին **Նոյվիտի** հայ համայնքի ձեռնարկին, որ կազմակերպուած էր շրջանի Միջեկեղեցական մարմնի աջակցութեամբ: Հիմնական բանախօսն էր հայ երիտասարդ իրաւաբան եւ Թեմական Խորհուրդի անդամ Իլիաս Գէորգ Ուեար: Ողջոյնի եւ յիշատակի խօսք ըսաւ նաեւ Նոյվիտի գլխաւոր քաղաքապետ Նիքոլաուս Ռոթ: Ձեռնարկի ընթացքին մեծ պաստառի վրայ ցուցադրուեցան Ցեղասպանութիւնը վկայող, ինչպէս նաեւ Արեւմտահայաստանի պատմական յուշարձաններու եւ եկեղեցիներու փառաւոր անցեալը եւ տխուր ու անմխիթար ներկան ներկայացնող պատկերներ: Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ միջեկեղեցական արարողութիւն՝ ի յիշատակ հայոց բիւրաւոր նահատակներուն:

**Համպուրկին** մէջ Ապրիլ 24-ին Համպուրկահայ մշակութային միութիւնը Մեծ եղեռնի զոհերու յիշատակին կազմակերպած էր հայ դասական երաժշտութեան եւ գրականութեան նուիրուած միջոցառում մը: Դաւիթ եւ Վիւաս հայկական նուագախումբերը ներկայացուցին հայ եւ օտար երաժիշտներու գործերը, իսկ ասմունքող Պէնէտիքթ Վէրմէր բաժիններ կարդաց Էտկար Հիլզէնրաթի «Վերջին մտքի հեքիաթը» գիրքէն:

**Շթութկարթի** կեդրոնական գերեզմանատան մէջ գտնուող յուշարձանի առջեւ 24 Ապրիլին տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն: Իսկ 30 ապրիլին ոգեկոչման հանդիսութիւն մը տեղի ունեցաւ Պատէն-Վիւրթեմպէրկի հայ համայնքի, Շթութկարթի Մշակութային միութեան եւ Էսլինկէնի Մշակութային եւ Մարզական միութեան համատեղ նախաձեռնութեամբ Կէօփինկէնի Հայ Տան մէջ: Յուշատօնին իրենց մասնակցութիւնը բերին բազմաթիւ հայեր եւ օտարներ: Յայտագրի բանախօսներն էին թուրք հեղինակ Տողան Աքհանլը եւ Իշխան սրկ. Չիֆթճեան: Հանդէս եկաւ նաեւ Տիկին Վիլմա Փիլիպոսեան, որ շարժանկարներով ներկայացուց Ցեղասպանութեան ամբողջ պատմութիւնը եւ նախադրեալները: Երաժշտական կատարումներով յանդէս եկաւ երիտասարդ հայ աղջիկներու երգչախումբը եւ, իբրեւ մենակատար, Լեռնիկ Գասպարեան:

**Պրաունշվայկի** Պրիստէրն եկեղեցւոյ բակին մէջ զետեղուած խաչքար-յուշարձանի առջեւ 31 Ապրիլին հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Հոգեշնորհ Տ. Խաչատուր աբեղայ Կնեազեանի եւ Տ. Հայազատ քհնյ. Մարտիկեանի կողմէ՝ մասնակցութեամբ Քոյր Եկեղեցիներու ներկայացուցիչներու եւ հայ ու գերմանացի հաւատացեալներու: Արարողութենէ ետք տեղի ունեցաւ յուշ-երեկոյ:

Յիշատակի եւ ոգեկոչման ձեռնարկներ տեղի ունեցան նաեւ Գերմանիոյ Նիւրնպերկ ու Միւնխէն քաղաքներու մէջ:

*ԴԻՐԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# Ի ՅԱՐԳԱՆՍ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ

Երկուշաբթի, 24 Ապրիլ 2006-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Հայոց Ցեղասպանութեան 91-ամեակին առիթով, առաջնորդութեամբ Իտալահայոց հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Առէն արք. Շահենեանի, Միլանի նշանաւոր Ս. Ամբրոսիոս hնամենի Մայր տաճարի մէջ մեծաշուք հանդիսաւորութեամբ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ, ի յիշատակ Ապրիլեան նահատակաց մերոց: Ս. Պատարագին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Մուշեղ աբղ. Բաբայեանը:

Ս. Պատարագին ներկայ էին Իտալիոյ մէջ Հայաստանի դեսպան Ռուբէն Շուգարեանը, Միլանի քաղաքապետի ներկայացուցիչը, տեղի քոյր Եկեղեցիներու ներկայացուցիչները, Միլանի Եկեղեցական Խորհրդի անդամները, Միլանի մէջ հաստատուած Էկումենիկ Կենտրոնի ներկայացուցիչները, Իտալիոյ Հայոց Հովուութեան ազգային-եկեղեցական հոգաբարձության անդամները՝ գլխաւորութեամբ ատենապետ Տիար Սարօ Խուտավերտեանի, Իտալիոյ Հայոց Միութենական վարչութիւններու ներկայացուցիչները, տեղաբնակ բազում հայորդիներ, ինչպես նաեւ՝ իտալացիներ:

Իր պատգամին մէջ պատարագիչ Հայր Սուրբը կարեւորութեամբ կ'ընդգծէր Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը, շեշտելով նաեւ, որ «Մեծ եղեռնի նահատակներուն նուիրուած յարգանքի այս յուշատօնին, մենք ոչ միայն մեր խոր յարգանքն է, որ կը մատուցանենք մեր անշիրիմ մէկ ու կէս միլիոն նահատակներուն, այլ մենք մեր նահատակները կեանքի կը հրաւիրենք, կը խօսեցնենք իբրեւ ստոյգ պատգամ ու անմահ խորհուրդ, որպէսզի յետ մահու անոնց յիշատակը չթառամի, եւ կ'ուխտենք՝ անոնց նման Ազգն ու Եկեղեցին բարձր պահել ամեն բանէ վեր»:

Հայր Սուրբի քարոզէն ետք խօսք առաւ Հոգեշնորհ Տ. Տիմիթրի Ֆանթինի Իտալիոյ Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ ներկայացուցիչը, որն իր խօսքը աւարտեց՝ ասելով. «Այսպիսով, այս ողբերգութիւնը կը համարենք որպէս քրիստոնէական ցեղասպանութիւն, վկայութիւն, որ քրիստոնէական հաւատքը ունի մարտիրոսութեան սուրբ կնիքը»:

Յաւարտ Սուրբ Պատարագի ներկաները, թափոր կազմած, մոմերով եւ ծաղիկներով ուղղուեցան դէպի նոյն եկեղեցւոյ հարեւանութեամբ զետեղուած՝ Հայոց ցեղասպանութեան բիւրաւոր նահատակներու յիշատակը յաւերժացնող յուշակոթող-խաչքարը, ուրտեղ Միլանի հայոց Ս. Քառասուն Մանկունք եկեղեցւոյ երգչախումբը, գլխաւորութեամբ Տիար Ժան Անսրլեանի, հնչեցուց «Անոնց համար, որ ինկան» երգը (խօսք՝ Վահան Թեքէեանի):

Ոգեկոչման այս բացառիկ արարողութիւնը մեծապէս տպաւորած էր ներկաները, որոնք զիրար կ'ողջունէին արցունքոտ աչքերով եւ զոհունակ սրտով, այն հաստատ համոզումով, որ ոգեկոչման այս արարողութիւնները պիտի շարունակուին, մինչեւ որ ցեղասպանը ընդունի իր կատարած ոճիրը եւ Հայ Ժողովուրդին դատը արդար լուծում մը գտնէ:

Արարողութիւնը աւարտին հասաւ Տէրունական «Հայր մեր» աղօթքով:

Յաւիտենական հանգիստ հոգւոցն նահատակաց մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային Առաջին պատերազմի եւ Արցախեան գոյամարտի վասն մէկ, անբաժան ու անբաժանելի Միացեալ Հայաստանի:

*ԴԻՒԱՆ ՀՈՎՈՒՈՒԹԵԱՆ ԻՏԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ*

# ԿԱԼԿԱԹԱՅԻ ԲԱԲԱԽՈՂ ՍԻՐՏԸ

*Ո՜վ Մարդասիրական մեր չքնաղ ճեմարան,*
*Կյանքի իմացական դարավոր սուրբ օրրան,*
*Եղար սերունդների վեհ փարոսը լույսի,*
*Վեմն անխախտ հավատքի, հորդ աղբյուրը լույսի:*

Աստծո պարգևած ամեն մի առավոտ Մայր Հայրենիքից այդքան հեռու, Հնդկաստանի Կալկաթա քաղաքում, «Տերունական աղոթք»-ով և ճեմարանի խրոխտ հիմնով են սկսում իրենց դասերը Հայոց Մարդասիրական ճեմարանի սաները՝ իրենց հոգում ուխտելով հավատարիմ մնալ մեր լուսավոր նախնիների սուրբ հավատքին ու թողած հսկայական ժառանգությանը, որի ականատեսն ու բարիքների վայելողն են իրենք Հնդկաստանի հյուրընկալ հողում:

Այսօր Հայաստանից, Իրանից ու Իրաքից այստեղ սովորող յուրաքանչյուր անձ քաջ գիտակցում է, որ ինքը սանն է 185-ամյա կրթական մի հաստատության, որ բազում սերունդներ է կրթել՝ Հայրենիքից հեռու միշտ վառ պահելով հայաշունչ ոգին ու միտքը, ներարկելով նրանց ազգային գիտակցություն և հպարտություն: Բազմաթիվ են պատեհ առիթներն ու տոնախմբությունները ճեմարանում, սակայն դրանց մեջ միշտ էլ իր առանձնակիությամբ ու բովանդակությամբ տարբերվել է ապրիլի 2-ը՝ Մարդասիրական ճեմարանի հիմնադրման օրը, որ ամենքիս մղում է՝ հետադարձ հայացք նետելու պատմական կրթօջախի անցյալին, ինչպես նաև արժևորելու և գնահատելու նրա խաղացած դերն ու նշանակությունը հայ իրականության մեջ: Յուրաքանչյուր նման հոբելյան նաև պատեհ առիթ է ընձեռում՝ մտածելու այն բոլոր ապագա քայլերի և ծրագրերի մասին, որոնց նպատակը պիտի լինի օր առաջ տեսնել Մարդասիրական ճեմարանն ավելի զորացած, խնամյալ ու բարգավաճ:

Ապրիլի 2-ին՝ Հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնադրման օրը, Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում կատարվեց կիրակնօրյա պաշտամունք և կրկին եկեղեցու խնկաբույր կամարների ներքո հնչեց այն զորավոր ու մշտամնա աղոթքը, որ երբեք չի պակասել մեր հայրերի շուրթերից, մի աղոթք և օրհնություն, որ արդեն իսկ դարեր շարունակ թևածում է հնդկահայոց եկեղեցիներում՝ դառնալով առհավատչյան և գրավականը գաղութի կենսունակության: Միասնական աղոթքից հետո ներկաները թափորով դուրս եկան եկեղեցու բակ, ուր ճեմարանի հիմնադիր, Ջուղայեցի բարեգործ վաճառական Աստվածատուր Մուրադխանյանի գերեզմանին կատարվեց հոգեհանգիստ: Վերջինս դեռ ԺԸ դարի վերջնամասում երազն ու տեսիլքն ունեցավ և 1797 թ. հուլիսի 30-ին 8000 հնդկական ռուփի կտակեց Հնդկաստանում հայ պատանիների համար ազգային դպրոց հիմնելու համար: Չնայած իր կենդանության օրոք նա չկարողացավ տեսնել իր երազի իրականացումը, սակայն երկու տասնամյակ անց մեկ այլ Ջուղայեցի վաճառական՝ Սեյդաբադում հաստատված Մնացական Վարդանյանը, կրկին կյանքի կոչեց այդ վսեմ գաղափարը, և 1821 թ. ապրիլի 2-ին Ս. Նազարեթ հայկական եկեղեցու հարևանությամբ, Հին Չայնա Բազար փողոցի վրա, հիմնադրվեց Մարդասիրական ճեմարանը:

Երբ ծանոթանում ես հնդկահայ գաղութի փառապանծ պատմությանն ու Հայրենիքի սիրով տոգորված նրա սիրասուն զավակների գործունեությանը, չես կարող լուռ մնալ ու չոգևորվել նրանց ազգային-հայրենասիրական ոգու դրսևորմամբ: Ասես աստվածային նախախնամությունն է պատճառը, որ ուր մեր «փոքր ածուն» հաստատվել է, նախ՝ եկեղեցի, աղոթքի տուն է շինել, իսկ այնուհետև դրա կողքին՝ նաև կրթության դարբնոց, որովհետև նրանք քաջ գիտակցել են ազգային կրթության կարևորությունը, որովհետև մեր նախնյաց օրինակով համոզվել են, որ աներեր է Ս. Գրիգոր Լուսավորչի առաքելական հավատքը, աստվածպարգև են Ս. Մեսրոպի ստեղծած 36 զինվորները, անպարտելի է Ս. Վարդանանց ոգին, և որ մեր երակներով հոսում է իրապես արժանավոր ու օրինակելի մեր նախնյաց արյունը:

Հոգեհանգստից հետո հավուր պատշաճի քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ անդրադառնալով Մարդասիրական ճեմարանի պատմությանը և անցած ուղուն: Օշական վարդապետը հատկապես ընդգծեց, որ պահի և ժամանակի ճշմարիտ գիտակցությամբ էր, որ տարիներ առաջ ճեմարանը հանձնվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը՝ դրանով իսկ ապահովելով կրթօջախի հարատևությունը:

«Մայր հայրենիքի, Առաքելական մեր Եկեղեցու, ազգային կրթության և դաստիարակության նկատմամբ լցված մեծ սիրով են ապրել ու գործել մեր նախնիները, քանզի ուր էլ գնացել են, որպես իրենց նախնիների արժանավոր ժառանգներ, նախ աղոթքի տուն են կառուցել և ապա՝ կրթության դարբնոց՝ եկեղեցու Ս. Խորանը վերածելով գիտության և լուսավորության խորանի: Խոսքերիս ճշմարտացիության վկաներն են Հնդկաստանի հյուրընկալ հողում կառուցված մեր եկեղեցիներն ու Հայոց Մարդասիրական ճեմարանը, ուր բազմաթիվ սերունդներ են կրթվել ու հասակ առել: ...Հոբելյանական օր է այսօր մեր կրթօջախի համար, քանզի 185 տարիներ առաջ, հենց այս նույն օրը, հիմնադրվեց այն, որով և իրականություն դարձավ Աստվածատուր Մուրադխանյանի և Մնացական Վարդանյանի երազը՝ ունենալ ազգային մի կրթօջախ, ուր հայեցի կրթություն և դաստիարակություն պիտի ստանային հայ մանուկները: Հետևաբար, սիրելի՛ ներկաներ և ճեմարանականներ, մեր ջանադիր ուսումնառությամբ, մեր առաքինի գործերով, մեր օրինապահությամբ ամեն ինչ պիտի անենք՝ ավելի հաստատուն դարձնելու երկու հիմնադիր-բարերարների նվիրական երազը: Պիտի վստահ լինեք, որ նրանց հոգիները ցնծում են այսօր երկնքում, քանզի տեսնում են, որ իրականացել է իրենց փափագը, որ հայ մանուկը Հայրենիքից հեռու մեծանում է հայաշունչ ու հայախոս»,- նշեց Օշական վարդապետն իր ոգեշունչ քարոզում: Արարողությանը մասնակցում էին բարեպաշտիկ այս առիթով Կալկաթա ժամանած Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանը, Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր և հյուրեր:

Կեսօրին ճեմարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված ճեմարանի հիմնադրման օրվան: Այն սկսվեց միասնական «Տերունական աղոթք»-ով, որից հետո հնչեցին Հնդկաստանի և Հայաստանի օրհներգները: Ճեմարանի հիմնադրման առիթով իր Հայրական խոսքն էր հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որն ընթերցեց ճեմարանի ադմինիստրատոր Տիգրան սրկ. Բաղումյանը:

*«Հնդկահայ համայնքի կյանքում բացառիկ իրադարձություն դարձավ Մարդասիրական ճեմարանի հաստատումը: Մտահոգ իրենց ազգային ինքնությունը, մայրենի լեզուն ու մշակույթը պահպանելու խնդիրներով, հնդկահայերը սիրով ներդրեցին իրենց ջանքերը և համայնքային հանգանակությամբ ապահովեցին կրթօջախի երկարատև գործունեությունը՝ գիտության լույսով ու Հայրենյաց արժեքներով կրթելու մատաղ սերնդին: ...Հայրական սիրով օրհնում ենք կրթօջախի սաներին: Սիրելի՛ զավակներ Մեր, քաջեռա՛նդ եղեք ուսման մեջ և որդիաբար սիրեցե՛ք Մեր Սուրբ Եկեղեցին ու Հայրենի Երկիրը մեր, լուսո խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը»*,- ասվում է Նորին Սրբության օրհնության խոսքում:

Այնուհետև ներկաներին և հատկապես ճեմարանականներին իր սրտի խոսքն ասաց Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը՝ անդրադառնալով հայ-հնդկական բարեկամական հարաբերություններին և առկա ծրագրերին՝ երկու երկրների ջերմ հարաբերություններում ընգծելով պատմական կալկաթահայ գաղութի և Մարդասիրական ճեմարանի նշանակությունն ու դերը:

Ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց նաև Մարդասիրական ճեմարանի արվեստի և նկարչության նախկին ուսուցիչ Սունիլ Սարկարը, որը շուրջ 30 տարիներ շարունակ դասավանդել է ճեմարանում՝ ճեմարանականների հոգում խթանելով սերը գեղեցիկի, բարու նկատմամբ: Մեծ հուզմունքով էր խոսում վաստակավոր ուսուցիչը և պատգամում ճեմարանականներին, որ ճիշտ և նպատակային օգտագործեն Բարձրյալից իրենց տրված աստվածային շնորհները:

Այնուհետև խոսքով հանդես եկավ ճեմարանի անգլերեն լեզվի և գրականության բազմամյա ուսուցչուհի Բրիտա Ռոյը՝ ուսուցիչների անունից շնորհակալություն հայտնելով ճեմարանի ղեկավարությանը հոգատար վերաբերմունքի համար: Դիմելով ճեմարանականներին՝ նա հորդորեց, որ առավել նախանձախնդրությամբ սերտեն իրենց դասերը՝ ամենուր բարձր պահելով Մարդասիրական ճեմարանի անունը:

Ճեմարանի տնօրեն Ջեյմս Դայասը հանդես եկավ անցնող ուսումնական տարվա ամփոփիչ զեկույցով՝ անդրադառնալով ճեմարանականների ցուցաբերած առաջադիմությանը, ձեռքբերումներին և ապագա ծրագրերին: Տնօրենն ուրախությամբ արձանագրեց, որ ճեմարանի նոր ղեկավարության ջանադիր աշխատանքի շնորհիվ այսօր մեծ ուշադրություն է դարձվում հատկապես կրթությանն ու երեխաների բազմակողմանի զարգացմանը՝ վստահեցնելով, որ նախանձախնդրության նույն ոգով և ավյունով շարունակելու դեպքում մոտ ապագայում պիտի ունենանք ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող ուսումնական հաստատություն և ամենակարևորը՝ ուսյալ ճեմարանականներ:

Տնօրենի խոսքից հետո տեղի ունեցավ նվերների ավանդական բաշխումը, որի ընթացքում պարգևատրվեցին ուսումնառության և կարգապահության ասպարեզներում լավագույն արդյունք ցույց տված ճեմարանականները: Նվերները հանձնեց Հնդկաստանում ՀՀ դեսպանը:

Հանդիսության երկրորդ մասում ճեմարանի երաժշտության ուսուցիչ Վաչագան Թադևոսյանի ղեկավարությամբ ելույթ ունեցավ ճեմարանի երգչախումբը՝ կատարելով հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Ճեմարանականներն իրենց հմտությունները ցույց տվեցին նաև ասմունքի և երգի ասպարեզներում: Նրանք ներկաների ուշադրությանը հանձնեցին նաև փոքրիկ մի ներկայացում անգլերեն լեզվով:

Ուրախալի և ոգևորիչ էր, երբ Հայրենիքից այդքան հեռու հայ մանկան շուրթերից աղոթքի նման արտաբերվում էր մեսրոպաշունչ մեր լեզուն՝ ամենքի սրտերն ու հոգիները լցնելով անհուն ուրախությամբ: Ինչպե՞ս կարելի է չուրախանալ և հուզմունքից չարտասվել, երբ կալկաթահայ համայնքի վերջին արու զավակը՝ ճեմարանի արդեն իսկ 10-րդ դասարանի սան Ջարեհ Ստեփանյանը, մեծ ոգևորությամբ արտասանում էր Ավետիք Իսահակյանի «Է՜յ, ջան Հայրենիք»-ը, երբ Հայրենիքը չտեսած, բայց նույն այդ Հայրենիքի նկատմամբ անսահման սիրով լցված հայ պատանու շուրթերը գովերգում են մայր հողի գեղեցկությունն ու զորությունը: Այս ամենին հաղորդ դառնալուց հետո ակամայից մտածում ես, որ ամեն ինչ կորած չէ, որ Ջարեհի նման հայ պատանիները պիտի միշտ վառ և արթուն պահեն հայության ոգին Հնդկաստան աշխարհում:

Ներկաներին խոսքով դիմեց նաև Կալկաթայի եկեղեցական վարչության ատենապետ Հայկ Սուքիասը: Նա շնորհավորեց ամենքին Մարդասիրական ճեմարանի հիմնադրման օրվա առիթով՝ վստահեցնելով, որ Կալկաթայի եկեղեցական խորհուրդն այսուհետ ևս յուրովսանն պիտի զորակցի և աջակցի ճեմարանին:

Վերջում հանդիսությունն ամփոփեց ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը՝ շեշտելով ավանդության պահպանման անհրաժեշտությունը հնդկահայ գաղութում: Օշական վարդապետը ևս մեկ անգամ շեշտեց, որ այս տարին հիշարժան է նաև նրանով, որ ճեմարանն Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը հանձնելուց հետո իր առաջին հունձքն է տալիս: Ճեմարանի չորս սաներ, որոնցից մեկը կալկաթահայ է, իսկ մնացածը՝ Հայաստանից, ավարտեցին իրենց ուսումնառությունը Մարդասիրական ճեմարանում և 11-12 դասարանները պիտի ուսանեն տեղի դպրոցներից մեկում: Հայր Սուրբը ջերմորեն շնորհավորեց նրանց՝ մաղթելով, որ Աստծո օգնականությամբ և մեր նախնիների օրինակով իրենց ուսումնառությամբ միշտ բարձր պահեն հայ մարդու անունը, ճիշտ և նպատակային օգտագործեն իրենց որպես շնորհ տրված երկրային ժամանակը:

Հիմնադրման օրը նշանավորվեց երկար սպասված մեկ այլ միջոցառմամբ ևս: Կալկաթայի եկեղեցական վարչության ատենապետը և Հնդկաստանում մեր դեսպանը կտրեցին ավագ տարիքի տղաների համար նախատեսված վերանորոգված ննջարանի ժապավենը՝ պաշտոնապես բացված համարելով այն: Վերանորոգված և կահավորված նոր ննջարանը նախատեսված է շուրջ երեսուն սաների համար:

Վերջում տեղի ունեցավ հյուրասիրություն:

*ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ*
*Մարդասիրական ճեմարանի ադմինիստրատոր*

# ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ապրիլի 9-ին՝ Ծաղկազարդի տոնի օրը, Ս. Պատարագ մատուցվեց Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում: Պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Սրբազան արարողության ընթացքում պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով օրվա խորհրդին:

Օշական վարդապետն իր քարոզում ջերմորեն շնորհավորեց Մարդասիրական ճեմարանի բոլոր սաներին մանուկների օրհնության օրվա ուրախարար առիթով՝ մաղթելով, որ նրանք լինեն առողջ և խելացի՝ պատիվ բերելով իրենց Հայրենիքին ու Եկեղեցուն:

«Հայր մեր»-ից առաջ կատարվեց անդաստան և մանուկների օրհնության կարգ, որի ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան և Մարդասիրական ճեմարանի ադմինիստրատոր Տիգրան սրկ. Բաղումյանն ընթերցեց այս տոնի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ մանուկներին ուղղված օրհնության խոսքը:

Արարողությանը ներկա էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, Մարդասիրական ճեմարանի սաները և կալկաթահայեր:

# Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ապրիլի 15-ին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում մատուցվեց ճրագալույցի Ս. Պատարագ: Պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Օրվան պատշաճ սուրբգրային բոլոր ընթերցվածները կարդացին Մարդասիրական ճեմարանի սաները:

Ապրիլի 16-ին կրկին բազմամարդ էր Ս. Նազարեթ հայկական եկեղեցին: Փրկչի Ս. Հարության տոնին Ս. Պատարագ մատուցեց Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Հընթացս Սրբազան արարողության Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Ս. Հարության խորհրդի նշանակությանը քրիստոնյայի կյանքում: Նա ջերմորեն շնորհավորեց բոլորին Ս. Հարության տոնի առիթով՝ մաղթելով, որ Քրիստոսի հարության լույսն ու հույսը միշտ ուղեկից լինի նրանց: Հատկանշական էր, որ այդ օրը բոլոր նրանք, ովքեր գտնվում էին եկեղեցում, Ս. Հաղորդություն ստացան:

Սրբազան արարողություններին ներկա էին ուրախալի այս առիթով Կալկաթա ժամանած Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ դեսպանության կցորդ Արտյոմ Խաչատրյանը, Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները:

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՈՒՄ

Ապրիլի 24-ին, Մեծ Եղեռնի 91-ամյակի կապակցությամբ, Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու բակում տեղադրված Հայոց ցեղասպանության 50-ամյակին նվիրված հուշաքարի մոտ, գլխավորությամբ հնդկահայոց հոգևոր հովիվ և Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի, կատարվեց հոգեհանգիստ բյուրավոր նահատակների հոգիների խաղաղության համար: Արարողության ավարտին Հայր Սուրբը խոսքով դիմեց ներկաներին՝ ընդգծելով, որ երբեք չպետք է մոռացության մատնենք մեր բյուրավոր նահատակների հիշատակը և մեր գործերով ու անդուլ աշխատանքով զորացնենք մեր անկախ Հայրենիքն ու Առաքելահիմն Սուրբ Եկեղեցին, որպեսզի այլևս չկրկնվեն նմանատիպ ոճրագործությունները:

Հոգեհանգստին մասնակցում էին Հնդկաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանը, Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները: Հավարտ հոգեհանգստի ներկաներն այցելեցին և ծաղկեպսակներ դրեցին Առաջին համաշխարհային պատերազմում զոհվածների հուշարձանին, որից հետո հնդկահայոց հոգևոր հովիվը և եկեղեցական խորհրդի մի քանի անդամներ օրվա առիթով այցելեցին «Future hope» բարեգործական կազմակերպություն, որ խնամում է շուրջ 120 թափառաշրջիկ երեխաների: Օշական վարդապետը Հայոց Եկեղեցու անունից հանձնեց բանկային մի չեկ, որի գումարով կհոգացվեն երեխաների մեկ շաբաթվա սննդի բոլոր ծախսերը:

Երեկոյան Հայոց Մարդասիրական ճեմարանի շենքում տեղի ունեցավ ոգեկոչման երեկո՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը, որից առաջ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, Հնդկաստանում մեր դեսպանը և Կալկաթայի եկեղեցական վարչության ատենապետ Հայկ Սուքիասը ճեմարանի տարածքում տնկեցին մշտադալար մի եղևնի՝ ի հիշատակ մեր նահատակների: Միջոցառման սկզբում բարիգալստյան խոսք ասաց ճեմարանի ադմինիստրատոր Տիգրան սրկ. Բաղումյանը: Այնուհետև Հնդկաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանն ընթերցեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ուղերձը Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ: Նա նաև հանդես եկավ բանախոսությամբ՝ համառոտ անդրադառնալով Հայոց ցեղասպանության պատմությանը և միջազգային ճանաչման գործընթացին: Երեկոյի ընթացքում ներկաները դիտեցին Հայոց Մեծ եղեռնին նվիրված վավերագրական տեսաֆիլմ:

Ոգեկոչման երեկոյին մասնակցում էին Կիպրոսի և Սլովակիայի պատվո հյուպատոսները, ՌԴ պատվո հյուպատոսարանի խորհրդականը և մշակութային կենտրոնի տնօրենը, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները:

*ԴԻՎԱՆ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ*

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 91-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Հայոց ցեղասպանութեան 91-րդ ամեակի յիշատակը հանդիսաւոր կերպով ոգեկոչուեցաւ Դամասկոսի Հայ գաղութէն ներս: Դամասկոսի հայոց Առաջնորդութեան եւ Մշակութային Միութիւններու կազմակերպութեամբ Կիրակի երեկոյեան կատարուեցաւ հսկումի արարողութիւն:

Կիրակի, 23 Ապրիլին, Սուրբ Սարգիս եկեղեցւոյ մէջ Խաղաղական ու հանգստեան արարողութենէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան արարողութիւն եւ ծաղկեպսակներու զետեղում նահատակաց յուշարձանին առջեւ, նուագակցութեամբ Ն.Ս.Մ.Մ. փողերախումբի, ղեկավարութեամբ տիար Անդրանիկ Մարաշլեանի, որմէ ետք գեղարուեստական յայտագիրով հանդէս եկան դամասկահայ միութիւնները:

Երեկոյի հանդիսավարուհի տիկին Հայկանոյշ Խորոզեան նախ ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան լռութեան, ապա ողջունելով հավաքուածներուն, կատարեց բացումը գեղարւեստական բաժնին, որը սկսուեցաւ Սիամանթոյի «Խաչը» բանաստեղծութեամբ, զոր ասմունքեց օր. Լարա Մեշճեանը: Ապա Սուրբ Սարգիս եկեղեցւոյ Դպրաց դասը, ղեկավարութեամբ տոքթ. Նազարէթ Քիրազեանի, կատարեց «Տէր ողորմեան» եւ «Սուրբ, սուրբը»: Յետ այնու օր. Նայիրի Ալլահվէրտեան ասմունքեց Ռուբէն Սեւակի «Վերջին Հայեր» քերթուածը: Դամասկոսի Մշակութային Միութիւններու անունով օրուայ խօսքը արտասանեց տոքթ. Ճորճ Բարսեղեանը: Տոքթ. Բարսեղեան իր խօսքին մէջ հանգամանալից կերպով անդրադարձաւ Հայ Միութիւններու համագործակցութեան կարեւորութեան եւ ապա ըսաւ. «Եթէ Հայաստանի անկախութիւնը մեզի համար երազ մըն էր եւ այսօր իրականութիւն դարձաւ, ապա վստահ ենք, որ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումն ալ տեսլական մըն է, որ իրականութիւն պիտի դառնայ»: Ապա ներկաները առինքնուած ըմբոշխնեցին «Կռունկը», որ ֆլիւտի վրայ կատարեց օր. Ռուբինա Եագուպեանը:

Հսկումը փակուեցաւ Դամասկոսի հայոց առաջնորդ Գերշն. Տ. Արմաշ եպիսկոպոս Նալպանտեանի խօսքով եւ «Պահպանիչով»:

Երկուշաբթի, 24 Ապրիլին, Դամասկոսի Հայ երեք Համայնքապետերու հովանաւորութեամբ կեանքի կոչուած «Միացեալ Յանձնախումբը», մասնակցութեամբ Դամասկահայ միութեանց, կազմակերպած էր յուշատօն գեղարուեստական բաժինով: Յաւարտ հանդիսաւոր Սուրբ Պատարագի կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն Ապրիլեան յուշակոթողին առջեւ: Ցընթացս Սուրբ Պատարագին օրուայ պատգամը տուաւ թեմիս առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալպանտեանը: Ս. Պատարագին ներկայ գտնուեցաւ Դամասկոսի Մարոնի Եկեղեցւոյ առաջնորդ Րիմոն Իտ եպիսկոպոսը, որ անձամբ աղօթեց նահատակաց յուշարձանին առջեւ, իր զօրակցութիւնը յայտնելով մարտիրոս հայ ժողովուրդին: Յետ Սուրբ Պատարգի, կէսօրին, Ն.Ս.Մ.Մ. նուագախումբի եւ փողեխումբի տխուր նուագակցութեամբ բոլոր ներկա-

ները ուղեւորուեցան Ազգ. Գերեզմանատուն, ուր կատարուեցաւ եւս հոգեհանգիստ նահատակաց յուշարձանին առաջ: Ազգ. Գերեզմանատան մէջ իր պատգամը տուաւ Դամասկոսի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Պատուելի Տաթեւ Պասմաճեանը:

Կէսօրին Դամասկոսի հայոց առաջնորդ Արմաշ Սրբազան եւ Դամասկոսի Միութիւններու ներկայացուիչներ այցելեցին ՀՀ Դեսպանութիւն եւ յուշամատեանին մէջ արձանագրեցին իրենց յարգանքն ու զօրակցութիւնը հայ նահատակներուն:

Երեկոյեան Սուրբ Պատարագ մատուցուեցաւ Դամասկոսի Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, որմէ ետք հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ:

Յետ Սուրբ Պատարագի Հայ Կաթողիկէ Ամինեան սրահին մէջ կատարուեցաւ Նահատակաց յուշահանդէս: Օրուայ հանդիսավարուհի օր. Դալար Գազանճեան, ողջունելով բոլոր ներկաները, մէկ վայրկեան լռութեան հրաւիրեց ի յարգանք Ապրիլեան նահատակներուն: Բացումը կատարեց Դամասկոսի Կաթողիկէ Հայոց առաջնորդ Արհ. Յովսէփ եպս. Առնաութեանը: Գերապայծառ Տէրը Յարութեան լոյսին խորհուրդովը ոգեկոչեց նահատակները, որոնք մարտիրոսացան իրենց հաւատքին համար: Յետ այնու ներկայացուեցաւ «Կոմիտաս Վարդապետի Վերջին Աղբումը» բեմադրութիւնը, կազմակերպութեամբ Հ.Ե.Ը.-ի, գեղարուեստական ղեկավարութեամբ տիար Ռաֆայէլ Կիւլնազարեանի: Ապա տիկ. Անոյշ Մարաշլեան իր շեշտող եւ ելեւէջներով հարուստ առոգանութեամբ ասմունքեց Սիամանթօյի «Պարը»:

Յայտագիրի երաժշտական մասը ճոխացուց օր. Նաիրա Ղազարեան դաշնակի վրայ ունկնդիրներուն ներկայացնելով Արամ Խաչատուրեանի «Սուսերներով Պար»-ը եւ «Անտանթէ»-ն: Երկրորդ կենդանի պատկերով հանդէս եկաւ Թէքէեան Մշակութային Միութիւնը եւ ներկայացուց «Ժողով» բեմադրութիւնը, գեղարուեստական ղեկավարութեամբ տոքթ. Ճորճ Բարսեղեանի: Այժմէական ցաւերու նկարագրումին նուիրուած էր բեմադրութիւնը, թէ ինչպէս երբ հայ ժողովուրդի ղեկավարներ մինչ կը մտածեն ու ժողովի ընդմէջէն կ՚ուզեն որոշել Հայրենիք վերադառնալ, թշնամին արդէն իսկ կը զետեղէ մեզ մեր Հայրենիքէն բաժնող պատնէշը: Սակայն նոր սերունդի զաւակներ կը քանդեն այն պատնէշը իրենց հայեացքը սեւեռելով Հայրենիքին: Ապա տիկ. Նորա Պալեան խրոխտ եւ յուզիչ առոգանութեամբ ասմունքեց Արսէն Երկաթի «Վրէժ արիւն»-ը:

Օրուայ հիւրը՝ տիար Անդրանիկ Տագեսեան (Հայկազեան Համալսարան - Լիբանան), բանախօսեց «Եղեռնը եւ մեր այսօրը» թեմայով: Ան կարճ պատմականը ընելով 20-րդ դարու առաջին ահաւոր Ցեղասպանութեան, անդրադարձաւ Ցեղասպանութեան յիշատակումին եւ առկայութեան հայ ժողովուրդի այսօրուայ կեանքին մէջ: Իր շահաւէտ բանախօսութեան մէջ ան կոչ ուղղեց ապրիլ եւ յիշատակել Ապրիլ 24-ը, եւ զայն չսահմանափակել միմիայն միօրեայ միջոցառումներով, այլ դարձնել իւրաքանչիւրին ամենօրեայ ոգեկոչման աղբիւր, որով նաեւ պիտի բիւրեղանայ մեր ինքնութիւնը, ի փառս մեր նահատակներուն:

Հայ Կաթողիկէ Միութեան «Քնար» երգչախումբը, խմբավարութեամբ Շանթ Քէշիշեանի ու դաշնակի ընկերակցութեամբ Առնօ Քէշիշեանի՝ յաջողդաբար ներկայացուց ազգային երգեր, դիւթելով ներկաները։

Յուշահանդէսը փակուեցաւ Դամասկոսի հայոց առաջնորդ Գերշն. Տ. Արմաշ եպիսկոպոս Նալպանտեանի խօսքով։ Առաջնորդ Հայրը իր պատգամին մէջ հրաւիրեց բոլոր ներկաները քանդելու լռութեան պատը եւ անդադար խօսիլ ու գործել Հայոց ցեղասպանութեան ճանաչման համար եւ չընկճիլ մինչեւ Հայ ժողովուրդի արդար դատի արդար լուծումն ու իրաւունքներու վերականգնումը։ Ան ըսաւ. «Մենք գիտենք լռել։ Կը լռենք, սակայն միայն մէկ վայրկեան, այն ալ յարգելու համար յիշատակը մեր նահատակներուն»։ Ապա Սրբազան Հօր «Պահպանիչով» եւ Հայաստանի Ազգային քայլերգով աւարտեցաւ յուշահանդէսը։

Ուրբաթ, 28 Ապրիլին, երեկոյեան, Դամասկոսի Սուրբ Սարգիս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ շահաւէտ դասախօսութիւն, նուիրուած Հայոց ցեղասպանութեան 91-րդ ամեակին։ Օրուայ բանախօսն էր Գերմանիայէն ժամանած տիկին տոքթ. Թեսսա Հօֆմանն։ Տիկին Հօֆմանն Պէրլինի ազատ Համալսարանի Արեւելեան Եւրոպայի Ինստիտուտի Փիլիսոփայական Գիտութիւններու Տոքթոր է, զոր միաժամանակ ունի բեղուն ուսումնասիրութիւններ եւ հրատարակութիւններ նուիրուած Հայկական հարցին։ Ան մեծ աւանդ ունի Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման գործընթացին մէջ։ Տոքթ. Հօֆմանն բանախօսեց «Գերմանիա եւ Հայաստան։ Պատմական պատասխանատուութեան առջեւ» խորագիրով։

Գերմանիայէն իր հետ ժամանած տիար Ժիրայր Քոչարեան (Գերմանիոյ տեղեկատուութեան եւ փաստագրութեան կեդրոնի տնօրէն) նախ ներկայացուց օրուայ բանախօսուհին՝ տալով կարճ կենսագրական մը։ Ապա տիկին Հօֆմանն անդրադառնալով ցեղասպանութեան իրականութեան, մանրամասնօրէն կատարեց պատմականը ցեղասպանութեան, ի մասնաւորի շեշտելով Կայսերական Գերմանիոյ մեղսակցութիւնն ու մասնակցութիւնը ցեղասպանութեան, ինչպէս նաեւ Գերմանիոյ լռութիւնը Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման գործընթացին մէջ։ Իր բանախօսութեան աւարտին ան ներողութիւն խնդրեց իր պետութեան համար, որ առ այսօր չէ ընդունած Հայոց ցեղասպանութիւնը, շարժելով ներկաներուն յուզումը։

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ

(Ապրիլ 28, 2006)

Հակառակ Իրաքի մէջ տիրող անապահով եւ անկայուն վիճակին, Պաղտատի հայ գաղութը այս տարի եւս ստուար թիւով եկաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցին՝ մասնակցելու մեր մէկ ու կէս միլիոն զոհերու հոգիներուն խաղաղութեան նուիրուած Ս. Պատարագին, հոգեհանգստեան պաշտօնին եւ ապա ներկայ գտնուելու այս առիթով կազմակերպուած յուշատօնին, որուն կը մասնակցէին Պաղտատի մէջ գործող միութիւններէն, Ազգային Վարժարանէն, Հայ Եկեղեցասիրաց Կազմէն ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ Ջուարթնոց Դպրաց Դասը:

Խորանին առջեւ զետեղուած էին ծաղկեպսակներ Ազգային Կեդրոնական Վարչութենէն, Եկեղեցւոյ զանազան միաւորներէն եւ Պաղտատի հինգ հայկական միութիւններէն: «»

Օրուան պատարագիչն էր իրաքահայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Աւագ արքեպս. Ասատուրեանը: Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, որմէ անմիջապէս ետք Ջուարթնոց Դպրաց Դասը երգեց «Շարան-Շարան» մահերգը, որուն ընթացքին Ազգային Վարժարանի հինգերորդ եւ վեցերորդ նախակրթարանի աշակերտութիւնը մուտք գործեց եկեղեցի, պատշաճ զգեստներով եւ ձեռքերնին փոքր ծաղկեփունջեր բռնած:

Յայտագրին սկիզբը աշակերտները ելոյթ ունեցան խմբական արտասանութեամբ (Յ. Յակոբեանի «Մեռան Չկորան»-ով) որմէ ետք երգեցին ազգային-ժողովրդական «Խանի երգը», ղեկավարութեամբ Վարժարանի երգի եւ երաժշտութեան ուսուցչուհի տիկ. Շաղիկ Վարդանեանի:

Աշակերտութեան յաջորդեց Անիթա Իշխանեանը՝ Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան կողմէ արտասանելով Յովհաննէս Թումանեանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծութիւնը:

Հայ Եկեղեցասիրաց Կազմի երկսեռ պատանիներէ կազմուած երգչախումբը (ղեկավարութեամբ Յակոբ Թաթեանի) երկու երգ ունէր յայտագրին մէջ՝ Վահան Թէքէեանի «Ոգերգ Նահատակաց»-ը եւ Սողոմոն Տարօնցիի վերամշակած «Ով Հայոց Աշխարհ»-ը: Երգերը տպաւորիչ էին եւ ներկաներուն մէջ ստեղծեցին թէ՛ կսկիծ օրուան առիթին ի տես եւ թէ՛ գնահատանք մատղաշ այն տղոց եւ աղջիկներուն նկատմամբ, որոնք այս պայմաններուն ներքոյ կրցած էին գովելի կերպով հանդէս գալ:

Իրաքի Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը նոյնպէս բաժին ունէր յայտագրին մէջ, որոնց ներկայացուցիչը՝ Մարիա Մարգարեանը, արտասանեց Թումանեանի «Հոգեհանգիստ» բանաստեղծութիւնը:

Ջուարթնոց Դպրաց Դասի (ղեկավարութեամբ պրն Նուպար Բշտիկեանի) երգած կտորները, պատշաճ կերպով զետեղուած էին յայտագրի զանազան մասերուն մէջ:

Տիրող երակը այդ երգերուն ազգայինն էր, որոնց ընդմեջէն ներկաները թօթափեցին օրուան ողբերգական լուծը ու ներշնչուեցան հայ ժողովուրդի հերոսական խիզախութիւններով, պատկառելի դիմադրականութեամբ եւ օրինակելի տոկունութեամբ։ Եկեղեցւոյ սրբազան կամարները արձագանքեցին «Իբրեւ Արծիւ»ը, «Կռունկ Բարով Դառնաս»ը, «Կամաւորներու Քայլերգ»ը եւ «Դրօշ Եռագոյն»ը, որոնք ներկայացուեցան ժողովուրդին գովելի կատարողութեամբ մը։

Մարիամ Խզարճեանը (Իրաքի Հայ Տիկնանց Մշակութային Միութեան կողմէ) արտասանեց Նիկողոս Սարաֆեանի «Ցաւ է ու Բերկրանք» կտորը։ Արտասանողներէն վերջինը եղաւ Մասիս Արծիւեանը (Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ)՝ արտասանելով Արմէն Անոյշի «Ահաբեկիչներ» կտորը։ Արտասանութիւնները եւ երգերը դասաւորուած էին այնպիսի շարքով մը, որ կը մարմնաւորէին հայ ժողովուրդի նահատակութիւնը, վերապրողներու տոկալու ու պայքարելու ոգին եւ ապա յառնումը։ Նոյն ոգին կը դրսեւորէր նաեւ Յակոբ Թաթեանի յօրինած եւ դաշնակի վրայ նուագած «Խիզախում» կտորը։

Օրուան խորհուրդին առիթով իրաքահայոց առաջնորդ Աւագ Սրբազանը տուաւ իր «Պատգամ»ը՝ բնաբան ունենալով «Ապրիլ 24՝ Սարսափելի խախտում Տասնաբանեայ Պատուիրանաց»ը, մանաւանդ Ելից Գրքի Ի գլուխ 13 համարէն «Մի սպանաներ» պատուիրանը։ Ստորեւ կը ներկայացնենք Սրբազան Հօր խօսքը.

*Ըստ Հին Ուխտի Ելից Գրքին՝ Աստուած Խօսեցաւ Մովսէս Մարգարէին հետ Սինա լերան բարձունքէն (Ելից ԺԹ. 3, 11)՝ անոր պատգամելով Տասնաբանեայ Պատուիրաններ, որոնք ինչպէս անցեալին, նաեւ այսօր կը միտին յստակացնելու մարդ արարածին փոխադարձ վերաբերմունքը իր Արարչին, ինչպէս նաեւ իր նմանին հետ։ Եւ ինչքան ատեն սոյն յարաբերակցութիւնը մնայ դրական, անայլայլ եւ անխախտ, այնքան ժամանակ մարդիկ կ՚ապրին երջանիկ՝ իրենց ուժն ու կարը նուիրաբերելով մարդկային ցեղի յառաջընթացին ի խնդիր, կ՚ըլլան խաղաղասէր ու ստեղծագործ, կ՚ըլլան հաւատաւոր ու բարոյապաշտ՝ արձանագրելով ոստումներ խաւարէն դէպի լոյս՝ սաղմոսերգուին հետ կրկնելով. «Ով Տէր Քու երեսիդ լոյսը մեր վրայ ծագեցուր» (Սաղ. Դ. 6)։*

*Սակայն, ինչպէս մարդկային ցեղի պատմութիւնը կ՚ապացուցէ, մարդ արարածը չմնաց աստուածային աւանդին՝ իր նմանին սիրելու եւ յարգելու, այլ ընդհակառակը, եղաւ մարդատեաց ու մարդահալած։ Ցխրագոյն այս իրավիճակին իբրեւ փաստ մեր ազգն ժողովուրդի պատմութիւնը կը հանդիսանայ, պատմութիւն, որն եղաւ ողբերգական իրադարձութիւններով առլցուն՝ յաճախապէս յանդգնելով արիւնահեղ սպանդներու ու նախճիրի, եւ որոնց զոհերն եղան անթիւ անհամար հայու զաւակունք։ Այսպէս է, որ հայերու ստուար մէկ մասը կրկին ու կրկին, բայց մանաւանդ Առաջին համաշխարհային պատերազմի սեւ տարիներուն եղեռնութեամբ զերեզմանուեցաւ Օսմանեան հիւանդ կայսրութեան ամբողջ տարածքին, մէկ ու կէս միլիոն հայերու արիւնաքամ անյայտացումով։*

*Այսօր հաւաքուած մեր մայրենի Եկեղեցւոյ հարազատ կամարներուն ներքեւ*

ահաւասիկ կը նշենք Ապրիլ 24-ով խորհրդանշուած Հայ Ցեղասպանութեան 91-րդ տարելիցը: Բայց այստեղ մէկտեղուած չենք միայն նշելու հայոց պատմութեան մէկ չարաշուք դէպքը, այլ մեր խիղճերուն մէջ վերապրելու ոճիրին ահաւորութիւնը. ոչ միայն վերհիշելու անցեալի տխուր անցուդարձը, այլ մեր նոր սերունդին պատգամելու անխօս կտակը հայ նահատակաց. ոչ միայն աղօթք բարձրացնելու մեր նահատակաց արդար հոգիներուն ի հանգիստ, այլ երբեւիցէ անտարբեր չըլլալու մեր ազգային իրաւունքներու ձեռքբերման աշխատանքին վերաբերմամբ:

Իննսուն եւ մէկերորդ տարելիցը հայ ժողովուրդին դէմ նիւթուած ահաբեկչական հալածանքներուն ու մասսայական ոչնչացման արհինարբու ծրագիրներուն այսօրուաններուս համար խթանիչ ուժ կը դառնայ՝ կշռադատելու այն ահաւոր ու շշմեցուցիչ ատելավառ գործելակերպը, որուն պարագլուխը եղաւ երիտ-թուրքերու հայատեաց կառավարութիւնը: Այսօր կոչուած ենք վերյիշելու հայազգի մէկուկէս միլիոն հոգիներու աննախընթաց բնաջնջումը, բռնի տեղահանութիւնն ու աքսորը, 20-րդ դարու սկիզբի այն հայերուն, որոնց «յանցանքն» էր հայկական ու քրիստոնէական իրենց պատկանելիութիւնը, բայց մանաւանդ այն պարագան, որ Արեւմտեան Հայաստանի մեր ժողովուրդը մշտօրէն պահանջեց իր մարդկային իրաւունքները, հար եւ նման այն ժողովրդոց, որոնք կ՚ապրէին Օսմանեան կայսրութեան լուծին ներքոյ:

Այո, մենք եւս, որպէս հաւատոյ ժառանգորդները Տասնաբանեայ Աստուածային Պատուիրանաց, ահա մեր մորթին վրայ կրեցինք անոր զարհուրելի ու սարսափելի խախտումը: Ազգովին ապրեցանք կոտորածի եւ սպանութեան սահմռկեցուցիչ փորձութիւնը մանաւանդ 20-րդ դարու առաջին երկու տասնամեակներուն՝ տալով անչափելի մարդկային զոհեր եւ կորսնցնելով ազգային մշակութային անկրկնելի սրբութիւններ եւ արժէքներ:

Սոյն կապակցութեամբ մեր ազգային պարտաւորութիւնն է երբեք չմոռնալու, ինչպէս նաեւ հանուր մարդկութեան յիշողութեան մէջ տեղաւորելու այն եղերական ու ողբալի ոճիրներու իրադրութիւնը, որոնց ենթարկուեցաւ մեր ժողովուրդը: Պէտք է աշխարհի խղճին վրայ դրօշմուի խաւարապատ ստուերը այն դաւին, որը կը միտէր ծրագրուած բնաջնջումով արմատախիլ ընել հինաւուրց ժողովուրդ մը պապենական իր հողէն:

Այս օրերուն հոլովուած մարդկային իրաւանց կարեւորագոյն սկզբունքներէն մին է, թէ կարելի չէ անարգել եւ արհամարհել ոեւէ մարդու արժանապատուութիւնը՝ հիմնուած անոր պատկանած ցեղին, մորթի գոյնին, խօսած լեզուին եւ ընտրած կրօնքին ու դաւանութեան, որով, հայ ժողովուրդն եւս պէտք է ունենայ իր հիմնական իրաւունքները այլ ժողովուրդներու կողքին աշխարհի քարտէսին վրայ:

Հայ ժողովուրդը ի սկզբանէ իր հաւաքական կեանքը պայմանաւորած է վերոնշեալ սկզբունքներով: Հենած մեր ստեղծագործական հանճարին վրայ, մեր ընձեռած զոհաբերութեան մատուցմամբ, մեր խիզախումներուն վասն բարիին ու ճշմարիտին, կը հաւատանք, թէ ամէն անձ, այր թէ կին, մանուկ, երիտասարդ թէ հասակաւոր, իրաւունքն ունի ամենայն ազատութեամբ որոնելու ճշմարտութիւնը, հետեւելու բարոյական արժէքներուն, կատարելու իր արդար պարտականութիւնները հանդէպ

*մարդկութեան ու ազգութեան եւ ապրելու տիրատուր իր կեանքը անկաշկանդ ու առանց վախի:*

*Մարդկային ցեղի պատմութիւնը յաճախապէս կ՚ապացուցէ, թէ մարդ արարածը կարող է չարին հետամտիլ եւ չարիք գործել, ինչպէս Ապրիլ 24-ի ժառանգութիւնը ինքնին փաստ մըն է մարդ էակի անչափ չարութիւն գործելու հակումին, այնուամենայնիւ մենք, որպէս Եկեղեցի եւ ազգութիւն, կը գիտակցինք, թէ վերջին խօսքը չարին չի պատկանիր, այլ՝ բարիին. վերջին արարին ոճրագործը չէ, որ կը յաղթանակէ, այլ՝ ստեղծագործ անձը. ատելութիւնը չէ, որ կ՚արձագանքէ հորիզոններուն վրայ մարդկային պատմութեան, այլ՝ ազնիւ սրտի թրթռացումները եւ քրիստոնեական սիրոյ անսահման դրսեւորումները մեր կեանքի լուսաւոր ճանապարհներուն վրայ:*

*Մարդ արարածին մարդկայնութիւնը բնորոշող կարեւորագոյն արուեստներէն մին է մարդկայնօրէն ապրելու իր դիրքորոշումն ու վճիռը: Կեանքն ապրելու այսպիսի մարդակերտ եղանակը կը պահանջէ ներքին արիութիւն եւ ոգեկան տոկունութիւն ու խիզախում:*

*Հայ ժողովուրդին դարաւոր ոտոխը նման քաջութիւն, աւաղ, երբեւիցէ չցուցաբերեց մինչեւ այս պահը: Ահա իրական փաստը Թուրքիոյ ոճրահեղձ անցեալին՝ փախուստ տալ դէմ յանդիման գտնուելու քաջարի կեցուածքէ: Ընդհակառակը, հերքելով ճշմարտութիւնը, ան աւելի կը մխրճուի ոճրաբոյր տմարդութեան մէջ ու կը շարունակէ ըլլալ անազնիւ ու անիրաւ, կը մնայ ստոր ու անգութ՝ հակամետ նոյն ոճիրը կրկնելու, եթէ երբէք պայմանները դարձեալ ներեն:*

*Յետ այսու վերոյիշեալ ըմբռնումներով պարտինք հասկնալ հայ եղեռն ու ցեղասպանութիւնը: Կը յիշենք մեր նախատակներու ողբերգական տառապանքը ոչ թէ վէրքերը վերստին բանալու կամ վրիժառութեան ու ատելութեան զգացումները գրգռելու, այլ որպեսզի*

- *չմոռնանք մեր մարտիրոսներուն անսահման զոհաբերութիւնը.*
- *պատուենք ազգի զոհասեղանին վրայ անոնց մատուցած աստուածատուր կեանքի նուիրաբերումը.*
- *վերարժեւորենք մեր պահանջատիրութիւնը եւ ազգային իրաւունքներու արդարութիւնը.*
- *վստահանանք, որ անցեալի տխուր պատահարները պիտի ծառայեն մերօրեայ մարդկութեան որպէս կոչ պատասխանատուութեան զգացումի ու մարտահրաւէր աւելի արդարամետ զալիքի.*
- *մարդկայնօրէն մշտապէս անսանք սուրբ գրական հրահանգին՝ մի սպանաներ, մի սպաններ:*

*Այո, երբէք, երբէք ոեւէ տեղ աշխարհի երեսին այլեւս պէտք չէ կրկնուի, ինչ որ 91 տարիներ առաջ պատահեցաւ Արեւմտեան Հայաստանի անմեղ հայ ժողովուրդին:*

*Վերջին աւելի քան վեց հարիւր տարիներու ընթացքին հայ ժողովուրդի նախատակութիւնները ապահովեցին, կը հաւատանք, գոյութիւնը փիւնիկանման յարութիւն առած հայկական նոր պետութեան՝որպէս լիիրաւ ազգային հանրապետութիւն,*

*հայրենական վերաշինութեամբ, տնտեսական վերելքով ու ազգային մշակոյթի ծաղկումով:*

*Ահա այսպէս, ի Հայրենիս եւ թէ ի Սփիւռս աշխարհի հայ ժողովուրդը օր-օրի բուժեց իր խորախոց ու ծանր վէրքերը, վերակոթողեց իր ազգային, ընկերային ու մշակութային կառոյցները, զարգացաւ, աճեցաւ ու շէնացաւ որպէս ազգ ու հայրենիք՝ կեանքի կոչելով դարաւոր երազը հայոց իրաւազրկուած բազում սերունդներուն:*

*Մեծ եղեռնի 91-րդ տարելիցին այս պարտի ըլլալ մեր մխիթարութիւնն ու մեր արդար հպարտութիւնը: Հետեւաբար, եկէք բոլորս միասին մեր հոգիներու հայացքը սեւեռած պահենք դէպի Սուրբ Գրական Երկիրը Հայոց, դէպի անմար կանթեղը Սուրբ Լուսաւորչին, որը մշտապէս կը ճառագայթէ սրբաւանդ Էջմիածնի լուսոյ խորանէն:*

*Աստուածային օրհնութեամբ եւ երկնային առատ ողորմութեամբ թող պարուրին անմեղ հոգիները հայ հերոս ժողովուրդին բոլոր նահատակաց:*

*Թող հաւերժ փառքով պսակուի անմոռանալի զոհաբերութիւնը ազգիս վկաներուն, որոնք կատարեցան վասն հաւատոյ եւ հայրենեաց:*

*Հազար պատարագ ու յաւիտենական լոյս մեր մարտիրոսներու խնկելի յիշատակին. ամէն:*

Յուշատօնը վերջացաւ «Մեր Հայրենիքով»՝ կատարողութեամբ Զուարթնոց Դպրաց Դասի, որմէ ետք Սրբազանը, հոգեւորականաց դասը եւ ժողովուրդը դուրս եկան եկեղեցիէն ու առաջնորդուեցան եկեղեցւոյ բակը գտնուող խաչքարին մօտ, ուր ծաղկեպսակները հանդիսաւոր կերպով զետեղուեցան պաշտօնական մարմիններու կողմէ:

*ՇԱՔԷ ԱՐԾԻԲԵԱՆ*

# ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳԱՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՂՏԱՏԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ

2006-ի Ապրիլի 9-ին Ծաղկազարդի տօնին, Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ կիսասարկաւագաց եւ սարկաւագաց ձեռնադրութիւններ ձեռամբ թեմիս բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Աւագ արքեպս. Ասատուրեանի: Խարտաւիլակութեան պաշտօնը կատարեց Բարեշնորհ Արամ սրկ. Քէթէնճեանը: Օրուայ Սուրբ եւ Անմահ Պատարագը մատուցեց Արժանապատիւ Տ. Մեսրոպ քհնյ. Գաբրիէլեանը՝ երգեցողութեամբ «Զուարթնոց» դպրաց դասի՝ ղեկավարութեամբ պր. Նուպար Բշտիկեանի:



Ս. Գրական ընթերցումներէն առաջ սկսաւ կիսասարկաւագութեան ձեռնադրութեան արարողութիւնը: Եկեղեցւոյ սպասարկող չորս դպիրներ՝ Շանթ Յովսէփեան, Արարատ Պօղոսեան, Արշակ Դժուարեան եւ Տիգրիս Ստեփանեան, դպրաց դասի երգած «Ուրախ լեր» շարականի ընթացքին ծնկաչոք մօտեցան Սրբազան Հօր յատեան եւ ձեռնադրութեան յատուկ քարոզներու ընդմէջէն, ինչպէս նաեւ աղօթքներու ընթերցումով, անոնք ստացան կիսասարկաւագական աստիճան, երբ Սրբազան Հայրը անոնց շնորհեց բազկութար կրելու իրաւունք:

Այս արարողութեան յաջորդեց սարկաւագաց ձեռնադրութիւն: Երկու ընծայեալներ՝ Արա Միրզոյեան եւ Սեւան Փալանճեան կիսասարկաւագներ, խարտաւիլակ սարկաւագի առաջնորդութեամբ ծնկաչոք բարձրացան Ս. Խորան:

Սաղմոսներու, շարականներու եւ աղօթքներու աւարտումով հասաւ ձեռնադրութեան խորհրդաւոր պահը, ուր երգուեցաւ «Աստուածային եւ երկնաւոր շնորհ...» աղօթական շարականը: Որմէ ետք Սրբազան Հայրը նորընծաներուն շնորհեց սարկաւագութեան ուրարներ կրելու, ինչպէս նաեւ Ս. Խորանին սպասարկելու իրաւունքը:

Այս հոգեպարար արարողութենէն ետք Նորին Սրբազնութիւնը շնորհաւորեց նորօք ձեռնադրեալները եւ Ծաղկազարդի Ս. Տօնին առիթով իր քարոզին մէջ խրախուսեց անոնց ըլլալու մեր Մայրենի եկեղեցւոյ հաւատարիմ սպասաւորներ, յիշեցնելով, որ աստիճանի մը ստացման հանգամանքը թող չվերածուի հպարտութեան միջոցի, այլ ընդհակառակը, նոր աստիճանը ըլլայ համեստութեան նշան որպէս սպասաւորութեան նոր ճանապարհ: Նոր աստիճանով բեռ մըն ալ կաւելնայ սպասաւորի ուսին եւ ան՝ ծառայական սիրով պէտք է տանի զայն: Նորին Սրբազնութիւնը, եզրափակելով իր պատգամը, ըսաւ.- «...Երկրիս մէջ տիրող դժուարին պայմաններու մէջ կատարուած եկեղեցական արարողութիւնները եւ մանաւանդ այսօրուայ ձեռնադրութիւնները՝ իրենց հոգեւոր աւիշը կը ստանան մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի յաղթական մուտքէն յԵրուսաղէմ...: Թող այս արարողութեան, Ս. Պատարագի եւ Ծաղկազարդի շնորհները ըլլան երաշխիք խաղաղութեան եւ անվտանգութեան մեր ժողովուրդի եւ Իրաքի համար»:

Այս ուրախ առիթով Սրբազան Հայրը շնորհաւորեց հաւատացեալ ժողովուրդը, ձեռնասուններուն պարագաները եւ համայն իրաքահայութեանը:

*ԱՐԱՄ ՄՐԿ. ՔԷԹԷՆՃԵԱՆ*



# *ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ*

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Ապրիլի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վան-Վասպուրական հայրենակցական միության անդամներին, որոնք ամեն տարի Մկրտիչ Խրիմյան Հայրապետի մահվան օրը գալիս են ոգեկոչելու Հայոց Հայրիկի վառ հիշատակը։

Եկող տարի լրանում է Խրիմյան Հայրիկի մահվան 100-ամյակը։ Այս առիթով Վան-Վասպուրական Հայրենակցական Միության նախագահ Ռոմիկ Հովնանյանը հայցեց Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու աջակցությունը, որպեսզի երջանկահիշատակ Հայրապետի մահվան տարելիցը դառնա համազգային հիշատակի օր։

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով Հայրենակցական Միության սերն ու նվիրվածությունը Հայ Եկեղեցուն և իրենց մեծ հայրենակցի հիշատակին, նշեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում արժանավորապես կազմակերպվելու են Խրիմյան Հայրիկի հիշատակին նվիրված միջոցառումներ։

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՄ ՀԱՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՓԻԹԵՐ ՍԵՄՆԵԲԻԻՆ

Ապրիլի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեմնեբիին՝ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան տիկ. Հայքի Փայչի ուղեկցությամբ։

Ողջունելով Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցչին Մայր Աթոռում՝ Նորին Սրբությունն իր շնորհավորանքներն ու օրհնությունը բերեց նրան նոր հանձնառության առիթով՝ մաղթելով, որ իր առաքելությունը պսակվի լիակատար հաջողություններով։ *«Մենք լիահույս ենք, որ Ձեր աշխատանքի շնորհիվ պիտի կարողանանք խաղաղությունը կայուն դարձնել այս տարածաշրջանում և այս տարա-*

*ծաշրջանի ժողովուրդների միջև համագործակցությունը զորացնել և ամրագրել»*,- ասաց Հայոց Հայրապետը: Վեհափառ Հայրապետը նաև անդրադարձավ արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում Եկեղեցու առաքելությանը՝ նշելով, որ Եկեղեցին փորձում է կարելին ի գործ դնել՝ կրոնական և հոգևոր առաջնորդների հետ նպաստելու խաղաղության և համագործակցության այդ փոխհարաբերություններին:

Շնորհակալություն հայտնելով հանդիպման համար՝ պրն Փիթեր Սեմնեբին վերհիշեց իր առաջին այցը Հայաստան 1987 թվականին, ապա սոսկալի երկրաշարժի օրերին: Իր խոսքում նա անդրադարձավ նաև իր ստանձնած պարտականություններին՝ նշելով, որ կոչված է նպաստելու հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Հանդիպման ընթացքին խոսվեց տարածաշրջանի այլ խնդիրների մասին, անդրադարձ կատարվեց նաև Հայաստանյայց Առաքելական և Վրաց Ուղղափառ Եկեղեցիների միջև առկա փոխհարաբերություններին, Վիրահայոց թեմի խնդիրներին:

Հանդիպմանը ներկա էր Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Հունգարիայի արտակարգ և լիազոր նորանշանակ դեսպան Արպադ Սեկեյին (նստավայրը՝ Մոսկվա):

Շնորհավորելով դեսպանին նշանակման առիթով՝ Վեհափառ Հայրապետը փոխանցեց նրան իր գնահատանքն ու բարեմաղթանքները: *«Մեզ համար ուրախալի է տեսնել, որ նոր մակարդակի վրա զարգացում են ապրում երկու երկրների փոխհարաբերությունները՝ համարժեք այն կապերին, որ պատմականորեն ձևավորված են եղել երկու ժողովուրդների միջև»*,- ասաց Նորին Սրբությունը: Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև Հունգարիայի իշխանությունների հոգատարությունն ու բարյացակամ վերաբերմունքը վայելող հայ համայնքի կյանքին:

Իր հերթին դեսպանը, շնորհակալություն հայտնելով հանդիպման հնարավորության համար, անդրադարձավ 28 տարիներ առաջ Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին իր կատարած առաջին այցին: Դեսպանը Նորին Սրբությանը ներկայացրեց նաև Հունգարիայի քաղաքական և կրոնական իրավիճակը:

Հանդիպմանը խոսվեց նաև հայ ժողովրդի կյանքում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարևոր դերի և առաքելության մասին, անդրադարձ կատարվեց Եկեղեցու գործունեությանը և միջեկեղեցական հարաբերություններին:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԻՏԵՆԲԵՐԳԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Ապրիլի 23-ին, Սուրբ Պատարագից հետո, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց 2005 թ. Գերմանիայում կազմակերպված Վիտենբերգի կոնֆերանսի 30 մասնակիցների, որոնք ուխտի էին եկել Հայաստան՝ ուղեկցությամբ պրոֆ. Հերման Հոլցի, «Լեփսիուսի տուն-թանգարան. Պոտսդամ» միության առաջին նախագահ Հ. Շուլցի և Վիտենբերգի ակադեմիայի տեսուչ Ջ. Գոպֆերտի:

Ողջունելով ուխտավորների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նրանց այն ծառայությունների համար, որ մատուցում են հայ ժողովրդին և ողջ աշխարհին՝ մարդկային կյանքից ներս խարսխելով աստվածսիրության և մարդասիրության արժեքները: *«Հաճելի էր մեզ, որ աղոթակից եղաք այսօր սրբազան արարողության ընթացքին, և մեր միությունը կատարյալ եղավ աղոթքով: Մենք միասնաբար մեր աղոթքը երկինք բարձրացրեցինք՝ մեր մտածումները հառած ապրիլ 24-ի ողբերգություններին, և Աստծուց հայցեցինք, որ խաղաղ պահի աշխարհը, սիրո և եղբայրության մեջ, որպեսզի ազգերը հեռու մնան նման չարիքներից ու ողբերգություններից»*,- ասաց Նորին Սրբությունը:

Ուխտավորները, ընտրելով իրենց Հայաստան այցի ապրիլյան այս օրերը, նպատակ ունեին նաև մասնակցելու ապրիլ 24-ին Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների հիշատակի արարողություններին: Հարկ է նշել, որ պրոֆ. Հերման Հոլցի կողմից կատարված Յ. Լեփսիուսի արխիվների ուսումնասիրությունը հիմք հանդիսացավ 2005 թվականին Գերմանիայի Բունդեստագում 1915 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթի ընդունմանը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Հոգեշնորհ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՆԽՈՆՋ ՆՈՒԻՐԵԱԼԸ. ՍՈՒՐԷՆ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Նշանաւոր հայագէտ Սուրէն Գօլանճեանը ծնուել է 1923 թ. փետրուարի 4-ին Պոլսում՝ արեւմտահայ անուանի մտաւորական, բանաստեղծ, արձակագիր եւ հրապարակախօս Եդուարդ Գօլանճեանի ընտանիքում: Մայրը՝ Աղրինէն, մանկավարժ էր:



Երեք տարեկան հասակում Սուրէնը ծնողների եւ աւագ եղբայրների՝ Մանուէլի եւ Ժիրայրի հետ ստիպուած բռնում է գաղթի ճամփան, քանի որ հայրը հետապնդւում էր թուրքական ոստիկանութեան կողմից՝ Մեծ եղեռնը պատկերող ստեղծագործութիւնների եւ թուրք ջարդարարներից հաշիւ պահանջելու համար: Տարագիր հայի ընտանիքը նախ բնակութիւն է հաստատում Ռումինիայի Կոնստանցա քաղաքում, ապա՝ Բուխարեստում:

Նախնական կրթութիւնը Սուրէնն ստանում է Բուխարեստի Միսաքեան-Քեսիմեան վարժարանում: Այնուհետեւ ուսումը շարունակում է անուանի արեւելագէտ Յակոբ Սիրունու մօտ, որն էլ դառնում է հոգեւոր խթան ապագայ բանասէրի եւ պատմաբանի համար: Ոչ միայն Յակոբ Սիրունին, այլեւ Բուխարեստում բնակութիւն հաստատած բազմաթիւ հայ մտաւորականներ դառնում են ներշնչարան եւ գիտական անսպառ աղբիւր երիտասարդ Սուրէնի համար:

Իր առաջին ուսումնասիրութիւնը, որ դրուատանքով է ընդունւում ընթերցողների կողմից, տասնիննգամեայ Սուրէնը տպագրել է Վենետիկի «Հայագիտակ» ամսագրում: Նրա գիտական գործունէութիւնը հիմնականում առնչւում է Բուխարեստի Հայ մշակոյթի տան հետ, որի տնօրէնն էր յետագայում: Այս տարիներից էլ սկսւում է երիտասարդ բանասէրի ջերմ եւ մտերիմ համագործակցութիւնը իր նախկին ուսուցչի՝ Լեւոն Պալճեանի (Վազգէն Ա) հետ: Այդ տեւական շփումները եւ աշխատանքային մտերմութիւնը հոգեմտաւոր լիցք են հաղորդում, ապա դառնում հաճելի յիշողութիւններ, որոնք ուղեկցում են Սուրէնին ողջ կեանքի ընթացքում:

1948 թ. հօրը՝ Եդուարդ Գօլանճեանին, յաջողւում է միայն մէկ որդուն՝ Սուրէնին, ուղարկել Մայր Հայաստան, իսկ ինքը չի կարողանում գալ՝ առողջութեան վատթարացման պատճառով: Սուրէնը ընդունւում է Երեւանի Խ. Աբովեանի անուան ման-

կավարժական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետ՝ ուսանողական տարիներին կրելով յետպատերազմեան բոլոր դժուարութիւնները: Ուսումն աւարտելուց յետոյ աշխատանքի է անցնում Մաշտոցի անուան Մատենադարանում: Այնուհետեւ Գիտութիւնների ազգային ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումեանի հրաւէրով իր գիտական գործունէութիւնը շարունակում է ակադեմիայի պատմութեան ինստիտուտի հայ գաղթավայրերի պատմութեան բաժնում՝ դառնալով հեղինակակիցը «Հայ ժողովրդի պատմութեան» մի քանի հատորների:

Մեծ է Սուրէն Գօլանճեանի ներդրումը նաեւ Հայկական հանրագիտարանի աշխատանքներում: 15 տարուայ ընթացքում նա Հանրագիտարանի համար պատրաստում է աւելի քան 200 գիտական յօդուած: Ձեռագրագէտ, պատմաբան Սուրէն Գօլանճեանը հեղինակ է նաեւ շուրջ 300 յօդուածների եւ ուսումնասիրութիւնների, որոնք հրատարակուել են հայաստանեան եւ արտասահմանեան գիտական հանդէսներում: Նրա գիտական ուսումնասիրութիւններից շատերը թարգմանուել են աւելի քան եօթ լեզուներով: Գօլանճեանը բազմաթիւ զեկուցումներով հանդէս է եկել հայրենական եւ միջազգային գիտաժողովներում:

Հայրենի գիտութեանը ցուցաբերած անխոնջ նուիրումի համար նա պարգեւատրւում է «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

1989 թ. Սուրէն Գօլանճեանը միանում է ԱՄՆ-ում բնակուող իր հարազատներին: Հայրենի հողից եւ հարազատ գործընկերներից բաժանումը նա օտար ափերում փարատում է գիտական անխոնջ գործունէութեամբ: Լոս Անջելեսում ապրած տարիներին Ս. Գօլանճեանը հրապարակախօսական եւ գիտական զեկուցումներով մասնակցում է բազմաթիւ համաժողովների, որոնցից նշանակալից է UCLA համալսարանում կայացած գիտաժողովը՝ Ռիչարդ Յովհաննիսեանի ղեկավարութեամբ: Համազգային հայ կրթութեան եւ մշակութային միութեան միջոցառումները եւս որպէս իրենց ակտիւ եւ մշտական մասնակիցն ունէին նրան:

1996 թ. լոյս է տեսնում Ս. Գօլանճեանի «Երջանկայիշատակ Վազգէն Ա Կաթողիկոսի կեանքն ու գործը, հանգիստը եւ յուղարկաւորութիւնը» գիրքը: Այն նաեւ ռումիներէն հրատարակւում է Բուխարեստում (թարգմանութիւնը՝ Մաղլէն Քարաքաշեանի, մեկենաս՝ տէր եւ տիկին Դեմիրճեաններ): 2000 թ. Սուրէն Գօլանճեանի աշխատասիրութեամբ հրատարակւում է «Ռումանահայութեան Անին՝ Սուչաւայի հայ գաղութը» արժէքաւոր աշխատութիւնը (հոգածութեամբ՝ Մեսրոպ արքեպս. Աշճեանի, մեկենաս՝ Ջորջ Բակումեան), որը նուիրուած էր Հայաստանում քրիստոնէութեան պետականօրէն ընդունման 1700-ամեակին:

1998 թ. Մայր Հայրենիքում պատշաճ կերպով նշւում է Ս. Գօլանճեանի ծննդեան 75-ամեակը: ՀՀ ԳԱԱ նախագահութիւնը նրան նուիրում է յուշամեդալ՝ ի նշանաւորումն բազմամեայ գիտական վաստակի: Մեծանուն գիտնականը Հայաստանից հեռանում է բազմաթիւ շնորհակալագրերով եւ պատուոգրերով, յոբելեանական տարեդարձի միջոցառումների անջնջելի տպաւորութիւններով:

Սուրէն Գօլանճեանը Միացեալ ազգերի կազմակերպութեանն առընթեր Հռոմի «Ոսկէ լեգէոն» գիտական ընկերութեան անդամ էր, Ռումինիայի գիտութիւնների ա-

կադեմիայի արեւելագէտների գիտական ընկերութեան պատուաւոր թղթակից անդամ, «Խորհրդային Միութիւն-Ռումինիա բարեկամութիւն» ընկերութեան հայկական բաժանմունքի նախագահի տեղակալ եւ այլն:

Սուրէնի եւ նրա եղբօր՝ Ժիրայրի վաղեմի երազանքն էր հայրենիքում հրատարակուած տեսնել իրենց հօր՝ Եդուարդ Գօլանճեանի երկերի լիակատար ժողովածուն: Հայրը, աստանդական հայի ճակատագրով դատապարտուած, երջանկութիւն չի ունենում իր ստեղծագործութիւնները ամբողջութեամբ տպագրուած տեսնելու: Եդուարդ Գօլանճեանի արժանաւոր զաւակները ի վերջոյ ի կատար են ածում իրենց պապի երազանքը, եւ գիրքը լոյս է տեսնում Երեւանում (խմբագրութեամբ Սուրէն Գօլանճեանի եւ Հայկանուշ Մեսրոպեանի, մեկենասներ՝ Ալիս, Ադրինէ, Եդուարդ եւ Պարթեւ Գօլանճեաններ):

Սուրէն Գօլանճեանը մինչեւ կեանքի վերջին օրը ծառայում է իր ժողովրդին՝ մնալով գիտութեան բեղուն մշակ Հայաստանում եւ հայաշատ Լոս Անջելեսում: Նա իր մահկանացուն կնքում է 2006 թ. ապրիլի 12-ին՝ որպէս հայագիտութեանը ծանրակշիռ նպաստ բերած եւ բանասիրութեան մէջ իր ուրոյն տեղը հաստատած գրի ու գրչի մշակ:

*ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Ապրիլի 1-ին, շաբաթ. - ԼԴ. օր Մեծի Պահոց: Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ստսկալի չարչարանացն եւ մտին ի Վիրապն:**

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կիրակոս աբեղա Դավթյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց«:

**Ապրիլի 2-ին, կիրակի. - Զ. կիր. Քառասնորդական Պահոց (Գալստեան):**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վահրամ քահանա Մելիքյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգիսյանը:

**Ապրիլի 7-ին, ուրբաթ. - Խ. օր Մեծի Պահոց: Աւետումն Ս. Աստուածածնի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Լևոն աբեղա Գուլյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 26):

**Ապրիլի 9-ին, կիրակի. - Ծաղկազարդ: Պահք:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբեղա Նանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 28):

**Ապրիլի 13-ին, հինգշաբթի. - Աւագ Եշ.: Պահք: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մխիթար աբեղա Գրիգորյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը ընթերցեց Ս. Բարսեղ Կեսարացու՝ Ս. Հաղորդությանը նվիրված աղոթքը:

Երեկոյան կատարվեց Ոտնլվայի և ապա՝ Խավարման կարգը, հընթացս որի քարոզ խոսեց Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը (տե՛ս էջ 31):

**Ապրիլի 15-ին, շաբաթ. - Պահք: Ճրագալոյց Զատկի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ» (Հովհ. ԺԱ 25) բնաբանով քարոզ խոսեց:

**Ապրիլի 16-ին, կիրակի. - ԶԱՏԻԿ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Նորին Սրբությունը Ս. Հարության տոնի իր պատգամը ուղղեց Մայր Տաճարից (տե՛ս էջ 3):

**Ապրիլի 17-ին, երկուշաբթի. - Բ. օր Զատկի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հրեշտակք Տեառն յերկնից տան զաւետիս աշխարհի, ցնծացէ՛ք, այսօր Քրիստոս յարեաւ ի մեռելոց» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

**Ապրիլի 23-ին, կիրակի. - Ը. օր Զատկի: Կրկնազատիկ (Նոր Կիրակէ):**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ: Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան» (Հովհ. Ա 10-11) բնաբանով քարոզ խոսեց:

**Ապրիլի 24-ին, երկուշաբթի. - Թ. օր Յինանց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների հոգիների հանգստության համար:

**Ապրիլի 30-ին, կիրակի. - Գ. կիր. Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ):**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հիսուս պատասխանեց և ասաց նրան «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը տեսնե» (Հովհ. Գ 3) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 33):

# “ЭЧМИАДЗИН” ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

## (Апрель 2006)

1. Пасхальное послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю праздника Святого Воскресения Христа, 16 апреля 2006 г. (с. 3-5).
2. Поздравительные письма и телеграммы, которыми обменялись Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, с главами Церквей сестер, с иерархами Патриарших престолов Армянской Церкви и с официальными лицами по случаю Святого и Чудесного Воскресения Спасителя (с. 6-9).
3. Вербное Воскресенье и Страстная Седмина в Первопрестольном Святом Эчмиадзине, 9 апреля 2006 г. (с. 10-12).
4. Визит Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, в интернат Нор Харберда в Вербное Воскресенье, 9 апреля 2006 г. (с. 13).
5. Ознаменование памяти жертв геноцида 1915 г. в Цицернакаберде, 24 апреля 2006 г. (с. 14).
6. 24 апреля в Первопрестольном Святом Эчмиадзине, 24 апреля 2006 г. (с. 14).

## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

7. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Вазгену Галтакчяну по случаю его награждения орденом «Святой Григорий Просветитель», 22 апреля 2006 г., № 344 (с. 15-16).
8. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Гегаму Григоряну по случаю его награждения орденом «Святой Саак – Святой Месроп», 1 апреля 2006 г., № 343 (с. 17-18).
9. Патриаршие награды (пожалование в течение апреля 2006 г. энциклик, орденов «Святой Нерсес Шнорали», благословений и права ношения нагрудных крестов ряду духовных и светских лиц, оказавших неоценимые услуги Армянской Церкви) – (с. 19).
10. Поздравления Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Праздника Благовещения, 7 апреля 2006 г. (с. 20).
11. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, детям по случаю Вербного Воскресенья, 9 апреля 2006 г. (с. 21).
12. Вручение орденов «Святой Саак – Святой Месроп» г-ну Джиму Торосяну и г-ну Гегаму Григоряну, 22 апреля 2006 г. (с. 22-23).
13. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Президента Республики Литва, 26 апреля 2006 г. (с. 24).

14. Подписание соглашения о сотрудничестве между Первопрестольным Святым Эчмиадзином и «Международным Абитатом», 20 апреля 2006 г. (с. 25).

## ПРОПОВЕДИ

15. Первая проповедь иеромонаха Левона Гуляна в Кафедральном соборе Первопрестольного святого Эчмиадзина на Праздник Благовещения, 7 апреля 2006 г. (с. 26-27).
16. Проповедь иеромонаха Вазгена Наняна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина в Вербное Воскресенье, 9 апреля 2006 г. (с. 28-30).
17. Проповедь Его Преосвященства епископа Асогика Аристакесяна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина в Великий Четверг, 13 апреля 2006 г. (с. 31-32).
18. Проповедь иеромонаха Исаака Погосяна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина в Воскресенье Первой Христианской Церкви (Ашхараматур), 30 апреля 2006 г. (с. 33-36).

## ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

### Посвящается вечной памяти жертв геноцида 1915 г.

19. **САМВЕЛ АНДРАНИКОВИЧ ПОГОСЯН** – Причины и течение геноцида армян (историковедческое исследование) – (с. 37-48).
20. **ШОГИК ВОСКАНЯН** – Историко-документальные факты о просветительской деятельности в Константинополе (историковедческое исследование) – (с. 49-61).
21. **АВЕТИС АМАЯКОВИЧ АРУТЮНЯН** – Армянские беженцы в Восточной Армении в годы геноцида (историковедческое исследование) – (с. 62-80).
22. **АШОТ НЕРСИСЯН** – Положение в Тароне и в Сасуне накануне резни 1915 г. (историковедческое исследование) – (с. 81-90).
23. **АШОТ АЙРУНИ** – Армянский вопрос во внешней политике Кайзерской Германии в марте-июне 1918 г. (историковедческое исследование) – (с. 91-111).
24. **МАРГАРИТА ХАЧАТРЯН** – Вопросы веры в произведениях Амастеха (литературоведческое исследование) – (с. 112-117).

## В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

25. **ДЬЯКОН ОГСЕН МИРЗОЯН** – Пожалование сана архимандрита в церкви Святого Месропа Маштоца в Ошакане (помещены биографии архимандритов Саака Машаляна, Абгара Овакимяна, Мкртича Прошяна и Овакима Манукяна, 23 апреля 2006 г.) (с. 118-127).
26. Защита дипломных работ в Геворкянской Духовной семинарии, 25 апреля 2006 г. (с. 128).

27. Паломничество в монастырь Тегер, 1 апреля 2006 г. (с. 129).
28. Пасхальный праздник в церквах Армянской епархии Грузии, 22 апреля 2006 г. (с. 130).
29. Ознаменование памяти жертв геноцида в Армянской Епархии Грузии, 24 апреля 2006 г. (с. 130-132).
30. Ознаменование памяти жертв геноцида армян в армянских общинах Германии (с. 133-134).
31. Ознаменование памяти апрельских жертв в Кафедральном соборе Св. Амброзия в Милане, 24 апреля 2006 г. (с. 135).
32. **ДЬЯКОН ТИГРАН БАГУМЯН** – Бьющееся сердце Калькутты (очерк, посвященный основанию Филантропической Семинарии Калькутты, 2 апреля 2006 г. (с. 136-139).
33. Вербное Воскресенье в армянской общине Калькутты, 9 апреля 2006 г. (с. 140).
34. Праздник Св. Воскресения в армянской общине Калькутты, 15 апреля 2006 г. (с. 140).
35. Ознаменование памяти жертв геноцида в армянской общине Индии, 24 апреля 2006 г. (с. 141).
36. Ознаменование 91 годовщины геноцида армян в Дамаске, 23-24 апреля 2006 г. (с. 142-144).
37. **ШАКЕ АРЦИВЯН** – Торжественное ознаменование памяти жертв геноцида армян в Багдаде, 24 апреля 2006 г. (с. 145-149).
38. **ДЬЯКОН АРАМ КЕТЕНДЖЯН** – Посвящение в сан дьяконов в кафедральном соборе Св. Григория Просветителя в Багдаде, 9 апреля 2006 г. (с. 150-151).

## АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

39. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, членов землячества Ван-Васпуракан, 4 апреля 2006 г. (с. 152).
40. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Специального представителя ЕС на Южном Кавказе г-на Питера Семнеби, 6 апреля 2006 г. (с. 152-153).
41. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, посла Венгрии в РА г-на Арпада Секеи, 12 апреля 2006 г. (с. 153).
42. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, участников Виттенбергской конференции, 23 апреля 2006 г. (с. 154).

43. **АЙКАНУШ МЕСРОПЯН** – Сурен Коланджян, ученый безконечно преданный арменоведению (по случаю кончины) – (с. 155-157).

44. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение апреля 2006 г. (с.158-159).

# "ETCHMIADZIN" OFFICIAL MONTHLY REVIEW OF HOLY ETCHMIADZIN (April 2006)


1. Easter Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the Feast of the Holy Resurrection of Jesus Christ, April 16, 2006 (p. 3-5).
2. Letters of Greeting and Telegrams on the Holy and Miraculous Resurrection of the Savior exchanged between His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, and the Heads of Sister Churches, the Incumbents of the Patriarchal Sees of the Armenian Church and State officials (p. 6-9).
3. Palm Sunday and Holy Week in the Mother See of Holy Etchmiadzin, April 9, 2006 (p. 10-12).
4. Visit of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the orphanage of Nor Kharberd on Palm Sunday, April 9, 2006 (p. 13).
5. Commemoration of the victims of the Armenian Genocide in Tzitzernakaberd, April 24, 2006 (p. 14).
6. Commemoration of the Armenian Genocide in the Mother See of Holy Etchmiadzin, April 24, 2006 (p. 14).


## PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING


7. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Vazgen Galtakjian, on the occasion of his decoration with the Order of "Saint Gregory the Illuminator", April 22, 2006, no. 344 (p. 15-16).
8. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Gegham Grigorian on the occasion of his decoration with the Orders of "Saint Sahak – Saint Mesrop", April 1, 2006, no. 343 (p. 17-18).
9. Pontifical Awards (Encyclicals, Orders of "Saint Nerses Shnorhali", Letters of Blessing and the right to wear pectoral crosses granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during April 2006 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church) – (p. 19).
10. Message of Congratulations of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Feast of the Annunciation, April 7, 2006 (p. 20).
11. Message of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to children on Palm Sunday, April 9, 2006 (p. 21).
12. Granting of the Orders of "Saint Sahak – Saint Mesrop" to Mr. Jim Torossian and Mr. Gegham Grigorian, April 22, 2006 (p. 22-23).

13. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the President of the Republic of Lithuania, April 26, 2006 (p. 24).
14. Agreement signed between the Mother See of Holy Etchmiadzin and "Habitat for Humanity, International", April 20, 2006 (p. 25).

## SERMONS

15. First Sermon delivered by Rev. Fr. Levon Gulian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy on the Feast of the Annunciation, April 7, 2006 (p. 26-27).
16. Sermon delivered by Rev. Fr. Vasken Nanian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy on Palm Sunday, April 9, 2006 (p. 28-30).
17. Sermon delivered by His Grace Bishop Asoghik Aristakesian in the Cathedral of Holy Etchmiadzin on Holy Thursday, April 13, 2006 (p. 31-32).
18. Sermon delivered by Reverend Father Isahak Poghossian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy on the Sunday of the World Church, April 30, 2006 (p. 33-36).

## HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

## Dedicated to the Eternal Memory of the Victims of the Armenian Genocide

19. **SAMVEL A. POGHOSSIAN** – The Reasons and Course of Events of the Armenian Genocide (historical research) – (p. 37-48).
20. **SHOGHIK VOSKANIAN** – Historical Documents about Educational Activities in Constantinople (historical research) – (p. 49-61).
21. **AVETIK H. HARUTIUNIAN** – Armenian Emigrants to Eastern Armenian during the Years of the Armenian Genocide (historical research) – (p. 62-80).
22. **ASHOT NERSISSIAN** – The Situation in Taron and Sassun on the Eve of the Massacres of 1915 (historical research) – (p. 81-90).
23. **ASHOT HAYRUNI** – The Armenian Question in the Foreign Policy of the German Empire from March to June, 1918 (historical research) – (p. 91-111).
24. **MARGARIT KHACHATRIAN** – The Issues of Faith in the Works of Hamastegh (philological research) – (p. 112-117).

## IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

25. **DEACON OGSEN MIRZOYAN** – Ordination of Archimandrites in the Church of Saint Mesrop Mashtots in Oshakan (Biographies of Very Rev. Fr. Sahak Mashalian, Very Rev. Fr. Abgar Hovakimiam, Very Rev. Fr. Mkrtich Proshian and Very Rev. Fr. Hovakim Manoukian, April 23, 2006 (p. 118-127).
26. Defense of graduation theses in the Gevorkian Theological Seminary, April 25, 2006 (p. 128).
27. Pilgrimage to the Monastery of Tegher, April 1, 2006 (p. 129).
28. The Feast of Easter in the churches of the Armenian Diocese of Georgia, April 22, 2006 (p. 130).
29. Commemoration of April 24 in the Armenian Diocese of Georgia, April 24, 2006 (p. 130-132).
30. Commemoration of the Armenian Genocide in the Armenian Communities of Germany, (p. 133-134).
31. Commemoration of the victims of the Armenian Genocide in the Cathedral of Saint Ambrose of Milan, April 24, 2006 (p. 135).
32. DEACON TIGRAN BAGHUMIAN – The Living Heart of Calcutta (Essay about the Establishment of the Armenian College and Philanthropic Academy of Calcutta, India.), April 2, 2006 (p. 136-139).
33. The Feast of Palm Sunday in the Armenian Community of Calcutta, April 9, 2006 (p. 140).
34. The Feast of the Holy Resurrection in the Armenian Community of Calcutta, April 15, 2006 (p. 140).
35. Commemoration of the Armenian Genocide in the Armenian Community of India, April 24, 2006 (p. 141).
36. Commemoration of the 91st Anniversary of the Armenian Genocide in Damascus, Syria, April 23-24, 2006 (p. 142-144).
37. **SHAKE ARTSIVIAN** – Solemn Commemoration of the Armenian Genocide in Baghdad, Iraq, April 24, 2006 (p. 145-1149).
38. **DEACON ARAM KETENJIAN** – Ordination of deacons in the diocesan cathedral of Saint Gregory the Illuminator of Baghdad, Iraq, April 9, 2006 (p. 150-151).

## AUDIENCES IN THE MOTHER SEE

39. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the members of the Van-Vaspurakan Patriotic Association, April 4, 2006 (p. 152).
40. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Peter Semneby, Special representative of the EU to the South Caucasus, April 6, 2006 (p. 152-153).

41. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Arbat Sekei, Ambassador of Hungary to Armenia, April 12, 2006 (p. 153).
42. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the participants of the Wittenberg Conference, April 23, 2006 (p. 154).

43. **HAYKANUSH MESROPIAN** – Suren Kolanjian, devoted Armenologist (on the occasion of his death) – (p. 155-157).

44. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during April 2006 (p. 158-159).

# “ETCHMIADZINE” ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D’ETCHMIADZINE (Avril 2006)

1. Message de Pâques de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l’occasion de la Fête de la Sainte Résurrection du Christ, 16 avril 2006 (p. 3-5).
2. Lettres et télégrammes de félicitations échangés entre Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, et les Primats des Eglises sœurs, les chefs des Patriarcats de l’Eglise Arménienne et les personnalités officielles à l’occasion de la Fête de la Sainte et Miraculeuse Résurrection du Sauveur (p. 6-9).
3. Le Dimanche des Rameaux et la Sainte Semaine au Saint–Siège d’Etchmiadzine, 9 avril 2006 (p. 10-12).
4. Visite de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l’orphelinat de Nor Kharberd à l’occasion du Dimanche des Rameaux, 9 avril 2006 (p. 13).
5. Commémoration des victimes du génocide de 1915 à Tzitzernakaberd, 24 avril 2006 (p. 14).
6. Le 24 avril au Saint–Siège d’Etchmiadzine, 24 avril 2006 (p. 14).

## ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION

7. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Vazguen Galtakdjian à l’occasion de sa distinction de l’Ordre «Saint Grégoire l’Illuminateur», 22 avril 2006, n° 344 (p. 15-16).
8. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Guégham Grigorian, à l’occasion de sa distinction de l’Ordre «Saint Sahak–Saint Mesrop», 1er avril 2006, n° 343 (p. 17-18).
9. Distinctions pontificales (Encycliques pontificales, Ordres «Saint Nerses Chnorhali», messages de bénédiction et droit de porter des croix pectorales accordés par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d’éminents services à l’Eglise arménienne au mois d’avril 2006) – (p. 19).
10. Message de félicitations de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l’occasion de la Fête de l’Annonciation, 7 avril 2006 (p. 20).
11. Message de bénédiction de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, aux enfants à l’occasion du Dimanche des Rameaux, 9 avril 2006 (p. 21).
12. Remise des Ordres «Saint Sahak–Saint Mesrop» à MM. Jim Thorossian et Guégham Grigorian, 22 avril 2006 (p. 22-23).
13. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, au Président de la République de Lituanie, 26 avril 2006 (p. 24).
14. Accord de coopération signé entre le Saint–Siège d’Etchmiadzine et «Habitat International», 20 avril 2006 (p. 25).

## SERMONS


15. Premier sermon prononcé par le Révérend Père Lévon Gulian à la Cathédrale de Saint-Etchmiadzine à la Fête de l'Annonciation, 7 avril 2006 (p. 26-27).
16. Sermon prononcé par le Révérend Père Vazguen Nanian à la Cathédrale de Saint-Etchmiadzine le Dimanche des Rameaux, 9 avril 2006 (p. 28-30).
17. Sermon prononcé par Son Eminence l'évêque Assoghik Aristakessian à la Cathédrale de Saint-Etchmiadzine à la Sainte Messe du Jeudi-Saint, 13 avril 2006 (p. 31-32).
18. Sermon prononcé par le Révérend Père Issahak Poghossian à la Cathédrale de Saint-Etchmiadzine à la Sainte Messe du Dimanche de la Première Eglise Chrétienne (Achkharhamatour), 30 avril 2006 (p. 33-36).


## ETUDES HISTORIQUES ET PHILOLOGIQUES

### Dédié à la mémoire éternelle des victimes du génocide de 1915


19. **SAMVEL A. POGHOSSIAN** – Les raisons et le cours des événements du génocide des Arméniens (recherche historique) – (p. 37-48).
20. **CHOGHIK VOSKANIAN** – Documents historiques relatifs aux activités dans le domaine de l'éducation à Constantinople (recherche culturelle) – (p. 49-61).
21. **AVETIS H. HAROUTUNIAN** – Les réfugiés arméniens en Arménie Orientale aux années du génocide (recherche historique) – (p. 62-80).
22. **ACHOT NERSISSIAN** – La situation au Tarone et à Sassoun à la veille des massacres de 1915 (recherche historique) – (p. 81-90).
23. **ACHOT HAYROUNI** – La Question arménienne dans la politique extérieure de l'Empire allemand aux mois de mars-juin 1918 (recherche historique) – (p. 91-111).
24. **MARGARIT KHATCHATRIAN** – Les questions de la foi dans les œuvres de Hamastegh (recherche philologique) – (p. 112-117).


## AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES


25. **DIACRE OGSEN MIRZOYAN** – Titres d'archimandrite accordés à l'église Saint Mesrop Machtots d'Ochakan (Biographies des archimandrites Ter Sahak Machalian, Ter Abgar Hovakimian, Ter Mekertitch Prochian et Ter Hovakim Manoukian), 23 avril 2006 (p. 118-127).
26. Soutenance de thèse de fin d'études au Séminaire Guévorkian, 25 avril 2006 (p. 128).
27. Pèlerinage au monastère de Tégher, 1er avril 2006 (p. 129).
28. La Fête de Pâques dans les églises du Diocèse arménien de Géorgie, 22 avril 2006 (p. 130).
29. Commémoration des victimes du 24 avril au Diocèse arménien de Géorgie, 24 avril

2006 (p. 130-132).

30. Commémoration des victimes du génocide dans les communautés arméniennes d'Allemagne (p. 133-134).
31. Commémoration des victimes du génocide à la cathédrale Saint-Ambroise de Milan, 24 avril 2006 (p. 135).
32. **DIACRE TIGRAN BAGHOUMIAN** – Le cœur vivant de Calcutta (essai consacré à la fondation du Séminaire Mardassirakan de Calcutta), 2 avril 2006 (p. 136-139).
33. Le Dimanche des Rameaux à la communauté arménienne de Calcutta, 9 avril 2006 (p. 140).
34. La Fête de la Sainte Résurrection à la communauté arménienne de Calcutta, 15 avril 2006 (p. 140).
35. Commémoration des victimes du génocide des Arméniens dans la communauté arménienne d'Inde, 24 avril 2006 (p. 141).
36. Commémoration du 91e anniversaire du génocide des Arméniens à Damas, 23-24 avril 2006 (p. 142-144).
37. **CHAKE ARTZIVIAN** - Commémoration solennelle du génocide des Arméniens à Bagdad, 24 avril 2006 (p. 145-149).
38. **DIACRE ARAM KETENDJIAN** - Ordination de diacres à l'église diocésaine Saint Grégoire l'Illuminateur de Bagdad, 9 avril 2006 (p. 150-151).

## AUDIENCES AU SAINT-SIEGE

39. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, aux membres de l'amicale régionale Van-Vaspourakan, 4 avril 2006 (p. 152).
40. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Peter Semneby, Représentant spécial de l'UE au Caucase du Sud, 6 avril 2006 (p. 152-153).
41. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Arpad Sékéi, Ambassadeur de Hongrie en RA, 12 avril 2006 (p. 153).
42. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, aux membres de la Conférence de Wittenberg, 23 avril 2006 (p. 154).

43. **HAYKANOUCH MESROPIAN** – Souren Kolandjian. Une vie consacrée aux études arméniennes (à l'occasion de son décès) – (p. 155-157).

44. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale de Saint-Etchmiadzine au mois d'avril 2006 (p. 158-159).

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի
զատկական պատգամը Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնի առիթով .. 3
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և
քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական
Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց
միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու
հեռագրերը ........ 6
Ծաղկազարդը և Ավագ Շաբաթը Մայր Աթոռում ........ 10
Ծաղկազարդին Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Նոր Խարբերդի
մանկատուն ........ 13
Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչումը Ծիծեռնակաբերդում 14
Ապրիլի քառասնորդը Մայր Աթոռում ........ 14

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
Վազգեն Գալթաքճյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով
պարգևատրելու մասին ........ 15
**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
Գեղամ Գրիգորյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով
պարգևատրելու մասին ........ 17
Հայրապետական գնահատություն ........ 19

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական
ուղերձը Ավետման տոնի առիթով ........ 20
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը
մանուկներին Ծաղկազարդի տոնի առիթով ........ 21
«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշաններ հանձնվեցին Ջիմ Թորոսյանին և
Գեղամ Գրիգորյանին ........ 22
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիտվայի
Հանրապետության նախագահին ........ 24
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «Միջազգային Հաբիթաթի» միջև
ստորագրվեց համագործակցության համաձայնագիր ........ 25

## ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Լևոն աբեղա Գույյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ավետման տոնին մատուցված Ս. Պատարագին ....... 26
Տ. Վազգեն աբեղա Նանյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ծաղկազարդի կիրակիին մատուցված Ս. Պատարագին ........ 28
Տ. Առողիկ եպիսկոպոս Արիստակեսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ավագ Հինգշաբթիին մատուցված Ս. Պատարագին .. 31
Տ. Իսահակ աբեղա Պողոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Աշխարհամատրան կիրակիին մատուցված Ս. Պատարագին ........ 33

## ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**Նվիրվում է Հայոց Մեծ եղեռնի նահատակների անմեռ հիշատակին**

**ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ** - Հայոց ցեղասպանության պատճառները և ընթացքը ........ 37
**ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ** - Պատմավավերագրություն Կ. Պոլսի կրթալուսավորական գործունեության վերաբերյալ ........ 49
**ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** - Հայ գաղթականությունը Արևելյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին ........ 62
**ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ** - Իրավիճակը Տարոնում և Սասունում 1915 թ. ջարդերի նախօրյակին ........ 81
**ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ** - Հայկական խնդիրը կայսերական Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թ. մարտ-հունիս ամիսներին 91
**ՄԱՐԳԱՐԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ** - Հավատի հարցերը Համաստեղի ստեղծագործություններում ........ 112

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

**ՕԳՍԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԻՐԶՈՅԱՆ** - Մասնավոր վարդապետական աստիճանի տվչություն ........ 113
Տ. Սահակ վարդապետ Մաշալյան ........ 123
Տ. Աբգար վարդապետ Հովակիմյան ........ 124
Տ. Մկրտիչ վարդապետ Պռոշյան ........ 125
Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյան ........ 126
Ավարտաճառերի պաշտպանություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում .. 128

Ուխտագնացություն Տեղերի վանք ........ 129
Զատկական տոնը Վիրահայոց թեմի եկեղեցիներում ........ 130
Ապրիլ 24-ի ոգեկոչումը Վիրահայոց թեմում ........ 130
Հայոց ցեղասպանութեան ոգեկոչումը Գերմանիոյ հայ համայնքներում 133
Ի յարգանս Ապրիլեան նահատակաց ........ 135
**ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ** - Կալկաթայի բաբախող սիրտը 136
Ծաղկազարդի տոնը Կալկաթայի համայնքում ........ 140
Ս. Հարության տոնը Կալկաթայի համայնքում ........ 140
Հայոց ցեղասպանության ոգեկոչումը հնդկահայ գաղութում ........ 141
Հայոց ցեղասպանութեան 91-րդ ամեակին ոգեկոչումը Դամասկոսի մէջ 142
**ՇԱՔԷ ԱՐԾԻԻԵԱՆ** - Հանդիսաւոր յիշատակութիւն Հայկական ցեղասպանութեան Պաղտատի մէջ ........ 145
**ԱՐԱՄ ՍՐԿ. ՔԷԹԷՆՃԵԱՆ** - Կիսաարկւազաց եւ սարկաւագաց ձեռնադրութիւններ Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ ........ 150

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վան-Վասպուրական հայրենակցական միության անդամներին ........ 152
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեմնեբիին ........ 152
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Հունգարիայի դեսպանին ........ 153
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վիտենբերգի կոնֆերանսի մասնակիցներին ........ 154

**ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ** - Հայագիտութեան անխոնջ նուիրեալը. Սուրէն Գօլանճեան ........ 155

Եկեղեցական բեմ. լուրեր ........ 158

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата ........ 160
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin ........ 163
“Etchmiadzine” organe officiel du Saint-siège d’Etchmiadzine ........ 167